

T'angaran hatëntir hatowaçnerow : Arjak ew otanawor. Mijin dasënt'ack

Assadour, Zabelle (1863-1934), Assadour, Hrant (1862-1928). T'angaran hatëntir hatowaçnerow : Arjak ew otanawor. Mijin dasënt'ack. 1911.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.


*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ա. Ե Ա. Զ. Ը Ծ Ա Ն
ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Հ. ԵՒ Զ. ԱՍԱՏՈՒՐ

Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ
ԱՐԶԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ

Մ Ի Զ Ի Ն Գ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱՆ ԵՒ ՃՈՆԱՅԻՆ


Աստվանկան հարձուրդն վաւերացուած

Կ. ՊՈԼԻՍ
Ա. Ե Ա. Զ. Ը Ծ Ա Ն

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

1911





5 M.





444441

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԵԱԶԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Հ. ԵՒ Զ. ԱՍԱՏՈՒՐ



ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ

ԱՐԶԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ



ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ



Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ ՈՒ ՃՈԽԱՅԱԾ



Ուսումնական խրհուրդէն վաւերացուած



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԻՍԵԱՆ

1911

04 72

2008-155258

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինհաներլար Եօգուտու, Կ. Պոլիս

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ընթերցանութեան այս դասագիրքը մամուլին յանձնելով, մեր նպատակը եղած է միջին դասընթացի աշակերտներուն եւ աշակերտուհիներուն ձեռքը տալ անանկ հասոր մը որուն վերժանութիւնը ոչ միայն լեզուի, բառագիտութեան եւ քերականութեան տեսակէտով օգտակար ըլլայ, այլ նաեւ նպատակ մտքի բնդհանուր զարգացման : Ասոր համար է որ ջանացած էինք այս հաւաքոյթին մեջ տով տովի բերել այլազան նիւթերու վրայ գրուած արձակ եւ ոտանաւոր հրահանգիչ հասուածներ, բարոյական, իրագիտական, պատմական, նկարագրական, եւլն. , որչափ կը բոյլասրէին ժամանակին գրախնութեան պայմանները :

Այս նոր տպագրութեան մեջ, օգտուելով մամուլի ազատութենէն, կարգ մը փոփոխութիւններ մտցուցած ենք նիւթերու եւ հասուածներու տեսակէտով :

Մեր լնտրած հասուածները, — որոնք դեռաւոր խնայականութեանց մասշէլի՝ պարզ ու յսակ ոնով գրուած են, առանց զուրկ ըլլալու գրական հանգամանէ, — աստիճանաբար դասակարգուած են դիւրինէն դեպ ի դժուարը, թէեւ նիւթի զանազանութիւն դնելու մեր ջանքին պատճառաւ, այս աստիճանաւորումը կարելի եղած չըլլայ ամէն տեղ նշուելու գործադրել :

Լեզուի միօրինակութիւնը մեր գլխաւոր նկատմանէն մեկը եղած է : Օտար հեղինակներէ բարգմանութեանց մեջ ասիկա շատ դիւրին է. այդ բարգմանու-

թիւնները մե՛նք կատարած ենք , մերք բարեփոխելով ,
 մերք յապաւելով դժուարութեանցի նախադասութիւն-
 ները : Սակայն հայ հեղինակներէ ընտրուած հասուածնե-
 րուն մեզ, գործը նոյնչափ դիւրին չե՛ր հին պայմաննե-
 րով . ուստի այս հասորին համար ընտրած էինք հայ գրող-
 ներէ սակաւաթիւ արձակ հասուածներ միայն , եւ
 անոնցմէ՛ զորս ամենէն աւելի մօտ գտած էինք արդի
 աշխարհաբարին . երբեմն անոնց մեզ լեզուական պզտիկ
 փոփոխումներ ալ ներմուծելով , ամեն անգամ որ հնար
 եղած էր , հեղինակին իսկ հաւանութեամբ : Իսկ այս
 տպագրութեան մեզ , շատ աւելի բազմաթիւ հասուածներ
 դրած ենք ազգային հեղինակներէ եւ հայկական նիւ-
 թերէ : Ընտրութիւնը շատ աւելի դժուար եղած է ոտա-
 նաւորներու մասին , այնպէս որ քիչ թուով ոտա-
 նաւորներ միայն առած ենք հայ բանաստեղծներէ . միւս-
 ները թարգմանուած , հետեւողութեամբ պատրաստուած
 կամ հեղինակուած են արդի աշխարհաբարին կանոնները
 կէտ առ կէտ գործադրուելով :

Դժբախտաբար , մեր վարժարաններուն մեզ , ընթեր-
 ցանութեան դասին դեռ չէ տրուած հարկ եղած կարե-
 ւորութիւնը . առ հասարակ ըմբռնուած չէ սակաւին թէ
 ընթերցանութեան հատուածը պէտք է սորվեցնէ տղուն ոչ
 միայն *սղեկ կարդալ* , այլ եւ *կարդացածը հասկնալ* , *նոր
 բաներ ու գաղափարներ իւրացնել* , եւ *գաղափարները
 քաջասրել* : Ուստի այս նպատակին հասնելու համար , հարկ
 կը տեսնենք քանի մը թելադրութիւններ ընել մեր ուսու-
 ցիչներուն :

Ուսուցիչը պէտք է խնամք սանի որ աշակերտները՝
 հատուածին ընթերցման պահուն՝ բառերը լաւ արտա-
 սանեն , յարգելով առողջանութեան կանոնները , եւ ուշա-
 դրութիւն ընելով կետադրութեան նշաններուն : Ընթերց-
 ման միջոցին , երբ առիթը ներկայանայ , ուսուցիչը

պէսք է բացատրեալ առողջանութեան կարեւոր սկզբունքները , շեշտը , երկարը , պարոյկը պէսք է զգալի ըլլան ընթերցման ատեն , դադարները պէսք չեն հաւասար ըլլան՝ օրինակի համար՝ ստորակէտի մը եւ վերջակէտի մը առջեւ , եւ ձայնը ելեւեջներ պէսք է ունենայ , որպէս զի միօրինակութեամբ անախորժ չդառնայ :

Հարկ է կարգաւորուած հասուածից կարեւոր բառերը բացատրել Տալ առակերտին . բառի մը հոմանիտը՝ եթէ կայ՝ յիշեցնելու է , եւ ի հարկին յսակ մեկնութեամբ մը բառին իմաստը պարզելու է : Կարելի է հարցնել թէ բառը ի՞նչ կերպով կազմուած է , արմատ է , անցնեալ , բարդ , թէ նոյն արմատով ուրիշ ի՞նչ տեսակ բառեր կը կազմուին , թէ կազմուած բառերուն մէջ փոփոխման կամ կորուսման կանոնը ի գործ դրուած է , թէ երբ բառը անական մըն է , ո՞ր գոյականներուն կը յարմարի , եւ երբ գոյական մըն է , այդ գոյականին հետ ի՞նչ անականներ կրնան գործածուիլ , եւ այլն :

Պէտք չէ սակայն բաւականանալ միայն բառի մը բացատրութեամբ . պէտք է հարցնել նաեւ իմաստը այն նախադասութեան ուր գործածուած է այդ բառը : Պէտք է մեկնել խրթնութիւնները , եթէ կան , որովհետեւ լաւագոյն հեղինակներն անգամ երբեմն մուտք տուին : Բոլոր այս նախադասութիւններն ալ այս ուղղութեամբ բացատրուելէ ետք , երբ ամբողջ հասուածը այլ եւս հասկցուած ու մարտուած է , ուսուցիչը կրնայ հարցումներ ուղղել առակերտին , բացատրել Տալ թէ ի՞նչ հասկցած է հասուածին այս կամ այն մասէն , եւ մասերէն յետոյ՝ ամբողջութենէն : Վերլուծական եւ համադրական այս հարցումները առակերտին կը սորվեցնեն իր կարգաւորութիւնը , բացատրել , եւ այս կերպով խօսելու վարժութիւն ստանալ : Իւրաքանչիւր հասուածի տակ , իբր նմոյշ , այս կարգի հարցումներ դրած ենք , զորս ուսուցիչը

կրնայ աւելցնել, փոփոխել կամ պակսեցնել աշակերս-
ներուն ըմբռնման սասիճանին համաձայն :

Միեւնոյն հասուածը կրնայ ծառայել նաեւ ֆերակա-
նական հարցումներու : Մեր *Գործնական Քերականութեան*
Բ. Տարւոյն կը համապատասխանէ ընթերցանութեան այս
գիրքը : Ուսուցիչը ֆերականութեան դասերուն մէջ սոր-
վուած կանոնները պիտի ջանայ մասնանիօ ընել սալ այս
հասորին պարունակած ընթերցանութեան հասուածներուն
մէջ, պիտի կրնայ լուծել սալ քանի մը նախադասութիւն
կամ անոնց թիւր, դէմքը, ժամանակը փոխել սալ, եւլն. :

Ընթերցանութեան հասուածը պիտի ծառայէ նաեւ
ուղղագրութեան : Աշակերտը իւրաքանչիւր բառի ուղ-
ղագրութիւնը սորվելով անոր իմաստը աւելի դիւրին
կ'ըմբռնէ, ինչպէս գիտցած բառին ուղղագրութիւնն ալ
աւելի դիւրին կը սպաւորուի մտքին մէջ : Ուսուցիչը
պէտք չէ բնաւ առիթը փախցնէ աշակերսներուն կրկնելու
ուղղագրութեան գլխաւոր կանոնները, զորս յատուկ
խնամով երկարօրէն բացատրած ենք մեր *Գործնական*
Քերականութեան Գ. Տարւոյն մէջ :


Ուսուցչին գլխաւոր հոգեւեկն մէկը պիտի ըլլայ
ընթերցանութեան հասուածէն քաղել բարոյականի այն
դասերը որոնք կրնան դուրս գալ անկէ : Մենք ջանացինք
սեղ սեղ առածներով համադրել հասուածին բարոյականը,
բայց հոն ուր հայերէն առած չգտանք, լռեցինք, ուսուց-
չին թողով այդ բարոյականը մասնանիօ ընելու եւ
բացատրելու հոգը : Գալով անգոս կերպով դրուած ա-
ռածներուն, ուսուցիչը օգտակար դաս մը տուած կ'ըլլայ,
երբ զանոնք բացատրէ գործնական օրինակներով. երբեմն
պարզ առած մը ամբողջ բարոյականի դաս մը կ'ամփո-
փէ իր մէջ՝ իբր ժողովրդական դարաւոր փորձառութեան
արդիւնք :


ՈՏԱՆԱԼՈՐՆԵՐՆ ԱԼ ԱՐՃԱԿ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԱԿՍ

Ենթակայ պիտի ըլլան միեւնոյն հրահանգներուն : Ասկէ
 զայս, պիտի ծառայեն արտասանութեան : Աշակերտները
 գոց պիտի սորվին զանոնք, անգամ մը որ լաւ ըմբռնած
 են անոնց իմաստը : Այս ոսանաւորներուն արտասանու-
 քեան միջոցին, առողջանութեան եւ շարժուածքներու հա-
 մար մասնաւոր խնամք պիտի տարուի, եւ փափաքելի
 է որ այս արտասանութիւնները յասուկ ժամու մը միջոցին,
 ամիսը եանի մը անգամ տեղի ունենան՝ դպրոցին բոլոր
 աշակերտներուն ներկայութեան :

Այս պայմաններուն մէջ, կը կարծենք թէ ընթեր-
 ցանութեան գիրքը կրնայ իրական կերպով օգտակար ըլլալ,
 եւ ընտիր գործիք մը դառնալ ուսուցչին ձեռքին մէջ :

Ն. ԵՒ Զ. ԱՍԱՏՈՒՐ.





Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ

1. ԳՐԲԻ ՄԸ ՅԱՌԱԶԱԲԱՆԸ

ԵՐԿՈՒ սպանիացի ուսանողներ Բէնեաֆիէլէն Սալամանքա⁽¹⁾ կ'երթային : Յոգնած ու ծարաւ ըլլալով, իրենց ճամբուն վրայ՝ աղբիւրի մը քով կանգ առին : Ծարաւնին անցընելէ յետոյ, 'նստեր' յոգնութիւն կ'առնէին, երբ դիպուածով 'նշմարեցին մօտերնին, գետնին երեսը քարի մը վրայ քանդակուած⁽²⁾ բառեր որոնք մաշելէն քիչ մը աւրուեր էին :

Ջուրով քարը լուացին, և սա խօսքերը կարդացին . «Հոս պահուած է Բիեռ Կարսիսս ուսուսնականին հոգին :»

Ուսանողներուն պղտիկը, որ եռանդոտ ու անխորհուրդ աղայ մըն էր, արձանագրութիւնը կարդալուն պէս, խնդալէն մարելով ըսաւ . «Ասկէ ծիծաղելի խօսք չ'ըլլար . Հոս պահուած է . . . հոգին . . . հոգին կը պահուի . . . : Կ'ուզէի սա ծաղրելի տապանադիրը⁽³⁾ գրող այլանդակ⁽⁴⁾ մարդուն ո՛վ ըլլալը պիտնայ :»

Այս խօսքերը ըսելով, ոտք ելաւ ու մեկնեցաւ :

Իր ընկերը, որ աւելի ողջամիտ⁽⁵⁾ էր, ինքն իրեն ըսաւ . «Ասոր տակ գաղտնիք մը ըլլալու է . հոս պիտի կենամ

որ երեւան հանեմ :» Ուստի թողուց որ միւսը մեկնի ,
և , առանց ժամանակ կորսնցնելու՝ սկսաւ դանակովը քա-
րին շուրջը փորել մինչև որ տեղէն հանեց զայն : Կաշիէ
քսակ մը գտաւ տակէն , բացաւ : Հարիւր ոսկի կար մէջը
քարտի մը հետ , որուն վրայ լատիներէն գրուած էր . «Ժա-
ռանգորդս եղիր դուն որ բաւական խելք ունեցար այս
արձանագրութեան իմաստը հասկնալու , և իմ դրամս
ինձմէ աւելի աղէկ գործածէ՛ :»

Ուսանողը , վերջին ծայր ուրախացած այս գիւտին
վրայ , քարը նորէն առաջուան պէս տեղը դրաւ , և Սա-
լամանքայի ճամբան բռնեց՝ ուսումնականին հոգին հետը
առած :

Ով որ ալ ըլլաս , ընթերցող բարեկամ , այս երկու
ուսանողներէն մէկուն կամ միւսին պիտի նմանիս : Եթէ
այս գիրքը կարդաս առանց ուշադրութիւն ընելու անոր
պարունակած բարոյական ծանօթութեանց , բնաւ օգուտ
չպիտի քաղես ընթերցումէդ . իսկ եթէ ուշադրութեամբ
կարդաս , պիտի գտնես անոր մէջ , Որատիոսի⁽⁶⁾ խրատին
համեմատ , օգտակարը հաճելիին խառնուած :

ԼԸ ՍԱԺ⁽⁷⁾

ԱՌԱԾ . — Զուրդ խառնակ .

Գործը զննե՛ սակե՛ն :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Սալամանքա . — Քաղաք Սպանիոյ մէջ :

(2) Քանդակել . — Գիրեր կամ պատկերներ գծել յատուկ գործիքով՝
փայտի կամ քարի վրայ :

(3) Տապանագիր . — Գերեզմանի վրայ բանդակուած արձանագրութիւն :

(4) Այլանդակ . — Արտառոց , տարօրինակ :

(5) Ողջամիտ . — Աղէկ մտածող :

(6) Որատիոս . — Քրիստոսի ժամանակակից Լատին երեւելի բանաստեղծ :

(7) Լը Սաժ . — Ֆրանսացի նշանաւոր վիպագիր :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞ր է Սալամանքա: — Ուսանողները ինչու
կանգ առին: — Յետոյ ինչ ըրին: — Ի՞նչ պատահեցաւ իրենց: — Քա-
րին վրայի արձանագրութիւնը ինչէն մաշեր էր: — Ուսանողներուն
պզտիկը ինչ բնաւորութիւն ունէր եւ ինչ ըրաւ: — Մեծը ինչ ըրաւ:
— Քարին տակը ինչ կար: — Տոմսակին վրայ ինչ գրուած էր: — Այս
պատմութենէն ինչ պէտք է սորվինք: — Ո՞վ է Որատիոս: — Ո՞վ է
Լը Սաժ: — Ի՞նչ կը նշանակէ վերոգրեալ առածը:



2. ԳԱՅԼԸ ԵՒ ԱՐԱԳԻԼԸ

Գայլը, օր մը, հացկերոյթի⁽¹⁾ էր դացեր
Իր մէկ հարուստ ազգակցին .

Հոն կուշտ ու կուռ⁽²⁾ այնքան կերան խմեցին
Գառներ, ուլեր ու քածեր⁽³⁾,

Որ կոկորդին մէջ ոսկոր մը կկցած էր .

Գայլը կ'ոռնար միշտ խեղճուկ
Սրճակեղով խուլ կոծեր:

Բայց իր բախտէն արագիլ⁽⁴⁾ մը անմեղուկ
 Քովէն կ'անցնի այդ պահուն .
 Եւ գըթալով անոր վրան ,
 Սուր կըտուցումը իր երկայն
 Դուրս կը քաշէ փուշն խկոյն ,
 Ու կափկափով⁽⁵⁾ մը սիրուն
 Կ'առաջարկէ որ գայլն իրեն վարձք մը տայ :
 Վարձք մի՞ , ոռնայ գայլն անսիրտ
 Ըսպառնագին⁽⁶⁾ ձայնով բիրտ⁽⁷⁾ ,
 Ինչե՛ր կ'ըսես , խե՛նդ տըղայ ,
 Փառք չըտա՞ս որ վիզդ ամբողջ
 Իմ կոկորդէս դուրս հանեցիր ողջ առողջ :
 Ապերախտ ես եղեր , անմի՛տ անասուն .
 Ըզգուշացի՛ր , մէջ մ'ալ ճանկըս չյնաա դուն :

Զ. Ա.

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Հացկերոյթ. — Հիւրերու տրուած ճաշ :
- (2) Կուճ ու կուռ. — Աղէկ մը կշտացած :
- (3) Քած. — Էգ շուն :
- (4) Արագիլ. — Երկայն կտուցով թռչուն մը :
- (5) Կափկափ. — Արագիլին ձայնը :
- (6) Սպառնագին. — Վախ ազդող :
- (7) Բիրտ. — Կոշտ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Գայլը ո՛ւր գացեր էր : — Ի՞նչ կերան : — Ի՞նչ պատահեցաւ գայլին : — Ի՞նչ վիճակի մէջ էր գայլը եւ ի՞նչ կ'ընէր : — Այդ միջոցին ո՞վ անցաւ հոնկէ : — Արագիլը ի՞նչ տեսակ թռչուն է : — Արագիլը ի՞նչ ըրաւ : — Յետոյ ի՞նչ խնդրեց գայլէն : — Գայլը ի՞նչ պատասխան տուաւ :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Գ. Ա. Ն. Զ. Ա. Ն. Ա. Կ. Ը.

Փոքրիկ Լեւոնը շատ աղէկ կ'աշխատի իր դասերուն , եւ հայրը ամէն շաբթու 20 փարս կու տայ անոր : Լեւոն

խնայասէր է : — Տարւոյն վերջը , գանձանակը կը բա-
նայ կարծելով թէ պիտի գտնէ . . . : — Բայց կը զարմանայ
կը մնայ . 60 դր. կայ . . . իր ծնողքը գաղտուկ դրամ
նետեր են մեզը : Լեւոն թերթի մը բաժանորդ կը գրուի :

3. ԿԱՄՔԻՆ ՈՒԺԸ

Պատէնի⁽¹⁾ Վերթայմ քաղաքին մէջ Սէլամա Բանց
անուանով վեց տարեկան գերմանացի աղջկան մը ոտքերն
ու ձեռքերը անդամալուծուեցան⁽²⁾ 1886ին , ուղեղա-
տապի⁽³⁾ հետեւանքով : Չքաւոր ծնողքի զաւակ էր , և
իր կեանքը տառապանքներու շարք մը պիտի ըլլար ապա-
հովարար : Բայց այդ կամքի տէր աղջիկը կորով⁽⁴⁾ ունէր .
ուստի փորձեց աշխատիլ իր լեզուովն ու չրթուհիներովը
որոնք առողջ մնացած էին :

Նախ յաջողեցաւ գործածել ուտելիքի սպասները⁽⁵⁾ .
չրթուհիներով կը բռնէր պատառաքաղը , և լեզուովը կը
զատէր կերակուրին պատառները . յետոյ կրցաւ նոյն իսկ
հեղուկ ուտելիքին դգալը առանց թափելու բերանը տա-
նիլ : Քիչ ետքը վարժուեցաւ բերնով գիր գրելու , նաև
կար կարելու . չրթուհիներովը ասեղը կը կեցնէր սեղանին
վրայ , և լեզուովը թելը կ'անցընէր :

Սէլամա Բանց տասը տարեկան հասակին մէջ գուլպայ
հիւսել սորվեցաւ , միշտ լեզուովը : Մէկ ասեղը բռնելէ
անմիջապէս ետքը՝ թելը բերնով ձախ ուսին կողմը կը
քաշէր , և հիւսուածքին թելը կը դարձնէր դարձեալ բեր-
նով : Յետոյ կեռ ասեղով ալ սկսաւ ժանեակ շինել , և
կրցաւ յաջողիլ մինչև ամենամուրը ձեռագործներու մէջ ,
ինչպէս յաջողած էր ամենամաքուր գիր գրել : Ուսաւ

նաև գծագրութիւն : Վերջապէս այս խելացի և հաստատա-
միտ⁽⁶⁾ աղջիկը կրցաւ ընել լեզուին ծայրովը ինչ որ բազ-
մաթիւ մարդիկ կարող չեն ընել երկու ձեռքով :

Սէլմա Քանց, որ մեռած է 1903ին, իր ձեռք բե-
րած այս յաջողութեանց շնորհիւ կրցաւ երջանիկ կեանք
մը ունենալ երկրի վրայ, նոյն իսկ ինքը մխիթարութիւն
ներշնչելով⁽⁷⁾ յաճախ կեանքի դժուարին պարագաներուն
մէջ տառապող իր ընկերուհիներուն :

Ա.Ռ.Ա.Ծ. — Ո՞ր քանաչիւն կը ցոյայ .

— Այն որ անդուշ կը գործէ :

Մարդ երջանիկ ե՞րբ կ'ըլլայ .

— Երբոր չի փախչիր գործէ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Պատէն. — Գերմանիոյ փոքր պետութիւններէն մէկն է :

(2) Անդամալուծուիլ. — Ձեռքը ոտքը չբռնել :

(3) Ուղեղասալ. — Ուղեղի հիւանդութիւն մը որ շատ անգամ մա-
հացու է :

(4) Կորով. — Ուժ :

(5) Սպաս. — Ամաններ եւ գործիքներ :

(6) Հաստատմիտ. — Միտքը չփոխող :

(7) Ներշնչել. — Ազդել, տալ :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ո՞ր է Պատէն. — Ի՞նչ պատահեցաւ փոքրիկ
Սէլմային. — Սէլմա ինչ միջոցներ գտաւ աշխատելու. — Ի՞նչպէս
գուլպայ կը հիւսէր. — Ի՞նչ տեսակ կեանք ունեցաւ Օրիորդ Քանց.
— Ի՞նչ պիտի ըլլար իր կեանքը եթէ չաշխատէր. — Այս պատմու-
թիւնը կարդալէ յետոյ ինչ կը մտածէք այն աղջիկներուն վրայ որոնք
ողջ առողջ անդամներ ունին եւ չեն գործածեր զանոնք :

4. Գ Ի Ի Տ Խ Ա Չ

Գիւտ Սաչը խաչափայտին գտնուելուն յիշատակութիւնն է : Օրէնք էր որ մահապարտներու⁽¹⁾ և մանաւանդ խաչեալներու մարմինն ալ, տանջարանն ալ իրենց տեղը կը մնային : Քրիստոսի մարմինը Պիղատոսի⁽²⁾ հրամանով թաղում ունեցաւ, բայց խաչը մնաց Գողգոթայի⁽³⁾ վրայ միւս խաչերուն հետ և հոն թաղուած էր, երբ Քրիստոսն էութեան նախատինք⁽⁴⁾ ընելու համար Գողգոթան իբր աղբիւս⁽⁵⁾ գործածուեցաւ :

Այսպէս շարունակեց երեք հարիւր տարի :

Կոստանդիանոսի⁽⁶⁾ դարձէն ետքը, իր մայրը Հեղինէ⁽⁷⁾ Երուսաղէմ այցելեց սուրբ տեղերը տեսնելու, և Քրիստոսի խաչն ալ գտնելու նպատակաւ : Յուդա անուսով բանգէտ Հրեայ մը Գողգոթային տեղը ճշդելու օգնեց, և պեղումներ⁽⁸⁾ սկսան . քսան թիզ⁽⁹⁾ խորութեան ներքեւ երեք խաչեր քովէ քով գտնուեցան, բայց անհնար եղաւ Քրիստոսի խաչը միւս երկու աւազակներուն խաչերէն զատել : Նոյն ժամուն մեռած պատանիի մը դիակը հետողհետէ խաչերուն վրայ դրին հրաշքի սպասելով, և երրորդին վրայ պատանիին յարութիւն առնելովը՝ Քրիստոսի բուն խաչը ճանչցուեցաւ :

Յուդա Հրեան ալ քրիստոնէութիւնը ընդունեցաւ, և յետոյ Կիւրեղ եպիսկոպոսը եղաւ ու իր մօր՝ Աննայի հետ նահատակուեցաւ :

Սաչափայտը Հեղինէի ձեռքով Երուսաղէմի մեծ տաճարին մէջ գետեղուեցաւ, և չորս հարիւր տարի շարունակ հոն մնաց :

Սաչին գիւտը տեղի ունեցաւ 327ին :

ՀԱՆԵԼՈՒԿ Ա. (*) — Ճերմակ դաշխի,
 Սեւ սեւ հնճիկ .
 Ձեռքով ցանի,
 Լեզուով հնճի :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Մահապարս.** — Մահուան դատապարտուած :
- (2) **Պիղատոս.** — Հռովմայեցի դատաւոր, որ մեռած է Քրիստոսի 39 թուականին :
- (3) **Գողգոթա.** — Երուսաղէմի մէջ լեռ մը ուր խաչուեցաւ Յիսուս :
- (4) **Նախասինք.** — Պատուոյ դպչելիք խօսքեր :
- (5) **Աղբիւս.** — Աղբ նետելիք տեղ (չէօք չէ+) :
- (6) **Մեծն Կոստանդիանոս.** — Հռովմայեցի քրիստոնեայ կայսր, Գ. դարուն մէջ :
- (7) **Ս. Հեղինէ.** — Մեծն Կոստանդիանոսի մայրը որ մեռած է 327ին :
- (8) **Պեղում.** — Փորելու գործողութիւն :
- (9) **Թիգ.** — Բացուած ձեռքի մը չափը ճկոյթին ծայրէն մինչև բութին ծայրը (+ռլլ) :
- (10) **Մաղաքիա Ա.բ. Օրմանեան.** — Կ. Պոլսոյ Հայոց նախկին Պատրիարք :

ՀԱՐՅՈՒԾՆԵՐ. — Ի՞նչ է Դիւտ Խաչը. — Հրեաները մահապարտներուն եւ խաչեալներուն մարմինը ինչ կ'ընէին. — Քրիստոսի մարմինը եւ խաչը ինչ ըրին. — Քրիստոսի հետ ուրիշ որոնք խաչուած էին. — Անոնց խաչերը ինչ ըրին. — Ո՞վ էր Պիղատոս. — Ո՞ր կը գտնուի Գողգոթա լեռը. — Ո՞վ էր Մեծն Կոստանդիանոս. — Ո՞վ էր Հեղինէ. — Հեղինէ քանի տարի ետքը Երուսաղէմ գնաց եւ ինչո՞ւ. — Ո՞վ ճշդեց Քրիստոսի խաչելութեան տեղը. — Խաչերը ո՞րկէ գտնուեցան. — Ի՞նչ միջոց գործածեցին Քրիստոսի խաչը միւսներէն զատելու համար. — Այս հրաշքը ինչ ազդեցութիւն ունեցաւ. — Ո՞ր պահուեցաւ Քրիստոսի խաչը. — Խաչին զիւտը երբ տեղի ունեցաւ. — Ո՞վ է այս գրուածքին հեղինակը :

(*) **ԾԱՆՈԹ.** — Հանելուկի լուծումները նշանակած ենք այս գրքին վերջը :



5. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Աղուէսն օր մը գընաց ճաշի հրաւիրեց
Երկայնկրտուց արագիլը բարձրալիզ :
«Եղբայր, ըսաւ, հաւտա՛ անկեղծ գորովիս⁽¹⁾,
Քեզ հետ ճաշել՝ ինձի հաճոյք մըն է մեծ :»
Արագիլը ելաւ գընաց, բայց, եղո՛ւկ⁽²⁾,
Որ չէր ճանչցիր չար աղուէսը ամսեղուկ⁽³⁾ :
Առջին գրրաւ ցած աման մը լայնբերան,
Ուր խեղճ թռչունն ի դուր կըրտուցն անդադար
Դարձուց դարձուց ու չրկերաւ մէկ պատառ,
Եւ աղուէսը լափեց⁽⁴⁾, հատցուց ամէն բան :
Արագիլը լռիկ մնջիկ մեկնեցաւ
Այդ խնջոյքէն⁽⁵⁾՝ փորն անօթի, սիրտը ցաւ :
Օր մ'ալ հայիս հրաւէր մ'եկաւ աղուէսին .
Արագիլը չըթեղ⁽⁶⁾ սեղան էր շտկեր .

Վազեց գրնաց մեր պարոնը շատակեր .
Եւ իր առջին նեղ աման մը քրչեցին ,
Երկայն , երկա՛յն վիզով աման մը շատ նեղ ,
Ուր ցըռուկը⁽⁷⁾ փորձեց խոթել քանի հեղ ,
Բայց չըկրցաւ , և տուն դարձաւ վշտահար .
Մինչ թռչունը կերաւ խորտիկն⁽⁸⁾ համադամ⁽⁹⁾ ,
Յետոյ պոռաց . «Նորէ՛ն եկուր , բարեկա՛մ ,
Ամէն ատեն դուռըս բաց է քեզ համար :»

ՀԱՆԵԼՈՒԿ Բ . — Կռնակը փայտե ,
Փորը մազե ,
Առտուները
Վրադ կը վազե :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Գորով . — Սէր :
- (2) Եղո՛ւկ . — Աւա՛ղ :
- (3) Սմանդուկ . — Ծածկամիտ :
- (4) Լափել . — Անյագ կերպով ուտել :
- (5) Խնջոյք . — Հանդիսաւոր ճաշ , կոչունք :
- (6) Եֆեղ . — Փառաւոր :
- (7) Յռուկ . — Զորքոտանիներու քիթը և բերանը :
- (8) Խորտիկ . — Համեմուած կերակուր :
- (9) Համադամ . — Համով :

ՀԱՐՅՈՒԾՆԵՐ . — Աղուէսը ինչ ըրաւ եւ ինչ ըսաւ արագիլին .
— Ի՞նչ պատահեցաւ արագիլին . — Ի՞նչ ըրաւ արագիլը աղուէսին .
— Ի՞նչպէս կը գտնէք արագիլին վարմունքը իրեն եղած նախատին-
քին փոխարէն :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

2 . ԴԱՏԱՐԿ ՀԱՍԿԸ

Հողագործ մը իր տղուն հետ կը պսրսէր հեռուն ցո-
րեմներու ետ : — Տղան (խօսեցուցե՛ք) կը զմայլի գեղե-

ցիկ հասկի մը վրայ որ գլուխը շիսակ բռնած է : —
Հայրը կը նախընտրէ գլուխնին վար կախող հունձները
(ինչո՞ւ) : — Տղաք ալ կան այսպէս (բացատրեցէ՛ք) : —
Տղուն որոշումը :

6. ԼԵԼԱԿԻ ՃԻՒՂԸ

Աղքատ գործաւոր կին մը, ծաղկավաճառի մը խա-
նութին ցուցափեղկին⁽¹⁾ կռթնած, լելակները⁽²⁾ կը դի-
տէր անձկութեամբ⁽³⁾ : Զիւնը դուրսը կը տեղար ցուրտ,
թանձրախիտ :

Վարանքով⁽⁴⁾, կինը վաճառատան դուռը բացաւ :

— Սա լելակի ճիւղը քանի՞ կու տաս, ըսաւ զայն
ձեռքը առնելով :

— Տասը ֆրանք :

— Տասը ֆրանք, գոչեց գործաւորուհին, և ձեռքէն
ձգեց ծաղիկները հաշուեսեղանին վրայ :

Կաթիլ մը արցունք ինկաւ աչքէն :

— Խեղճ պղտիկա, աղաղակեց գործաւոր կինը : Լե-
լակներուն ծաղկած ատենը ծնած էր . . . : Եւ պիտի մեկ-
նի երթայ աշխարհէս առանց ճիւղ մը լելակ ունենալու
ձեռքը :

— Զաւակնի՞դ կորսնցուցիք, հարցուց ծաղկավաճա-
ռուհին յուզուած : Եւ առաւ, ոչ թէ ճիւղ մը, այլ
խուրձ⁽⁵⁾ մը լելակներ, լեցուց թշուառ մօրը գոգնոցը,
ու մերժելով անոր տուած դրամը .

— Թո՛ղ չըսուի թէ, ըսաւ, դրամ առի զաւկիդ յե-
տին մահի՞ճը⁽⁶⁾ զարդարելու համար :

ՀԱՆԵԼՈՒԿ Գ. — Կը շրսէ ու ականց չունի ,
Կը խօսի ու բերան չունի :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Յուցափեղկ. — Խանութներուն առջեւի մասը :
- (2) Լեխակ. — Գարնան ծաղիկ մը որուն եղբեւանի ալ կ'ըսեն (լեյ-
[Լ-Է]) :
- (3) Անձկուքիւն. — Սիրահատնում :
- (4) Աարանի. — Տարակոյս, երկչոտութիւն :
- (5) Խուրձ. — Փունջ (տէճէճ) :
- (6) Մահիւն. — Անկողին :

ՀԱՐՑՈՒԹՆԵՐ. — Աղքատ գործաւոր կիներ ինչ կ'ընէր. — Ի՞նչ է
ցուցափեղկը. — Ի՞նչ է լեխակը եւ ինչ գոյն ունի. — Տասը ֆրանքը
քանի դրուշ է. — Ծաղկալաճառուհին ինչ ըսաւ աղքատ մօրը եւ
ինչ տուաւ անոր. — Ի՞նչ տեսակ գործ էր այս ըրածը. — Ի՞նչ բա-
րոյական կը գտնէք ասոր մէջ :

7. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԽՄՈՒԵԼԻՔ ԸՄՊԵԼԻՆԵՐԸ


Չուրը ըմպելիներուն ամենէն օգտակարն ու առող-
ջապահիկն է :

Ամէն Չուր չի խմուիր . աղբիւրներու Չուրը սքանչելի
է , բայց հորերուն և վտակներուն Չուրերը շատ անգամ
մանրէներով⁽¹⁾ լեցուն են , և ժանտաստեղի⁽²⁾ նման ծանր
հիւանդութեանց պատճառ կ'ըլլան :

Ճահիճներու⁽³⁾ և լճակներուն Չուրը ա՛լ աւելի վտան-
գաւոր է . մէկ ումպ մը խմելով , մարդ շատ անգամ
մահացու տենդերով կը վարակուի :

Ուստի , երբ աղբիւրի Չուր չգտնուի , պէտք է Չուրը
եռացնենք ու այնպէս խմենք , որովհետեւ եռացած Չուրին
մէջ մանրէները չեն ապրիր :

Ջուրը եռացնելէ յետոյ, բերանը գոց մաքուր ամանի մը մէջ դնելու է որ պաղի :



Մանրադէտով⁽⁴⁾ տեսնուած կաթիլ մը շեռացած ջուր

Այս զգուշութիւնը միշտ օգտակար է, և անհրաժեշտ, երբ համաճարակ⁽⁵⁾ կայ երկրի մը մէջ. այդ միջոցին ջուրը առանց եռացնելու խմելը յիմարաբար ինքզինքը մահուան ենթարկել է :

Թէյը և սուրճը կազդուրիչ⁽⁶⁾ ըմպելիներ են, բայց քիչ խմելու է. ապա թէ ոչ ջրային հիւանդութեանց պատճառ կ'ըլլան :

Գարեջուրը առողջապահիկ ըմպելի մըն է, սակայն եթէ շատ խմուի, ստամոքսին կը վնասէ :

Վերջապէս գինին ալ կրնայ խմուիլ, պայմանաւ որ աղէկ տեսակէ ըլլայ և չարաչար չգործածուի :

Շատ անպամ գինիներուն մէջ դեղեր և քիմիական նիւթեր և ալքոլ կը խառնեն. այն ատեն շատ վտանգաւոր են :


ՀԱՆՆԵԼՈՒԿ Դ. — Փոր ունի փոփոտը ունի .

Գլուխ ունի շեզու չունի :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Մանրէ.** — Օղին կամ ջուրին մէջ ապրող անտեսանելի կենդանի որ շատ անգամ հիւանդութեանց պատճառ կ'ըլլայ (Ֆէրու):
- (2) **Փանօսեօնդ.** — Աղիքներու ծանր հիւանդութիւն մը (Բէֆօ):
- (3) **Ճահին.** — Տեղ մը ժողովուած անշարժ ջուրեր:
- (4) **Մանրադէս.** — Փոքր առարկաները մեծ ցնելով ցոյց տուող գործիք:
- (5) **Համանարակ.** — Ամէն կողմ տարածուած հիւանդութիւն:
- (6) **Կազդուրիչ.** — Զօրացնող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞րն է ամէնէն առողջապահիկ ըմպելին: — Ամէն ջուր կը խմուի: — Եթէ աղէկ ջուր չգտնուի ինչ ընելու է: — Ինչո՞ւ պէտք է եռացնել ջուրը համանարակի ատեն:



8. ԱԳՌԱԻՆ⁽¹⁾ ՈՒ ԱՂՈՒԷՍԸ

Հսկայ⁽²⁾ ծառի մը կատար
Թառած աղուան անօթի,
Ոստին վրայ կը կենար
Կրատւցին մէջ բլունած շերտ⁽³⁾ մը պանիրի:

Աղուէսն , որ հոն կը շրջէր ,
Հոտն առնելով պանիրին ,
Վազեց գրնայ , ծառն ի վեր ,
Երկրննայով սրբտագինս(4)
Գոչեց . «Բարե՛ւ , ո՛վ եղբայր ,
Այդ ի՛նչ աղուոր կ'երեւաս .
Փետուրներդ լուսավառ(5)
Կը փալիւրլան դերթ մետաքս :
Եթէ ձայնիկդ ալ աղու(6)
Գրաւիչ(7) է դէմքիդ պէս ,
Բոլոր աշխարհ թո՛ղ հըլու(8)
Գերի ըլլայ քու վեհաշուք(9) անձիդ վէս(10) :»
Ագռաւն իսկոյն փըքացած(11)
Այս գովեստէն կեղծ ու սին
Ուզեց ցոյց տալ անկասկած
Իր անուշ ձայնն աղուէսին :
Բայց հաղիւ թէ բացաւ կտուցն իր վրտիտ ,
Պանիրն ինկաւ յանկարծ վար .
Եւ կենդանին նենգամիտ(12)
Առաւ փախաւ սրբավար(13) :
Ու հեռուէն կը պոռար .
«Ամէն անգամ որ ունենաս
Համեղ պանիր ,
Կրնայ հասնիլ քեզի վրնաս
Եթէ հաւտաս
Գովեստներու սուտ և նանիր(14) :»

Ա.Ռ.Ա.Ծ . — Գեշիւր թափած եղը
Չի շեցուիր նորհեմ տեղը :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ագռաւ. — Տեսակ մը գիշակեր սև թռչուն:
- (2) Հսկայ. — Շատ մեծ:
- (3) Երբ. — Կտոր:
- (4) Սրագիւն. — Սրտանց:
- (5) Լուսավառ. — Լոյսի պէս փայլուն:
- (6) Աղու. — Անուշ:
- (7) Գրաւիչ. — Հիանալի:
- (8) Հլու. — Հնազանդ:
- (9) Վեհաճուք. — Փառաւոր:
- (10) Վէս. — Հպարտ:
- (11) Փեացած. — Հպարտացած:
- (12) Նենգամիտ. — Խաբերայ:
- (13) Սրավար. — Շուտ շուտ վազելով:
- (14) Նանիր. — Պարապ:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ագռաւը ուր ելած էր. — Ագռաւը ինչ տեսակ կենդանի է. — Աղուէսը ինչու անոր քով եկաւ. — Ի՞նչ ըսաւ անոր. — Ագռաւը ինչ ըրաւ. — Այն ատեն աղուէսը ինչ ըրաւ եւ ինչ ըսաւ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

3. ԳՏԱԾՆԻՍ ՄԵՐԸ ԶԷ

Սուրբիկ դրամապանակ մը գտաւ փողոցէն (նկարագրեցե՛ք թէ ի՞նչպէս բացաւ, եւ մէջը գտաւ 50 դրո.). թէ ի՞նչ կարելի է գնել 50 դրո.ով (Սուրբիկի խորհրդածութիւնները): — Բայց այդ դրամը ի՞րն է: — Սուրբիկ կ'երթայ մօրը խորհուրդ կը հարցնէ: — Մօրը պատասխանը (ի՞նչ պէ՛տ է ընէ այն դրամը):

9. Ո՞Ր ԸՄՊԵԼԻՆԵՐԸ ՊԷՏՔ ԶԷ ԽՄԵԼ


Առողջ բլլալու համար, պէտք է երբեք ալքօլ կամ ալքօլ պարունակող ըմպելիներ խմել :

Ալքօլ խմելու սովորութիւնը ալքօլականութիւն յառաջ կը բերէ : Ալքօլականութիւնը ամէնէն ահուելի հիւանդութիւնն է :


Արդարեւ, ալքօլը և ալքօլ պարունակող ըմպելիները զօրաւոր թոյներ են :

Անմիջապէս չեն սպաններ, բայց կամայ կամայ մարմնին գործարանները կը փճացնեն :

Ալքօլականները նախ ստամոքսի խանգարումներ կ'ուսնան, շարունակ կը փոխեն, արիւնը իրենց լեարդին⁽¹⁾ մէջ կը համախտուի⁽²⁾, ստամոքսին կը կարմրի, կ'ուռեհայ և կը ծածկուի խորունկ վէրքերով, անբուժելի այտուցքներով⁽³⁾ :



Առողջ ուղեղ




Ալքօլականութենէ խաբարուած ուղեղ


Յետոյ սիրտը կը վարակուի, և աղէկ չի գործեր. արիւնը կանոնաւորապէս շրջան չ'ընէր, և ճնշերակնորուն⁽⁴⁾ մէջ կը մածնու⁽⁵⁾. ալքօլականները յաճախ կաթուածահար կ'ըլլան :

Արտէն ետքը, թոքերը⁽⁶⁾ կը մաշին ալքօլէն :

Վերջապէս ջղային դրութիւնը կը խանգարուի • գրեթէ բոլոր ալքոլականներուն մարմինը կամ անդամները յարատե դողով մը կը ցնցուին, և կանուխ կամ ուշ անդամալոյծ կ'ըլլան, այսինքն անշարժութեան կը դատապարտուին :



Առողջ սսամոխ



Ալքոլականի մը սսամոխին մէջ խոցեր

Ալքոլականութենէն յառաջ եկած բոլոր հիւանդութիւնները մահացու են, և բոլոր ալքոլականները երիտասարդ կը մեռնին :

Հաշիւ եղած է որ, ԺԹ. դարուն մէջ, միայն ալքոլականութենէ աւելի շատ մարդ մեռած է քան պատերազմներէ :

Ալքոլամոլները յաճախ յիմար ու ոճրագործ կ'ըլլան :

Վերջերս հաշիւ ըրած են որ Պրանսայի մէջ 100 մարդասպաններու 57ը, 100 հրձիգներու 57ը և վէրքի ու ծեծի համար դատապարտուած 100 յանցաւորի 90ը ալքոլամոլներ են :

Ասկէ զատ, ալքոլամոլները միայն իրենք չեն որ կը մեռնուին, այլ իրենց զաւակներն ալ ընդհանրապէս հիւանդկախ, տխեղծ^(?), ապուշ կամ խենդ կ'ըլլան, և իրենց հայրերուն պէս հիւանդանոցներու կամ բանտերու մէջ կը մեռնին :

ՀԱՆԵՆՈՒԿ Ե. — Ազի ունի
Հոգի չունի :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Լեարդ.** — Ներքին գործարան մը որ կը ծառայէ մաղձ արտադրելու
- (2) **Համախառնուիլ.** — Տեղ մը ժողովուրիլ
- (3) **Այտուցք.** — Ուսուցք
- (4) **Շնչերակ.** — Այն երակները որոնք արիւնը սրտէն անդամներուն կը տանին
- (5) **Մաժնուլ.** — Փակչիլ
- (6) **Թոք.** — Այն ներքին գործարանը որով կը շնչենք
- (7) **Տխեղծ.** — Տկար, նիհար

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Առողջ ըլլալու համար ինչ բան խմելէ պէտք է զգուշանալ. — Ալքով խմելէն ինչ յառաջ կու գայ. — Ալքովամոլներուն ստամոքսը ինչ կ'ըլլայ. — Ալքովամոլներուն սիրտը ինչ կ'ըլլայ. — Սիրտէն ետքը որ գործարանները կը վնասուին. — Ալքովամոլներուն ուրիշ ինչ կը պատահի. — Իրենց զաւակները առողջ կ'ըլլան.

10. ՓՈՔՐԻԿ ՏԱԿԱՌԸ

Շիքօ գինեպանը և Մակրուառ ազարակապանուհին սակարկութիւն մը ըրեր էին : Ազարակապանուհին եօթանասուն երեք տարեկան ըլլալով, չէր կրնար աշխատիլ, հետեւաբար Շիքօ տարուէ տարի դումար մը պիտի վճարէր մինչև անոր մահը, և ասոր փոխարէն, անոր մահէն ետքը, ազարակը ինքը պիտի ժառանգէր :

Բայց պառաւը քաջասողջ էր, և Շիքօ կ'ուզէր որ անխկա շուտով մեռնէր :

Ուստի Շիքօ միջոցներ խորհեցաւ :

Օր մը, վերջապէս, գնաց տեսնել ազարակապանուհին, ձեռքերը շփելով, ինչպէս սակարկութիւնը առաջարկած օրը ըրած էր :

Եւ քանի մը վայրկեան խօսելէ ետքը, ըսաւ .

«Ինչո՞ւ , մայրի՛կ , մեր տունը ճաշի չէք դար , նա-
յինք . ինչե՛ր կ'ըսեն կոր , գիտէ՞ք . կ'ըսեն թէ ա՛լ բարե-
կամ չենք իրարու հետ , և ասիկա սրտիս շատ կը դպչի :
Գիտէ՞ք որ մեր տունը ձեզմէ դրամ ուղող չկայ : Ես կե-
րակուրի նայող մարդ չեմ : Որչափ որ կ'ուզէք , եկէ՛ք
առանց քաշուելու :»

Տիկին Մակուլառ անոր մէկ խօսքը երկուք չըրաւ ,
և վաղայաջորդ օրը⁽¹⁾ , երբ իր յոսկնակուլը⁽²⁾ վաճառանոց
կ'երթար իր ծառային հետ , առանց քաշուելու իր ձին
ախոռ սանել տուաւ , և գնաց խոստացուած ճաշը խնդրեց :

Գինեպանը , ուրախութեամբ , հիւրընկալեց զայն իբ-
րեւ ատիկին մը , ու երջիկ , հաւ և ուրիշ համեղ ուտելիք-
ներ հրամցուց : Բայց Մակուլառ գրեթէ բան մը չկերաւ ,
որովհետեւ իր մանկութենէն ի վեր ժուժկալ⁽³⁾ , քիչ մը
ապուրով և վրան կարագ քսուած հացի միջուկով ապ-
րած էր միշտ :

Շիքօ կը պնդէր , իր յոյսը ի դերեւ ելլելը⁽⁴⁾ տեսնելով :
Պառաւր բան մը չէր խմեր : Սուրճն ալ մերժեց :

Եւ գինեպանը ըսաւ .

— Փոքրիկ դաւաթ մը քօնեաք կ'ընդունիք անշուշտ :

— Ո՛հ , այո՛ , ատոր չէ չեմ ըսեր :

Այն ատեն Շիքօ , իր թոքերուն բոլոր ուժովը , գի-
նետան մէկ ծայրէն միւսը՝ պոռաց .

«Ռօզալի՛ , ամէնէն պատուական քօնեաքներէն բն՛ր :»

Եւ սպասուհին եկաւ , ձեռքը բռնած երկար չիչ մը :

— Ատոր համը նայեցէ՛ք , մայրի՛կ , նշանաւոր բան է :

Եւ խեղճ կինը սկսաւ խմել , կամաց կամաց , ումպ
ումպ , հաճոյքը երկարելով : Երբ դաւաթը պարպեց , ըսաւ .

— Այո՛ , ընախ՛ր բան է ասիկա :

Դեռ խօսքը չաւարտած , Շիքօ դաւաթը վերստին
լիցուց : Պառաւր մերժել ուզեց , բայց չկրցաւ , և առա-
ջինին պէս , աս ալ ըմբոյխնեց⁽⁵⁾ :

Այն ատեն , գինեպանը ուղեց երրորդ մըն ալ հրամ-
ցընել , բայց մայրիկը դիմադրեց : Շիքօ միշտ կը պնդէր :

— Ասիկա կաթի պէս բան մըն է , նայէ՛ . ես տասը
տասերկու հատ կը խմեմ առանց աւրուկու : Շաքարի
պէս կը հալի , գլխու ալ չի վարներ . կարծես մարդուս
չեղուն վրայ կը ցնդի , և առողջութեանս ալ շատ օգտա-
կար է :

Որովհետև շատ ախորժեր էր , հաւանեցաւ . բայց
գաւաթին կէսը խմեց :

Այն ատեն Շիքօ դռչեց .

— Կեցէ՛ք , քանի որ ախորժեցաք , փոքրիկ տակառ
մը տամ ձեզի , և ասիկա թող մեր բարեկամութեան
նշանը ըլլայ :

Միամիտ կինը չմերժեց , և մեկնեցաւ քիչ մը գլուխը
տաքցած :

Հետեւեալ օրը , գինեպանը Մակլուտո խաթունին
տունէն ներս մտաւ , և իր կառքէն դուրս հանեց երկաթ
չրջանակներով տակառիկ մը . յետոյ ուղեց որ մէջինին
համը նայի , ցուցնելու համար թէ միեւնոյն ընտիր տեսա-
կէն էր , և երկուքն ալ երեքական գաւաթ խմեցին :

— Երբոր ասիկա համնի , նորէն կը բերեմ : Մի՛ քաշ-
ուիք . ես ասանկ բաներու նայող մարդ չեմ : Որչափ շուտ
հատցնէք , այնչափ դո՛ն պիտի ըլլամ :

Յետոյ իր կառքը մտաւ ու մեկնեցաւ :

Չորս օր ետքը նորէն եկաւ : Պատաւը իր դրան առ-
ջեւ , ապուրին համար հաց կը ջարդէր :

Մօտեցաւ , «Բարի լոյս» ըսաւ , քովն ի վեր խօսեցաւ
անոր շունչը հոտաւրտալու համար , և ճանչցաւ ալքօլին
հոտը : Այն ատեն ժպտեցաւ :

— Պզտիկ գաւաթ մը քօնեաք կը հրամայեն՞ս ինձի ,
ըսաւ , և երկու երեք անգամ գաւաթնին բախեցին⁽⁶⁾ :

Քիչ ատենէն , գիւղին մէջ լուր տարածուեցաւ թէ

Մակլուառ խաթունը իր տանը մէջ կը գինովեար : Մերթ խոհանոցէն կը վերցնէին դինքը , մերթ բակէն , և երբեմն ալ շրջակայ ճամբաներէն , և տուն կը տանէին դիակի մը պէս զգայադիրկ(7) :

Շիքօ ա՛լ անոր տունը ոտք չէր կոխեր , և երբ անոր խօսքը ընէին , ախուր դէմքով մը կը մրմնջէր .

— Դժբախտ բան է այդ տարիքին մէջ ատանկ մոլութեան մը անճնատուր ըլլալ . մարդ երբ ծերանայ , ա՛լ իր անձին տէրը չըլլար կոր . օր մը գլխուն փորձանք մը պիտի բերէ :

Եւ իրաւ փորձանք բերաւ գլխուն : Յաջորդ ճմեռը մեռաւ Ծնունդին ատենները , գինովութեան ատեն ճիւղին մէջ իյնալով :

Եւ Շիքօ աղբարը ագարակին տէր եղաւ ըսելով .

«Եթէ ինքզինքը ըմպելիքի տուած չըլլար , դեռ տասը տարի կրնար ապրիլ :

ԿԻ ՏԸ ՄՕԲԱՍԱՆ


ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Վաղայաջորդ օրը. — Այն օրը որ վաղուան կը յաջորդէ . վաղը չէ միւս օր :
- (2) Յոպնակ . — Տեսակ մը գեղջուկ կառք :
- (3) Ժուժկալ . — Քիչով գոհացող :
- (4) Ի դերեւ ելլել . — Պարապ տեղը երթալ :
- (5) Ըմբոցխնել . — Վայելել , համը առնել :
- (6) Բախել . — Իրարու զարնել :
- (7) Զգայազիրկ . — Մարած , զգալու կարողութիւնը կորսնցուցած :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Գինեպանն ու ագարակապանուհին ի՞նչ սակարկութիւն ըրեր էին : — Շիքօ կ'ուզէր որ ագարակապանուհին երկար ապրի : — Ինչո՞ւ համար : — Շիքօ ինչ ըրաւ : — Ագարակապանուհին ընդունեց անոր առաջարկը : — Շիքօ ինչ նուէր տուաւ անոր : — Ի՞նչ նպատակով : — Յաջողեցա՞ւ իր նպատակին մէջ : — Գիւղին մէջ ինչ լուր տարածուեցաւ : — Ի՞նչ պատահեցաւ պառաւին : — Շիքօ ինչ ըսաւ անոր մահը լսելով :

II. ԽԵԶԵՓԱՌԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Խեչեփառ⁽¹⁾ մը տրդան ճրգած իր առջին ,
Կը պտըտէր յուշիկ⁽²⁾ ծրուած միշտ աջին :
Օգն աղուոր էր , և ալիքներն ալ ճերմակ
Կը ծածկէին դիրենք ինչպէս լայն վերմակ :
Յանկարծ մայրը գոչեց տրդուն «Ա՛խ , հոգի՛ս ,
Ինչո՞ւ այդպէս միշտ մէկ քովիդ կը հակիս⁽³⁾ •
Ուզիդ քալէ՛ որ տեսնողը քեզ հաւնի : »



— Մայրի՛կ , ըսաւ խեչեփառը պատանի ,
Ինչ որ տեսնեմ քեզմէ նոյնը կ'ընեմ ես •
Միշտ կը ջանամ ես քայլ առնել քեզի պէս •
Եթէ կ'ուզես որ չըծրոխմ մէկ քովիս ,
Ոչ թէ խօսքով , այլ վարմունքովդ ուղղէ դիս :

Ա.Ռ.Ա.Ծ . — Ինչ որ ցանես
Այն կը փաղես :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- (1) Խեչեփառ . — Պատեան ունեցող կենդանի մը որ ջուրին մէջ
կ'ապրի (շաղանօղ) :
(2) Յուշիկ . — Կամաց կամաց :
(3) Հակիլ . — Ծռիլ :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ի՞նչ է խեղեփառը: — Ի՞նչ կ'ընէր խեղեփառը: — Խեղեփառը ինչ ըսաւ իր ձագին: — Ձագը ինչ պատասխանեց: — Ի՞նչ կը մտածէք այս պատասխանին վրայ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

4. Ե Փ Ա Ծ Ձ Ո Ի Կ Ե Ր Ը

Օճնիկ շահ լաւ կը խնամէ իր կարմիր ձուկերը: — Չմեռ առտու մը, որպէս զի չմսին, սաք ջուր կը լեցնէ այն ամանին մէջ ուր դրած է զանոնք: — Չուկերը կը մեռնին: Նկարագրեցէ՛ք: — Ուրիշ անգամ Օճնիկ ասանկ խեղդուքիւն չպիտի ընէ:



12. Ս. ԷԶՄԻԱԾՆԱՅ ՔԱՆԳԱՐԱՆԸ

Ս. Էջմիածնայ Կաթողիկէին(1) թանգարանը(2) կը ծառայէ իբր աւանդատուն(3) եկեղեցական սպասանքու և սուրբի մասունքներու:

Թանգարանը փակուած է երկաթէ դուռով, որուն բանալիները երեք են, և կը դանուին տարբեր անձերու քով, անանկ որ երեք բանալիներու միացումովն է որ դուռը կարելի է բանալ :

Թանգարանին մէջ պահուած են .

Ս . Գեղարդը (4), որով Ղուկիանոս հարիւրապետը Քրիստոսի կողը վիրաւորեց .

Յիսուսի մէկ հրաշագործ պատկերը՝ Ամենափրկիչ կոչուած, որուն համար կ'աւանդուի թէ փայտի վրայ փորագրուած է Ս . Յովհաննէս Աւետարանչին ձեռքով .

Ս . Գրիգոր Լուսաւորչին Աջը և երկու երկաթէ քերիչներ(5) որոնցմով զինքը չարչարած են, կ'ըսուի .

Գևտադարձ Պետրոս Կաթողիկոսի(6) այն խաչը որով այդ հրաշագործ հայրապետը՝ Տրապիզոնի մօտ, ջրօրհնէքի ժամանակ, 1022 տարուոյ յունուար 6ին, գետին ընթացքը կտ դարձուց, ըստ աւանդութեան .

Նոյեան տապանէն մասնիկ մը դոր, դարձեալ ըստ աւանդութեան, հրեշտակի ձեռքով ստացաւ Ս . Յակոբ Մծբնայ հայրապետը(7) Մասիս լեռան վրայ .

Բազմաթիւ մասունքներ արծաթ և ոսկի տուփերու, աջերու և խաչերու մէջ, թանկագին քարերով զարդարուած :

Ապակեայ դարաններու մէջ շարուած են ուրիշ դասադան հնութիւններ, հին զգեստներ, եկեղեցական զարդեր, հին թանկագին ակիհներ, եպիսկոպոսական թագեր և զաւաղաններ, գոհարակուռ (8) մատանիներ, և այլն : Չգետաներուն մէջ ուշադրութիւն կը դրաւէ նուրբ ասեղնագործութեամբ և խորհրդաւոր նկարներով զարդարուած շուրջատ մը՝ Հնդկաստանի մէջ գործուած :

Հողկոյս Գէորգ Դ . Կաթողիկոսն(9) է որ կառուցած է էջմիածնայ տաճարին կից թանկագին այս շէնքը ուր իր խնամքով հաւաքուած են յիշեալ եկեղեցական առարկա-

հերէն շատերը, որոնք մեծ մասամբ անգին ու պատուա-
կան հնութիւններ են:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Կաթողիկէ.** — Մայր եկեղեցի:
- (2) **Թանգարան.** — Արժէքաւոր առարկաներ պահելիք տեղ:
- (3) **Աւանդատուն.** — Եկեղեցւոյ պահարան:
- (4) **Գեղարդ.** — Տէգ, երկար կոծով և սրածայր երկաթով զէնք:
- (5) **Քերիչ.** — Քերելու և տանջելու գործիք մը:
- (6) **Գեաղարձ Պետրոս Կաթողիկոս.** — Այս հայրապետը 35 տարի
կաթողիկոսութիւն ըրած՝ և վախճանած է 1054ին Սըվազի մէջ:
- (7) **Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ.** — Եպիսկոպոս Դ. դարու,
հորաքեռորդի Ս. Լուսաւորչին:
- (8) **Գոհարակուռ.** — Թանկագին քարերով շինուած:
- (9) **Գէորգ Դ.** — Կաթողիկոս Ամենայն Հայոց. վախճանած է 1882ին:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ո՞ր է էջմիածին. — Ի՞նչպէս կը բացուի
էջմիածնայ թանգարանին դուռը: — Ո՞վ է Գետաղարձ Պետրոս Կա-
թողիկոս: — Ո՞ր է Տրապիզոն: — Ո՞վ է Մծբնայ Ս. Յակոբ Հայրա-
պետը: — Ո՞ր կը գտնուի Հնդկաստան: — Գէորգ Դ. Կաթողիկոս ո՞ր
դարու մարդ է:



13. ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ԼԱՒԱԳՈՅՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Աղջիկներուն լաւագոյն բարեկամը ո՞վ է: Կ'ուզէ՞ք
որ ըսեմ ձեզի: Ըսեմ... ասեղն է: — Ի՞նչպէս, կարի՞

ասեղը : — Այո՛ , կարի և գուլպայի ասեղն ալ . . . : Գիտեմ սակայն թէ ինչո՛ւ կը զարմանաք , շատ աղէկ կը հասկնամ , որովհետեւ , այսօրուան օրս , հարուստ դասուն մէկ մասին մէջ , ասեղը նորոյթէ⁽¹⁾ ինկած է , հինաւուրց ծթուած⁽²⁾ բաներու կարգը անոյած է :

Հարուստ դասակարգի պատկանող դեռատի կանայք հիմայ կար չեն կարեր : Կը ճանչնամ անոնցմէ ոմանք որ մատնոց չունին : Աւելի լուրջ զբաղումները , ուսումը , ընթերցումը նախընտրելուն համար է արդեօք : Ամենեւին : Շաղակրատութեան սէրն է ասոր պատճառը : Չէ եղած ժամանակ մը ուր այսքան շատ շաղակրատեն⁽³⁾ կանայք և այսքան քիչ խօսին : Ասոր ալ պատճառը՝ ճիգը , աշխատանքը արհամարհելնն է : Ի՞նչ հարկ կայ յոգնութիւն կրել՝ շինելու համար ինչ որ կարելի է պատրաստ գնել :

Եւ սակայն , ասեղնագործութեան բարիքը այն յատկութիւնը ունի որ միշտ բան մը կը մնայ իրմէ :

Ընթերցումը , երաժշտութիւնը՝ սխրալի⁽⁴⁾ , մերթ խորունկ իսկ տպաւորութիւն մը կը ձգեն ձեր վրայ , բայց տպաւորութիւն մը միայն , այսինքն՝ վաղանցուկ⁽⁵⁾ , խուսափուկ⁽⁶⁾ բան մը , որ օրէ օր , ամսէ ամիս կը նուազի և վերջապէս կ'անհետանայ :

Մատերուն աշխատութիւնը այս դժնդակ⁽⁷⁾ օրէնքէն զերծ կը մնայ շատ անգամ : Անիկա դոյութիւն ունի , անիկա իրական է , շօշափելի , անիկա կը տրուի , կը տեսնուի , կը կտակուի , անիկա սերունդէ սերունդ կ'անցնի :

Է. ԼԸԿՈՒՎԷ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Նորոյթ.** — Նորաձեւութիւն (ճօրա) :

(2) **Ծթուած.** — Թթուած , աւրուած :

(3) **Շաղակրատութիւն.** — Պարսպ շատախօսութիւն :

- (4) Սխրալի. — Հիանալի:
(5) Վաղանցուկ. — Շուտ անցնող:
(6) Խուսափուկ. — Շուտ անցնող:
(7) Գծնդակ. — Խիստ ծանր:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ի՞նչ կը հասկնաք երբ կ'ըսեն թէ ասեղը աղ-
ջրկանց բարեկամն է: Ի՞նչ կը նշանակէ «նորոյթէ իյնալ»: — Ի՞նչ
տարբերութիւն կայ շաղակրատելուն եւ խօսելուն միջեւ: — Ի՞նչ կը
նշանակէ «օրէնքէն զերծ մնալ»: — Ձեր վարժարանին մէջ կարեւո-
րութիւն կը տրուի ձեռագործի: — Բսէք թէ ինչ ձեռագործ կը սորվիք:



14. ԳՈՂԱՐԻԿ

Ո՛վ է պղտիկն այն աղջիկ,
Սիրուն, աղուոր և փափկիկ,
Սև մազերով, սև աչքով,
Ինքը բոլոր խառուտիկ⁽¹⁾:
— Ո՛հ, այն աղջիկ
է Գոհարիկ:
Երբոր իջնէ պարտէզիկ
Քաղեկ վարդեր կամ յաամիկ⁽²⁾

Գուն չես կրնար որոշել
Ո՞վ է վարդ, ո՞վ Գոհարիկ :
— Ո՛հ, այն աղջիկ
է Գոհարիկ :

Երբոր թռչուն ճըւճըւայ⁽³⁾,
Երբոր վառեակ կտկրտայ⁽⁴⁾
Գուն չես դիտեր թռչո՞ւնն է,
Թէ չէ Գոհար որ ձայն տայ
— Ո՛հ, այն աղջիկ
է Գոհարիկ :

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ,
Անհրնազանդ չարաճճիկ⁽⁵⁾,
Որ շատ անգամ տունին մէջ
Յարուցանէ փաթորիկ :
— Ո՛հ, այն աղջիկ
Չէ՛ Գոհարիկ :

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ⁽⁶⁾

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Խասուսիկ. — Գոյնզգոյն :
(2) Յասմիկ. — Ճերմակ կամ դեղին հոտաւէտ ծաղիկ (Ե...Է...):
(3) Ճըւճըւայ. — Թռչունի ձայն հանել :
(4) Կտկրտայ. — Հաւու ձայն հանել :
(5) Չարաճճիկ. — Անհանդարտ :
(6) Մկրտիչ Պեշիկթաւան. — Նշանաւոր հայ բանաստեղծ,
ծնած 1827ին և մեռած 1868ին կ. Պոլսոյ մէջ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ կը հարցնէ բանաստեղծը առաջին տու-
նին մէջ. — Ի՞նչ պատասխան կու տայ իր հարցումին. — Գոհարիկ
ինչ կը քաղէ երբ պարտէզ իջնէ. — Յասմիկը ինչ գոյն ունի. — Ո՞ր
կենդանին կը ճըւճըւայ. — Ո՞րը կը կտկրտայ. — Ի՞նչ կը հարցնէ բա-
նաստեղծը վերջին տունին մէջ. — Ի՞նչ պատասխան կու տայ իր
հարցումին :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

5. ԵՐԿՈՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Գարուն Է (նկարագրեցե՛ք) : — Ճամբուն վրայ ծե-
րունի կոյր մուրացիկ մը նսած Է : — Ուրիշ մուրացիկ
մը , որ կոյր չԷ , հոնկէ կ'անցնի : — Հանոյք կ'զգայ
դաշտերուն գեղեցիկ տեսարանը դիտելով : — Կը գթայ
կոյրին վրայ (Ինչո՞ւ) , եւ իր սացած մէկ տասնոցը անոր
կու տայ :

15. Մ Ա Յ Ր Մ Ը

Ա. գիւղին մեծ մասը այրեր՝ մոխիր դարձեր էր :
Երկու օրէ ի վեր , Մարգրիտ , դեռահասակ այրի կին
մը , որ հրդեհէն իր երկու տարեկան զաւակը միայն կրցեր
էր ազատել , անպատասպար⁽¹⁾ ու գրեթէ անօթի՝ ապրին ան-
գին կը թափառէր : Հայ գիւղացին հիւրասեր է , և ով որ
դիմէ իրեն՝ քիչ մը ուտելիք՝ և դիչերը անցընելու համար
յարդի դէզ մը կը նուիրէ անոր , սակայն Մարգրիտ գիտէր
թէ ամէնքն ալ ազքատ էին , և կ'ամչնար մէկէն օգնու-
թիւն խնդրելու : Ուստի մեծ որոշում մը տուաւ : Հեռուն
եղբայր մը ունէր որ Կովկասի մէջ բաւական դրամ կը
շահէր . քանի քանի անգամներ զինքը հրաւիրած էր իր
քով : Հիմակ ա՛լ ժամանակը եկած էր երթալու : Ու առ-
տուն կանուխ ճամբայ կլաւ հետը տանելով իր միակ
մանկիկը :

Օղը գեղեցիկ էր , և մինչև կէս օր քալեց այրին մերթ
տղուն ձեռքէն բռնած և մերթ շալակը առած դայն : Բայց

միջօրեաքին՝ օդը փոխուեցաւ : Հիւսիսի կողմը երկինքը սեւեցաւ . բարդ բարդ ամպեր հաւաքուեցան բլուրներուն գագաթը : Ժայռերուն մէջէն հովը սկսաւ փչել սուլելով , ու լիճերուն մակերեւոյթին վրայ սարսուռներ⁽²⁾ պտըտցնելով :

Յետոյ անձրեւը սկսաւ , որուն յաջորդեց կարկուտը որ հուսկ ուրեմն⁽³⁾ ձիւնի փոխուեցաւ : Մարտ ամսուան մէջ էր , և այդ եղանակին՝ հազուադէպ է⁽⁴⁾ որ ձիւնը տեւական⁽⁵⁾ ըլլայ . ուստի խեղճ այրին իր ճամբան շարունակեց յոգնած , թրջուած ու մսած : Գիտէր թէ մզոն⁽⁶⁾ մը հեռուն քարանձաւ⁽⁷⁾ մը կար ուր կրնային պատրապարուիլ , բայց փոթորիկը հետզհետէ կը սաստկանար , և ձիւնը կատաղաբար տեղալով , լեցուց խոռոչները⁽⁸⁾ , ճերմկեցուց ժայռերը : Այրին յուսահատեցաւ , ուղեց ևս դառնալ . բայց տեսաւ որ անկարելի էր :

Ասդին անդին ինկաւ , գոնէ վագրի⁽⁹⁾ կամ աղուէսի⁽¹⁰⁾ որջ մը դանելու համար , ու վերջապէս կծկտեցաւ կարկառուն⁽¹¹⁾ ժայռի մը ներքեւ , իր զաւակը սեղմած գողգոջուն կուրծքին վրայ :

Մրրիկը⁽¹²⁾ շարունակ կը սաստկանար . ձիւնը հետըզհետէ կը բարդուէր⁽¹³⁾ ժայռին վրայ . ժամերը կ'անցնէին . սաստիկ ցուրտ էր . իրիկունը կը մօտենար . այրին սիրտը կը լեցուէր սոսկումով և անձկութեամբ⁽¹⁴⁾ . կը վախնար որ իր խեղճ փոքրիկ զաւակը կը մսի . հազած ողորմելի գրգլեակները⁽¹⁵⁾ չէին կրնար պատապարել զայն ցուրտին դէմ . ձիւնը կը խուժէր⁽¹⁶⁾ ժայռին ծերպերէն⁽¹⁷⁾ ներս , ու կը գողգոջային երկուքն ալ :

Գիշերը վրայ հասաւ . հէք մայրը հանեց գրեթէ իր բոլոր հազուսաները , փաթթեց մանուկը անոնց մէջ , և յուսակտուր՝ պառկեցուց զայն ժայռին խորունկ մէկ փապարին մէջ :

Յետոյ , որոշեց դիւղ դառնալ , կ'ուռելով փոթորկին

դէմ՝ օգնութիւն հասցնելու համար իր աղեկին : Վերջին անգամ գրկեց զայն , համբոյրներով ու արցունքներով ողողեց⁽¹⁸⁾ անոր դէմքը , ու կամայ մը՝ քնացած տեղը՝ զայն վար դնելով , նետուեցաւ ձիւնի յորձանքներուն⁽¹⁹⁾ մէջ :

* * *

Փոթորկալից գիշերուան յաջորդեց պայծառ առտու մը : Արեւը կը փայլէր վճիտ⁽²⁰⁾ երկինքին վրայ , մշուշի⁽²¹⁾ խլեակներ⁽²²⁾ կը կախուէին լեռներուն դադաթներէն , ու հազարաւոր առուակներ կը հոսէին անոնց կողերէն : Ծերունի հովիւ մը որ այն կողմերը եկեր էր իր կորսուած մէկ ոչխարը փնտռելու փապարներուն մէջ , ճիչ մը կ'արձակէ հազուաթի ծուէն⁽²³⁾ մը նշմարելով ձիւնին սպիտակութեան մէջ : Այրին մեռած կը գտնէ , թեւերը դէպ ի առաջ երկնցուցած կարծես օգնութիւն խնդրելու համար : Յետոյ դտաւ անոր զաւակն ալ լսելով աղաղակները . ողջ ողջ մնացեր էր ժայռին փապարին մէջ :

Այս մայրական անձնազոհութեան պատմութիւնը տարածուեցաւ գիւղին մէջ , և իրիկունը ծերունի հովիւը հաւաքեց գիւղացիները այրիին տան սգաւոր աւերակներուն վրայ որպէս զի աղօթեն անոր հովւոյն խաղաղութեան համար :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Անպատասպար. — Առանց բնակարանի :
- (2) Սարսուռներ պսրօցնել. — Փոթ փոթ ընել :
- (3) Հուսկ ուրեմն. — Վերջը վերջը :
- (4) Հազուադէպ է . — Քիչ կը պատահի :
- (5) Տեւակիան. — Շարունակելի :
- (6) Մղոն. — Տեղի չտի մը որ 1609 մեծրոյի հաւասար է :
- (7) Բարանձաւ. — Բարի մէջ փորուած խորունկ տեղ մը :
- (8) Խոռոչ. — Փորուածք :

- (9) **Վագր.** — Գիշակեր չորքոտանի գազան մը որուն անգթութիւնը առակի կարգ անցած է:
- (10) **Աղուէս.** — Գիշակեր ստնաւոր կենդանի մը որ հաւերը և թռչունները կը հալածէ, և նշանաւոր է իր խորամանկութեամբ:
- (11) **Կարկառուն.** — Դուրս ցցուած:
- (12) **Մրրիկ.** — Փոթորիկ:
- (13) **Բարդուիլ.** — Իրարու վրայ դիզուիլ:
- (14) **Անձկուրիւն.** — Սիրտ հատնում:
- (15) **Գրգլեակ.** — Պատուած լաթեր:
- (16) **Խուժիկ.** — Սաստիկ յարձակիլ:
- (17) **Ծեռպ.** — Ճեղք:
- (18) **ճղողել.** — Թրջել:
- (19) **Յարձանք.** — Պտոյտ, կլոր կլոր դառնալ:
- (20) **Վնիս.** — Փայլուն:
- (21) **Մճուց.** — Մառախուղ:
- (22) **Խլեակ.** — Կտոր:
- (23) **Ծուէն.** — Կտոր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ պատահեր էր Մարգրիտին: — Մարգրիտ ի՞նչ որոշում տուաւ: — Յետոյ ի՞նչ ըրաւ: — Օղը ինչպէ՞ս էր, յետոյ ի՞նչ եղաւ: — Երբ օղը աւրուեցաւ, այրին ի՞նչ ըրաւ: — Ի՞նչ կը փնտռէր պատասպարուելու համար: — Տեղ գտա՞ւ: — Ինչպէ՞ս տեղ էր: — Տղան ո՞ր պառկեցուց: — Ինք ի՞նչ ըրաւ: — Հետեւեալ առտուն օղը ինչպէ՞ս էր: — Ծերունի հովիւը ի՞նչ տեսաւ: — Զաւակը ի՞նչ վիճակի մէջ էր: — Հովիւը ի՞նչ ըրաւ:

16. ՄԱՐԴՈՑ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ԶԱՅՆԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գիտէ՞ք թէ կենդանիները լեզու մը ունին, որուն միջոցաւ զիրար կը հասկնան. ձայներու և շարժումներու լեզուն է ան:

Նորածին մարդն ալ այս տարրական⁽¹⁾ լեզուէն ուրիշ միջոց չունի խօսելու:

Եթէ պղտիկ քոյր մը կամ եղբայր մը ունիք, դիտեցէ՛ք թէ ինչպէս կը հասկցնէ իր միտքը: Փոքրիկ տղան, եթէ մէկ տեղը ցաւի, կամ եթէ բանի մը պէտք ունենայ, իր աղաղակներովը կը հասկցնէ. եթէ գոհ է, ժպտովը կը բացատրէ: Մատովը ցոյց կու տայ իր ուզած առարկան: Միջոց մը կու լայ, քիչ մը վերջը կը խնդայ. երբեմն ալ թէ՛ կու լայ, թէ՛ կը խնդայ: Ինչո՞ւ. որովհետեւ իր միտքը հասկցնելու համար մէկ լեզու մը միայն պիտէ. ձայներու և շարժումներու լեզուն.

Խ Օ Ս ՈՒ Ա Մ Լ Ե Զ ՈՒ Ն

Կամաց կամաց մանկիկը պիտի սկսի դիւրին բառեր արտասանել, ինչպէս մարմա, պապա, սասա, ևայլն. ճիգեր պիտի ընէ ու նոր լեզու մը պիտի սորվի. պիտի խօսի:


Սօսիք մարդոց լեզուն է:

Բայց խօսքերը կը թռչին, այսինքն զանոնք լսողին մտքին մէջ քիչ կամ շատ հաւատարիմ յիշատակ մը հազիւ կը թողուն. երբեմն այդ յիշատակը բոլորովին կը ջնջուի: Ահա ասոր համար է որ հին ատեններէն ի վեր մարդիկ ջանադիր եղած⁽²⁾ են խօսքերը պահելու, նշաններով ներկայացնելով զանոնք փայտի կամ քարի պէս տոկուն⁽³⁾ նիւթերու վրայ:

Գ Ր ՈՒ Ա Մ Լ Ե Զ ՈՒ Ն

Գծադրութիւնը եղած է առաջին գրուած լեզուն: Կենդանի մը, տունկ մը, կամ որ և է առարկայ մը ներկայացնելու համար, անոր ձեւը կը գծէին որչափ որ կրնային.


ԻՐԵՐ ԵՒ ԷԱԿՆԵՐ ՆԵՐԿԱՑԱՑԵՈՂ ՀԻՆ ՆՇԱՆՆԵՐ



Արեւ Լուսին Լեռ Մարդ Շուն Ձի

Բայց բացատրութեան այս եղանակը չէր բաւեր, երբ պէտք ըլլար վերացական գաղափարներ արտայայտել⁽⁴⁾, ինչպէս շարժում, գորութիւն, արտադրութիւն: Ուստի հարկ եղաւ նշաններ յօրինել, կարելի եղածին չափ արտայայտուելիք գաղափարը յիշեցնող: Այսպէս, շարժումը բացատրեցին քալելու վրայ երեւցող երկու արունքներով, գիտութիւնը բաց աչքով մը, և այլն:

ԳԱՂԱՓԱՐ ՆԵՐԿԱՑԱՑԵՈՂ ՀԻՆ ՆՇԱՆՆԵՐ



Քալում Արտադրող Արտադրանք Բաց աչք Ճամբայ Բարձրութեան
Շարժում Երկինք Հով Գիտութիւն Անցեալ Ուրախութիւն


Այս լեզուն դեռ շատ անկատար էր. հազիւ տարտամ⁽⁵⁾ ձեւ մը կու տար գլխաւոր գաղափարներուն, սակայն չէր կրնար խօսուած լեզուին ձայները արտայայտել:

Ուստի մարդիկ համաձայնեցան մասնաւոր նշանով մը ներկայացնել բառերը կազմող իւրաքանչիւր վանկերը. այսպէս նշան մը կար եւս ձայնը տուող, ուրիշ մը թօ, և այլն: Հիմայ դատեցէ՛ք թէ ինչ անհամար նշաններ միտք պահելու էր դիւրաւ կարգալ սորվելէ առաջ: Մարդոց մազերը կը ճերմկէին, և տակաւին հեգել չէին սորվեր:

Պէտք էր ուրեմն աւելի գործնական դրութիւն մը գտնել: Փիւնիկեցիք հնարեցին դայն:

Ուշադրութեամբ ուսումնասիրելով (մարդկային ձայնը, հասկցան թէ անիկա իրապէս քանի մը պարզ հնչումներէ բաղկացած է, որոնք զանազան կերպով կը փոփոխուին լեզուին ու շրթունքներուն միջոցաւ: Պարզ հնչումները ներկայացուցին ձայնաւոր կոչուած քանի մը նշաններով, և անոնց այլազանութիւնները՝ շաղաձայն կոչուած նշաններով:

Այսպէս Փիւնիկեցիք դտան առաջին աթութաները⁽⁶⁾, որոնցմէ առաջ եկած են բոլոր միւսները, ինչպէս նաև հայ այբուբենը:



ՓԻՒՆԻԿԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ուրեմն մարդիկ կը բացատրեն իրենց միտքը երեք գլխաւոր լեզուներու միջոցաւ.

Չայնեռու եւ շարժումներու շեզուն.

Խօսուած շեզուն կամ խօսքը.

Գրուած շեզուն, որուն վեջ կը բովանդակուի գծագրութիւնը եւ գիրը:

Ա.Ռ.Ա.Ծ. — Կակուղ շեզու թե ունիս,
 Օծը ծակեկն կը հանես.
 Ծակող շեզու թե ունիս,
 Սուրբը տունեդ կը վանես:


ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Տարբական. — Նախնական

(2) Զանադիբ ըլլալ. — Աշխատիլ

- (3) Տոկուն. — Դիմացկուն:
- (4) Արսայայետլ. — Յայտնել:
- (5) Տարսամ. — Անորոշ:
- (6) Արուբայ. — Այբուբենին զիրերը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞րն է նորածին տղոց լեզուն. — Ինչո՞ւ կ'ըսեն թէ խօսքը կը թռչի. — Ինչո՞ւ մարդիկ հետամուտ եղան գրուած լեզու մը գտնելու. — Ո՞րն է առաջին գրուած լեզուն. — Որո՞նք հնարեցին այբուբենը. — Ի՞նչ կը նշանակէ աթութայ. — Ի՞նչպէս կրնանք տեղեկանալ հեռաւոր երկիրներու մէջ պաաահած խնդիրներուն. — Նախնի մարդոց պատմութիւնը ճշդիւ գիտենք. — Ինչո՞ւ չենք գիտեր. — Ի՞նչպէս մեր ժամանակակից մարդոց անունները, գիւտերը, աշխատանքները, մտածումները պիտի ծանուցուին հարիւր կամ հազար տարի ետքը. — Որո՞նք են մարդկային երեք լեզուները:



17. ԺԻԺԻՆ ԵՒ ՄՐՋԻՒՆԸ

Ժիժին⁽¹⁾ կրղեց ամառն ողջոյն⁽²⁾
Իր երգն հնչուն:
Ինք շրջակայ մացառնկրուն⁽³⁾

Երաժիշտն⁽⁴⁾ էր ժիր ու անխոնջ,⁽⁵⁾

Եւ օրն ի բուն

Իր անայլայլ⁽⁶⁾ ձայնին կարօտ՝

Կ'ունկընդրէին⁽⁷⁾ արան ու արօտ

Եւ թռչուններն հովտին ամբողջ :

Բայց երբ ձրմեռն նկաւ յանկարծ ,

Թուփի մը տակ լըքուած մընաց .

Շուրջը չըկար միջատ կամ բոյս

Ե ոչ ալ յոյս :

Ինք հըսկարտ չէր , ոչ վայրենի .

Ուստի գընաց

Մըրջիւնի մը դուռը դարկաւ ,

Որ ծանօթ էր իրեն հարկաւ ,

Ու իր ձայնով հիմայ մարած

Խնդրեց անկէ պատառ մը հաց ,

Խոստանալով հունձքէն առաջ

Չայն վըճարել հասկով կանաչ :

Սակայն մըրջիւնն հարցուց անոր .

Դէ՞մքով խոժոռ .

— Սմառն ինչո՞ւ չըժողվեցիր

Երբ հունտերով լի⁽⁸⁾ էր բոլոր

Դաշտ , լեռ ու ձոր :

Ի՞նչ կ'ընէիր դուն , կ'աղաչեմ ,

Երբ ես , ճիգով մ'որ կ'ըսպառէ ,⁽⁹⁾

Արիւն քրտինք կը թափէի արեւուն դէմ :

— Ես . մըմնջեց շեշտով մը վէս⁽¹⁰⁾ ,

Կ'երգէի ես :

— Է՛հ , հիմակ ալ գընա պարէ՛ : »

ՀԱՆԵԼՈՒԿ Չ. — Կաշիկ սանիֆ

Մագի ձուիֆ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ժիժի. — Ճպուռ (Ճւրճւր պէօճէ+)
- (2) Ողջոյն. — Ամբողջ
- (3) Մացառ. — Փշոտ թուփ
- (4) Երաժիշ. — Երգիչ, նուագաժուռ
- (5) Անխանջ. — չյոզնող
- (6) Անայլայլ. — Անփոփոխ, միօրինակ
- (7) Ունկնդրել. — Մտիկ ընել
- (8) Լի. — Լեցուն
- (9) Սպառել. — Հատցնել, յոզնեցնել
- (10) Վէս. — Հարարտ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ տեսակ կենդանի է ժիժին: — Ուրիշ ի՞նչ անուն կու տան անոր: — Բոլոր ամառը ի՞նչպէս անցուց ժիժին: — Երբ ծձեռը եկաւ, ի՞նչ պատահեցաւ իրեն: — Ի՞նչ ըրաւ ժիժին: — Ի՞նչ ըսաւ մրջիւնին: — Ի՞նչ կը նշանակէ ձիգով մ'որ կ'սպառէ խօսքը: — Մրջիւնը ի՞նչ հարցուց ժիժին: — Ժիժին ի՞նչ պատասխանեց անոր հարցման: — Ի՞նչ ըսաւ մրջիւնը:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

6. ԽՆՍՄՈՏ ՏՂԱՆ

Տիրան գիրք մը փոխ առած է Արսէնէն. զանազան խնամքներ կը օտարի որ գիրքը չաւրուի (թուեցէ՛ք): — Արսէն ուզած գիրքը պիտի տայ միշտ իրեն:

18. ՊԱՐԿԵՇՏ ՏՂԱՅ ՄԸ

Օր մը, երբ դուրս կ'ելլէի տունէս, որ Լոնատնի մեծ փողոցներէն մէկուն վրայ կը գտնուէր, տասերկու տարեկանի մօտ տղեկ մը, ցնցոտիներ հագած, վտիտ դէմքով, լուցկիի տուփեր ներկայացուց ինձի պաղատելով որ հաս մը գնեմ:

Քսակս հանեցի, բայց մէջը ոսկի կար միայն:

— Շատ կը ցաւիմ, տղա՛ս, ըսի, որ մանրուք չու-
նիմ, և չեմ կրնար հիմայ տուն երթալ բերել:

— Ո՛հ, պարո՛ն, եթէ կը հաճիք, ոսկին ինձի տուէ՛ք .
վազեմ երթամ խանութպանի մը աւրել տամ և մնա-
ցորդը բերեմ:

— Իրա՞ն կ'ըսես, ըսի, ուղղակի երեսը նայելով:

— Ո՛հ, պարո՛ն, իրաւ կ'ըսեմ: Ես գող չեմ, պարո՛ն:

Արդարեւ իր տժգոյն դէմքին վրայ՝ պարկեշտու-
թեան և վէսութեան⁽¹⁾ արտայայտութիւն մը կար: Ոսկին
ձեռքը տուի. վազելով մեկնեցաւ և ամբոխին⁽²⁾ մէջ
աներեւոյթ եղաւ.

Հինգ րոպէ անցաւ, յետոյ տասը: Թէեւ դժուար
կու գար ինձի այդ պարկեշտ դէմքով տղեկը իբրև ստախոս
ամբաստանել, սակայն սկսայ կասկածիլ: Ի դուր սպա-
սեցի, և երբ կէս ժամ անցաւ, պտոյտս շարունակեցի,
միտքս դնելով օգուտ քաղել այս դասէն ու այլ եւս
չվստահիլ լիռքրիկ դատարկասլորտներուն:

Քանի մը ժամ կտքը, երբ տուն դարձայ, և ա՛լ
մոռցեր էի այդ միջադէպը, սպասաւորս իմացուց թէ
տղեկ մը եկեր նախասրահին⁽³⁾ մէջ կ'սպասէր և ըսելիք
մը ունէր ինձի: Այդ տղան գողին կը նմանէր, բայց
յայտնի կ'երեւար թէ քանի մը տարու պզտիկ էր: Իր
դէմքը միւսէն աւելի դունատ և աւելի նիհար, յուսահատ
վշտի մը արտայայտութեամբ վրդոված էր:

— Պարո՛ն, գոչեց, դո՞ւք էիք Ռոպէրին ոսկի մը
տուողը:

Նշան ըրի թէ ես էի:

— Ահա մնացորդը, պարո՛ն. Ռոպէրը դրկեց որ ձեզի
տամ: Անիկա եղբայրս է, և որք ենք . . . : Ինք չկրցաւ
բերել . . . : Կառքի մը տակը մնացեր էր, պարո՛ն. հի-
մայ մեր տունն է . . . և կարծեմ թէ պիտի մեռնի:

Խեղճ տղուն ձայնը հեծկտուքներու⁽⁴⁾ մէջ մարեցաւ :

— Ո՛ւր է, ըսի, իր քովը տա՛ր զիս :

Տղուն հետ դուրս ելայ : Հեռացանք հարուստ թաղերէն . հետզհետէ աւելի նեղ և մութ գոիհներ⁽⁵⁾ մտանք : Առաջնորդս, իր պզտիկ ոտքերովը, կրցածին չափ շուտ կը քալէր :

— Հոս է, պարո՛ն, հրամմեցէ՛ք, ըսաւ քանի մը վայրկեան ետքը, կանգ առնելով տեսակ մը գետնափորի առջեւ որ սեւ ծակի մը պէս կը բացուէր կիսափուլ⁽⁶⁾ տան մը ստորոտը :

Փտտած ու խոնաւութենէն թափ թաց փոքրիկ սանդուխէ մը վար իջանք : Մռայլ գետնափորին մէկ անկիւնը, մարած հին փուռի մը քով, դէզ մը ցնցոտիներու վրայ ճանչցայ փոքրիկ մուրացիկս անշարժ պառկած : Իր դէմքը հիմայ մեղրամոմի պէս ճերմակ էր . զայն ա՛լ աւելի ճերմակ կը ցուցնէր պատուած ճակատէն վազող արիւնին նուրբ թելը :

Իր աչքերը մեր վրայ դարձուց :

— Պարո՛ն, ըսաւ, շունչի նման տկար ձայնով մը, մօտեցէ՛ք, կ'աղաչեմ :

Իր քովը ծունկի եկայ և ձեռքէն բռնեցի, սառած խեղճուկ ձեռք մը :

— Դրամը տուիր իրեն, այնպէս չէ՞, ըսաւ իր եղբորը : Ո՛հ, գոհ եմ . կը տեսնէ՞ք, պարո՛ն, թէ գող չեմ :

Յանկարծ ահռելի տրամութիւն մը նկարուեցաւ իր դիմագիծերուն վրայ :

— Ո՛հ, Աստուած իմ, հեծեց, Շարլէ՛, իմ փոքրիկ Շարլէս, ի՞նչ պիտի ըլլաս դուն . . . ինձմէ ուրիշ մէկը չունէր, պարո՛ն, և հիմայ . . . : Ո՛հ, Աստուած իմ . . . :

Իր վրայ ծռեցայ, համբուրեցի իր հէք ջախջախուած ճակատը, և ըսի իրեն որ հանդարտի . ըսի թէ պիտի հսկէի իր փոքրիկ եղբորը վրայ . խօսեցայ իրեն երկար

ատեն քաղցրութեամբ, փափաքելով իր մահը սիրտիկ :
Իր փոքրիկ վտիտ(7) ձեռքը միշտ ձեռքիս մէջ էր, ու
հետզհետէ կը պաղէր : Ա՛լ չէր խօսեր, ա՛լ չէր հեծեր .



իր աչքերը միայն մէյ մը կողքը՝ մէյ մը ինձի կը դառ-
նային, գրեթէ զուարթ անդորրութեան մը արտայայ-
տութեամբ :

Այսպէս մնաւ իմ փոքրիկ մուրացիկս, ցոյց տալով
ինձի աշխարհիս ամէնէն գեղեցիկ բանը, որուն նմանը
երբեք չէի տեսեր . մանուկ հոգւոյ մը գեղեցկութիւնը
ահռելի(8) աղքատութեան մէջ մաքուր մնացած :

Է. ՅԷԳՕ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Վէտուքիւն. — Հպարտութիւնս

(2) Ամբոխ. — Բազմութիւնս

- (3) Նախասրահ. — Շէնքի դուռնէն ներս մտած ատենդ առաջին
(4) Հեծկլօում. — Հացով հառաչանք: [սրահը
(5) Գռիհ. — Նեղ փողոց:
(6) Կիսափուլ. — Կէս փլած:
(7) Վ.թ.թ. — Նիհար:
(8) Ահուելի. — Վախ տուող:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Աղքատ տղեկը ինչ ըսաւ պարոնին: — Անիկա ինչ պատասխանեց: — Տղուն առաջարկութիւնը ընդունեց: — Յետոյ ինչ պատահեցաւ: — Պարոնը երբ տուն դարձաւ ո՞վ գտաւ հոն: — Տղուն եղբայրը ինչ ըսաւ իրեն: — Պարոնը ինչ ըրաւ: — Հիւանդ տղան ինչ ըսաւ: — Պարոնը ինչ ըրաւ անոր: — Տղեկը ինչպէս մեռաւ:

19. ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռն էր Ս. Ներսէս Պարթեւ, որ Կաթողիկոս ընտրուեցաւ 353ին: Տակաւին աշխարհական, հազիւ քսանընօթը տարեկան էր այն ատեն: Ներսէս Կաթողիկոսութիւն ըրաւ քսան տարի, և վախճանեցաւ 373 Յուլիս 25ին: Մելքեանդեկ Արքեպիսկոպոս Մուրատեան սապէս կը նկարագրէ այս մեծ Հայրապետին գործունեայ կեանքը.

«Ներսէս կը շինէ աղքատանոցներ և հիւանդանոցներ ամէն գաւառներու մէջ, բորոտներու, ուրուկներու⁽¹⁾ և հաշմերու⁽²⁾ պատապարութեան⁽³⁾ համար, որոնք մինչև այն ժամանակ պիղծ⁽⁴⁾ համարուած էին, և անգթութեան երեսէն փախչելով՝ ամայի անապատներու, քարի ծերպերու և մացառներու մէջ կը բնակէին. այս աղքատանոցներուն և հիւանդանոցներուն համար հասոյթ կը նշանակէ աւաններէն, պտղաբեր ագարակներէն և արօ-

տականաց⁽⁶⁾ կաթէն և դեղմէն⁽⁷⁾, ընդհանուր վերատե-
սուչ կարգելով իր Սադ անուն կարնեցի սարկաւազը :

«Ս. Հայապետը կը շինէ ամէն գիւղերու մէջ վան-
քեր և իջեւաններ, որպէս օտարանոց անձանօթ ճանա-
պարհորդներու և հիւրերու համար, և որպէս ապաստա-
նարան որբերու, ծերերու և կարօտեալներու : Կը շինէ
զանազան տեղերու մէջ մենաստաններ կամ ճգնաւորի
խրճիթներ, ժառանգաւորներու⁽⁸⁾ եղբայրանոցներ կամ
դպրոցներ ամէն տեղ. յունարէն և ասորերէն դպրու-
թեամբ⁽⁹⁾ գիտութիւն ծաւալելու համար. այնպէս որ
Ներսէսի բարեգործական և ժառանգաւորական շինուած-
ներուն թիւը 2000էն աւելի կ'ըլլայ :

«Ներսէս կը շրջի գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք,
զաւառէ դաւառ, և իր հայրապետական խնամքը հա-
ւասարապէս կը տարածէ ամէնուն վրայ. հանապազօր
սեղանակից կ'ընդունի ոչ միայն պաշտօնաւորներ և մե-
ծաւորներ, այլ մանաւանդ աղքատներ, օտարականներ,
կաղեր, կոյրեր, մարմնահարներ⁽¹⁰⁾ և հաշմնալներ, որոնց
վէրքերը շատ անգամ իր ձեռքովը կը լուայ, կ'օծէ և
կը դարմանէ, գիւղական խրճիթները և տանիքները իրեն
համար հայրապետական աթոռ ընելով :»

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊ. ՄՈՒՐԱՏԵԱՆ⁽¹¹⁾

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ուրուկ. — Բորոտ, բոստ :
- (2) Հաւճ. — Անդամներէն մէկը կամ մէկ քանին վնասուած :
- (3) Պասսպարուքիւն. — Պաշտպանել, բնակարան տալ :
- (4) Պիղծ. — Աղտոտ :
- (5) Արօսական. — Արածող կենդանի :
- (6) Գեղմ. — Ոչխարի բուրդ :
- (7) Ժառանգաւոր. — Եկեղեցական :
- (8) Դպրութիւն. — Գրականութիւն :

(9) Մարմնահար. — կաթուածահար:

(10) Մելիսեդեկ Արեւայ. Մուրատեան. — Գրագէտ եկեղեցական որ վախճանած է 1903ին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞վ էր Ս. Ներսէս Պարթեւ. — Քանի տարեկան կաթողիկոս եղաւ եւ քանի տարի ապրեցաւ. — Ներսէս ինչ նշանաւոր գործ ըրած է. — Իր հիմնած քարեգործական հաստատութեանց թիւը որչափ է. — Ի՞նչպէս կեանք անցուցած է. — Ո՞վ է Մելիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեան:

20. ՄՐՋԻՒՆՆ ՈՒ ԱՂԱՒՆԻՆ

«Էհ, հիմակ ալ գընա՛, պարէ»,
Կ'ըսէ անգուլթ մըջիւնն իրեն:
Բայց աղաւնին երբ հեռուէն
Հէք կենդանին կը նշմարէ⁽¹⁾,
«Ես պարէնէս, կ'ըսէ, կու տամ
«Հէք ճըպուռին որ չէ փարթամ⁽²⁾:
«Փոքրիկ բունիկս հունտով լեցուն
«Բաւական է մեր պէտքերուն:
«Թողո՞ւնք ճըպուռն այնքան բարի
«Որ անօթի երթայ մարի:

«Եթէ, մըջի՛ւն, ամառն ի բուն
«Տաք արեւուն, ցօղին ներքեւ
«Թարմ հատիկներ ժողվեցիր գուն
«Պրպրտելով⁽³⁾ հողն ու տերեւ,
«Ան ալ երգեց ոսկի որան⁽⁴⁾
«Ճոճըռալով ոստին վրան,

«Ամէնքս ալ մեր պարտքին հըլու՝
«Մեր Արարչին ենք հարկատու :»

Այսպէս կ'ըսէ մեր աղաւնին ,
Ու թռչելով հեռո՛ւն , հեռո՛ւն ,
Կը սաւառնի⁽⁵⁾ լերան ետին ,
Արձակելով անուշ վու վուն .
Եւ կը բերէ չոր հատիկներ
Հէք ճրպուռին որ կը մեռնէր :

Միշտ ջանացէ՛ք ընել բարիք .
Չար մըջիւնին մի՛ նըմանիք :

ՀԱՆԵԼՈՒԿ Է. — Շունն կ'առնէ հոգի չունի,
Փոր ունի աղիք չունի:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **ՆՇՈՒՄԵՆ**. — Տեսնել :
- (2) **ՓԱՐՔԱՄ**. Հարուստ :
- (3) **ՊՐԱՅԵԼ**. — Երկար բարակ փնտռել :
- (4) **ՈՐԱՅ**. — Ցորենի խուրձ :
- (5) **ՍԱՎԱՐՆԻ**. — Թռչիլ :


ՀԱՐՑՈՒՄԵՐ. — Այս ոտանաւորին առաջին տողը Հաֆոնթէնի
նր առակին կ'ակնարկէ . — Աղաւնին ինչ կ'ըսէ մըջիւնին . — Աղաւ-
նին խօսքը աւարտելէ ետքը ինչ կ'ընէ . — Աղաւնիին բարեսրտութիւնն
ալ կրնայ անպատեհութիւններ ունենալ, եւ ինչո՞ւ :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

7. ՊԷՏԻ ԶԷ ԹՈՂՈՒԼ ՈՐ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵԾՆԱՆ

Մարիամ եւ Սուրէն իրենց հօրեղբօրք հետ եղելինի
անսառե մը կ'անցնէին . հօրեղբայրնին ըսաւ Սուրէնին

որ չորս հաս եղելինի ուս փրցնէ , մեկը շաս մասաղ , միւսներն ալ հեզգհեհե աւելի սարեց : — Առաջինը դիւրութեամբ կը փրցուի , չորրորդը փրցնել անկարելի կ'ըլլայ (ամեն մեկուն իրեն յարմար խօսք մը ըսել) : Այսպէս են թեւութիւններն ալ :



21. ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Երկիրս , որուն վրայ կ'ապրինք , ահադին գունատ մը կամ երկրագունատ մըն է , որ ինք իր վրայ կը դառնայ անջրպետին (1) մէջ , հողի(2) մը նման : Երբ մէկ կիսագունտը կամ գունտին կէսը , արեւէն լուսաւորուի , միւս կէսը մութին մէջ կը մնայ . երբ լուսաւոր կիսագունտին բնակիչներուն համար ցորեկ ըլլայ , մութ կիսագունտին համար գիշեր է : Քսանրչորս ժամուան մէջ , խոշոր գունտը ինք իր վրայ կատարեալ չրջան մը կ'ընէ , այնպէս որ իր բնակիչները մէյ մը արեւէն կը լուսաւորուին , մէյ մը խաւարին մէջ կը խորասուզուին :

Բայց ինք իր վրայ դարձած միջոցին , երկիրը միեւնոյն տեղը չի կենար . երկարաձիգ մեծ չրջան մը կ'ընէ

անշարժ արեւուն բոլորտիքը : Երեք հարիւր վաթսուներ-
հինգ օր և վեց ժամէն , որ տարի մը ըսել է , այդ եր-
կարածիդ շրջանակին բոլորտիքը ամբողջովին կը դառ-
նայ , և ամէն տարի կը կրկնէ այս շարժումը , որմէ ա-
ռաջ կու գան եղանակները . գարուն , ամառ , աշուն
և ձմեռ :

Այդ խոշոր հողին ճիշդ մէջտեղէն անցնող ուղիդ
գիծը «առանցք» կը կոչուի : Առանցքին երկու ծայրերը կը
կոչուին «բեւեռ» . հիւսիսային բեւեռը , բեւեռային աստ-
ղին կողմը դարձած ըլլալուն՝ հողին վերի կողմը կ'իյ-
նայ , հարաւային բեւեռը վարի կողմը կ'իյնայ :

«Հասարակած» կը կոչենք այն մեծ շրջանակը որ երկ-
րագունտը կը բոլորէ երկու բեւեռներէն հաւասար հե-
ռաւորութեամբ : Երկրագունտին մէկ տարուան մէջ ա-
րեւին շուրջը դառնալով դժած շրջանը կը կոչուի «ծիր⁽³⁾
խաւարման» :

Եթէ փոխանակ հողը արագօրէն դարձած ատեն դի-
տելու , իր արագութիւնը կորսնցուցած ատեն դիտենք
զայն , կը տեսնենք որ մէկ քովին կը ծռի . ճիշդ այդպէս
կը դառնայ երկիրը շարունակ . իր առանցքը միշտ հա-
կած է դէպ ի «ծիր խաւարմանը» :

Արեւը հաւասար ջերմութեամբ չի տաքցներ աշխար-
հիս բոլոր մասերը : Արեւուն ճառագայթները , նետի
նման , հողին մէջ կը մտնեն , երբ ուղղաձիգ⁽⁴⁾ իջնեն ,
այսինքն շիւի շիտակ . ընդհակառակը կը սահին կ'անցնին ,
ու քիչ տաքութիւն կու տան եթէ շեղակի⁽⁵⁾ իջնեն : Աս-
կէ առաջ կու գայ կլիմաներու դանաղանութիւնը . այս
պատճառաւ է որ հասարակածին վրայ դանուած երկիր-
ները տաք են , և բեւեռներուն կողմը դանուածները
սառուցիկ : Այս երեւոյթը պիտի ըմբռնէք դիտելով ըն-
թերցուածիս սկիզբը դրուած պատկերը :

Բարեխառնութեան⁽⁶⁾ տեսակէտով , երկրագունտը

հինգ շրջանակաձև⁽⁷⁾ երիզներու⁽⁸⁾ բաժնուած է, որոնք «երկրային գօտի» կը կոչուին, և հետեւեալներն են. արեւակէզ⁽⁹⁾ գօտի մը, որուն «այրեցեալ գօտի» անունը տուած են, և որ հասարակածին երկու կողմէն վար կ'իջնէ մինչև «արեւադարձ» կոչուած երկու զուգահեռական շրջանակները. երկու սառուցեալ գօտի, մէկը հիւսիսային բեւեռին կողմը, միւսը հարաւային բեւեռին, և երկու բարեխառն գօտի այրեցեալ գօտիին և երկու սառուցեալ գօտիներուն միջև :

Սառուցեալ գօտիներուն վրայ, արեւուն ճառագայթները հողին երեսէն կը սահին կ'անցնին, և ներս չեն թափանցեր. ուստի այնքան ցուրտ կ'ընէ հոն որ գրեթէ մարդ չի կրնար բնակիլ, և ծառեր ու տունկեր ալ չատքիչ կը գտնուին. հազիւ քանի մը ցեղեր ձկնորսութեամբ և որսորդութեամբ ուտելիք կը գանեն :

Բոլորովին տարբեր է այրեցեալ գօտիին տակ : Հոն բուսաբերութիւնը⁽¹⁰⁾ շատ արգաւանդ⁽¹¹⁾ է : Հոն այնպիսի տունկեր կան որ չեն կրնար ուրիշ կլիմաներու տակ ապրիլ : Մեր երկիրներուն բոյսերը որոնք հոն կ'աճին, ինչպէս պտերները⁽¹²⁾, մեր ծառերուն չափ կը մեծնան : Կենդանիները բազմաթիւ են և շատ մեծղի⁽¹³⁾, ինչպէս առիւծը, վագրը, փիղը, ռնգեղջիւրը⁽¹⁴⁾, սլօան⁽¹⁵⁾, և այլն :

Թուրքիա բարեխառն գօտիին տակ կը գտնուի. ձմեռը նուազ ցուրտ կ'ընէ հոն՝ քան բեւեռներուն մերձաւոր երկիրները, ամառը նուազ տաք՝ քան հասարակածին մերձաւոր երկիրները : Ուստի ամէնէն աւելի յարմարութիւն ունի մշակութեան և ամէնէն հաճելի վայրն է բնակութեան :


ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Անջրպետ.** — Տեղի մը տարածութիւնը:
- (2) **Հով.** — Տեսակ մը խաղաղիկ որ կը դառնայ (տօպօն):
- (3) **Ծիր.** — Շրջանակ:
- (4) **Ուղղաձիգ.** — Վերէն վար իջնող:
- (5) **Շեղակի.** — Ծուռ կերպով:
- (6) **Քարեխառնութիւն.** — Օղին տարութեան կամ ցրտութեան աս-
- (7) **Շրջանակաձեւ.** — Կլոր ձեւով: [տիճանը]
- (8) **Սրիգ.** — Դօտի, ժապաւէն:
- (9) **Արեւակէզ.** — Արեւէն այրած:
- (10) **Բուսաբերութիւն.** — Բուսած տունկեր, ծաղիկներ, և այլն:
- (11) **Արգաւանդ.** — Բարեբեր:
- (12) **Պետ.** — Անմշտկ և աւազուտ հողերու մէջ բուսնող անպտուղ բոյս
- (13) **Մեծղի.** — Շատ խոշոր: [մը]
- (14) **Ռնգեղջիւր.** — Դէմքին վրայ եղջիւր ունեցող խոշոր կենդանի մը:
- (15) **Պօա.** — Թունաւոր խոշոր օձ մը:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երկիրս ինք իր վրայ ո՞րչափ ժամանակի մէջ կը դառնայ: — Ի՞նչ կը հասկնանք անջրպետ ըսելով: — Երբ մէկ կիսազունտին բնակիչներուն համար զիշեր ըլլայ, միւս կիսազունտին բնակիչներուն համար ի՞նչ կ'ըլլայ: — Ինչո՞ւ այդպէս կ'ըլլայ: — Աշխարհս ինք իր վրայ դարձած ժամանակ իր կեցած տեղը կը մնա՞յ թէ ուրիշ շրջան մըն ալ կ'ընէ: — Ի՞նչ բանէ առաջ կու գան տարուան չորս եղանակները: — Ի՞նչ է առանցքը: — Քանի՞ բեւեռ կայ եւ ո՞ւր կը գտնուին: — Ի՞նչ է հասարակածը: — Ի՞նչ է ծիր խաւարմանը: — Աշխարհիս ամէն կողմը կլիման նո՞յն է: — Երկիրս քանի՞ գօտիներու բաժնուած է: — Մենք ո՞ր գօտիին ներքեւ ենք: — Այրեցեալ գօտիին կենդանիները եւ տունկերը ի՞նչպէս են: — Ո՞ւր կը գտնուին արեւադարձի շրջանակները: — Սառուցեալ գօտիին բնակիչները ի՞նչ միջոցով ուտելիք կը գտնեն: — Երկու բարեխառն գօտիները ո՞ւր կը գտնուին:

22. ՀՆԴԿԱԶԱԻԻ ՏՈՏԻԿ

Տասր տարեկան էի . գիշերօթիկ դպրոց կ'երթայի ,
և ամէն երկուշաբթի տասնընինգ սու(1) կը տանէի տունէն ,
առտուան հախաճաշիս հա-



մար , որովհետև վարժարանը
առտունը կտոր մը չոր հաց
միայն կու տար մեզի ուտելու :
Երկուշաբթի առտու մը ,
դպրոցէն հերս մտած ատենս ,
ընկերներէս մէկը տեսայ
(գեռ կը յիշեմ անունը , Բու-
թիւռ կը կոչուէր) , որ ձեռքը հնդկահաւի փառաւոր տո-
տիկ մը բռներ կայներ էր , ամբողջովին ծածկուած այն



սեւ , փայլուն և խորտուրտ(2) մաշկով , որ կաշիէ կամ-
բակներու(3) վրայ քաղելու երեւոյթը կու տայ հնդկա-
հաւին :

Ընկերս զիս տեսածին պէս . «Եկուր հայէ՛ , ըսաւ ,
եկուր հայէ՛ :» Վաղեցի . տոտիկին վերի մասը երկու
ձեռքերով սեղմեր էր , և աջ ձեռքին մէկ պզտիկ շար-
ժումովը , չորս բիտերը(4) կը բացուէին ու կը գոցուէին

մարդու մը ձեռքին մատերուն պէս : Ապշած ու զմայլած մնացի : Ի՞նչպէս այդ մեռած փոքրիկ տոտիկը կրնար շարժիլ . ի՞նչպէս կրնար զայն շարժման մէջ դնել : Ամէն անգամ որ այդ չորս բիտերը կը բացուէին ու կը գոցուէին , աչքիս առջեւէն շլացումի⁽⁵⁾ պէս բան մը կ'անցնէր : Հրաշք մը կը թուէր ինձի :

Երբ ընկերս , որ ինձմէ աւելի մեծ և աւելի վարպետորդի էր , տեսաւ որ յափշտակութիւնս⁽⁶⁾ ծայրայեղ⁽⁷⁾ աստիճանի հասած է , սքանչելիքը⁽⁸⁾ գրպանը դրաւ ու հեռացաւ : Ես ալ մէկդի գացի , բայց երազկոտ , և աչքիս առջեւ տեսնելով միշտ այդ տոտիկին երերալը տեսիլքի մը պէս : «Եթէ զայն ձեռքս առնէի , ըսի ինքնիրենս , շուտ մը պիտի հասկնայի շարժման մէջ դնելու եղանակը . Բուժիւո կախարդ չէ . և այն ատեն ո՞րքան պիտի զուարճանայի :» Ա՛լ չկրցայ դիմանալ , ընկերոջս քով վազեցի :

— Սա տոտիկը մէյ մը ձեռքս տո՛ւր , ըսի իրենս պաղատանքի անդիմադրելի շեշտով մը : Կ'աղաչեմ :

— Տոտի՞կը . . . տոտիկս քեզի՞ տամ . քովէս անդէն կ'երթա՞ս դուն :

Իր մերժումը փափաքս ա՛լ աւելի դրդուեց :

— Չե՞ս ուզեր ապա :

— Ո՛չ :

— Է՛յ , ծախէ՛ ինձի :

— Ծախե՞մ , քանի՞ :

Սկսայ դրպանիս մէջ համրել շարաթական դրամս . . . :

— Հինգ սու կու տամ :

— Հի՛նգ սու , ասանկ տոտիկի՞ մը . դիս կը ծաղրե՞ս կոր :

Եւ առնելով թանկագին առարկան , նորէն սկսաւ աչքիս առջեւ այդ շլացուցիչ բացխփիկ⁽⁹⁾ խաղը , և ամէն անգամ բաղձանքս աստիճան մըն ալ կ'աւելնար :

— ԷՅ, տասը սու կու տամ :

— Տասը սո՛ւ, տասը սո՛ւ, յարեց արհամարհանքով :
Բայց հո՛ս նայէ :

Եւ չորս բիտերը կը բացուէին ու կը գոցուէին շա-
րունակ :

— Բայց վերջապէս, ըսի դողալով, քանի՞ կ'ուզես :

— Քառասուն սու կամ ոչինչ :

— Քառասուն սո՛ւ, աղաղակեցի, քառասուն սո՛ւ,
իմ քերեք շարթուան նախաճաշիս դրամը . ի՛նչ կ'ըսես :

— Դո՛ւն գիտես :

Տոտիկը գրպանին մէջ անհետացաւ, ու ինքն ալ հե-
ռացաւ : Նորէն ետեւէն վազեցի :

— Տասներհինգ սու :

— Քառասո՛ւն :

— Քսա՛ն սու :

— Քառասո՛ւն :

— Քսաներհինգ սու :

— Քառասո՛ւն :

Ո՛հ, սատանայ՝ Քութիւռ, ի՛նչպէս իր ճամբան պիտի
չինէր կեանքի մէջ . ի՛նչ աղէկ կը ճանչնար արդէն մարդ-
կային սիրտը : Ամէն անգամ որ այդ սարսափելի քառա-
սուն բառը ականջիս կը դարնէր, դիմադրութենէս մաս մը
կը խլէր կը տանէր : Երկու վայրկեան ետքը, ա՛լ ինքզին-
քէս ելեր էի :

— Է՛հ, քառասո՛ւն թող ըլլայ, գոչեցի, տո՛ւր նայիմ :

— Նախ դրամը տո՛ւր, յարեց :

Իր ձեռքը դրի շարաթական 15 սուս, և 25 սուի
ալ մուրհակ մը գրել տուաւ մնացորդին համար . . . : Ա՛հ,
ապիրա՛տը⁽¹⁰⁾, տասերեք տարեկան հասակին մէջ, արդէն
գործի մարդ էր : Յետոյ, վերջապէս սիրելի առարկան
գրպանէն հանելով .

— Ա՛ռ, ըսաւ, անա՛ւասիկ :

Ձեռքէն քաշեցի առի : Քանի մը ըտպէ ետքը , ինչպէս գուշակեր էի , դադանիքը հասկցայ , և ձգտանը⁽¹¹⁾ , որ զանգակի լարի տեղ կը գործածուէր , Քուլթիւռին չափ աղէկ կը քաշէի :

Երկու վայրկեան յիմարի պէս զուարճացայ ասով . երկու վայրկեան ետքը նուազ զուարճացայ , երեք վայրկեան ետքը , ա՛լ գրեթէ չզուարճացայ . չորս վայրկեանէն , ա՛լ քնաւ չզուարճացայ : Միշտ կը քաշէի , որովհետեւ դրամիս շահը կ'ուզէի գանձել . . . : Յետոյ արամուլթիւն մը եկաւ վրաս : Յետոյ զղջումը , յետոյ երեք շաբաթ ցամաք հաց ուտելու հեռանկարը⁽¹²⁾ : Յետոյ անամուլթեանս զգացումը . . . և այս ամէնը քիչ քիչ դառնութեան փոխուելով , բարկութիւն զգացի . . . և տասը վայրկեան ետքը , ճշմարիտ ատելութեամբ մը բռնեցի սիրոյս առարկան պատէն անդին նետեցի , ա՛լ դայն չտեսնելու ապահովութիւնը ունենալու համար :

Այս յիշատակը միշտ կեանքիս մէջ զիս զերծ պահեց յիմարութիւններէ :

ԷՌՆԵՍԴ ԼԸԿՈՒՎԷ

ԱՌԱՄ.— Քու խելջրդ դեկ է, անձրդ նաւ պարսաս.
Կիրֆերդ են քաւի, սկսնցդ՝ առագաս .
Թե հասնիչ կ'ուզես շուս նաւահանգիս,
Նայե՛ որ հոգիդ ըղայ միշտ ըզգաս:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Սու.** — Ֆրանսական դրամ մը որ գրեթէ տասը փարս կ'արժէ :
- (2) **Խորթուբորս.** — Տափարակ չեղող, անհարթութիւններ ունեցող :
- (3) **Կամբակ.** — Կակուղ կաշիէ տեսակ մը կօշիկ :
- (4) **Բիս.** — Հաւու ոտքի ճանկ :
- (5) **Շլացում.** — Արեւուն նայուած ատեն աչքերուն կրած տպուորութիւնը :

- (6) Յափօսակուրիւն. — Խելքը զլիւն երթալ:
- (7) Ծայրայեղ. — Չափազանց:
- (8) Սփանջելիք. — Հիացում ազդող առարկայ:
- (9) Բացխփիկ. — Բացուող գոցուող:
- (10) Ապիրաս. — Չար, անօրէն:
- (11) Չգտան. — Դնդերները ոսկորին կցող նեարդերու խուրճը:
- (12) Հեռանկար. — Հեռուէն նշմարուած տեսարան մը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երկուշաբթի առտու մը լիճ պատահեցաւ քեզի: — Ընկերդ լիճ ցոյց տուաւ քեզի: — Հնդկահաւի տոտիկը լիճ ազդեցութիւն ըրաւ վրայ: — Ընկերդ լիճ ըրաւ այն ատեն: — Դուն լիճ ըրիր: — Ի՞նչ խօսակցութիւն անցաւ մէջերնիդ: — Սակարկութիւննիդ լիճպէս վերջացաւ: — Երբ տոտիկը ձեռք անցուցիր զո՞ն եղա՞ր: — Յետոյ լիճ զգացում յաջորդեց ուրախութեանդ: — Այս փորձառութեանդ հետեւանքը լիճ եղաւ: — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը:

23. Շ Ե Ր Ա Մ Ը (*)

Խեղճուկ շերամ⁽¹⁾, նուրբ ու պղտիկ,
Հաւկիթէդ դուրս ելած մինակ,
Մերկ, դողդոջուն, շուտ ըսէ՛ մեզ,
Ի՞նչ ուտելիք մեզմէ կ'ուզես:
— Տերև կ'ուզեմ թութի ճերմակ:

(*) ԾԱՆՕԹ. — Շերամը թիթեռնիկի մը հաւկիթէն դուրս կ'ելլէ: Թութի տերեւներով կը սնի: Երբ մեծնայ, մետաքս կը մանէ, ինչպէս սարդը ոստայն: Այդ մետաքսով կակուղ բոյն մը կը շինէ ինքզինքին, որուն մէջ կը պահուըտի և կը բնանայ: Քսան օր ետքը թիթեռնիկ կ'ըլլայ և կը թռչի, եթէ բժոժները փուռը դնելով չեփեն վրայի մետաքսը առնելու համար:



— Ա՛լ դուն մեծցար, շերա՛մ սիրուն,
Հասակդ եղաւ երկայն լեցուն.


Խոշոր շերամ, ըսէ՛ մեզի,
Ա՛լ հիմակ քեզ ի՞նչ կը պակոխ:

— Մինակ թողէ՛ք, որ ըստ քրմաց⁽²⁾

Ես աշխատիմ կամաց կամաց,
Հիւսեմ, հիւսեմ մանր ու կըլոր
Ճերմակ բրժոժս⁽³⁾ ոլոր մոլոր⁽⁴⁾:

— Ըսէ մեզի հիմակ, շերա՛մ,
Բրժոժիդ մէջ պահուած այգպէս,
Ըսէ՛ նայինք, ո՛վ ժիր շերամ,
Գիշեր ցորեկ դուն ի՞նչ կ'ընես:

— Ես թիթեռնիկ կ'ըլլամ ճերմակ
Օգտուեցէ՛ք հիմակ, տըղա՛ք,
Ու կարծեցէ՛ք⁽⁵⁾ արագ արագ
Աղուոր բրժոժս իմ շարունակ:



ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Շերամ.** — Տեսակ մը բրդ, թրթուր որ մետաքս կ'արտադրէ:
- (2) **Ըս բմաց.** — Կամքին համեմատ:
- (3) **Բժոժ.** — Մետաքսէ այն փոքրիկ փամոյժը զոր թրթուրը կը շինէ:
- (4) **Ոլոր ոլոր.** — Ուրեւելով:
- (5) **Բժոժը կարծել.** — Բժոժին՝ վրայի մետաքսը կարծի (չեւ) վերածել:



ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Տղան ի՞նչ կը հարցնէ շերամին: — Շերամը ի՞նչ կը պատասխանէ: — Այդ միջոցին ի՞նչ վիճակի մէջ է շերամը: — Յետոյ ի՞նչ կը հարցնէ տղան: — Այս անգամ ի՞նչ կը պատասխանէ շերամը: — Ինչո՞ւ այդպէս կը պատասխանէ: — Երրորդ անգամ ի՞նչ հարցում կ'ընէ տղան: — Այդ միջոցին ի՞նչ վիճակի մէջ է շերամը: — Ի՞նչ կը պատասխանէ: — Շերամին շինած մետաքսը ի՞նչ բանի կը ծառայէ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

8. Շ Ա Ք Ա Ր Ն Ե Ր Ը

Պէտրոս , սասը սարեկան , հարուս չե . միայն քան փարա ունի : — Շաքարը քան կը սիրե (նկարագրել քե ինչպէս կը դիտե քաքարավանառի խանութին ցուցափեղկերը) : — Հինգ սարեկան տղայ մը կ'անցնի քովէն . ձեռք աման մը ունի , որուն պարունակած քան փարայի կաթը քամքան քափեք ք : — Տղան կու լայ : — Պէտրոս պատ քանը կը հարցնե . իմանալէն քսք ի՞նչ կ'ընե :

24. ԱՐԵՒՈՒՆ ԽԱՒԱՐՈՒՄԸ

Գիտէք թէ ինչ է արեւուն խաւարումը , և թէ ինչ պատճառներէ յառաջ կու գայ , սակայն թերեւս տեսած չէք դայն :

Արեւուն ամբողջական խաւարումը հանդիսաւոր տեսարան մը կը ներկայացնէ , և շատ չի պատահիր : Պ . Փապր , ֆրանսացի գիտուն մը , սապէս կը նկարագրէ դայն .

«Լուսափաղի⁽¹⁾ երկինքին երեսը , յանկարծ , լուսազունտին արեւմտեան եզերքին վրայ բլիծ մը կ'երեւայ : Լուսնին աներեւոյթ գունտն է որ մեր աչքին տես-

սանելի կերպով կ'երթայ արեւուն գունտին վրայ կը
ցոլանայ : Սեւ բիծը շարունակ կ'ընդլայնի : Քիչ ետքը
արեւը , կէս մարած , իր գունաս (2) ճառագայթներով ,
կարծես ակամայ կը լուսաւորէ տխրատեսիլ քնանկարը (3) :
Վերջապէս ոգեւար գունտին վերջին եզրը կ'անհետա-
նայ , և խաւարը կը տիրէ յանկարծ , բայց ոչ բոլորովին .
լուսնին սեւ բոլորակին շուրջը՝ կը ճառագայթէ տեղոյն
լուսապսակ մը որ երբեմն հրաշալի տեսիլքներ յառաջ
կը բերէ :

«Այն ատեն , մթադնեալ երկնակամարին վրայ՝
աստղերը , որոնք անհետացած էին մթնոլորտին սլայծա-
ռութենէն , երեւան կ'ելլեն , գոնէ ամէնէն լուսափայլները :
Օդին բարեխառնութիւնը կ'իջնէ , ցօլը կ'սկսի , զովու-
թեան յեղակարծ (4) սպաւորութիւն մը կը կրէ ամէն մարդ :
Տունկերը իրենց տերեւները կը ծալլեն , և իրենց ծաղիկ-
ները կը կծկեն (5) իբր թէ քնանալու համար : Չղջիկները (6) ,
վերջալոյսի արտում բարեկամներ , կը մեկնին իրենց մե-
հարաններէն (7) , բայց օդին մէջ թռչտելու համար : Թռչուն-
ները , ընդհակառակը , գլուխնին կը ծածկեն փետուրով
կամ բոյներնին կը դիմեն անստոյգ սլայքով (8) մը :

«Գրաստները (9) ճամբան կը պառկին , անհնազանդ
զիրենք յառաջ տանիլ ուզող խարաղանին . ցուլերը շր-
ջանակի ձեւով կը շարունակ արօտավայրին (10) մէջ , կո-
տոշնին (11) անկած , կարծես ընդհանուր վտանգի մը ա-
ռաջքը առնելու համար . վառեակները իրենց մօրը թե-
ւերուն տակ կ'ասպաստանին . շունը սարսափահար կը դո-
ղայ իր տէրոջը ոտքերուն տակ . մարդն իսկ , որ այս ան-
սովոր աղջամուղջին (12) սլատճառը գիտէ , և անոր գա-
լուստը կանխաւ կը հաշուէ , չի կրնար զսպել տարտամ
մտահոգութիւն մը :

«Ամէն ոք , հանդէպ այս մռայլ երեւոյթին , ակա-
մայ երկիւղ մը կ'զգայ : Ո՛վ չքնաղ արեւ , ի՛նչ սուղ ,

ի՛նչ գերագոյն արհաւիրք պիտի տիրէր ամէն կողմ, եթէ երբեք քու դէմքդ առ յաւէտ սքօղուէր... : Քանի մը բոպէ, առ առաւելն հինգ բոպէ կ'անցնի այս անձկալից սպասման մէջ. յետոյ լուսեղէն ծփանք մը կը ցայտէ, շողափայլ⁽¹³⁾ լուսաւորը հետզհետէ կը յորդէ լուսնին սև հրարգելէն⁽¹⁴⁾ դուրս, և ցորեկուան լուսավառութիւնը աստիճանաբար կը ծագի : »

Տասնրութը տարի և տասը օրը անդամ մը, արեւը, երկիրս և լուսինը իրարու յար և նման դիրքի մը մէջ կը գտնուին : Այս ժամանակամիջոցին մէջ, կանոնաւորապէս 29 լուսնի խաւարում և 41 արեւու խաւարում տեղի կ'ունենայ, որոնք այն ատեն միեւնոյն կարգով և միեւնոյն անջրպետով յաւաջ կու գան : Տասնըինը տարիէ ի վեր պատահած խաւարումներուն ցուցակը պատրաստեցէ՛ք, ամէն մէկ խաւարման թուականին վրայ աւելցուցէ՛ք տասնրութը տարի և տասը օր, և կրնաք ճշդիւ գուշակել ապագայ 70 խաւարումներուն թուականները :

ՀԱՆԵԼՈՒԿ Ը. — Քար քարի վրայ քար չե.
Լեռ սար կ'արածի, ոչխար չե.
Հաւկիթ կ'ածե, հաւ չե:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Լուսափայլի. — Լոյսով փայլուն :
- (2) Գուևաս. — Գոյն չունեցող, տժգոյն :
- (3) Բնանկար. — Բնութեան տեսարանները :
- (4) Յեղակարծ. — Յանկարծական :
- (5) Կծկել. — կծիկ ընել :
- (6) Զղջիկ. — Գիշերային թռչուն մը (կեճէ գուշակ) :
- (7) Մենարան. — Առանձնանալու, քաշուած ապրելու տեղ :
- (8) Սլացք. — Սլանալու, խոյանալու, ուժով թռչելու գործողութիւն :
- (9) Գրաս. — Բեռ կրող կենդանի, ինչպէս ձի, էջ, ջորի :

- (10) Արօսալայր. — Այն տեղը ուր հօտերը կ'արածին։
(11) Կոթոց. — Եղջիւր։
(12) Աղջամուղջ. — Խոր մթուժիւն։
(13) Շողափայլ. — Շատ փայլուն։
(14) Հրարգել. — Կահ մը զոր կրակին դիմացը կը դնեն շատ տարու-
թենէ պատասպարուելու համար։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Արեւուն խաւարումը ի՞նչ պատճառէ յառաջ
կու գայ։ — Արեւուն ամբողջական խաւարման միջոցին ի՞նչ կ'ընեն
թուչունները։ — Գրաստները։ — Վառեակները։ — Լուսնի խաւա-
րումը ի՞նչ պատճառէ յառաջ կու գայ։

25. ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

Արմինէ դեղձանիկը⁽¹⁾ շատ կը սիրէր, բայց չափա-
զանց հետաքրքիր աղջիկ մը ըլլալուն համար, մայրիկը
դեռ դեղձանիկ մը չէր գնած անոր։

— Մայրի՛կ, ըսաւ օր մը Արմինէ, եթէ այսուհետեւ
հետաքրքրութիւնս թողում եւ քեզ հնազանդ ըլլամ,
դեղձանիկ մը կ'առնե՞ս ինծի։

— Այո՛, պատասխանեց մայրը, եթէ չար ունակու-
թիւններդ⁽²⁾ թողուս, կը խոստանամ ոսկեղօծ վանդա-
կով գեղեցիկ դեղձանիկ մը նուիրել քեզ։

— Ո՛հ, մայրի՛կ, պիտի տեսնես որ քիչ ատենէն
բոլորովին զոհ պիտի ըլլաս ինձմէ, գոչեց ուրախու-
թեամբ Արմինէ, որ դեղձանիկը արդէն իր ձեռքին մէջ
կը կարծէր։

Իրաւ ալ այս պատուական նուէրին արժանանալու
համար Արմինէ ամէն ջանք ի գործ դրաւ։ Գիտէր թէ
իր ամէնէն մեծ պակասութիւնը հետաքրքրութիւնն էր,

ուստի ջանաց որ այս տգեղ սովորութիւնը թողու : Այսպէս տասնընինգ օր անցաւ , և Արմինէ իր որոշման մէջ կը յարատեւէր . ծնողքը մեծապէս գոհ էին իրմէ . դասատուներն ու դասընկերները կ'աքանչանային այս գեղեցիկ փոփոխութեան վրայ : Սակայն Արմինէ գոհ չէր , և կ'սկսէր յուսահատիլ , որովհետեւ խոստացուած հուէրը կ'ուշանար : Օր մը , մայրը Արմինէն կանչեց և ըսաւ .

— Աղջիկս , մեր ծանօթներէն մէկուն այցելութեա պիտի երթամ :

— Ես ալ պիտի գամ , մայրիկ :

— Ո՛չ , աղջիկս , քու գալդ անկարելի է :

Մայրը սեղանին վրայ դրուած տուփ մը ցուցնելով , ըսաւ .

— Արմինէ , իմ բացակայութեանս միջոցին չըլլայ որ այս տուփին մօտենաս . եթէ դարձիս պատուէրիս հակառակ վարուած ըլլալդ իմանամ , շատ պիտի վշտանամ : Քիչ հնազանդութեանդ վրայ վստահ ըլլալով , այս դուռը չպիտի փակեմ : Մնա՛ս բարով . քեզ տեսնեմ , հրամանս մի՛ մոռնար :

Մօրը մեկնելէն անմիջապէս ետքը , Արմինէ պարտէզ իջաւ , և իր ծաղիկները ջրելու պարապելով բաւական ժամանակ անցուց հոն : Յանկարծ , տան մէջ սեղանին վրայ դրուած տուփը միտքը ինկաւ , և սկսաւ խորհիլ թէ այդ տուփին մէջ ի՞նչ կրնար գտնուիլ : Իր բնածին⁽³⁾ հետաքրքրութիւնը , որուն դեռ չէր կրցած բոլորովին յաղթել , դարձեալ զինքը տանջել սկսաւ : «Ո՛հ , ըսաւ անիկա ինք իրեն , ի՞նչ կ'ըլլայ եթէ տուփը անգամ մը բանալու ըլլամ . վստահ եմ որ մայրս չպիտի հասկնայ :» Խսկոյն ցնցուղը⁽⁴⁾ ձեռքէն թողուց , և վեր վազեց . տան մէջ առանց մէկէ մը տեսնուելու , սենեակ մտաւ և դուռը մեղմիկ փակեց . հետաքրքրութենէ դողդրողալով տուփին մօտեցաւ ու բացաւ դայն :

Դեղեցիկ դեղձանիկ մը թուաւ մէջէն : Արմինէ երկիւղի և դարմացման աղաղակ մը չկրցաւ դապել : Դեղ-



ձանիկը սննեակին մէջ շուրջանակի(5) թուշտիլ սկսաւ : Հետաքրքիր և անհնազանդ Արմինէն ճանչցաւ այն ատեն թէ ի՞նչ մեծ պակասութեան մէջ դանուած էր . այսքան անխորհրդաբար վարուած ըլլալուն համար զզջաց : «Ո՛հ , ըսաւ ան , ի՞նչ ըրի ես . ի՞նչ պիտի ըսէ մայրս երբ իր հրամանին հակառակ վարուած ըլլալս իմանայ :» Ու խորհեցաւ թէ պէտք էր իր սխալը դարմանելու միջոց մը գտնել . անմիջապէս երկայն գաւազան մը առաւ , և անոր ծայրը թաշկինակ մը կապելով հէք թուշտիկը հա-

լածել սկսաւ . այս կերպով կը յուսար զայն բռնել և վերատին փակել տուփին մէջ :

Գրեթէ ժամ մը անդադար Արմինէ դեղձանիկը հալածեց , այլ ի զուր . ամէն անգամ որ զայն ձեռք անցընել կը կարծէր , դեղձանիկը խոյս կու տար , և իր արագ արագ շրջաններով յուսահատութեան մէջ կը թողուր թշուառ աղջիկը : Վերջապէս թռչունը , յոգնած , պահ մը հանդիստ առնելու համար կեցաւ այն տուփին վրայ , ուրկէ փախած էր : Արմինէ այս միջոցին սենեակին միւս անկիւնը կը գտնուէր : Թռչունին համարձակութենէն քաջակերուած , ուղեց վաղել անոր վրայ , բռնել զայն , և տուփին մէջ փակել , բայց հաղիւ թէ քայլ մը առաւ , ոտքը սահելով երեսի վրայ ինկաւ , և ձեռքը գտնուած դաւաղանը ձակաին հանդիպելով թեթեւ ճեղքուածք մը բացաւ :

Արմինէ ոտք ելաւ , սակայն դեղձանիկը թռած էր . այն ատեն այս առիթն ալ կորսնցնելուն վրայ վշտացած , և ձակտին ցաւէն ալ տանջուելով , աթոռի մը վրայ ինկաւ ուժաթափ , և սկսաւ լալ :

Ճիշդ այս միջոցին դուռը բացուեցաւ , և մայրը ներս մտաւ : Արմինէ զայն տեսնելով կարմրեցաւ , և ջանաց արցունքը սրբել . բայց սլարա՛սլ բան . ամէն ինչ յայտնուեր էր . իր այդ սենեակին մէջ գտնուիլը , դեղձանիկին ազատօրէն թռչտիլը , և դետինը գտնուող դաւաղանը զինքը մասնեցին :

— Չարածճի՛ աղջիկ , դոչեց մայրը , ահա՛ հետաքրքրութեանդ և անհնազանդութեանդ պտուղը . միթէ չպատուիրեցի՞ քեզ այդ տուփին չմօտենալ : Եթէ հրամանիս հետեւած ըլլայիր , դեղձանիկը քուկդ պիտի ըլլար , բայց քանի որ այս անվայել վարմունքովդ այդ գեղեցիկ պարգեւին դեռ անարժան ըլլալդ յայտնեցիր , ես ալ հիմայ ազատ պիտի թողում այդ խեղճ թռչնիկը :

Այս ըսելով Արմինէի մայրը պատուհանը բացաւ .
դեղձանիկը պատուհանէն դուրս սլացաւ , և ճռուողելով⁽⁶⁾
աներեւոյթ եղաւ օդին մէջ :

ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ

ԱՌԱՐՄ. — Երկիկնի հարսնի՛ք կայ , ըսին .
Կանայք սանդուխ մը բերին
Դեպ ի անպերը դրին ,
Որ դեմքը տեսնեն հարսին :


ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Դեղձանիկ.** — Դեղին թռչուն մը որ Քանարեան կղզիներուն
բնիկ է , ու շատ աղւոր կ'երգէ (+անաբէ) :
- (2) **Ունակուքիւն.** — Սովորութիւն :
- (3) **Բնածին.** — Հետը ծնած , բնականէն ունեցած :
- (4) **Յնցուղ.** — Տեսակ մը գոյլ որուն բերանը ծակ ծակ է և որով
ածուները կը ջրեն :
- (5) **Շուրջանակի.** — Շուրջը , չորս կողմը :
- (6) **Ճռուողել.** — Թռչուններուն երգելը :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Մայրը ի՞նչ յանձնեց Արմինէին եւ ի՞նչ պատ-
ուիրեց : — Արմինէ ի՞նչ բնաւորութեան տէր աղջիկ էր : — Մօրը
հնազանդեցա՞ւ : — Ի՞նչ է ցնցուղը : — Ի՞նչ պատահեցաւ Արմինէին :
— Իր յանցանքը դարմանելու համար ի՞նչ ըրաւ : — Ի՞նչ դժբախտու-
թիւն պատահեցաւ իրեն : — Մայրը երբ վրայ հասաւ , ի՞նչ ըսաւ
իրեն : — Ի՞նչ դաս պէտք է քաղենք Արմինէին գլխուն եկած փոր-
ձանքէն : — Հետաքրքրութեան եւ անհնազանդութեան հետեւանքով
մարդ դեռ ի՞նչ յանցանքներ գործելու կը մղուի :

26. ՄԱՆՈՑԻՆ ԵՐԳԸ

Ճերմակ վիլակս⁽¹⁾ ու դուն ման-
 նոցս⁽²⁾ իմ սիրելի,
 Ձձեզ կը սիրեմ ես ոսկիէն ա՛լ աւելի.
 Դուք ինձ կու տաք կաթ, իւղ,
 ալիւր և ամէն բան,
 Դուք ինձ կու տաք հագուստ,
 զըւարթ բընակարան.
 Ձձեզ կը սիրեմ ես ոսկիէն ա՛լ աւելի,
 Ճերմակ վիլակս ու դուն մանոցս
 իմ սիրելի:



Ճերմակ վիլակս ու դուն մանոցս
 իմ սիրելի,
 Թռչունին հետ այգուն կ'երգէք դուք
 սխրալի:

Կանեփը⁽³⁾ գորշ⁽⁴⁾, բուրդը բարակ, ամառ ձըմեռ,
 Ձեր իլերուն⁽⁵⁾ կը փաթթըւին մինչև գիշեր.
 Թռչունին հետ այգուն կ'երգէք դուք սխրալի,
 Ճերմակ վիլակս ու դուն մանոցս իմ սիրելի:

Ճերմակ վիլակս ու դուն մանոցս իմ սիրելի,
 Պիտի հիւսէք դուք նեղ սլատանքս արցունքով լի,
 Երբոր մէջքս ծըռեմ հասած դուռը մահուան,
 Ու շինեմ ինձ ցուրտ անկողին յաւերժական⁽⁶⁾:
 Պիտի հիւսէք դուք նեղ սլատանքս արցունքով լի,
 Ճերմակ վիլակս ու դուն մանոցս իմ սիրելի:

ԼԵՔՈՆԹ ՏԸ ԼԻԼ⁽⁷⁾

Ա.Ռ.Ա.Ծ. — Մահն անհնուս համար է
Պատրաստ եղի՛ր յարածամ .
Բայց հերկ ըրե՛, ցանկ ըրե՛
Որ չընկնիս սարածամ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Վիլակ.** — Վիլակին վրայ կը փաթթուի դերձանը կարժ կազմելու համար. կ'ըսուի նաև կարժառ :
- (2) **Մանոց.** — Անիւով մեքենայ մըն է որ մանելու կը ծառայէ :
- (3) **Կանեփ.** — Տունկ մըն է, որմէ կը հանեն թելեր, և չուան կը շինեն :
- (4) **Պորո.** — Մոխրագոյն :
- (5) **Իլ.** — Փայտէ փոքրիկ գործիք մըն է որով կը մանեն :
- (6) **Յաւերժական.** — Միշտ տեւող :
- (7) **Լըֆոնք օր Լիլ.** — Ֆրանսացի բանաստեղծ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ բանի կը ծառայեն մանոց եւ վիլակ : — Ո՞վ է Լըրոնթ տը Լիլ : — Ըսէք թէ ի՞նչ են զուարթ, բարակ, արցունք, գիշեր կեանք բառերուն հականիշները :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

9. Կ Ա Ր Գ Ա Պ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն

Մարի, որ կարգապահ աղջիկ մըն է, դպրոց գա-
ցած ասեմը իր բոլոր պէտք ունեցած բաները պատրաստ
կը գտնէ . իր սենեակը կանոնաւոր է . ինք հեղապահ է :
— Արուսեակ որ կարգ կանոն չունի, գիրքերը կը փնտռէ,
գլխարկը չի գտներ (նկարագրե՛) եւ ուշ դպրոց կը հասնի :
— Եզրակալուքիւն :

27. ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒ ՎԱԽՃԱՆԸ


Մ Ե Մ Գ Ի Ի Տ Ե Ր

Ֆաթիհ Սուլթան Մէհմեմէտ Բ. տիրեց Կոստանդնուպոլսոյ 1453/ին : Այս թուականը, զոր պէտք է միտքերնիդ պահէք ամէնքդ ալ, Միջին Դարու վախճանը, և նոր ժամանակներու սկզբնաւորութիւնը կը ծանուցանէ : Կարեւոր գիւտեր, որոնց զլիսաւորներն են վառօդը, կողմնացոյցը և տպագրութիւնը, փառաւոր բացումը կը տօնեն այս նոր դարագլուխին :

ՎԱՌՕԴԸ. — Վառօդը սկիզբները գործածուեցաւ քարէ ու երկաթէ գնտակներ արձակելու համար, մետաղէ խողովակներու միջոցաւ, որոնք թնդանօթ կը կոչուէին . այս գնտակները նախ մեծ վնաս չէին կրնար հասցնել բերդերուն, բայց գիւտը կատարելագործուեցաւ . վառօդը քիչ ատենէն շատ աւելի ահարկու գնտակներ արձակեց : Աւելի ետքը, դիւրատար հրազէններ շինեցին, հրացաններ, ատրճանակներ, ևն : Եւ այսպէս վառօդը քիչ քիչ փոխեց պատերազմի արուեստը :

ԿՈՂՄՆԱՑՈՅՑԸ. — Գիտէք թէ կողմնացոյցը կը բաղկանայ սունակի⁽¹⁾ մը վրայ շարժող մագնիսական սլաքէ մը, որուն ծայրը շարունակ դէպ ի հիւսիս կը դառնայ :

Այս գիւտէն առաջ, մարդիկ ծովեզերքին մօտերէն կ'ընթանային : Կրնաք երեւակայել թէ նաւորդը ի՞նչ տարափներու կը հանդիպի երբ ովկիանոսին վրայ մոլորած, իր բռնած



ճամբուն հետքը բոլորովին կը կորսնցնէ, և երկինք ու ջուր միայն կը տեսնէ :

Կողմնացոյցին շտրկիւ մարդիկ այնքան ապահովութեամբ կ'ուղեւորին ծովուն՝ որքան ցամաքին վրայ : Անոր միջոցաւ միշտ կը գտնեն հիւսիսը, և հետեւաբար ուր եր-



Քրիստափոր Գոլոմպոս

թաշնին կը հասկնան : Այս թանկադին դործիքը ձեռքերնին, յանդուգն նաւորդներ⁽²⁾ անձանօթ երկիրներ փնտռելու գացին, ու նոր ժողովուրդներ տեսան : 1492ին Քրիստափոր Գոլոմպոս⁽³⁾ կեդրոնական Ամերիկան գտաւ, և հուսկ ուրեմն մարդիկ յաջողեցան մեր բնակած ահագին գունատին շրջանը ընել :

Տակաւ առ տակաւ

ժողովուրդները կ'ուսանին զիրար ճանչնալ, իրենց գաղափարներն ու բարքերը իրարու հետ փոխանակել ընդհանուրին բարօրութեան համար :



Կիւթեցաէրկ

ՏՊԱԳՐ ՈՒԹԻՒՆԸ .— Միջին դարու մէջ, այս օրուան պէս դիրքեր չկային . երկասիրութիւնները գրչագիր, այսինքն ձեռագիր էին, հազուագիւտ ու սուղ :

Երեւելին Կիւթեցաէրկ⁽⁴⁾ մեծ ծառայութիւն մը մատուց մարդկութեան, գրուածքի մը օրինակները արագօրէն

բազմապատկելու միջոցը գտնելով : Խորհեցաւ կարկանուռն⁽⁵⁾ ձեւով անջատ գիրեր փորագրել⁽⁶⁾, ա, բ, գ, և այլն, որոնք քովէ քով շարուելով բառեր, տողեր,

ամբողջ էջեր կը յօրինեն⁽⁷⁾ : Շարժուն տառերէ բաղկացած այս էջերը թանաքով օծելէ յետոյ , ճերմակ թերթ մը կը դրուէր վրան , ուր կը տպագրուէր բնագիրը պարզ ճշմամբ մը : Գործողութիւնը կրկնելով , ուղածնուն չափ օրինակ ձևք կը բերէին . դործը աւարակէ յետոյ , միեւնոյն գիրերը կը գործածէին ուրիշ երկեր տպագրելու համար :

Կրնաք ըմբռնել թէ ի՞նչ վայլուն յաջողութիւն ունեցաւ այս գիւտը : Արագութեամբ տարածուեցաւ , աժան գիրքերը բազմապատկուեցան , և գիտուններուն ու գրագէտներուն դրուածքները առատօրէն ծաւալեցան , ափռելով ամենուրեք օգտակար դաղափարներ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Առնակ.** — Փայտի կամ երկաթի կտոր մը որ մարմնոյ մը կեղրունէն կ'անցնի :
- (2) **Նաւորդ.** — Նաւով ճամբորդող , նաւուն մէջ գտնուող մարդիկ :
- (3) **Քրիստափոր Գոլումպոս.** — Ճենովացի նշանաւոր նաւորդ որ Ամերիկան գտած է 1492ին :
- (4) **Եիւթէնպէրկ.** — Նշանաւոր Գերմանացի որ տպագրութեան գիւտը ըրած է (1400—1468) :
- (5) **Կարկառուն.** — Դուրս ցցուած :
- (6) **Փորագրել.** — Փայտի կամ քարի վրայ դուրով փորել :
- (7) **Յօրինել.** — Շինել :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ֆաթիհ Սուլթան Մէհէմէտ Բ. ո՞ր թուականին տիրեց Կ. Պոլսոյ : — Ի՞նչ կը նշանակէ Միջին Դար : — Ի՞նչ նշանաւոր գիւտեր ըրած են այդ թուականին : — Ի՞նչ բանի կը ծառայէ վառօդը : — Ի՞նչ է կողմնացոյցը : — Ի՞նչ բանի կը ծառայէ : — Կողմնացոյցին գիւտէն առաջ նաւորդները ի՞նչպէս կը գտնէին իրենց նամբան : — Կողմնացոյցին գիւտը ուրիշ ի՞նչ մեծ գիւտի պատճառ եղաւ : — Ո՞վ է Քրիստափոր Գոլումպոս : — Տպագրութեան գիւտէն առաջ մարդիկ ի՞նչ միջոցով կը տարածէին իրենց գաղափարները : — Ո՞վ է տպագրութեան գիւտին հեղինակը : — Ի՞նչ ազգէ է : — Տպագրութիւնը ի՞նչ կերպով տեղի կ'ունենայ : — Տպագրութեան գիւտէն ի՞նչ բարիք առաջ եկաւ :

28. ՓԻԼՍՈՓԱՅ ԿՕՇԿԱԿԱՐԸ

«Ծովը թո՛ղ չըչէ, հովը թո՛ղ փըչէ .

Աշխարհք հոգըս չէ :»

Այսպէս կ'երգէր կօշկակար մը, ժամանակաւ, իր աղքատիկ խանութին առջև նստած, կարելով, կարկտելով հին ու մին մուճակները⁽¹⁾, մոյկերը⁽²⁾, զորս կը բերէին առջին կը նետէին ամէն կարգի մարդիկ : Եւ ինք, զուարթ ու ժպտուն, ամէնուն հետ քաղաքավարութեամբ կը խօսէր, և ամէնքը գոհ կ'ընէր, որովհետեւ ինք գոհ էր իր վիճակէն :

Բոլոր դրացիները կ'ախորժէին իրմէ իր բնաւորութեան պատճառաւ, և «փիլիսոփայ կօշկակարը» կը կոչէին զինքը : Մանաւանդ հարուստ վաճառական մը, որ ճիշդ դիմացը կը բնակէր, հաճոյքով կը դիտէր անոր զուարթութիւնը, և միշտ կը հոգար զայն . կերակուր կը դրկէր անոր . ճերմակեղէնները լուռ կու տար, և ապապրած էր որ ամէն օր սպասաւոր մը երթայ անոր սենեակը մաքրէ, ժողվատէ, ու կարգի դնէ : Մեր փիլիսոփայն սակայն Լաֆօնթէնի կօշկակարին չէր նմաներ որ մեծատունին առատածեռնութենէն հիւանդանար : Ընդհակառակը ուրախութեամբ կ'ընդունէր անոր նուէրները, և ա՛լ աւելի հնչուն շեշտերով կ'երգէր .

«Ծովը թո՛ղ չըչէ, հովը թո՛ղ փըչէ .

Աշխարհք հոգըս չէ :»

Մե՛ղք որ բախտը նախանձոտ է :

Օր մը, դիմացի վաճառականը կապիկ մը դնեց, չարածճի շէմբանդէ⁽³⁾ մը, որ հանդարտ կենալ չէր դիտեր, և օրն ի բուն զուարճութիւն կը փնտռէր : Կօշկակարը կ'երեւայ թէ անոր ալ ուշադրութիւնը դրաւեց, որովհետեւ

կապիկը սկսաւ անով դրադիլ, և առատուրնէ մինչև իրիկունս պատուհանին առջև նստած, դայն կը դիտէր:

Երանի թէ այսչափով դոհանար:

Օր մը, երբ մեր փիլիսոփան դուրս ելեր էր, կապիկը անոր խանութը մտաւ, և ամէն բան տակն ու վրայ ըրաւ. կաշին կտրեց, դերձանները փրցուց, կօշիկները ծակծկեց ու կծիկը դրաւ⁽⁴⁾: Խեղճ մարդուկը, դարձին, այս անակնկալ⁽⁵⁾ արկածէն շուարած մնաց, և միտքը դրաւ որ դուրս ելլելէ առաջ ամէն բան պահէ, կղպէ այնուհետև:

Սակայն շէմբանդէն ամէն դժուարութեան կը յաղթէր, բանալին կը դտնէր, դարանը⁽⁶⁾ կը բանար, պատուհաններէն ներս կը մտնէր, դրան նիզը⁽⁷⁾ կը քաշէր, այնպէս որ առաջին անգամ ըլլալով հնակարկատը⁽⁸⁾ սկսաւ նեղուիլ կեանքին մէջ: Չէր համարձակեր ոչ կապիկը պատժել, ոչ ալ անոր տէրոջը գանգատիլ: Սակայն այնքան փիլիսոփայ էր որ փոխանակ այս փորձանքին վրայ տրխրելու և յուսահատելու, սկսաւ երգել նորէն, և այս անիծեալ անասունին ձեռքէն աղատելու միջոց մը խորհիլ:

Ուշադրութիւն ընելով, դիտեց որ կապիկը միշտ իր ըրածները կ'ընէր. եթէ ինք իր կտրոցը սրէր, ան ալ նոյն օրը կը սրէր դայն, եթէ թելը անցընէր, կապիկն ալ կ'անցընէր. եթէ կաշին կտրտէր, ան ալ միեւնոյն գործողութիւնը կ'ընէր մեծ մլաններ հասցնելով իրեն:

Ուստի օր մը, մեր մարդուկը, իր կտրոցներէն մէկը ածելիի պէս սրեց, և երբ տեսաւ որ շէմբանդէն դինքը կը դիտէր, կտրոցը վիպին մօտեցուց և սկսաւ արագ արագ տանիլ բերել իր կոկորդը կտրելու ձեւով, մինչև որ ըրածը կապիկին ազէկ մը հասկցուց. յետոյ խանութէն մեկնեցաւ: Կենդանին, առանց ժամանակ կորանցնելու, հոն վազեց այս նոր սորված գործողութիւնը փորձելու: Անմիջապէս դարանը բացաւ, կտրոցը առաւ, ու սուր

դանակը ուժով մը կոկորդին քսելով, խոչափողը կտրեց,
և քիչ հտքը մեռաւ:

Այսպէս կօշկակարը անվտանգ ազատեցաւ այս փոր-
ձանքէն, ու սկսաւ դարձեալ երգել իր զուարթ յանկերգը.

«Ծովը թո՛ղ չըչէ, հովը թո՛ղ վըչէ.

Այխարհք հոգըս չէ:»

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Մաւնակ.** — Պզտիկ կօշիկ (պօթիէ):

(2) **Մոյկ.** — Ոտնաման (պոնտոն):

(3) **Շէմբունգէ.** — Ափրիկեան տեսակ մը կապիկ, որ մարդու շատ կը

(4) **Կծիկը դնել.** — Փախչիլ:

[նմանի:

(5) **Անակնկալ.** — Չյուսացուած, չսպասուած:

(6) **Դարան.** — Պահարան:

(7) **Նիգ.** — Երկաթ մը որ զուռը զոցելու կը ծառայէ («է-րէէ»):

(8) **Հնակարկաս.** — Հին կօշիկներ կարկտող:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ի՞նչ տեսակ մարդ էր փիլիսոփայ կօշկակարը:
— Իր դրացի վաճառականը ի՞նչ խնամք կը ասներ անոր, եւ ի՞նչ
սպատճառաւ: — Կապիկը ի՞նչ կ'ըներ կօշկարարին: — Ինչո՞ւ կօշկա-
կարը չէր գանգատեր կապիկին տէրոջը: — Ի՞նչ ըրաւ կօշկակարը այդ
փորձանքէն ազատելու համար: — Դուք ի՞նչ պիտի ընէիք եթէ անոր
տեղը ըլլայիք:

29. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՄԱՇԸ

Չրմեռուան ցուրտ ձիւնին բուքին⁽¹⁾

Ծառերն հովին տակ կը կըքին⁽²⁾.

Երկինք խոժոռ⁽³⁾ դէմք մ'է առեր,

Քայքայուած⁽⁴⁾ են բոյներ, թառեր⁽⁵⁾:

Գիւղացի մը ծերուկ, արդէն
Ոտքը կարած դաշտէն արտէն,
Շալակն առած մեծ բեռ մը փայտ
Տուն կը դառնայ լեռնէն շնչատ⁽⁶⁾ :
Ու կ'արտորայ⁽⁷⁾ . կինն ու թոռներ ,
Որ գրբեթէ ծով են բռներ ,
Հոն ժողովրւած վերէն , վարէն ,
Կ'սպասեն որ կրրակ վառեն :
Տըխուր էր մարդն ու կը մըսէր :
Ընտանիքին գորովն ու սէր
Չէին կրնար զինքն ըստփել :
Փայտեր կտրել ու բեռ կապել՝
Այդ ցուրտ օդին դիւրին գործ չէր .
Եւ սիրտն այրած՝ «Ա՛խ , կը գոչէր ,
«Ո՞ւր են , ո՞վ մահ , մա՛հ բարերար ,
«Ազատէ՛ զիս կեանքէս թըշուառ :»
Մահն , որ խուլ չէ , ոչ ալ անփոյթ ,
Կ'աճապարէ կը հառնի շուտ ,
Չեւքը բռնած սեւ գերանդին⁽⁸⁾ ,
Զոր կը շարժէ ասդին անդին .
Հոն կանգ կ'առնէ գլխուն վերե ,
Եւ հող դէմքովն իր անարե
Ու աչքերովն հորի պէս փոս ,
Որոնք նայուածք շունին , ափսո՛ս ,
Մըռայլ⁽⁹⁾ քօղ մը կ'արձակէ շուրջ ,
Ու դիւային⁽¹⁰⁾ ձայնով մը լուրջ .
«Ինչո՞ւ , կ'ըսէ , զիս կանչեցիր :»
Մարդն , ահաբեկ⁽¹¹⁾ ու մըտացիր⁽¹²⁾ ,
Շուտ կ'սթափի , կ'ըսէ . «Տէ՛ր իմ ,
«Չունիմ մէկը հոս մըտերիմ .
«Որո՞ւ դիմեմ և զո՞վ կանչեմ .
«Շալակըս տո՛ւր , շատ կ'աղաչեմ ,

«Եթէ ինծի օգնել կ'ուզես ,
«Բնոս որ ինկաւ ճամբան՝ ուսէս ,
«Որ ժամ առաջ տուն հասնիմ ողջ ,
«Ինձ կ'ապասեն տղաքս ամբողջ :»

ԱՌԱՄ. — Ինչ հոգեր որ գեղ ճանկեն,
Մի՛ գանգաւոր բախտին ճանկեն:
Շաս անուշ է կեանքը մարդուն.
Երբեք մահուան մի՛ բաղձար դուն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Բու ք.** — Հովով և անձրեւով խառն ձիւն:
- (2) **Կֆիլ.** — Ծռիլ:
- (3) **Խոժոռ.** — Դէմքը կախած:
- (4) **Քայֆայել.** — Աւրել, քակել:
- (5) **Թառ.** — Փայտի կտոր կամ ճիւղ ուր թռչունները կ'ելեն հանգ-
- (6) **Շնչաս.** — Շունչը կտրած: [չելու համար]
- (7) **Արսարալ.** — Աճապարել:
- (8) **Գերանդի.** — Յորեն կտրելու գործիք. մեծ և երկայն մանգաղ:
- (9) **Մռայլ.** — Մռթ և տխուր. միզապատ:
- (10) **Դիւային.** — Սատանայական:
- (11) **Ահաբեկ.** — Շատ վախցած:
- (12) **Մսացիք.** — Միտքը ցրուած:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Գիւղացին ո՞ւր կ'երթար: — Ի՞նչո՞ւ տխուր էր:
Զո՞վ կանչեց օգնութեան: — Ի՞նչ պատահեցաւ իրեն: — Ի՞նչ ըրաւ
մահը իրեն: — Ի՞նչ պատասխանեց գիւղացին: — Ի՞նչ կը հասկնար
այս պատմութենէն:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

10. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԹԻԹԵՌՆԻԿԸ

Մեղու մը որ իր փեթակը կը դառնար, թիթեռնիկի
մը կը հանդիպի: — Մեղուն անհանոյ խօսքեր կ'ուղղէ

թիթեռնիկին անոր ծուլութիւնը ծաղրելով : — Թիթեռնիկը ինձիցինքն կը պաշտպանէ : — Մեղուն կը կրկնէ իր ծանր խօսքերը : — Թիթեռնիկը կը պատասխանէ թէ մեղուն օգտակար է (ի՞նչպէս), բայց իր պաշտօնն է ամենուն աչքերը զուարթացնել (ի՞նչպէս) :

30. ԱՌԱՋԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Երբ Ադամ ու Եւա դրախտէն աքսորուեցան, բոլոր կենդանիները ասդին անդին ցրուեցան :

Օձը մորենիներուն⁽¹⁾ ներքեւ սպրդեցաւ⁽²⁾ ու աներեւոյթ եղաւ :

Խոյերը⁽³⁾, ոչխարները, եղնիկը⁽⁴⁾ սարսափահար հեռացան :

Կատաղի ցուլը մոնչելով անցաւ գնաց :

Ձին սկսաւ սրընթաց արշաւել :

Առիւծը⁽⁵⁾ դարձաւ ահաւոր նայուածք մը ձգեց մեղաւոր մարդուն վրայ :

Վագրը⁽⁶⁾, գայլը⁽⁷⁾, բոլոր վայրագ գաղանները կանգ առին, ակռանին կճրտեցին, սպառնական գոռումներ արձակեցին, յետոյ գացին ուրիշ որսերու վրայ յարձակեցան :

Արծիւն⁽⁸⁾ ու անդղը⁽⁹⁾ աղաւնիները կը հալածէին :

Այն ատեն Ադամ, սիրտը դառնացած, ըսաւ .

« Դեռ երէկ այս կենդանիները կը հնազանդէին ինձի և կը սիրէին զմեզ . հիմայ ոմանք ահաբեկ⁽¹⁰⁾ կը հեռանան մեզմէ, ոմանք կը համարձակին սպառնալ մեզի : Բոլոր էակները ուրեմն թշնամի դարձած են մեզի : »

Դեռ խօսքը չէր աւարտած, երբ զգաց որ մէկը իր ձեռքը կը լղէ, և շունը տեսաւ իր ոտքերուն տակ :

Հէք կենդանին քայլ առ քայլ հետեւեր էր իրեն , կարծես ցաւակից կ'ըլլար⁽¹¹⁾ իր տէրոջը , աչքերը թրջուած կարծես թէ կուլար :

Ադամ ձեռքը անոր գլխուն վրայ դրաւ , ու եւա իր արցունքները սրբեց զայն դգուելու համար :

Շունը իր հնադանդութիւնը և երախտագիտութիւնը արտայայտեց : Ոտք ելաւ , խայտաց⁽¹²⁾ , ուրախութեամբ հաջեց , իր տէրերուն ոտքերուն ներքև թաւալեցաւ նորէն . յետոյ անոնց վրայ սեւեռեց⁽¹³⁾ իր անկեղծ ու հաւատարիմ նայուածքը :

Ադամ այն ատեն յուզուած ձայնով մը ըսաւ .

«Աստուած ամէն բան չառաւ մեր ձեռքէն , քանի որ բարեկամ մը թողուց մեր քով :»

Այսպէս , առաջին օրէն , շունը բարեկամ եղաւ մարդուն :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Մորեցի.** — Տեսակ մը փշոտ թուփ որ թուփի պէս պտուղներ ունի :
- (2) **Սպրդիլ.** — Կամացուկ մը մտնել :
- (3) **Խոյ.** — Արու ոչխար :
- (4) **Եղնիկ.** — Վայրենի կենդանի մը որուն գլխուն վրայ ոտի ձեւով եղջիւրներ կան :
- (5) **Առիւծ.** — Գիշակեր չորքոտանիներու ամէնէն զօրաւորը :
- (6) **Վագր.** — Կատուի ցեղէն գիշակեր չորքոտանի մը :
- (7) **Գայլ.** — Վայրի գազան մըն է որ շունի կը նմանի :
- (8) **Արծիւ.** — Գիշակեր թռչուններու ամէնէն զօրաւորը և բաջասիրտն է :
- (9) **Անգղ.** — Գիշակեր խոշոր թռչուն մըն է :
- (10) **Ա.հաբեկ.** — Սաստիկ վախցած :
- (11) **Ցաւակից ըլլալ.** — Մէկուն հետ ցաւ զգալ :
- (12) **Խայտալ.** — Յատկուտել :
- (13) **Սեւեռել.** — Ուղղել անշարժ :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Երբ Ադամ ու եւա դրախտէն արսորուեցան , ի՞նչ պատահեցաւ . — Ադամ ատնք տեսնելով ի՞նչ ըսաւ . — Զո՞վ տեսաւ իր ոտքերուն տակ . — Շունը ի՞նչ ըրաւ . — Ադամ շանը հաւատարմութիւնը տեսնելով ի՞նչ ըսաւ . — Ո՞վ եղաւ մարդուն առաջին բարերամը :

31. ԱՆՁՆՈՒԷՐ ՇՈՒՆ

Հեռաւոր այգիի մը պահապանը մինակ կ'ապրէր իր խրճիթին մէջ, փոքրիկ տղուն հետ, որ դեռ օրօրոցին մէջ որբ մնացեր էր մօրմէն :

Խեղճ մարդը իր կնոջ տարաժամ⁽¹⁾ մահուան ազդած ցաւովը համակուած՝ եկեր քաշուեր էր այդ մենաւոր⁽²⁾ ապաստանարանը⁽³⁾, ինքզինքը բոլորովին նուիրելու համար իր զաւկին, որուն վրայ ամփոփած էր իր բոլոր սէրը, բոլոր յոյսերը, բոլոր երջանկութիւնը :

Իր պաշտօնին պարտականութիւններէն զատ, որ և է պատճառաւ չէր բաժնուեր իր մանկիկէն, ու կը պարուրէր զայն փափուկ գուրգուրանքով⁽⁴⁾, գորովոտ խնամքներով, որոնց գազանիքը միայն մօր մը անապառ անձնութիւնութիւնն ու համբերութիւնը կը ձանձնան :

Սակայն շատ անգամ ստիպուած էր տունէն բացակայիլ անոր շրջակաները պտրտելու և իրեն յանձնուած այգիին վրայ հսկելու համար : Ի՞նչ մեծ կ'ըլլար իր յուզմունքը ամէն անգամ որ տղան օրօրոցին մէջ մինակ ձգելով կը մեկնէր ու ի՞նչ սիրտհատնումներով տուն կը վազէր յետոյ զայն գրկելու համբուրելու համար :

Սակայն տղան բոլորովին մինակ չէր, որովհետև իր բարի շունը հոն կը հսկէր մանկան քով, որ դեռ շատ պզտիկ ըլլալուն չէր կրնար ինքնիրեն տեղէն ելլել : Հաւատարիմ կենդանին հրաշալի կերպով կը կատարէր իրեն յանձնուած այս փափուկ պաշտօնը, թերեւս շատ մը անսիրտ դայեակներէ աւելի աղէկ :

Սուտու մը, այգիին պահապանը՝ հրացանը ուսը, որսի պայուսակը մէկ քովին կախած՝ մեկնեցաւ տունէն, և շունը, ըստ սովորութեան, իր տէրոջը ետեւէն հառաչանք

մը արձակելէ յետոյ, եկաւ փռուեցաւ օրրանին ներքեւ, ուր մանկիկը խորունկ քունով կը նիրհէր :

Մերթ ընդ մերթ, գլուխը կը վերցնէր, և երկար երկար շունչ կ'առնէր օդը ծծելով, յետոյ իր խոշոր բարի աչուրները կը պտրտցնէր սենեակին բոլորախփը, և անսովոր բան մը չտեսնելով : նորէն անշարժ կը մնար :

Քանի մը ժամ այսպէս անցաւ առանց միջադէպի⁽⁵⁾, բայց յանկարծ կենդանին խուլ մոլտուք մը հանեց, ինչ որ շան մը համար դժգոհութեան նշան մըն է, և որուն կը յաջորդէ կաղկանձիւնը⁽⁶⁾ : Քան մը չէր տեսեր տակաւին, բայց իր նուրբ հոտառութիւնը՝ թշնամիի մը մերձաւորութիւնը կը ծանուցանէր իրեն, և իր դիւրազգած⁽⁷⁾ ականջը կը լսէր հողին վրայ սողացող մարմնոյ մը թեթեւ շշուկը : Արդէն սպասումը երկար չտեւեց. օձ մը, թերեւս մանկան ծծակին⁽⁸⁾ մէջի կաթին հոտը առնելով, մօտեցեր էր և դրան ներքեւ սողոսկելով խրճիթէն ներս կը մանէր :

Բայց չէր գիտեր թէ դիմացը ո՞վ պիտի ելլէր : Մտածումի մը պէս արագ՝ շունը ոտքի վրայ ելաւ կանգնեցաւ, ատեւը⁽⁹⁾ քսամնած⁽¹⁰⁾, ու կը գոռար, կը հաջէր և իր ժանիքներուն⁽¹¹⁾ զոյգ շարքը ցոյց կու տար թշնամւոյն : Օձը դայն տեսնելով կռիւի պատրաստուեցաւ : Կամացուկ մը պարուրածու⁽¹²⁾ գալարեցաւ⁽¹³⁾ նախ, յետոյ զսպանակի⁽¹⁴⁾ մը պէս թուլցաւ, յուսալով որ այսպէս պիտի կարենար իր ախոյեանը⁽¹⁵⁾ խաբել, և յանկարծ վրան նետուիլ :

Բայց շունը այս կեղծիքը գուշակեր էր. մէկ կողմ ցատքելով խուսափեցաւ⁽¹⁶⁾ այդ յարձակումէն, և իր ուժեղ կզակով⁽¹⁷⁾ օձը երկու կտոր բրաւ : Սողունին պոչն ու գլուխը ի դուր ջանացին իրարու միանալ, և գացին անհետացան տղուն օրօրոցին տակ :

Պայքարը⁽¹⁸⁾ թէև երկար չէր տևած, բայց բուռն էր եղեր, և շունը ցատքած միջոցին օրրանը տապալիր⁽¹⁹⁾ էր :

Գրեթէ նոյն պահուն իսկ պահապանը տուն հասաւ :

Շունը զայն տեսնելուն պէս՝ իր յաղթանակէն ուրախացած՝ դէպ ի տէրը վաղեց, իր ծառայութեան փոխարէն զգուանք մը ընդունելու համար, սովորութեանը հակառակ՝ անդադար հաջելով :

Պահապանը այս անսովոր վարմունքը նշմարեց՝ և սիրտը դող ելաւ : Յետոյ, գրեթէ անմիջապէս, սաստիկ վախ մը եկաւ վրան, երբ սենեակին մէջ յառաջանալով անոր չարագուշակ⁽²⁰⁾ տակնուվրայութիւնը տեսաւ . տղուն օրօրոցը վար ինկեր էր . մանկիկը մէջտեղ չկար . . . և շանը կլափը⁽²¹⁾ արիւնոտած էր . . . : Ահռելի կասկած մը անցաւ այդ տարաբախտ հօրը մտքէն . «Թշուառակա՛ն կենդանի, աղաղակեց, զաւա՞կս բզքտեցիր :» Եւ ցաւէն ու բարկութենէն խելքը զլխէն գացած, հրացանը քաշեց : Այդքան մօտէն զարնուելով գնտակը խեղճ շանը հասաւ, ու անկենդան դետինը փռեց զայն :

Այն ատեն դէպ ի անկողինը սուրաց հայրը դողդղալով խելացնոր : Բայց ի՛նչ տեսաւ : Ի՛նչ բարեբախտութիւն : Օրրանին վարագոյրներուն ներքեւ, զաւակը ողջ առողջ պառկեր էր, և կը ժպտէր իրեն, թեւիկները կարկառելով : Յուսահատութենէ ծայրայեղ բերկրութեան անցնելով, պահապանը իր մանկիկը սրտին վրայ սեղմեց, և արցունքներով ու համբոյրներով ողողեց զայն :

Յետոյ, երբ քիչ մը ինքզինքը դտաւ, գետինը տեսաւ օձին կտորները : Եւ ամէն բան հասկցաւ . անակնկալ յարձակումը, հաւատարիմ կենդանուոյն ուգորումն⁽²²⁾ ու յաղթութիւնը : Բերնին վրայ տեսնուած արիւնը թշնամուոյն արիւնն էր, որուն դէմ պաշտպաններ էր իր տէրոջը զաւակը : Անհուն տրտմութիւն մը գրաւեց նորէն պահապանին սիրտը . «Սն՛դճ շունս, հեծեց, վարձքի արժանի էիր, և սպաննեցի զքեզ . . . : Անիծեա՛լ ըլլայ իմ աճապարանքս . . . : Բոլոր կեանքիս մէջ այս ցաւը չպիտի մոռնամ, և արցունք պիտի թափեմ ամէն անգամ որ յիշեմ թէ անխորհուրդ վարմունքիս զո՞հ գացիր դուն :»

ԱՌԱՄՆԵՐ. — Տասն անգամ չարիք, Գրեմս՝ մեռիր,
Մեկ անգամ ձեռի: Եկո՛ւր սիրեմ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Տարածամ.** — Հոս կը նշանակէ «ժամանակէն առաջ»: կը նշանակէ նաև «ժամանակը անցնելէն ետքը»:
- (2) **Մենաւոր.** — Միս մինակ:
- (3) **Ապաստանարան.** — Պատասպարուելու տեղ:
- (4) **Գուրգուրանք.** — Մեծ սէր:
- (5) **Միջադէպ.** — Անկարելորդ դէպք մը որ տեղի կ'ունենայ կարելորդ գործի մը ընթացքի միջոցին:
- (6) **Կադկանձիւն.** — Շան լալու ձայն:
- (7) **Գիւրազգած.** — Շուտ զգածուող:
- (8) **Ծծակ.** — Դործիք մը որով տղոց կամ կու տան:
- (9) **Սեւ.** — Կենդանիներուն վրայի մազը:
- (10) **Բսմնիլ.** — Տնկուիլ:
- (11) **Ժանիք.** — Անասուններուն ակռաները:
- (12) **Պարուրանել.** — Շրջանակի ձեւով:
- (13) **Գալարիլ.** — Զուանի պէս ոլորուիլ:
- (14) **Զսպանակ.** — Գալարուած պողպատ կամ ուրիշ մետաղ, զոր կը սեղմեն շարժող ուժ յառաջ բերելու համար (չե՛ղերեէ):
- (15) **Ախոյեան.** — Թշնամիին դէմ կեցող:
- (16) **Խուսափիլ.** — Ազատիլ, փախչիլ:
- (17) **Կզակ.** — Ստորին ծնօտը (չե՛նէ):
- (18) **Պայքար.** — Կռիւ:
- (19) **Տապալիլ.** — Շրջիլ, վար իյնալ:
- (20) **Զարագուցակ.** — Աղետալի, ճախողուծիւն բերող:
- (21) **Կլափ.** — Անասունի բերան:
- (22) **Ոգորում.** — Ճակատ նակտի կռիւ:

ՀԱՐՑՈՒԹՆԵՐ. — Այգիին պահապանը որո՞ւ հետ կ'ապրէր: — Ի՞նչո՞ւ մինակ կ'ապրէր: — Ի՞նչ բանով կ'զբաղէր: — Երբ տունէն մեկնէր, մանկիկը որո՞ւ կը ձգէր: — Առտու մը հօրը մեկնելէն վերջը, ի՞նչ պատահեցաւ: — Շունը ի՞նչ ըրաւ: — Ո՞վ յաղթեց: — Կռիւի միջոցին ի՞նչ պատահեցաւ: — Երբ տէրը եկաւ, շունը ի՞նչ ըրաւ: — Տէրը ի՞նչ բանէ կասկածեցաւ: — Ի՞նչ ըրաւ: — Շունը սպաննելէն վերջը ի՞նչ տեսաւ: — Այն ատեն ի՞նչ զգաց:

32. ԵՐԿՈՒ ՊՈՒՊՐԻԿՆԵՐ

Այիս խեղճուկ պուպրիկ մ'ուռնի խաւաքարտէ(1),
Թեւը վրթած, արեւակէզ(2), գլուխը կընտակ(3) .
Բայց կը հողայ, կը զարդարէ զայն շարունակ
Ծաղկահիւսակ(4) գլխարկներով՝ բարակ յարդէ :

Օրրանին մէջ, բամպակ բարձիր դըրած գլխուն,
Կը գուրգուրայ, կը խենդենայ անոր վըրան,
Կը մաքրէ զայն, կը խընամէ մօր մը նըման .
Գորովանքով իր ջերմ սրտիկն է բաբախուն :

Քոյրն ալ ունի պուպրիկ մ'աղուոր շինուած գածէ(5)
Դեղձան(6) վարսերն(7) ուսերն ի վար կը թափթըփին :
Կարծես, իրօք մօտեցեր ես վարդի թուփին,
Երբ տեսնես դէմքն որ գունափայլ կը ճաճանչէ :

Բայց անտարբեր և անսիրտ մայրն այս պուպրիկին
Շարաթներով զայն կը ձրգէ գեանին վըրայ,
Ուր անխընամ՝ փոշիներուն մէջ կը մընայ .
Ոչ օրօրոց ունի, ոչ բարձ, ոչ անկողին :

Այս պուպրիկներն օր մ'իրարու հանդիպեցան .
Ու լերկ(8) տըղան երբոր տեսաւ պուպրիկն աղուոր,
«Երանի՛ քեզ, սիրո՛ւն աղջիկ, ըսաւ անոր,
Որ վարդագեղ այտեր ունիս, վարսեր դեղձան :

Տնս, ի՛նչ դժբախտ եմ ես դէմքովս այս այլանդակ,
Ոտքըս կտարած, թեւըս վրթած, գլուխս է լերկ .
Մայրիկս եթէ օր մը միայն ձգէր զիս մերկ,
Ամէնուն քով, ս'հ, կ'ըլլայի ծաղր ու ծանակ :

— Թո՛ղ , քեզի պէս , չունենայի ես ալ մազեր .
 Ըլլայի կաղ , թեւատ⁽⁹⁾ , տրգեղ , արեւակէզ .
 Միայն , ես ալ ունենայի քուկինիդ պէս
 Գորովալից բարի մայրիկ մ'որ զիս սիրէր :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Խաւաբարս.** — Շատ Թանձր Թուղթ (հաւաւ) :
- (2) **Արեւակէզ.** — Արեւէն այրած :
- (3) **Կնճակ.** — Գլխուն մազերը Թափած :
- (4) **Ծաղկահիւսակ.** — Ծաղիկով շինուած :
- (5) **Գան.** — Սպիտակ նիւթ մը որ ջուրի մէջ լմուելով կը ծառայէ ծե-
- (6) **Դեղձան.** — Դեղինի զարնող , խարտեաշ : [փելու (ուլ) :
- (7) **Վարս.** — Մազ :
- (8) **Լերկ.** — Մազ չունեցող :
- (9) **Թեւատ.** — Թեւը կտրած :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչպէս է Ալիսին պուարիկը — Ալիս ի՞նչպէս կը վարուի իր պուարիկին հետ , ի՞նչ խնամք կը տանի անոր — Անոր քրոջը պուարիկը ի՞նչպէս է — Քոյրը ի՞նչպէս կը վարուի իր պուարիկին հետ — Օր մը ի՞նչ պատահեցաւ — Տգեղ պուարիկը ի՞նչ ըսաւ միւսին — Անիկա ի՞նչ պատասխանեց — Անոնցմէ ո՞րը աւելի երջանիկ էր :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

11. ՈՒՍՈՒՑՉԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ

Տեղ եւ թուական : — Աւակերս մը արժօնութիւն կը խնդրէ իր ուսուցիչէն հետեւեալ օրը բացակայ գտնուելու դպրոցէն (պատճառ մը գտէ) : — Զինքը հարկադրող պատճառները կը բացատրէ (փնտռեցէ) : — Կը խոստանայ իր կորսնցուցած դասը սորվիլ : — Վերջին բանաձեւ եւ **ստորագրութիւն** : — Հասցէ :

33. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՇԱՆԴԷՊ

Անգութ ըլլալ կենդանիներուն նկատմամբ չար սրտի մը ապացոյցն է : Անմեղ կենդանի մը որ ոչ մէկուն կը վնասէ , իրաւունք ունի մեր պաշտպանութիւնը վայելելու :

Սակայն , ինչպէս գիտէք , մարդիկ ստիպուած են աւստնցմէ շատերը սպաննելու մեր անունդին համար , և մենք առանց խղճահարութեան , կ'ուտենք ձուկերը , թռչունները , հաւերը , եղերը , ոչխարները , ևլն . : Ասիկա դարերէ ի վեր արտօնուած և օրէնքի կարգ անցած սովորութիւն մըն է , որովհետեւ առողջապահական կանոններու համաձայն , ընդունուած է թէ անոնց միտք մարդկային անունդին անհրաժեշտ մէկ տարրը⁽¹⁾ կը համարուի : Ուրեմն իրաւունք ունինք զանոնք ուտելու , բայց երբեք չարչարելու կամ անխնամ թողելու ցորչափ ողջ են :

Տղաք կան որ աանը մէջ թռչուններ կը պահեն իրենց հաճոյքին համար , և սակայն խնամք չեն տանիր անոնց . վանդակը աղտոտ կը թողուն , ջուրը չեն փոխեր , և նոյն իսկ երբեմն կը մոռնան կեր տալու անոնց : Ասիկա սրտի աէր տղու անարժան վարմունք մըն է : Մարդ երբ իր տան մէջ տունկ մը , ծաղիկ մը , նոյն իսկ կարասի մը ունի , պարտական է խնամել զայն , որպէս զի չթառամի , չցամքի , չաւրուի , ուրեմն որչա՛փ աւելի կենդանիի մը՝ որ կ'ըզայ , կը տառապի , կը հիւանդանայ ու կը մեռնի լքուած⁽²⁾ ու առանց խնամքի :

Տղաք կան որ կը չարչարեն իրենց կատուն կամ շունը միմիայն զուարճանալու համար , ոմանք կը ծեծեն իրենց ձին կամ գառնուկը պատրուակելով⁽³⁾ որ չի հնազանդիր իրենց . անոնք խորհելու են թէ այդ հէք կենդանիներն ալ կրնան ցաւ մը , սաստիկ խոնջէնք⁽⁴⁾ մը կամ

տկարութիւն մը զգալ, և երբ ասիկա նկատողութեան չեն առներ և անգութ կը դանուին, այդ տղաք կրնան նաև օր մը միեւնոյն անսիրտ վարմունքը ունենալ իրենց նմաններուն հանդէպ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Surr.** — Ամբողջութիւն մը կազմող մասերը:
- (2) **L'faud.** — Երեսի վրայ թողուած:
- (3) **Պատուակել.** — Սուտ պատճառ բռնել:
- (4) **Խոնջէնք.** — Յոգնութիւն:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Կենդանիներուն նկատմամբ անգութ ըլլալը ի՞նչ կ'ապացուցանէ: — Երաւունք ունի՞նք կենդանիներուն միտը ուտելու: — Ինչո՞ւ համար: — Սրտի տէք տղայ մը ի՞նչ պէտք է ընէ, երբ կենդանի մը կը պահէ իր տան մէջ: — Ինչո՞ւ պէտք է զթութեամբ վարուինք կենդանիներուն հետ:

34. ԱՆՏԱՌԻՆ ՏՆԱԿԸ

(Հ Է Ք Ն Ա Թ)

Սաղարթախիտ⁽¹⁾ թաւ⁽²⁾ անտառի մը եզերքը խրճիթ մը կար, ուր խեղճ փայտահատ մը կ'ապրէր իր կնոջը և երեք աղջիկներուն հետ:

Առաւօտ մը, երբ կաղինը առած կը մեկնէր, ըսաւ կնոջը. «Այսօր շատ դործ ունիմ, ցորեկուան ճաշի չպիտի դամ. Այլսէնին հետ ապուրս անտառ դրիկէ՛: Ես ճամբան կորեկ⁽³⁾ ցանկով կ'երթամ, որպէս զի հետքերուս հետեւելով դայ զիս դանկ:»

Կէս օրին մօտ , Աշխէն ապուրը կ'առնէ ճամբայ կ'ելլէ :
Սակայն ճնճղուկները⁽⁴⁾ , արտոյտները⁽⁵⁾ , սարեակներն⁽⁶⁾
ու ծիծեռնակները⁽⁷⁾ արդէն կերեր հասցուցեր էին դանոնք ,
և աղջիկը չի կրնար իր հօրը հետքը դանել : Կը քալէ , կը
քալէ խիտ ոտները մէկդի հրելով , շաւիղներ⁽⁸⁾ բանալով
ու հետզհետէ ա՛լ աւելի մոլորելով թաւուաքներուն⁽⁹⁾ խո-
րութեանց մէջ : Լոյսը տակաւ կը քաշուի ծառերուն բա-
ցատներէն⁽¹⁰⁾ վեր , և մութը կը կոխէ : Ոտները կը ճար-
ճատին⁽¹¹⁾ հովէն , տերեւները կը խարչավին⁽¹²⁾ խաւարին
մէջ . բուերը կ'սկսին կանչել կռնչել , ու աղջիկը անձանօթ
դողով մը կը համակուի⁽¹³⁾ :

Յանկարծ ծառերուն միջեւէն կը նշմարէ կրակի լոյս
մը որ օդին մէջ կը տատանի հովաշարով : — Անշուշտ այդ
տեղ մարդոց բնակարանն կայ , — կը խորհի Աշխէն , ու կ'սկսի
դէպ ի կարմիր լոյսը դիմել :

Կ'երթայ , կ'երթայ , ու վերջապէս կը հասնի անակի
մը առջև , որ ծառերու մէջ թաղուած է կարծես : Դուռը
կը դարնէ :

— Մտի՛ր , կ'ըսէ ներսէն ձայն մը :

— Աղջիկը կը հրէ դուռը ու ներս մտնելով , ինքզինքը
կը գտնէ ընդարձակ բակի մը մէջ : Ալեւոր ծերունի մը
նստած է մտածկոտ կերպարանքով , ձեռքին մէջ առած
սպիտակ մօրուքը որ մինչև գետինը կ'իջնէ : Դիմացը կը
կենան կով մը , հաւ մը և աքլոր մը արտում տխուր
դիրքի մէջ : Աշխէն կը պատմէ թէ ինչպէս մոլորած էր
անառառին մէջ , ու մէկ գիշերուան համար հիւրընկալու-
թիւն կը խնդրէ ծերունիէն :

Ծերունին կը դառնայ իր կենդանիներուն ու կը հարցնէ .

Աղուոր , սիրո՛ւն իմ հաւիկ

Շէկ ու կայտա՛ն իմ կովիկ

Եւ դուն ալ , քա՛ջ իմ աքլոր ,

Ի՞նչ պատասխան տանք ասոր :

Կենդանիները միաբերան կը պատասխանեն . «Ընդու-
նի՛նք :»

Այն ատեն ծերունին կ'ըսէ աղջկանը .

— Հրամմէ՛ , սիրո՛ւն աղջիկ , մեր դլխուն վրայ տեղ
ունիս : Մեր դուռը բաց է , տունը լեցուն՝ տրամադրու-
թեանդ տակ . դնա՛ խոհանոց , կերակուր պատրաստէ՛ , և
ամէնքս միատեղ ուտենք :

Աշխէն խոհանոց կը մտնէ , և ամէն պէտք եղածը կը
գտնէ հոն առատ : Ընթրիքը կը պատրաստէ , սեղանը կը
շտկէ , ու ինքն ալ նստելով , ախորժակով կ'ուտէ . յետոյ
սեղանէն ելլելով կ'ըսէ .

— Ա՛հ , շատ յոգնած եմ , ո՞ւր պիտի պառկիմ :

Այն ատեն կուլը , հաւը և աքլորը կը պատասխանեն .

Առատ կերար կշտացար .

Ըզմեզ երեքս ալ մոռցար .

Գրնա՛ , աղջի՛կ մըտացիր⁽¹⁴⁾ ,

Ուր որ կ'ուզես քընացի՛ր :

Եւ ծերունին կը յարէ .

Սանդուխէն վեր ելի՛ր , այնտեղ սննեակ մը պիտի
տեսնես , ուր անկողին մը կայ . պատրաստէ՛ և պառկէ՛ :

Աշխէն ծերունին հրահանգներուն համաձայն , կ'եր-
թայ անկողինը կը շտկէ ու կը պառկի :

Քիչ մը ետքը , ծերունին վեր կ'ելլէ , ու տեսնելով որ
աղջիկը խոր քունի մէջ ընկղմած է , մահճակալին տակէն
գաղտնի դուռ մը կը բանայ . անկողինը վար կ'իջնէ , ու
դուռը վրայէն կը գոցուի վերատին :

* * *

Փայտահատը իրիկունը տուն գառնալով , երբ եղելու-
թիւնը⁽¹⁵⁾ կ'իմանայ , կը հասկնայ որ աղջիկը ճամբան կոր-
սընցուցած է , և որովհետեւ լեռնցի աղջիկները անվախ են ,
ու անսովոր բան մը չէ իրենց համար մէկ երկու գիշեր

անտառին մէջ անցընել, անսխալ կը քնանայ, ապահով ըլլալով որ Աշխէն ուր որ է կուգայ :

Եւ հետեւեալ առտուն կը պատուիրէ որ երկրորդ աղջիկը Աննան բերէ իր ապուրը :

— Այսօր ճամբան ոսպ պիտի ցանկեմ, կ'ըսէ, ոսպը⁽¹⁶⁾ կորեկէն մեծ է, և աւելի աչքի կը զարնէ :

Կէս օրին, Աննան ապուրը կ'առնէ ճամբայ կ'ելլէ, բայց ոչ մէկ ոսպի հասիկ մը կը տեսնէ. թռչունները կերեր են :

Աղջիկը անտառին մէջ կը թափառի, կը թափառի ուղեկորոյս⁽¹⁷⁾, և գիշերը կ'երթայ միեւնոյն ծերունւոյն տնակը :

Միեւնոյն դէպքերը կը կրկնուին, և Աննան ալ իր քրոջը պէս ընթրիքը կը պատրաստէ, կ'ուտէ կը խմէ, և առանց կենդանիներուն ուտելիք տալու, կ'երթայ կը պատկի : Ծերունին դարձեալ կը բանայ մահճակալին ներքեւ գանուած դուռը և աղջկանը վրայէն կը դոցէ :

* * *

Երրորդ առտուն փայտահատը կնոջը կ'ըսէ .

— Այսօր Շուշանը թող բերէ ապուրս :

Մայրը կ'ընդդիմանայ. — Մեծերը տակաւին չեկան. ով գիտէ ի՞նչ պատահեցաւ. չելլէ՞ ան ալ միւսներուն պէս մոլորի :

— Դուն հոգ մի՛ ընեք. ասիկա խելքը գլուխը աղջիկ մըն է. ճամբան չի կորսնցնիր. արդէն այսօր սխեռ պիտի ցանկեմ ճամբուս վրայ. կարելի չէ որ սխեռը աչքի չզարնէ :

Բայց երբ Շուշանը անտառէն ներս կը մտնէ, արդէն թռչունները սխեռը սպառած⁽¹⁸⁾ են ամբողջովին :

Խեղճ աղջիկը ասդին անդին կ'իյնայ. կը մտածէ, կը մտատանջի. «հիմայ հայրս անօթի պիտի մնայ, մայրս սիրտ պիտի հատցնէ ինձի համար :»

Եւ երբ դիչերը վրայ կը հասնի, ինքն ալ նշմարելով
կրակին կարմիր լոյսը կ'ուղղուի դէպի ծերունւոյն անակը :
Ներս կը մանէ, տեղ կը խնդրէ, և ծերունին կը դիմէ իր
ընկերներուն .

Աղուոր սիրո՛ւն իմ հաւիկ ,
Շէկ ու նախշուն իմ կովի՛կ ,
Եւ դուն առոյգ իմ աքլոր ,
Ի՞նչ պատասխան տանք ասոր :

«Ընդունի՛նք» կը պատասխանեն կենդանիները :

Այն ատեն Շուշանիկ կը մօտենայ, կը գգուէ հաւն ու
աքլորը, կովին ճակատը կը շոյէ : Ծերունւոյն պատուէրին
համեմատ, ճաշը կը պատրաստէ, սեղանը կը շտկէ ու
կ'ըսէ .

— Ինչո՞ւ ես կերակուր ուտեմ, և այս բարի կենդա-
նիները անօթի մնան :

Ու կ'երթայ կուտ կը բերէ կը թափէ հաւին ու աք-
լորին առջև, կովին համար ալ գիրկ մը խոտ :

— Կերէ՛ք, աղուորիկ կենդանիներս, կ'ըսէ, հիմայ
ձեզի ջուր ալ կը բերեմ :

Եւ դոյլ մը ջուր բերելով, առջեւնին կը դնէ :

Ամէնքը կշտացնելէ յետոյ, ինք ալ կ'ուտէ ինչ որ
թողած է ծերունին իրեն :

Եւ երբ պառկելու ժամը կուգայ ծերուկը իր սովո-
րական հարցումը կ'ընէ կենդանիներուն, և անոնք միա-
բերան կը պատասխանեն .

Մեզ հետ կերար միասին ,
Ու հոգ տարիր մեր մասին .
Գընա՛ հանգիստ դուն նիրհէ՛ .
Փափաքդ Աստուած կատարէ :

Ու աղջիկը իր անկողինը պատրաստելով կը քնանայ :
Կէս դիչերին, յանկարծ տունը կը դղրդի⁽¹⁹⁾, կար-
ծես հիմնայատակ⁽²⁰⁾ պիտի կործանի : Շուշանիկ սարսա-

փահար կ'արթննայ . բայց խակոյն աղմուկը կը դադրի .
ամէն բան անդորրած է⁽²¹⁾ . ու աղջիկը նորէն կը քնանայ :

Առտուն երբ կ'արթննայ , ապշահար⁽²²⁾ կը մնայ , ի՛նչ
անակնկալ⁽²³⁾ , ի՛նչ զմայլելի տեսարան : Ինքզինքը պառ-
կած կը գտնէ ընդարձակ սենեակի մը մէջ շքեղօրէն դար-
դարուած . շուրջը մետաքսի , ոսկիի , շղարշներու⁽²⁴⁾ , ծա-
ղիկներու , բոյսերու ակնահաճոյ⁽²⁵⁾ ներդաշնակութեան մը :
Աչքերուն չի հաւատար , կը կարծէ թէ երազ կը տեսնէ :

Այդ միջոցին դուռը կը բացուի , և ներս կը մտնէ
գեղեցիկ երիտասարդ մը շքեղ հագուած , որ կ'ըսէ իրեն .

— Սիրո՛ւն աղջիկ , ես այս երկրիս թագաւորին տղան
եմ : Չար վհուկ⁽²⁶⁾ մը կախարդած⁽²⁷⁾ էր զիս ու դատա-
պարտած որ ձերի կերպարանքով այս անտառին մէջ ապ-
րիմ երեք ծառաներուս հետ առանձին , որոնք հաւի ,
կովի և աքլորի կերպարանք ստացած էին : Եւ այսպէս
պիտի մնայինք մինչև դառուէր բարի աղջիկ մը այնքան
գորովասիրտ⁽²⁸⁾ որ կարեկցէր⁽²⁹⁾ կենդանիներուն և սիրէր
զանոնք : Այդ աղջիկը դուն եղար : Քու շնորհիւդ , այս
գիշեր , մենք ամէնքս ալ կախարդանքէն ազատեցանք .
և պալատս որ տնակի մը փոխուած էր , դարձեալ իր առ-
ջի վիճակը ստացաւ : Հիմայ կ'ուզեմ որ դուն իմ կինս
ըլլաս . կը հաւանի՞ս :

Եւ աղջկանը հաւանութեանը վրայ , հրաման ըրաւ
ծառաներուն որ կառքեր պատրաստեն երթալ հարսնիքի
հրաւիրելու համար Շուշանիկի ծնողքը :

— Բայց ո՞ւր են քոյրերս , հարցուց Շուշան :

— Անոնք այս պալատին ներքնայարկին մէջ փակ-
ուած են : Վաղը առտու պիտի դրկեմ զանոնք որ երթան
անտառին մէջ ամխաղործին քով աշխատին , մինչև որ
նուազ անձնասէր ըլլան , և վարժուին կենդանիներուն
հետ զթութեամբ վարուելու :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Սաղարթախիս.** — Շատ անբեւեռով:
- (2) **Թաւ.** — Խիտ:
- (3) **Կորեկ.** — Տեսակ մը հունտ զոր Թռչուններուն կու տան:
- (4) **Ճննդուկ.** — Փոքրիկ Թռչուն մը («երէ, moineau):
- (5) **Արսոյս.** — Երգեցիկ Թռչուն մը (alouette):
- (6) **Սարեակ.** — Ճննդուկի ցեղէ Թռչուն մըն է:
- (7) **Ծիծեռնակ.** — Ուղեւոր Թռչուն որ գարնան մեր երկիրը կու գայ
- (8) **Շաւիղ.** — Նեղ ճամբայ: [և ձմեռը տաք երկիրներ կը գաղթէ:
- (9) **Թաւուսֆ.** — Անտառ:
- (10) **Բացաս.** — Բաց տեղ:
- (11) **Ճարճասել.** — Ոստերուն հանած ձայնը հովին դէմ:
- (12) **Խարցափել.** — Տերեւներուն ձայնը:
- (13) **Համակուիլ.** — Բոլորովին զգածուիլ:
- (14) **Մսացիք.** — Միտքը ցրուած:
- (15) **Եղելուքիւն.** — Պատահած բան մը:
- (16) **Ոսպ.** — Տեսակ մը հատիկ որմէ ապուր կը շինեն:
- (17) **Ուղեկորոյս.** — Ճամբան կորսնցուցած:
- (18) **Սպառած.** — Հատցուցած:
- (19) **Կը դդրդի.** — Տեղէն կը շարժի:
- (20) **Հիմնայասակ.** — Տակն ու վրայ:
- (21) **Անդորրիլ.** — Հանդարտիլ:
- (22) **Ապսահար.** — Ապշած մնացած:
- (23) **Անակնկալ.** — Չյուսացուած:
- (24) **Շղարց.** — Շատ բարակ կերպաս (gaze):
- (25) **Ակնահանոյ.** — Գեղեցիկ տեսքով:
- (26) **Վհուկ.** — Կախարդ կին: [պած էր:
- (27) **Կախարդած էր.** — Բնական վիճակէն հանած և այնպէս կա-
- (28) **Գորովասիրս.** — Սիրով լեցուն սիրտ ունեցող:
- (29) **Կարեկցիլ.** — Մեղքնալ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Փայտահատը որո՞ւ հետ կ'ապրէր անտառին մէջ: — Առաւօտուն մեկնած ատեն ի՞նչ ըսաւ կնոջը: — Աշխէն ի՞նչ ըրաւ: — Ի՞նչ սրտահեցաւ իրեն: — Յանկարծ ի՞նչ տեսաւ ծառերուն մէջէն: — Ո՞վ կար տնակին մէջ: — Ծերունին ի՞նչ առաջարկեց իրե՛ն — Աշխէն ի՞նչ ըրաւ: — Գիշերը ի՞նչ սպտահեցաւ: — Երբ փայ-

տահատը երբ կը տեսնէ որ Աշխէն տուն դարձած չէ, ի՞նչ կ'ըսէ: —
Աննային ի՞նչ կը պատահի: — Երրորդ առտուն ի՞նչ կը պատուիրէ
փայտահատը: — Շուշանիկին ի՞նչ կը պատահի: — Շուշանիկ ի՞նչ-
պէս կը վարուի ծերունիին տնակին մէջ: — Կէս գիշերին, ամէնքը
քնանալէ վերջը, ի՞նչ տեղի կ'ունենայ տնակին մէջ: — Հետեւեալ
առտուն ինքզինքը ո՞ր կը գտնէ Շուշանիկ: — Ո՞վ կը ներկայանայ
իրեն: — Ի՞նչ կ'առաջարկէ: — Շուշանիկին քոյրերը ինչո՞ւ համար
կը պատժուին: — Շուշանիկ ինչո՞ւ կը վարձատրուի:

35. Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Հ Ի Ն

Տո՛ւր ինձ տափանը⁽¹⁾, փոցխը⁽²⁾, բահն ու թին,
Թո՛ղ դէմքըս այրէ արեւը գարնան.
Անոր կըրակոտ համբոյրին ներքեւ
Քաղցր է դիմանալ հողերու բեռան:
Առողջ թեւերըս ես վեր կը սօթտեմ.
Գօտիս կը պրկեմ⁽³⁾, ծամըս⁽⁴⁾ կը կապեմ:
Թո՛ղ նուաատութիւն⁽⁵⁾ համարին մարդիկ
Սեւ աշխատանքը չարքաշ⁽⁶⁾ գեղջուկին.
Ան ինձ կը բերէ թէ բախտ, թէ բարիք:
Կ'ուզէի տեսնել ես այստեղ, յոգնած,
Նիհար ու վրախա կիները քնքուշ:
Օ՛ դուք տերեւներ հովէն հալածուած,
Օ՛ դուք ծաղիկներ գիշերով ծաղկած,
Անգործութենէ գեղնած այսերով,
Դէպ ի մայր հողը դիմեցէ՛ք շուտով:
Վա՛յ անոր որ միշտ կը փախչի հողէն,
Եւ կը խուսափի⁽⁷⁾ չարքաշ կենցաղէն:

Ամէն պաճուճանք⁽⁸⁾ մէկդի ճըգեցէ՛ք .
Անոնց ճնշումէն կուրծքը կը թռամի ,
Ինչպէս ծաղիկը յափրած⁽⁹⁾ ջերմոցի :
Մաքուր թարմ օդին , լոյսին մօտեցէ՛ք
Դէպ ի մայր հողը Տէրոջ պարգեւած :

ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԵԱՆ ⁽¹⁰⁾

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Տափան.** — Երկրագործական գործիք մը :
- (2) **Փոցիս.** — Երկրագործական գործիք :
- (3) **Պրկել.** — Սաստիկ քաշել, ոլորել :
- (4) **Ծամ.** — Մազ :
- (5) **Նուասուրիւն.** — Պզտիկութիւն :
- (6) **Զարբառ.** — Յոգնութեանց դիմացող :
- (7) **Խուսափիլ.** — Փախչիլ :
- (8) **Պանուճանք.** — Զարդարանք :
- (9) **Յափրած.** — Զանձրացած, յոգնած :
- (10) **Յակոբ Յակոբեան.** — Ռուսահայ բանաստեղծ, ծնած 1869ին :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

12. ՈՍԿԻ ՀԱՅԸ

Թագաւոր մը ոսկիի հանքեր ունի : — Բոլոր դաւժին մշակները կը դրկէ որ երթան իր հանքերուն մէջ աշխատին : — Թագուհին օր մը ճաշի կը հրաւիրէ թագաւորը . սեղանին վրայ բոլորկերա կուրները, հացն իսկ ոսկիէ են : — Անօթի կը մնան : — Թագաւորը կը հասկնայ իրեն տուած դասը :

36. ԲՆԱԿԱՆ ՅԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՈՒՂՂՈՒԻԼ

Դեմոսթենէս⁽¹⁾, Յունաստանի մեծ հռետորը⁽²⁾, բնականէն լեզուի թերութիւն մը ունէր. չէր կրնար մէկ քանի բառ իրարու ետեւէ անսխալ արտասանել, և այս պակասութիւնը զինքը անկարող կ'ընէր ընկերութեան մէջ խօսելու: Իր մանկութենէն զինքը ճանչցողները կը մեղքնային իր հանձարը, որ այսպէս անդամարուծութեան կը դատապարտուէր խօսելու մեծ դժուարութեանը պատճառաւ: Արդէն կուրծքն ալ տկար էր և ձայնը՝ անախորժ: Երբ բերանը բանար, կը կակաղէր⁽³⁾, կը թօթովէր⁽⁴⁾ տղու հման: Սակայն այնքան մեծ էր իր եռանդը, այնքան երկար՝ իր համբերութիւնը, և այնքան տեւական եղան իր ջանքերը, որ յաղթեցին բնութեան իրենց դէմ յարուցած խոչընդոսաներուն⁽⁵⁾:



Դեմոսթենէս

Կ'ըսեն թէ իր լեզուի կակաղումը ուղղելու համար փոքրիկ քարի կտորուանք կ'առնէր բերնին մէջ, ու այնպէս կը կարդար երկար հատուածներ հազարումէկ ճիղերով, և լանջքը զօրացնելու համար, խարակներէն⁽⁶⁾ վեր կը մագլցէր⁽⁷⁾ տողեր արտասանելով բարձրաձայն:

Կը պատմեն թէ Դեմոսթենէս ամիսներով գետնափոր տեղ մը բնակեցաւ, ու հոն զբաղեցաւ միմիայն իր ձայնին հնչիւնները կանոնաւորելու, իր շեշտերը անուշ-

ցընելու, մեղմացնելով, բարձրացնելով, զօրացնելով ու փափկացնելով իր առողջանութիւնը⁽⁸⁾, պարագային համեմատ, հարիւր անգամ կրկնելով իրեն դժուար եկած խօսքերը: Մովերուն, հովերուն, անդունդներուն, ապառաժներուն դէմ գոչելով, խօսելով, կարդալով, արտասանելով ամէնէն խրթին բառերը, վերջապէս յաջողեցաւ յղկել իր լեզուն, կազդուրել իր կուրծքը, զօրացնել իր ձայնը, և իր գերմարդկային⁽⁹⁾ ջանքերով հասնիլ այն պերճախօսութեան⁽¹⁰⁾, որ Յունաստանի մեծագոյն փառքերէն մէկը հանդիսացուց զինքը:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Դեմոսթենէս.** — Աթէնքի ամէնէն նշանաւոր ատենարանը: Ապրած է Դ. դարուն՝ Քրիստոսէ առաջ:
- (2) **Հուեսոր.** — Ճարտար խօսող ատենարան:
- (3) **Կակազել.** (4) **Թորովել.** — Բառերը և խօսքերը ընդմիջումներով արտաբերել:
- (5) **Խոչընդոս.** — Ոտքի առջև եկած խոչ, արգելք:
- (6) **Խարակ.** — Ժայռ:
- (7) **Մագլցիլ.** — Չեռքերը և ոտքերը գործածելով տեղէ մը վել ելլել:
- (8) **Առողջանութիւն.** — Արտասանութիւն:
- (9) **Գերմարդկային.** — Մարդուն կարողութենէն վեր: [զանդ:
- (10) **Պերճախօսութիւն.** — Էաւ խօսելով յուզելու, համոզելու տա-

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Դեմոսթենէս ի՞նչ ազգէ էր, ե՞րբ կ'ապրէր եւ ի՞նչ ընական թերութիւն ունէր: — Ի՞նչ հանճար ունէր Դեմոսթենէս: — Դեմոսթենէս իր լեզուի կակազումը ուղղելու համար ի՞նչ ջանքեր ըրաւ: — Կանջքը զօրացնելու համար ի՞նչ կ'ընէր: — Դեմոսթենէս յաջողեցա՞ւ իր նպատակին հասնիլ: — Ի՞նչ օրինակ կու տայ մեզի Յունաստանի մեծ հռետորը:

37. ՌԻԻՊԷՆՍԻ ԱՇԱԿԵՐՏԸ

Ռիւպէնս(1) դեռ նոր աւարտեր էր իր այն նկարը որ կը ներկայացնէ Քրիստոսը խաչին վրայ, և որ հիմայ կը գտնուի Լուվրի թանգարանը(2)։ Արուեստագէտը(3) հազուադիւտ տաղանդով մը զիտցած էր արտայայտել վշտի զանազան երանգները(4) այդ տեսարանին ներկայ եղողներուն՝ Ս. Կոյսին, Ս. Յովհաննէս Մկրտիչին և Մարիամ Մագդաղենացւոյն դէմքին վրայ։ Նկարին մեծագոյն մասը կէս մթութեան մէջ էր. Մագդաղենացին միայն լուսաւորուած էր սաստիկ լոյսով մը։

Ռիւպէնսի բազմաթիւ աշակերտները կ'սպասէին անհամբեր որ վարպետնին արտօնէ իրենց երթալ հիանալու անոր հրաշակերտին(5) վրայ։ Այն օրը որ իրենց բազմանքը(6) պիտի կատարուէր, մէջերնէն երիտասարդ մը, իր ընկերներէն առաջ նկարը տեսնելու տենչանքով(7) պատկերհանին աշխատանոցը կը մտնէ անոր բացակայութեանը միջոցին։

Գաղտագողի(8) կը սպրդի(9) այն պատկերներուն մէջէն, որոնք տակաւին չեն աւարտած, և յանկարծ կը բախի նկարի մը. իր վնասածն է այն, Քրիստոսը խաչին վրայ, որուն աշխատած է Ռիւպէնս պահ մը առաջ։

Սակայն աշակերտը՝ դժբախտաբար քսուելով նկարին՝ աւրած է Մագդաղենացիին ունն ու բազուկը։ Կ'ըզգայ թէ իր այս արարքը աղետաբեր(10) պիտի ըլլայ իրեն համար, պիտի վռնտուի աշխատանոցէն, և բոլորովին պիտի զրկուի Ռիւպէնսի դասերէն։

Յուսահատ ակնարկներ կ'արձակէ իր շուրջը. յանկարծ կը նշմարէ այն երանգապնակը(11), զոր Ռիւպէնս դեռ նոր գործածած էր, և քովն ալ տակաւին խոնաւ

վրձինները . ձեռքը կ'առնէ զանոնք , և վերահաս խայտառակութեան մը երկիւղէն մտրակուած , հզօր թափով մը մէկ քառորդ ժամու մէջ վերստին կը գծէ աւրուած ուսը և բազուկները : Ապա , ամէն բան տեղը կը դնէ և կը դառնայ իր ընկերներուն քով :

Քիչ ետքը , Ռիւպէնա կու գայ իմացնել իր աշակերտներուն թէ կրնան իր աշխատանոցը այցելել : Ամէնքն ալ կը փութան ընկերանալ իրեն : Դեռահաս հետաքրքիրը կը հետևի անոնց՝ գողգոջ քայլերով : Կ'ուղէ խոյս տալ , բայց փախուստը կրնայ զինքը մատնել . ուստի և կը մնայ , օգնութեան կանչելով իր բոլոր արիութիւնը :

Աշակերտները հիացմամբ կը կենան հրաշակերտին առջև . Ռիւպէնա կը հարցնէ անոնց թէ այդ նկարին ո՞ր մասը ամէնէն աւելի կը գրաւէ իրենց ուշադրութիւնը :

— Կոյսին դէմքը , կ'ըսէ մէկը , ուր մայրական սէրը այնքան զուրգուրանքով կը պատկերանայ :

— Քրիստո՛սը , կ'ըսէ ուրիշ մը , տեսէ՛ք ի՞նչ հրաշալի ձկնութիւն(12) ունին իր դնդերները :

— Ի՞նչ որ ինձի ամէնէն աւելի հիացում կ'ազդէ , կ'ըսէ երրորդ մը , իր դէմքին արտայայտութիւնն է :

— Իսկ ես , կ'ըսէ Ռիւպէնա , կը գերընտրեմ(13) Մագդաղենացին . անոր բազուկին և ուսին չափ նուրբ բան մը գծած չեմ կրբեք :

Երբ այս խօսքերը լսեց յանցաւոր աշակերտը , ուրախութեան սարսուռ մը ունեցաւ . բայց իր անակնկալ յաջողութիւնը իրեն պահելու սախալուած էր , աւանդ : Միայն թէ նոյն պահուն զգաց որ ինք ալ տաղանդ մըն է : Վերսկսաւ աշխատիլ անսովոր եռանդով մը : Օր մը աշակերտը հաւասարեցաւ իր վարպետին , և քանի մը դորձերու մէջ գերազանցեց իսկ զայն :

Այդ աշակերտը Անդոն վան Տիքն(14) է :

ԱՌԱԾ . — Ժամ կայ սեւ , մուք ու խաւար
Որ երեսիդ մուր կու սայ .

Ժամ կայ ներմակ ու պայծառ
Որ երեսիդ հուր կու սայ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Ռիւպէնս.** — Հողանտացի երեւելի նկարիչ :
- (2) **Լուվրի Թանգարանը.** — Բարիգի նշանաւոր շէնքերէն մէկը որ յտակացած է արուեստի և գիտութեան վերաբերեալ առարկաներու պահպանութեան :
- (3) **Արուեստագէտ.** — Արուեստ գիտցող, ինչպէս նկարիչները, երաժիշտները, արձանագործները, և այլն :
- (4) **Երանգ.** — Միեւնոյն գոյնին զանազան աստիճանները՝ բացէն մուծ :
- (5) **Հրագակերտ.** — Արուեստով շինուած գեղեցիկ գործ :
- (6) **Բաղձանի.** — Փափաք :
- (7) **Տենչանի.** — Մեծ փափաք :
- (8) **Գաղտագողի.** — Գաղտուկ :
- (9) **Սպրդիլ.** — Կամացուկ մը սահիլ :
- (10) **Աղետաբեր.** — Դժբաղտութիւն բերող :
- (11) **Երանգապնակ.** — Փայտէ կամ ճենապակիէ պնակ որուն վրայ նկարիչները կը բաղադրեն իրենց գոյները :
- (12) **Ճկունուրիւն.** — Դիւրաշարժութիւն :
- (13) **Գերընտել.** — Վեր դասել :
- (14) **Անդոն վան Տիբ.** — Հողանտացի նշանաւոր նկարիչ :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ո՞վ է Ռիւպէնս : — Ո՞ր պատկերը աւարտեր էր : — Ո՞ւր կը գտնուի հիմայ այդ պատկերը : — Ո՞ւր է Լուվրի Թանգարանը : — Ռիւպէնսի աշակերտներէն մէկը ի՞նչ ըրաւ : — Ի՞նչ պատահեցաւ իրեն : — Իր ծախաւերութիւնը ի՞նչպէս կը դարմանէ Ռիւպէնսի աշակերտը : — Ռիւպէնս ի՞նչ կը հարցնէ աշակերտներուն : — Երբ աշակերտները իրենց կարծիքը կը յայտնեն ի՞նչ կ'ըսէ Ռիւպէնս : — Ի՞նչ կ'զգայ յանցաւոր աշակերտը : — Ո՞վ էր այդ աշակերտը : — Ո՞վ է Անդոն վան Տիբ :



38. Կ Ա Պ Ի Կ Ը

Որչափ աշխատիս ու հանեա հողիդ ,
Գովեափի բառ մը մի՛ տպառեր բընաւ ,
Եթէ դանադան քու ճիգերդ անբաւ
Օգուտ մը չունին քեզ կամ ընկերիդ :
Հողագործ մը , արեւուն հետ , ամէն առտու կ'արթըննար .
Բահն ու բրիչն առած՝ անդուլ⁽¹⁾ անդադար ,
Սրեւուն սակ , տաքին , հովին , արաին հողը կը փորէր :
Հանդիսա չունէր , ոչ ըզբօսանք , ոչ մէկ հաճոյք , ոչ ընկեր ,
Ամէն անանող մատ կը խածնէր . «Ի՞նչ անխոնջ մարդ .
Ի՞նչ կամք» կ'ըսէր , մինչդեռ մըշակն աշխոյժ , պըւարթ
Աշխատանքովն իր հրապարս՝
Կը հերկէր հողը լարդ լարդ⁽²⁾ :

Կապիկ աղբարն , որ դըրացին էր անոր ,
Այդ գովեստներն խմանալով ամէն օր ,
Կը նախանձէր : « Ի՞նչ անիրաւ դատաստան է , կ'ըսէր , աս .
Ես ալ անոր կը նըմանիմ , տեսնե՛նք , իմ ի՞նչս է սլակաս :
Պէտք է միայն ես ալ դործեմ անոր պէս ,
Որ գովեն դիս պարոնները սա չըտես :
Գընաց դաշտէն փայտ մը բերաւ , անհամբեր՝
Աշխատանքի ըսկըսաւ . դայն վար ու վեր
Կը դարձընէր , փոսերուն մէջ կը նետէր :
Յետոյ , շալկած՝ կամաց կամաց կը սողար .
Մէյ մ'ալ նայիս , անով դընտակ կը խաղար :
Ու դաշտերը ինկած հովին , արեւուն ,
Փայտը գըրկած՝ կը վազվրուտէր օրն ի բուն :
Խեղճ կապիկը շատ կը աքնէր⁽³⁾ արդարեւ ,
Իր փայտին հետ տըւայտելով⁽⁴⁾ հե ի հե⁽⁵⁾ .
Գայց ոչ մէկուն մըտքէն կ'անցնէր գովել դայն .
Կը դիտէին , յետոյ քահ քահ կը խնդային իր վըրան :

Այսպէս էք դուք ալ , ո՛վ անմիտ մարդիկ ,
Որ դիչեր ցորեկ անդուլ կ'աշխատիք ,
Ու կ'արհամարհեն⁽⁶⁾ ձեր բոլոր ջանքեր .
Պատճառն այն է որ դործել չէք գիտեր :
Գործ մը ձեզ պատիւ բերելու համար
Պէտք է որ մարդոց ըլլայ օգտակար :

ՔՈՒԼՈՎ

Ա.Ռ.Ա.Ծ . — Էշն ի՞նչ գիտե
Նուշն ինչ է :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Ա.ԳՊՈՒԼ . — Անդադար :

(2) Բարդ բարդ . — Իրարու վրայ դիզուած :

(3) ՏԲԵԻԼ . — Չարաչար աշխատիլ :

- (4) **Տուայթիլ**. — Չարչարուել :
- (5) **Հեւ ի հեւ**. — Շունչը կտրած :
- (6) **Ահամարհել**. — Բանի տեղ չդնել :

ՀԱՐՅՈՒԾՆԵՐ. — Հողագործը ի՞նչ կ'ընէր : — Տեսնողները ի՞նչ կ'ըսէին : — Կապիկը ինչո՞ւ նախանձեցաւ : — Ի՞նչ տեսակ կենդանի է կապիկը : — Իր գլխաւոր յատկութիւնը ի՞նչ է : — Ի՞նչ որոշեց : — Ի՞նչ ըրաւ : — Յաջողեցա՞ւ իր փափաքին հասնիլ : — Ինչո՞ւ : — Ամէն գործ արժանի՞ է գովեստի : — Գործ մը ե՞րբ կը գնահատուի :

39. Գ Ն Դ Ա Ս Ե Ղ Ը

Գնդասեղը ասեղէն աւելի գործածական առարկայ մըն է : Պըրմինկամի⁽¹⁾ գործարանները օրը երեսուներեօթը միլիոն գնդասեղ կը յանձնեն վաճառականներու : Ֆրանսայի մէջ, Լէկլի⁽²⁾ և Բարիդի գործարանները քսան միլիոնի չափ կը հայթայթեն, Հոլանտայի և Գերմանիոյ գործարաններն ալ՝ տասը միլիոն, ասոնց ամբողջութիւնը օրական ութսուն միլիոնի կը հասնի :

Այդ գնդասեղները շատ չեն հիմնար . շատ քիչ անգամ կը կտորին . և կ'ենթադրեմ թէ ոչ ոք անոնց հաւաքածոն կ'ընէ : Ուրեմն ստիպուած ենք ընդունիլ թէ օրը ութսուն միլիոն գնդասեղ կը կտրուի :

Մէկ գնդասեղը արդարեւ վեց հազարերորդ վարայի ապրանք կ'ըլլայ, սակայն ամենադուրի կտրուատ մը, յաճախ կրկնուելով, վերջ ի վերջոյ մեծ վնաս կը պատճառէ : Հաշիւ ըրէ՛ք օրական ութսուն միլիոն գնդասեղի կտրուատէն յառաջ եկած վնասը, և պիտի հասկնաք թէ ինչո՞ւ համար ձեր ծնողքը կը պատուիրէ ձեզի որ բան մը չնետէք, բան մը չվատնէք :

Ամէնքդ ալ լսած էք անշուշտ փոքրիկ Լաֆիթին պատմութիւնը : Դրամատան մը⁽³⁾ անօրէնին ներկայացեր էր պաշտօն խնդրելու համար, բայց մերժուեր էր : Բակէն անցած ատեն, գնդասեղ մը կը տեսնէ գետինը, կը ծոխ, կ'առնէ և խնամքով ներքնակին⁽⁴⁾ վրայ կը խոթէ :

Դրամատան պետը, ասիկա տեսնելով, հասկցաւ թէ կարգ կանոն սիրող և խնայասէր մտքի տէր տղայ մըն էր անիկա . ետ կանչել տուաւ, և իր գրասենեակին մէջ գործ մը յանձնեց անոր : Սեղանաւորը շղջաց ըրածին վրայ . դեռատի Լաֆիթը տանը ընկեր եղաւ, և օր մըն ալ ելեւմտից պաշտօնեայ :

Ա.Ռ.Ա.Ծ . — Կաթիլներ քիչ քիչ
Կը դառնան ընծ յիճ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- (1) **Պըրմիցկամ**. — Անգլիոյ վաճառաշահ քաղաքներէն մէկը :
(2) **Լէկլ** (laigle). — Պզտիկ քաղաք մը Ֆրանսայի մէջ :
(3) **Դրամատու**. — Սեղանաւորական հաստատութիւն, որ դրամական գործողութիւններով կ'զբաղի :
(4) **Ներքնակ** (veste). — կարճ հագուստ մը :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Աշխարհի մէջ օրը քանի՞ գնդասեղ կը շինուի : — Ատոնց համար ի՞նչ գումար կը ծախսուի : — Այդ գնդասեղները ի՞նչ կ'ըլլան : — Փոքրիկ Լաֆիթը ի՞նչ ըրաւ երբ գետինը գնդասեղ մը տեսաւ : — Դրամատան պետը ինչո՞ւ իր բովը առաւ զայն : — Կաթիլներէ ի՞նչ կրնայ գոյանալ :

40. ՄԻՋԱՏՆԵՐՈՒՆ ՊԱՐԻԿԸ ⁽¹⁾

Արշամ կը ձանձրանայ դեղեցիկ պարտէզին մէջ ուր կը պարտի : Իր ձանձրոյթը փարատելու համար, կը

վազվզէ թիթեռնիկներուն կտեւէն, որոնք կը թռչտին մարմանդին⁽²⁾ մէջ, և կ'երթան կը թառին⁽³⁾ վարդերուն վրայ: Իր եռանդուն վազքով⁽⁴⁾ կը կոխկռտէ բուրսւմ-



նաւէտ⁽⁵⁾ խոտերը, որոնք տրամութեամբ կը ծռեն դլուխնին անոր անցնելէն ետքը:

Ահա՛ կը մօտենայ ամուսներուն⁽⁶⁾, կը հպի⁽⁷⁾ հիմայ ծաղկաւէտ վարդենիին: Ո՛հ,

աղուորիկ ոսկեփետուր թիթեռնիկ, շո՛ւտ, թաշկինա՛ կը, գլխա՛րկը:

Վերջապէս բռնեց միջատը, և տենդագին⁽⁸⁾ կը սեղմէ դայն փակ ձեռքին մէջ: Բայց երբ կ'ուզէ դայն մօտէն տեսնել ու համբուրել, բարէ, թիթեռնիկին զաղվաղփուն⁽⁹⁾ մարմնիկը կը դողայ հովաշարժ տերեւի պէս. իր գունաթափ⁽¹⁰⁾ թեւիկները կը բարախսն, և տղան իր մատերուն փակած կը տեսնէ ոսկի փոշին որ քիչ մը առաջ կը փայլէր արեւուն մէջ: Հէք թիթեռնիկը կը գալարի⁽¹¹⁾ յետին ջղաձգութեամբ մը, և կը մեռնի իր սիրական վարդենիին մօտ:

Արշամին սիրտը կտորած է, կը հառաչէ, կու լայ, և կամաց կամաց կը հեռանայ ծառուղիի⁽¹²⁾ մը մէջէն քաշելով դէպ ի բուրաստանին⁽¹³⁾ մեծ թմբին⁽¹⁴⁾, որուն ստորտար, քիչ մը ետքը, քունը կը տանի:

Կ'երազէ Արշամ: Երազին մէջ կը տեսնէ որ դմայլիի փոքրիկ պարիկ մը կու դայ իր քով, որուն անուշիկ դէմքը իր բարի մօրը կը նմանի: Պարիկը բազմած է վարդի մը պսակին մէջ, զոր ոսկեթեւ աղուոր թիթեռներ կը քաշեն կը տանին: Վարդին թերթերը կը սարսրոսան դեփուռին փայփայանքէն⁽¹⁵⁾, և թիթեռնիկները թեթեւօրէն կը թօթվեն իրենց թեւերը:

Պարիկը կանգ կ'առնէ քնացող մանկան առջեւ, կը

խօսի անոր հապիւ լսելի ձայնով մը . «Աղաւո՛ր պղտիկս , կ'ըսէ անոր , դիտեմ թէ ինչո՛ւ սիրտդ կտարած է . սրբափիկդ հիւանդ է , որովհետեւ խեղճ թիթեռնիկը մեռաւ :

«Նայէ՛ , իմ սիրուն միջասաներս ի՛նչպէս երջանիկ են արեւուն ճառագայթներուն մէջ : Նայէ՛ , սիրելի՛ս , դանոնք քովդ բերի որ մխիթարուիս : Բայց ձեռք մի՛ դրպցրներ անոնց , չըլլայ որ վիրաւորուին կամ տանջուին : Մտի՛կ ըրէ , երբ վարդենիին վրայ կը թռչտին , երբ ծաղիկները կ'աւարեն⁽¹⁹⁾ կամ երբ խոտերուն մէջ կը նետուին : Շատ սիրէ՛ դանոնք . պիտի հասկնաս իրենց լեզուն , և այն ատեն , սիրելի՛ս , ա՛լ երբեք չպիտի ձանձրանաս , և սրտիկդ պիտի բուժուի :»

Այսպէս ըսաւ միջասաներու փոքրիկ պարիկը , և անհետացաւ մայրամուտ⁽¹⁷⁾ արեւուն լուսավառ հետքին մէջ , մինչ Արշամ արթնցաւ աչուկները սրբելով :

Այդ օրէն ի վեր , ա՛լ սղան բնաւ չի ձանձրանար , երբոր կը պտրտի դեղեցիկ պարտէզին մէջ , վասն զի միջասաները իր բարեկամներն են և կը պատմեն իրեն աղուոր բաներ , զոր սքանչելի կերպով կը հասկնայ :

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՆԵԼՈՒԿ Թ. — Մեջը նուշ
Բոյորը փուշ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Պարիկ. — Դոյուծիւն չունեցող , երեւակայական էակ մը , որուն բարի յատկութիւններ կը վերագրէին :
- (2) Մարմանդ. — Մարգագետին :
- (3) Թառիլ. — Թռչունին տեղ մը կենալը :
- (4) Վազբ. — Վազելու գործողութիւն :
- (5) Բուրումնաւէտ. — Անուշահոտ :
- (6) Ածու. — Հողի մասեր իրարմէ բաժնուած , ուր ծաղիկ կամ բանջարեղէն կը ցանեն :
- (7) Հպիլ. — Կամացուկ մը դպչիլ :
- (8) Տենդագին. — Շատ յուզմունքով :

- (9) **Ջաղփաղփուց.** — Տկար:
- (10) **Գուցարափ.** — Գոյնը նետած:
- (11) **Գալարիլ.** — Ինք իր վրայ դառնալ:
- (12) **Ծառուղի.** — Երկու կողմը ծառերով ճամբայ:
- (13) **Բուրասան.** — Գեղեցիկ պարտէզ:
- (14) **Թմբի.** — Տեսակ մը ծառ (օխլաճուր):
- (15) **Փայփայանիֆ.** — Գոռանք:
- (16) **Աւարեյ.** — Թալլել:
- (17) **Մայրամուտ.** — Մարը մտնող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Արշամ իր ճանճրոյթը փարատելու համար ի՞նչ կ'ընէ: — Ի՞նչ կ'ընէ երբ թիթեռնիկը կը տեսնէ: — Ի՞նչ կ'ըլլայ թիթեռնիկը: — Երազին մէջ ի՞նչ կը տեսնէ Արշամ: — Ի՞նչպէս է պորիկը եւ ո՞ւր բազմած: — Պարիկը ի՞նչ կ'ըսէ տղեկին:

41. ԿՈՏՐԱՄ ԱՄԱՆԸ

Ո՞վ Տէր, ահա՛ գետինն ինկած փրսոր փրսոր
Այդ գունաթափ ու ծովափայլ⁽¹⁾ ամանն ազուոր,
Ուր միրգ, ծաղիկ, թռչուն, պատրանք⁽²⁾ լեփ լեյուռն են
Իտէալին ծընած կապոյտ երազներէն:

... Խուլը շտկած ատեն հըրեց ճըգեց Աննան^(*)
Անուշաղիք՝ իր արմուկով, ու կտորեց զայն.
Ազուո՞ր աման, ուր անուրջներ⁽³⁾ կային անյնչափ,
Ոսկի եղեր⁽⁴⁾ կը կրծէին մարգեր արծափ⁽⁵⁾:
Ուտի զայն շատ կը սիրէի: Մեռա՛ւ հիմակ:
Կատղած՝ մըտայ սենեակէն ներս, սարսափ⁽⁶⁾ համակ⁽⁷⁾,
«Ո՞վ կտորեց աս» որտաղի ⁽⁸⁾ մըռայլամած⁽⁹⁾:
Ժան ^(**) տեսնելով հոն ահաբեկ⁽¹⁰⁾ Աննան կեցած,
Անոր վախը, իմ ցասուճս ալ խոժոռերես⁽¹¹⁾,
Ինձ նայեցաւ հրեշտակի պէս, ու ըսաւ. «Ե՛ս»:

ՎԻՔԹՕՈՒ ՀԻԿՈՑԷՆ

(*) Վիքթօռ Հիւկոյի սպասուհին:

(**) Վիքթօռ Հիւկոյի թոռը:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ծովափայլ. — Ծովի գոյնով փայլուն:
- (2) Պատրանք. — Սուտ երեւոյթ:
- (3) Անուշ. — Երազ:
- (4) Ոսկի եզեր. — Ոսկեղօծ նկարուած եզեր:
- (5) Արծափ. — Հոս կը նշանակէ «խեցիի վրայ նկարուած»:
- (6) Սարսափ. — Սաստիկ վախ:
- (7) Համակ. — Բոլորովին:
- (8) Որոտալ. — Որտուովի պէտք քարձրածայն պոռալ:
- (9) Մռայլամած. — Հոս կը նշանակէ «մռայլ, խիստ դէմքով»:
- (10) Ահաբեկ. — Սաստիկ վախցած:
- (11) Խոժոռերես. — Դէմքը կախած:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ — Ո՞վ կուտրեց անօթը: — Ի՞նչպէս կուտրեց զայն: — Ի՞նչ գծուած էր անօթին վրայ: — Ի՞նչ ըսել է անօթը մեռաւ. անօթը կ'ապրի՞: — Բանաստեղծը ի՞նչ վիճակի մէջ մտեր է սենեակէն ներս: — Որոտացի ի՞նչ իմաստով գործածուած է հոս: Ո՞վ է ժան: — Իր մեծ հօր զայրոյթը տեսնելով ժան ի՞նչ կ'ըսէ: — Ինչո՞ւ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

13. **ՕԳՏԱԿԱՐԸ ԵՒ ՀԱՃԵԼԻՆ**

Վարդուկին եւ Արսինէին հօրեղբայրը մէյ մէկ մենիսիէ կու՛սայ անոնց որ ուզածնին գնեն (խօսեցնել հօրեղբայրնին): — Շատ մը վարանումներէ եւ խորհրդածութիւններէ ետք (զոր պէտք է նկարագրել), Արսինէ բանուած օձիք մը եւ քելնոցներ կը գնէ. իսկ Վարդուկ ձմեռուան բուրդէ գլխանոց մը (գրել իրենց պատճառները): — Արսինէ իրենց դպրոցին հանդէսին օրը կը զարդարուի, եւ Վարդուկ կը գղջայ: — Ձմեռը կու գայ. Վարդուկ իր գլխանոցովը կը պատսպարուի ցուրտէն. Արսինէ կը գղջայ: — Ո՞վ իրաւունք ունի:

42. ՏՊԱԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐՔԵՐԸ

Տպագրութեան գիւտէն հաղիւ քսան տարի ետքը՝ 1472ին հայերէն տառերով քանի մը էջ գրութիւն հրատարակուած է Ֆրանսա Բագմաշեզու ֆերսկանուքեան մը մէջ, սակայն ասիկա մասնական փորձ մըն է միայն հայ տպագրութեան :

Այս գիւտէն վաթսուն տարի ետքն է որ մամուլի տակէն դուրս եկած է՝ Վենետիկի մէջ՝ առաջին հայերէն գիրքը, որ Պարզատոմար մըն է, այսինքն 1512 տարւոյ օրացոյցը : Հետեւեալ տարին, նոյն տպարանէն ի լոյս ընծայուած են Պատարագամատոյց, Ուրբաքագիրք, Տաղարան և Աղբարք : Այդ Տաղարանը կը պարունակէ մեր աշուղ բանաստեղծներուն շատ մը գեղեցիկ տաղերը և Ներսէս Շնորհալիի բազմաթիւ հանելուկները, Աղթարքը կը բովանդակէ Երազացոյց և զանազան դուշակութիւններ, Ուրբաթագիրքը՝ կախարդներու համար գրուած աղօթքներ և աւելորդապաշտական⁽¹⁾ հատուածներ, իսկ Պատարագամատոյցը՝ Պատարագի ատեն երգուած աղօթքներ :

Այս հինգ գիրքերը հայ տպագրութեան նախախայրիքն են⁽²⁾ և բացորոշ կերպով յայտնի չէ թէ ո՛վ է անոնց տպագրիչը, բայց անոնց յիշատակարաններէն մէկուն մէջ կը յիշուի մեղապարտ Յակոբ անուն անձ մը, որ հաւանօրէն նահապեան⁽³⁾ է բոլոր հայ տպագրիչներուն : Տպագրութիւնը մաքուր է և կանոնաւոր . ունի կենսագրութիւն, գլխագիր, զարդագիր⁽⁴⁾ և պատկերներ . այս վերջիններուն մէջ ուշադրաւ է մանաւանդ Ուրբաթագրքին մէկ պատկերը, ուր կ'երեւայ վեղար

կրող հայ վարդապետ մը, որ հիւանդի մը վրայ աղօթքներ կը կարդայ :

Յիշեալ հինգ գիրքերէն հազիւ մէկ քանի նմոյշ մնացած են, որոնք հին ձեռագիրներու չափ թանկագին դարձած են հիմայ, իբր լոյն վկաներ այն ջանքերուն զորս մեր նախնիք ըրած են՝ տպագրութեան գիւտին առաջին տարիներն իսկ՝ մամուլի լոյսը թափանցել տալու համար հայ ժողովուրդին մէջ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Աւելորդապատեական.** — Նախապաշարմանց յատուկ :
- (2) **Նախախայրիք.** — Առաջին արդիւնք կամ պտուղ :
- (3) **Նահապետ.** — Նախապետ, այսինքն նախնի պետ :
- (4) **Զարդագիր.** — Զարդարուն գիր :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ — Ո՞ր դարուն մէջ տեղի ունեցած է տպագրութեան գիւտը : — Ո՞րն է ամէնէն առաջ տպուած Հայերէն գիրքը : — Ի՞նչ կը նշանակէ Պարզասումար, Պասարագամասոյց, Ուրբաթագիրք, Աղբարք, Տաղարան : — Երագացոյցը ի՞նչ է : — Ո՞վ է հաւանօրէն հայ տպագրիչներուն նահապետը :

43. ԲԱՒԱԿԱՆ ԶԷ ԱՐԴԱՐ ԸԼԼԱԼ

Չընել ուրիշին ինչ որ չենք ուզեր որ չընեն մեզի .
Արդարուղիւն է :

Ընել ուրիշին ինչ որ կ'ուզենք որ ընեն մեզի . Գթա-
սիրուքիւն է :

Մարդ մը աշխատելով կ'ապրէր, և կ'ապրեցնէր իր
կիներն ու փոքրիկ տղաքը . և ըստ որում քաջատուջ էր ,

հուժկու(1) բաղուկներ ունէր, դիւրաւ գործ կը դանէր, և առանց շատ յողնելու կրնար իր ընտանիքը նայիլ:

Բայց պատահեցաւ որ երկրին մէջ մեծ տաղնապ(2) մը յառաջ եկաւ, գործերը պակսեցան և կեանքի պիտոյքներուն դինը բարձրացաւ:

Ուստի աշխատաւորը և իր ընտանիքը սկսան սաստիկ տառապիլ: Իր խնայած քիչ մը դրամը սպառելէ(3) յետոյ, հարկադրուեցաւ մէկիկ մէկիկ ծախել նախ իր կարասիները, յետոյ նոյն խակ իր զգեստներէն մաս մը, և երբ բոլոր ունեցածը հասաւ, ամէն բանէ զուրկ ու անօթի մնաց: Անօթութիւնը սակայն մինակ չմտաւ իր տունէն ներս, հիւանդութիւն ալ բերաւ իրեն հետ:

Արդ, այս մարդը երկու դրացի ունէր. մէկը շատ հարուստ, միւսը բարեկեցիկ(4):

Գնաց նախ հարուստին ու ըսաւ. «Ունեցածնիս չունեցածնիս հասաւ, յետին չքաւորութեան մէջ եմք, դժամեր վրայ:»

Հարուստը պատասխանեց. «Ես ի՞նչ կրնամ ընել ձեզի. ինծի համար աշխատած ատեննիդ, վարձքերնիդ ժամանակին չվճարեցի՞ միթէ. ես ոչ ձերին, ոչ ուրիշին իրաւունքը չեմ կերած բնաւ: Ձեռքերս անիրաւութեամբ աղատտած չեմ երբեք: Կը ցաւիմ ձեր թշուառութեան վրայ. բայց ասանկ դէշ ժամանակ մը ամէն մարդ ինքզինքը մտածելու է: Ո՞վ գիտէ որչափ պիտի տեւէ:»

Խեղճ հայրը լռեց, և սիրտը սաստիկ վիրաւորուած տուն կը դառնար, երբ միւս դրացւոյն հանդիպեցաւ որ առաջինին չափ հարուստ չէր:

Ասիկա դինքը մտածկոտ ու տխուր տեսնելով, հարցուց. «Ի՞նչ ունիս, ճակատդ մտահոգ է, և աչքերդ արցունքով լեցուած:

Եւ հայրը, այլայլած(5) ձայնով մը պատմեց անոր իր դժբախտութիւնը:

Երբ աւարտեց , դրացին ըսաւ . « Ի՞նչո՞ւ այդչափ կը յուսահատիս , մի՞թէ եղբայր չե՞նք . ես ի՞նչպէս կրնամ անմխիթար թողուլ եղբայր մը իր դժբախտութեան մէջ : Եկո՛ւր ունեցածս մէջերնիս բաժնենք . . . »

Եւ տառապեալ ընտանիքը այսպէս ավտուեցաւ մինչև որ կարող եղաւ ինք իր պէտքերը հոգալ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Հուժկու . — Շատ զօրաւոր :
- (2) Տագնապ . — Նեղութիւն :
- (3) Սպառիլ . — Հատնիլ :
- (4) Բարեկեցիկ . — Հանգիստ ապրող :
- (5) Այլայլած . — Խռոված :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Ի՞նչ ըսել է արդարութիւն : — Ի՞նչ կը նշանակէ գթասիրութիւն : — Աշխատաւոր մարդուն ի՞նչ պատահեցաւ : — Երբ հիւանդութիւնն ալ իր տունէն ներս մտաւ , ի՞նչ ըրաւ մարդը : — Իր հարուստ դրացին ի՞նչ պատասխանեց : — Միւս դրացին ի՞նչ ըսաւ իրեն , եւ ի՞նչ ըրաւ :

44. Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ի Ն

Գարունին հետ կը ծըլիս⁽¹⁾ , պիտի մեռնիս ծաղկին հետ .
Երկինքին մէջ կը լողաս վառ թեւերովդ արփաւէտ⁽²⁾ .

Լանջքին վըրայ լեկակին⁽³⁾

Ցոլքին⁽⁴⁾ վըրայ ալեակին

Օրօրուելով կը նաղիս , ու կը նաղիս⁽⁵⁾ շարունակ
Բոյրով⁽⁶⁾ , լոյսով արբեցած⁽⁷⁾ , դոյներու կ'ըզ անդաշնակ :

Ո՛վ օդասլաց⁽⁸⁾ նուրբ ծաղիկ ,

Թուփերու հա՛րս , թիթեռնիկ :

Շունչի նրման թող, թեթև կը թեւես⁽⁹⁾ ու կը թըռիս,
Քեզի կապած տանելով դմայած աչքս ու հողիս:

Չունիս դուն ոստ, չունիս թառ,

Ոչ քուն, ոչ նիստ, ոչ դադար:

Իդձերուս պէս անյագուրդ⁽¹⁰⁾, վայելքներու⁽¹¹⁾ միշտ ծարաւ,

Հազիւ հըպած⁽¹²⁾ իրերուն, կը դըրկես օդը անբաւ⁽¹³⁾:

Ու դառնալով օրն ի բուն

Փետրէ փետուր, բունէ բուն:

Ազատ անուրջը կ'ապրիս հողիներու երազուն⁽¹⁴⁾

Մինչեւ հասկերը ցամքին, տերուն իյնայ ազագուն:

ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Ծիլի. — Ծնիլ, բուսնիլ:

(2) Արփաւէս. — Արեւու նման:

(3) Լեւակ. — Ծաղիկ մը (lilas, ԼԵՂԵՎ):

(4) Տոլբ. — Լոյսի ճառագայթ:

(5) Նագիլ. — Ազուոր երեւալու ջանքեր ընել:

(6) Բոյր. — Անուշահոտութիւն:

(7) Արբեցած. — Գինովցած:

(8) Օղաւագ. — Օղին մէջ թռչող:

(9) Թռիլ. — Թռչիլ:

(10) Անյագուրդ. — Չկշտացող:

(11) Վայելք. — Ուրախութիւններ:

(12) Հպիլ. — Դպչիլ:

(13) Անբաւ. — Չափ չունեցող:

(14) Ազագուն. — Չորցած:

ՀԱՐՑՈՒԹՆԵՐ. — Ի՞նչ կը նշանակէ լողալ բառը. — Ի՞նչ կը հասկնար Աշեակին ցոյժը բացատրութենէն. — Ի՞նչ ըսել է Բոյրով, շոյսով արբեկալ: — Ինչո՞ւ համար ըսուած է Իդձերուս պէս անյագուրդ: — Ի՞նչ կը նշանակէ վայելքներու ծարաւ: — Ի՞նչ ըսել է Անուրջը ապրիլ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ


14. *ՏՂԱՆ ԵՒ ԹԻԹԵՌՆԻԿԸ*

Տղայ մը պարտեզին մեջ թիթեռնիկ մը տեսնելով, ետեւէն կը վազէ զայն բռնելու համար. (նկարագրեցե՛ք թիթեռնիկին նիւղէ նիւղ թռիլը եւ տղուն նիգերը). վերջապէս կը յաջողի. ձեռքին մեջ կը սեղմէ զայն. յետոյ, ձեռքը կը բանայ, (ի՞նչ կը տեսնէ) : Նկարագրեցե՛ք տղուն զղջումը :

45. *Գ Ո Յ Ն Ը*

Դասարանին փեղկերը դոցե՛նք : Դասարանին մէջ դանուած բոլոր առարկաները, սեղաններ, քարտէսներ, պատկերներ, խալոյն իրենց գոյնը կը կորսնցնեն, ամէ՛նքն ալ սեւ կ'երեւան :

Բայց նայեցե՛ք. փեղկին մէկ ճեղքէն արեւու փայլուն ճառագայթ մը ներս կը մտնէ և կու գայ սեղանին վրայ կ'իյնայ : Այդ ճառագայթին անցած տեղը, մաքուր ջուրով լեցուն գաւաթ մը դնե՛նք թերթ մը ճերմակ թուղթի վրայ :



Ի՞նչ կը տեսնենք. ճառագայթը ջուրին և գաւաթին մէջէն անցած ատեն կը բեկանի⁽¹⁾, և կու գայ թուղթին վրայ կը տարածուի ծիա-


ծանին երանգներովը գունաւորուած փոքրիկ երիզի մը ձեւով : Այդ երիզը կը ներկայացնէ մեղի եօթը գլխաւոր գոյները . կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, կապոյտ, շեղակագոյն⁽²⁾ և վանիշակագոյն :

Այս փորձէն կը հետեւի թէ արեւուն ճերմակ լոյսը իր մէջ կը պարունակէ բոլոր այս գոյները , և թէ զայն տարբադադրելով կարելի է անոնցմէ ամէն մէկը երեւան հանել :

Միաժամանակ գոյներուն ամբողջութիւնը կը կոչուի «արեւապատկեր» : Ուրեմն ճեղքակալ արեւապատկերին բոլոր գոյներուն միացումն է :

Որքան լոյսը փայլուն ըլլայ , այնքան առոյգ կ'ըլլան գոյները . որքան լոյսին սաստիկութիւնը պակասի , գոյները կը աժգունին , և իրիկունը , երբ լոյսը անհետի , ամէն բան գորշ կ'երեւայ : Սեւը լոյսին բացակայութենէն յառաջ կուգայ :

Ուրիշ փորձ մըն ալ ընենք :



Գաւաթը տեղէն կը վերցնեմ , և անոր տեղ փոքրիկ հայլի մը կը դնեմ : Կը տեսնէք թէ լուսաւոր ըլիծ մը կը գոյանայ պատին վրայ : Նոյն արեւուն ճառագայթն է որ հայլին հարթ երեսին վրայ բեկանելով իր ճամբուն ուղղութիւնը փոխած է :

Ասիկա կ'ապացուցանէ թէ կան մարմիններ որ լոյսը կը վանեն , և դրեթէ ամբողջովին մեր աչքերուն կը դարձնեն զայն : Բայց եթէ լոյսը վանող կամ ցոլացնող մարմիններ կան , կան ուրիշներ ալ որ ամբողջովին զայն կը ծծեն . ասոնք սև կ'երեւան : Ուրիշ մարմիններ ալ կան որ ճառագայթներու մէկ մասը միայն կը ծծեն , և միւսները մեր աչքին կը դարձնեն :

Երբ կ'ըսենք թէ այսինչ գիրքը կանանչ է, պատճառը այն է որ անոր կողքը արեւապատկերին բոլոր գոյները ծծած է բաց ի կանանչէն, զոր կը վանէ, ինչպէս կը վանէր⁽³⁾ քիչ մը առաջ հայլին՝ ամբողջ արեւապատկերը: Այսպէս մեր աչքը միայն կանանչը կը նշմարէ:

Ուրեմն մարմինները ինքնիրեննին գոյն չունին, բայց զանազան կերպով կ'ազդեն իրենց ստացած լոյսին վրայ: Երբեմն լոյսը իրենց մէջէն կ'անցընեն ու անգոյն կ'երեւան, երբեմն կը տարբազադրեն⁽⁴⁾ զայն, յետոյ զայն ամբողջապէս կամ մասնակի կը ցոլացնեն, և ճերմակ կամ գունաւոր կ'երեւան մեզի:

ՀԱՆԵԼՈՒԿ Ժ. — Յուշիկ կ'երթայ ինչպէս սիկին.
Ոսկի փողոց դրած է վիզին.
Եւ շայնաբաց է իր ազին:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) ԲԵԿԱՆԻՒ. — Փրթիլ, կոտրիլ:
- (2) ԼԵՊԱԿԱԳՈՅՆ. — Տեղակ մը կապոյտ. չէ՛քի գոյն:
- (3) ՎԱՆԵՂ. — Հեռացնել:
- (4) ՏԱՐԲԱՊԱՊՐԵՆՒ. — Լուծել իրարմէ զատել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ կը պատահի, եթէ դասարանին փեղկերը գոցենք: — Ի՞նչ կը տեսնենք եթէ մութ դասարանին մէջ թափանցող լոյսի ճառագայթի մը անցած տեղը, ջուրով լեցուն գաւաթ մը դնենք թերթ մը ճերմակ թուղթի վրայ: — Այդ փորձէն ի՞նչ կը հետեւի: — Ի՞նչ ըսել է երիզ: — Ի՞նչ է արեւապատկերը, եւ ի՞նչ գոյներէ կը բաղկանայ: — Ի՞նչ է ճերմակ գոյնը: — Ի՞նչ բանէ առաջ կու գայ ուր գոյնը: — Եթէ փոխանակ ջրալից գաւաթին, հայլի մը դնենք անոր տեղ, ի՞նչ կը պատահի: — Ի՞նչ կը նշանակէ թեկանելով ճամբուն ուղղութիւնը փոխել: — Ի՞նչ կը նշանակէ ցոլացնող: — Գոյները ի՞նչ բանէ առաջ կու գան: — Մարմինները ինքնին գոյն ունի՞ն:

46. Ք Ա Ր Ա Կ Ո Փ Ը

(Հ Է Ք Ն Ա Թ)

Ժամանակաւ , ճարտնի մէջ , խեղճ քարակոփի⁽¹⁾ մը կար , որ քարահանքի մը մէջ կ'աշխատէր առտուընէ մինչեւ իրիկուն արիւն քրտինք թափելով : Աշխատանքը շատ ծանր էր , բնաւ հանդիստ չունէր , և քիչ դրամ կը շահէր : Ուստի գոհ չէր իր վիճակէն , և շարունակ կը զանգատէր հառաչելով , արանջալով անդադար :

— Ո՛հ , ըսաւ օր մը , ի՛նչ երջանիկ պիտի ըլլայի , եթէ կակուղիկ անկողին մը ունենայի , ու վրան պառկէի փափուկ վերմակներու մէջ փաթթուած :

Հրեշտակ մը երկինքէն լսեց խեղճ մարդուն ըզձանքը , ու ըսաւ իրեն . « Ուզածիդ պէս թո՛ղ ըլլայ : »

Եւ քարակոփը հարստացաւ , ու հանդէպաւ մնտաքսէ փափուկ անկողնի մը վրայ :

Օր մը սակայն , երբ պատուհանին առջև բաղմած օդ կ'առնէր , արեւը իր կիղիչ ճառագայթները ափռեց անոր վրայ , և ջերմութիւնը սասականալով՝ սկսաւ այրել ու նեղել զինքը :

— Ի՛նչ օգուտ ունի հարուստ ըլլալը , գոչեց , քանի որ չեմ կրնար հանդիստ՝ օդը վայելել , արեւուն տաքութենէն զերծ : Արեւ ըլլալու է եղեր :

Հրեշտակը այդ բաղձանքն ալ շնորհեց անոր :

Ու երբ արեւ եղաւ , սկսաւ արձակել իր շառաւիղները⁽²⁾ ամբողջ քաղաքին ու լեռներուն վրայ , կրակ տեղալով ամէն կողմ :

Բայց , յանկարծ ամպ մը երեւան կաւ հորիզոնին ծայրէն , որ մօտենալով մօտենալով , եկաւ անոր դիմացը կեցաւ , և արգիլեց անոր շողերուն⁽³⁾ ծաւալումը :

— Ի՞նչ, աղաղակեց արեւը, ամպ մը կարենա՞յ ինձի արգելք ըլլալ. ուրեմն աւելի աղէկ էր որ ամպ ըլլայի :

— Կամքդ թո՛ղ կատարուի, յարեց հրեշտակը :

Ամպը դռողութեամբ եկաւ կեցաւ արեւուն ու երկրին միջեւ. յետոյ սկսաւ այնքան յորդ անձրև տեղալ որ արտերը ողողեց⁽⁴⁾, դաշտերը աւերեց, և իր թօնուտ⁽⁵⁾ հեղեղներուն տակ ծածկեց բլուրներն ու լեռները :

Ժայռ մը միայն դիմադրեց իրեն, անշարժ իր դէմ կենալով, և ամպը որքան ալ իր կոհակներով ձեծեց ու կոծեց⁽⁶⁾ դայն կատաղաբար, ժայռը մնաց հոն աներկեւան⁽⁷⁾ :

— Ժայռ մը դիմադրէ՛ ինձի, ըսաւ ամպը. երանի՛ թէ ես իր տեղը ըլլայի :

— Ժա՛յռ եղիր, ըսաւ հրեշտակը :

Եւ ընդհուպ⁽⁸⁾, ամպը ապառաժի փոխուեցաւ, անդրդուելի⁽⁹⁾ տեղատարափին⁽¹⁰⁾ անդուսպ⁽¹¹⁾ ալիքներուն առջեւ :

Սակայն տեսաւ որ խեղճուկ մարդ մը իր ոտքին տակ կեցեր՝ մուրճի հարուածներ կու տար իրեն, և կտորներ կը փրցնէր իր վրայէն :

— Աս ի՞նչ է, գոչեց ժայռը, մարդ մը կարենա՞յ իմ վրայէս կտորներ փրցնել : Ըսել է ես անկէ տկա՞ր եմ : Պէտք է անսպառճառ այդ մարդը ըլլամ :

Թո՛ղ կամքդ ըլլայ, ըսաւ իրեն հրեշտակը :

Եւ նորէն առաջուան պէս խեղճ քարակոփ մը եղաւ, որ քարահանքի մը մէջ կ'աշխատէր, առտուրնէ մինչեւ իրիկուն արիւն քրտինք թափելով : Աշխատանքը շատ ծանր էր. քիչ զրամ կը շահէր, բայց դո՛հ էր իր վիճակէն :

Ա.Ռ.Ա.Մ . — Խարքալով ջուր մի կըրեր.

Չուրիկն դեմ քի մի՛ ֆաշեր.

Երկինքին սիւնն դընեղու

Չուր տեղը սիրտ մի՛ մաշեր :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Քարակոփ. — Քար կոտրող:
- (2) Շառաւիղ, (3) Շող. — Ճառագայթ:
- (4) Ողողել. — Յորդող, առատ ջուրով երկիր մը ծածկել:
- (5) Թօնուս. — Անձրեւոտ:
- (6) Կոծել. — Ծեծել:
- (7) Ա.Ներկեւան. — Անվախ:
- (8) Ընդհուպ. — Իոկոյն:
- (9) Ա.Նդրդուելի. — Շատ հաստատուն:
- (10) Տեղասարափ. — Սաստիկ անձրեւ:
- (11) Ա.Նգուռայ. — Զգալուող:


ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ինչո՞ւ կը գանգատէր քարակոփը. ի՞նչ բանի կը փափաքէր: — Հրեշտակը ի՞նչ ըսաւ իրեն: օր մը երբ պատուհանին առջեւ նստած էր, ի՞նչ պատահեցաւ իրեն: — Յետոյ ի՞նչ ըլլալ փափաքեցաւ: — Երբ արեւ եղաւ, ի՞նչ ըրաւ, եւ ինչո՞ւ ուզեց ամպ ըլլալ: — Ամպ ըլլալէն ետքը ի՞նչ պատահեցաւ իրեն: — Յետոյ ի՞նչ ըլլալ փափաքեցաւ: — Այնուհետեւ ի՞նչ ըլլալ փափաքեցաւ եւ ի՞նչ եղաւ: — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը:

47. Հ Ա Ն Ի Ն

Տրդաքն ամբողջ կը հաւաքուին
Գիշերները դեկտեմբերին .
Մեծ մայրիկը կը մանէ վուշ⁽¹⁾
Շարժումով յամբ ու փաղաքուշ⁽²⁾ :

Վառարանին մօտ է նստած ,
Եւ աղեկատն⁽³⁾ երիզամած⁽⁴⁾
Կը դողդրղայ մանուցին⁽⁵⁾ վրայ ,
Որ խաղտկոցի⁽⁶⁾ պէս կը խորդայ⁽⁷⁾ :

Հարթ կանեւիին նուրբ թեղն ոսկի
Փայլուն՝ ձեռքէն կը սողոսկի
Կծկին վրայ ոլորուելով :
Կատուն քուն է կրակին քով :



Ան կը մանէ գլուխը վար՝
Քաղաքին պերճ⁽⁸⁾ մարդոց համար .
Մինչ ձրմնուտան ցուրտ ցուրտ քամին
Կ'ոռնայ ձայնով դրժոխային :

Լուռ՝ կրրակին առջեւ վառող ,
Ուր կը կայտուն⁽⁹⁾ բոցեր շէնչող⁽¹⁰⁾ ,
Կը մըտածէ օրերուն հին ,
Ջինջ⁽¹¹⁾ արեւուն իր գարունին :

Խաղի կոչուած մանուկ աղջիկ՝
Ինչ գուարթ էր , ինչ գեղեցիկ ,
Մտրդէն ժողովել երբ կը վաղէր
Ոսկի լանջքով երիցուկներ⁽¹²⁾ :

Միտքն է պահած հին հին յուշեր
Զոր կը պատմէ ամէն դիշեր
Մանուկներուն՝ որ դեռ չունին
Կորուստի ցաւն՝ հիր⁽¹³⁾ անուրջին :

Եւ սիրելի ծերը՝ ժպտուն ,
Գլուխը կ'օրրէ , կը քաշէ քուն .
Դրացիներն ալ կ'երթան ահա՛ .
Կատուն բոցին քով կը խռկայ :

Նիրհէ՛ , մեծ մա՛յր , նիրհէ մո՛ւշ մո՛ւշ .
Յուսացողին երազն՝ անո՛ւշ .
Դուրսը քամին լռեց խկոյն . . .
Պիտի աըրուի քեզ նոր բարուն :

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **ՎՈՒՇ.** — Բարակ գծան :
- (2) **Փաղափուց.** — Դգուող, փափուկ :
- (3) **Աղեկաս.** — Բոք. պզտիկ ցպիկ մը որով կը մանեն :
- (4) **Երիզամած.** — Երիզով շրջանակուած :
- (5) **Մանց.** — Անխուով մեքենայ մը որ մանելու կը ծառայէ :
- (6) **Խաղակոց.** — Խաղալիք :
- (7) **Խորդալ.** — Խռկալու ձայն հանել :
- (8) **Պերն.** — Հարուստ :
- (9) **Կայտուել.** — Ուրախութեամբ ցատքել, սլարել :
- (10) **Շէնուղ.** — Զուարթ :
- (11) **Ջիւջ.** — Պայծառ, յստակ :
- (12) **Երիցուկ.** — Ծաղիկ մը՝ ապրիմ-մեռնիմ (†-†-†) :
- (13) **Հիր.** — Կարմիր :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Դեկտեմբերին զիշերները ի՞նչ կ'ընեն տղաքը :
— Մեծ մա՞յրը : — Ի՞նչ կը մտածէ հանին : — Հանին ի՞նչ կը պատմէ
մանուկներուն : — Ի՞նչ իմաստով զործածուած է հիր բառը : —
Յետոյ ի՞նչ կ'ընէ մեծ մայրը :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

15. ԵՐԲՈՐ ՄԵՇՆԱՄ

Կես գիշերուան երեք ժամ մնացած է : — Պօղոսին մայրիկը կ'ըսէ իրեն որ երթայ պառկի : — Պօղոս կը հնազանդի , բայց կ'ըսէ թէ շատ կը ցաւի դեռ մեծցած չըլլալուն համար (ինչո՞ւ . խօսեցնել պօղոսը իր մայրիկին հետ) : — Մայրիկը կը բացատրէ թէ պզտիկ շեղողներն ալ չեն կրնար ուզածնին ընել (օրինակ կու տայ հայրիկը որ գործաւոր է , ինքզինքը՝ որ տանը գործերով զբաղած է) : — Հայրիկը կը բացատրէ թէ ինչ որ կը պատուիրեն տղոց իրենց օգտին համար է (օրինակներ տալ) :

48. ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երբ մարդ կը խնայէ առանց անձը դրկելու օրինաւոր վայելուճանքէ , այն տանն խնայողութիւնը առաքիւնութիւն է : Բայց խնայել խնայելու համար՝ յոռի⁽¹⁾ սկզբունք է , որուն սահուն գառիւկայրը շուտ կը տանի ազահութեան : Հետեւաբար յոռի է տղաքը վարժեցնել խնայողութեան , անոնց տալով դանձանակ մը որպէս զի՝ ինչ որ անցնի իրենց ձեռքը՝ հոն նետեն և պահեն . այս ունակութիւնը կիրք մը կը դառնայ , և տղեղ ու յիմար ազահութիւնը արմատ կը կապէ մանուկներու մատաղ հոգւոյն մէջ :

Ազահութիւնը մոլութիւն մըն է և կը թշուառացնէ զայն որուն վրայ կը լսնանայ . ազահը գերին է կրքի մը . անոր համար , անոր հաճոյքին համար կը աքնի , կը

զրկուի և կը գրկէ : Հակառակ մոլութիւնն է շռայլութիւն , որ նուազ աղետաբեր չէ . շռայլը կը վայելէ ու վայելել կու տայ ժամանակի մը համար , ուրկէ ետքը պիտի գայ զրկումը , թշուառութիւնը :

Ընտանեկան կարեւոր պէտքերն են սնունդ , զգեստ , բնակարան : կահեր⁽²⁾ , դաստիարակութիւն , զբօսանք . այս պէտքերը հարկ է որ գոհացում ստանան , և օրինաւոր կերպով . գոհացնել զանոնք ողորմելի կերպով՝ գոհացնել չէ :

Պէտք է որ սնունդը լաւ ըլլայ , մսեղէն և բանջարեղէն : Պէտք է որ զգեստն ալ յարմար ըլլայ եղանակին և հասակին ու սեռին , և քիչ շատ վայելչութիւն ունենայ՝ ինչ որ մեծ ծախքի կարօտ չէ , վասն զի կարելի է ճաշակը գոհացնել առանց մեծամեծ ծախքերու .

Պէտք է որ բնակարանը օդաւէտ ըլլայ , ննջելու , ճաշելու , նստելու համար յատուկ սենեակներ պարունակէ , լաւ դիրք ունենայ , լոյսը ազատ թափանցէ ներս , և վերջապէս ողջապահիկ կանոններու համեմատ կազմուած ըլլայ : Կահերն ալ կարեւոր են . ոչ միայն մեզ դիւրութիւն ընձեռող⁽³⁾ կահերն ու անօթները պէտք է որ գտնուին տան մէջ , այլ և քիչ շատ ճաշակի հաճոյ ըլլան , և ընտանեկան յարկին վայելչութիւն տան ու սիրելի ընեն զայն :

Իսկ հա՞րկ է ըսել թէ տղսց դաստիարակութիւնը որչա՞փ կարեւոր է . զի եթէ ծնողք զլանան տալ կրթութիւն իրենց որդիներուն , անոնց մտաւոր և բարոյական կարողութիւնները կը մնան անմշակ և խոպան⁽⁴⁾ : Եւ սակայն յաճախ ծնողք , տգիտութեան պատճառաւ , աւելորդ շռայլութիւն մը կը համարին կրթութեան ծախքը , չգիտնալով թէ ամէնէն արդիւնաւոր սպառումը այն է որ մարդուն արտադրական գերազոյն կարողութիւնները մըշակելու և զարդացնելու կը ծառայէ :

Այս կարեւոր պէտքերուն գոհացման հետ պէտք է ջանալ խնայել : Տան մատակարարութեան մէջ կարգ կանոն մեծապէս կը նպաստէ խնայողութեան : Իրերը ժամանակին , և ըստ պարագային մեծաքանակ գնել , անոնց տուականութեանն ու օգտակարութեանը ուշ գնել քան արտաքին վազանցիկ⁽⁵⁾ փայլին , չչռայլել անխորհուրդ , գործածուած իրերէն , եթէ կարելի է , տարբեր ձեւի տակ օգուտ քաղել , այս ամէնը կը գոյացնէ խնայողութիւն , և այս՝ առանց դմեղ դրկելու :

ՌԵԹԷՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ⁽⁶⁾

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Յոռի. — Գէշ :

(2) Կահ. — Կարասի :

(3) Ընծեռնել. — Ընծայել , ճարել :

(4) Խոպան. — Անմշակ անբեր :

(5) Վազանցիկ. — Շուտ անցնող :

(6) Ռեթեոս Պերպերեան. — Հայ գրագէտ և ուսուցիչ , հիմնադիր Պերպերեան վարժարանի (1851—907) :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Խնայողութիւնը ե՞րբ առաքիճութիւն է : — Ազահութիւնը ինչո՞ւ մոլութիւն մըն է : — Շռայլութի՞ւնը : — Որոնք են ընտանեկան կարեւոր պէտքերը : — Ի՞նչպէս պէտք է ըլլայ սնունդը : — Ի՞նչպէս պէտք է ըլլայ բնակարանը :

49. ՅՐԱՆՍԱՑԻ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ

Վերջին շաբաթները քլօրտլին⁽¹⁾ հատնելու մօտ էր : Ազահութեամբ կը գործածէինք , և մնացած քիչ մը բանն ալ կը ջանայինք ծանր գործողութեան մը համար պահել :

Մարդ մը բերին ինծի, պահեաթի գունդէն ումբա-
ձիգ⁽²⁾ դինուոր մը: Աջ ձեռքը ջախջախուէր էր ուումբի
մը պայթումէն: Պէտք էր կտրել իր սղտիկ մատը: Գործ-
ծողութիւնը ոչ դժուար էր, ոչ ալ վտանգաւոր, բայց
շատ ցաւ պիտի պատճառէր իրեն և բաւական երկար պի-
տի տեւէր: Զինուորին ըսի.

— Պէտք է որ ձեր սղտիկ մատը կտրեմ:

— Աղէկ, պատասխանեց հանդարտութեամբ, ըրէ՛ք:

— Կ'ուզէ՞ք որ քնացնեմ դձեղ:

— Գործողութիւնը դժնդա՞կ պիտի ըլլայ:

— Այո՛, շատ պիտի նեղուիք, բայց ամենեւին վը-
տանգ չկայ:

— Ատիկա փոյթս չէ. եթէ շատ ցաւ պիտի դզամ,
կը նախընտրեմ որ . . .

— Սակայն, շատ քլորոզի չունինք:

— Քլորոզին քնացնելու դորձածած դեղերնի՞դ է:

— Այո՛:

— Աղէկ, հասկցայ . . . քլորոզին սղտիկ մատէս ա-
ւելի ծանրակշիռ պարագայի մը կ'ուզէք պահել, ընկերնե-
րէս մէկուն սրունքին կամ դիատին⁽³⁾:

— Այո՛, այդպէս է . . . :

— Է՛հ, իրաւունք ունիք: Մի՛ քնացնէք զիս, բայց
չո՛ւտ ըրէք, չո՛ւտ:

Եւ թաշկինակը բերանը խոթեց ակռաներուն մէջ-
տեղը: Գործողութիւնը կատարեցի: Ահուկի կերպով տըթ-
գուներ էր: Զուրը ճակտէն վար կը վազէր խոշոր կա-
թիլներով, բայց ոչ ձայն հանեց, ոչ շարժում ըրաւ, ոչ
ալ տրտունջ մը արտաբերեց⁽⁴⁾: Երբ աւարտեցաւ, չնոր-
հաւորեցի դինքը իր քաջարտութեան համար:

— Ո՛հ, պատասխանեց, պէտք է որ աղքատները
օգնեն իրարու:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԱ. — Ինք կը շրջի միշտ շեռնե շեռ,
Ունի ծախուռ մազե քուրճեր(6):

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Քլորոզի. — Տեսակ մը ոգելից հեղուկ որ զգայնութիւնը թմրեցընելու յատկութիւնը ունի, և կը գործածուի վիրաբուժական գործողութեանց մէջ:
- (2) Ռմբածիգ. — Ռուսք արձակող:
- (3) Ջիւս. — Ազդր (շուշ):
- (4) Արտաբերել. — Դուրս հանել, յառաջ բերել:
- (5) Լիւտովիք Հալէվի. — Ֆրանսացի թատերագիր և վիպասան (1834 — 1908):
- (6) Քուրճ. — Այծի կամ ձիու մազէ գործուած ք (շուշ):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ է քլորոզին, եւ ի՞նչ բանի կը գործածուի — Ի՞նչ առաջարկեց բժիշկը զինուորին: — Ի՞նչ պատասխանեց զինուորը: — Ի՞նչպէս վարուեցաւ գործողութեան միջոցին: — Ի՞նչ տեսակ վարմունք էր ասիկա: — Անձնասէր մարդ մը ի՞նչպէս պիտի վարուէր անոր տեղ: — Ո՞վ է Լիւտովիք Հալէվի:

50. ԿՐԻԱՆ ՌԻ ԲԱԴԵՐԸ

Թեթեւօլիկ(1) կրիայ(2) մը կար
 Որ իր ծակէն ձանձրացած,
 Ուղեց երթալ տեսնել աշխարհ,
 Անցնիլ լեռներ բարձր ու ցած:
 Այս մեծ խորհուրդն յայտնեց երկու բազերու
 Որոնք զինքը մինչեւ Բարիզ տանելու
 Սիրով եղան յանձնատու:
 Ըսին. «Ըզքեղ կը տանինք Սէն գեալին(3) մերձ
 Մինչեւ էջֆէլ(4) երկնաբերձ».

Երթաս տեսնես նոր նոր ազգեր , նոր բարքեր ,
Կեանքի պերճանքն⁽⁵⁾ ու փառքեր :
Ու ճոխանայ⁽⁶⁾ միտքըդ , ըլլաս մեծ հանճար
Ուսանելով ի՛նչ է դրդումն ու բանճար :
Այսպէս եղան Պիւֆօն⁽⁷⁾ , Լիննէ⁽⁸⁾ մեծ գիտուն ,
Այսպէս եղաւ քաջն Ողիսեւս⁽⁹⁾ գիւցադուն : »
Հաւանեցաւ իսկոյն կրիան ,
Եւ թրուշուններն ալ՝ արագ
Այդ լուրջ գործին գրլուխն անցան ,
Դարձնեցին ձող⁽¹⁰⁾ մը բարակ ,
Չոր իր բերնին մէջ դրնելով մեղմաբար ,
« Աղէկ մը խա՛ծ , ըսին իրեն ,
« Չըլլա՛յ բերնէդ ձրգես վար : »
Յետոյ ձողին երկու ծայրէն
Երկու բաղեր բռնեցին ,
Եւ օղին մէջ բարձրանալով անդադար ,
Փոքրիկ հաւերն առանձին
Անցան ծովերն ու անտառ :
Ամէն կողմէ ով որ զանոնք կը տեսնէր ,
Մեծ զարմանքով կը պոռար .
« Կրիաներու դըշխոն⁽¹¹⁾ երկի՛նք է ելեր : »
— « Այո՛ , դժխոյ եմ , ի՛նչ գիտցաք ,
Գոչեց կրիան մեծափառ⁽¹²⁾ ,
Ամպերուն մէջ անհող , արձակ
Կը ճամբորդեմ օդապար⁽¹³⁾ : »
Աղէկ կ'ըլլար , եթէ հանդարտ ու անբան ,
Անցնէր երթար իր ճամբան ,
Չի անխորհուրդ հէք կրիան՝
Երբոր թուլցուց իր ակռան ,
Չողը փախաւ բերնէն , և ինք ինկաւ վար ,
Փշրըւեցաւ գլտորելով քարէ քար :

Արծաթ կ'ըսեն թէև խօսքին ,
 Լըռութիւնն է սակայն ոսկին :
 • Ով որ կ'ըլլայ անհամբեր ,
 Ով որ լեզուն չի կապեր ,
 Գլխուն կու գայ շատ փորձանք .
 Այս առակէն հասկցանք :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **ԹԵՔԵԼԱՕՂԻԿ.** — Թեթեւ բնաւորութեան տէր :
- (2) **ԿՐԻԱՅ.** — Կարծր խեցիով պատեան ունեցող զեռուն մը (Բօսապաղի) :
- (3) **ՍԷՆ զԵՅ.** — Ֆրանսայի մէջ զետ մը որուն վրայ կառուցուած է Բարիզ քաղաքը :
- (4) **ԷՅՖԷՂԻ ԱՇՏԱՐԱԿՐ.** — Բարիզի մէջ 300 մէղր բարձրութեամբ երկաթէ աշտարակ մըն է 1889ին շինուած :
- (5) **ՊԵՐՖԱՆԲ.** — Շքեղ զարդեր :
- (6) **ՃՈՒՍԱՆԱՂ.** — Հարստանալ :
- (7) **ՊԻԼՖՕՆ.** — Ֆրանսացի նշանաւոր գրագէտ եւ բնապատում :
- (8) **ԼԻՆՆԷ.** — Շուէտացի նշանաւոր բնապատում :
- (9) **ՈՂԻՍԵԼԱ.** — Տրովադայի պատերազմին հելլէն դիւցազուններէն մէկը :
- (10) **ԶՏՂ.** — Երկաթէ զաւազան :
- (11) **ԴԺԽՈՅ.** — Թագուհի :
- (12) **ՄԵԾԱՓԻԱՈ.** — Մեծ փառք ունեցող :
- (13) **ՕՂԱՊԱՐ.** — Օղին մէջ թռչող :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ բանի փափաքեցաւ կրիան : — Իր փափաք որո՞ւ յայտնեց : — Բաղերը ի՞նչ պատասխանեցին իրեն : — Սէն զետը ո՞ւր կը գտնուի : — Ի՞նչ է էյֆէլը : — Ով է Պիլֆօն : — Լիննէ՞ : — Ողիսե՞լա : — Յետոյ ի՞նչ ըրին բաղերը : — Զանոնք տեսնողները ի՞նչ կ'ըսէին : — Կրիան երբ խօսեցաւ , ի՞նչ պատահեցաւ իրեն : — Ի՞նչ խրատ պէտք է առնենք կրիային պատահած ճախորդութենէն :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

16 . **ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ**

Մաքրիկ բարի աղջիկ մըն է , աշխատասէր եւ մաքրասէր , բայց մեկ թերութիւն մը ունի , անհնազանդ է :

— Մայր , որ օրականով կ'աշխատի , ամեն անժամ գործին գացած ասեն կը պատուիրե անոր որ հորին շնորհակալ :
— Մաքրուհի օր մը հորին առջին կ'երթայ , փայտ մը կ'երկնցնէ մեջը դերձանով . դերձանը քարի մը կը կառչի . Մաքրուհի ճիգ մը կ'ընէ զայն ազատելու եւ հորին մեջ կ'իյնայ կը մեռնի : — Նկարագրեցե՛ք մօրը յուսահատութիւնը :

51. ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Մատթէոս Մամուրեան ծնած է Իզմիր 1837ին : Իր ուսման ընթացքը Բարխոլի Մուրատեան վարժարանին մէջ



Մատթէոս Մամուրեան

աւարտելէ ետքը , դարձած է Իզմիր ուր իր գործունէութեան ասպարէզը սկսած է ուսուցչութեամբ : Ապա Պոլիս եկած , վարժարաններ վարած , և եօթը տարի ալ Պատրիարքարանի դիւանադրարութիւն⁽¹⁾ ըրած է :

1868ին դարձած է Իզմիր , և այդ ատենէն սկսեալ երկար տարիներ տնօրէն և ուսուցիչ եղած

է Իզմիրի ազգային վարժարաններուն :

Մամուրեան մեր Պոլսոյ և Իզմիրի գրողներու խումբին մէջ առաջին տեղերէն մէկը դրաւած է :

Այս նշանաւոր գրագէտը կէս դարու գործունէութիւն ունեցած է մեր գրական կեանքին մէջ , միշտ պահպանելով իր երկատասարդական կորովը⁽²⁾ :

Իր թարգմանութիւնները հատորներու ղէզ մը կը կազմեն :

Իբր հեղինակ, թողած է յիշատակելի երկասիրութիւններ⁽³⁾. զրած է վէպ, կատակերգութիւն, քրոնիկ⁽⁴⁾, և ամէն զրական սեռի մէջ կը փայլի իր նուրբ ճաշակը, վառվռուն երեւակայութիւնը և կուռ⁽⁵⁾ ոճը :

Ուշագրաւ դործունէութիւն ունեցած է նաև իբր հրատարակագիր⁽⁶⁾ : Երեսուն տարիէ աւելի խմբագրած է Իզմիրի Արեւելեան Մամուլ⁽⁷⁾ հանդէսը, զոր յետոյ քահի մը տարի շարունակեց իր որդին, Հրանտ Մամուրեան :

Մատթէոս Մամուրեան մեռաւ 1901ին :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **ԴԻԼԱՆԱՊԱՐՈՒՅԻՒՆ.** — Բարտուղարութիւն, զրագրութիւն :

(2) **ԿՈՐՈՎ.** — Ուժ, աշխոյժ :

(3) **ԵՐԿԱՍԻՐՈՒՅԻՒՆ.** — Գրական գործ, հեղինակութիւն :

(4) **ՔՐՈՆԻԿ.** — Լրագրի յօդուած որ կը պարունակէ օրուան նորութեանց վրայ խորհրդածութիւններ :

(5) **ԿՈՒՐ.** — Լեցուն :

(6) **ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ.** — Լրագրի մէջ յօդուած գրող :

(7) **ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄՊԱՄՈՒԼ.** — Իզմիրի մէջ հրատարակուած զրական հանդէս մը, որ սկսած է 1871 և դադրած՝ 1909ին :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ո՞րք ծնած է եւ ո՞րք ուսում առած է Մամուրեան : — Ի՞նչ կը նշանակէ Պատրիարքարանի դիւանադարութիւն : — Ո՞ր հանդէսին խմբագրութիւնը ըրած է : — Ի՞նչ կը նշանակէ հանդէս բառը : — Ե՞րբ մեռած է :

52. Ս Ա Ռ Ն Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Ձիւնագնտակ մը առէ՛ք ձեռքերնուդ մէջ և սեղմեցէ՛ք . ձիւնին արտաքին խաւը կը հալի ձեռքին տաքութենէն , ջուրը գնտակէն ներս կը թափանցէ , կը պաղի , կը սառի և շուրջը գտնուած ձիւնն ալ կը սառի այնոր հետ : Ձիւնի երկրորդ խաւ մըն ալ սոռաջինին պէս կը կերպարանափոխուի⁽¹⁾ , յետոյ երրորդ մը , չորրորդ մը . վերջը վերջը սառն ալ կը հալի և ջուրը ձեր մատերն ի վար կը վազէ : Քիչ մը ետքը ձեռքերնիդ բան մը չի մնար բաց ի այն մանրախիճերէն⁽²⁾ զորս ձիւնին հետ սուած էք դեմնէն անդիտակցաբար . այսպէս կը կազմուին սառնարանները :

Սլավոնաց⁽³⁾ մէջ , 2600 մէթր ծովէն վեր գտնուող լեռները ծածկուած են ձիւնի տարածութեամբ , որոնք ձիւնադաշտ կը կոչուին : Ձիւնը չոր , հատիկ հատիկ է և շրայուցիչ սպիտակութիւն մը ունի . կարծես շատ նուրբ փոշի մըն է : Հովերը մասամբ կը վերցնեն դանոնք և կը տանին պատասպարուած տեղեր կը դիզեն : Երբ արեւը այնոնց վրայի խաւերը հալեցնէ , հալած ջուրը արտաքին խաւերուն մէջ կը թափանցէ և սառ կը կարի դիշերը :

Տակաւ ձիւնին մթերքը ամբողջապէս կը կարծրանայ : Իր ծաւալին յաւելման ու ծանրութեան պատճառաւ՝ անդդալարար լերան դառիւլայրէն կը սահի կամաց կամաց հովիտին մէջ կը տարածուի , անոր չափին համեմատ սեղմուելով կամ լայննալով : Կարծր գետ մըն է որ կը քալէ , որ ժայռեր կը վրցնէ իր ավերէն , որ իր յատակին խորը կը փորէ , որ իրեն խոչընդոտ եղող առարկաները կ'աւել կը քշէ . այս է սառնարանը :

Ձմեռը՝ սառնարանները ծաւալին կը մեծցնեն , յա-

ուաջ կ'երթան . սառնարան կայ որ 800 մէթր բարձրու-
թեանէ իջած է : Ամառը կը հալին . կարծես ետ կը քաշուին :

Չուիցերիոյ Ասար նահանգին սառնարանին վրայ շին-
ուած հիւղակ մը գտնուած տեղէն 1500 մէթր հեռուն փո-
խադրուած է տասերեք տարուան ժամանակամիջոցի մը մէջ :

Ալէշի սառնարանը , որ Ալպեանց մէջ կը գտնուի , Հռե-
նոս⁽¹⁾ գետին աջ ափին վրայ , քսանըութը քիլօմէթր լայ-
նութիւն ունի :

Երբ հովիտին զառիթափը⁽⁵⁾ ցից⁽⁶⁾ չէ , այդ կապու-
տակ և ողորկ⁽⁷⁾ անհուն տարածութիւնները ջուրի մէջ սա-
լաններու վէտվէտուն մակերեսին⁽⁸⁾ կը նմանին . ասոր հա-
մար է որ երբեմն սառե ծով կը կոչեն զանոնք :

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԲ. — Օձ մը կուգար գոյնով կապոյտ,
Գաղարեղով կ'ընէր պըտոյտ:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Կերպարանափոխուիլ.** — Չեւը փոխել :
- (2) **Մանրախիւն.** — Աւազով խառն պզտիկ քարի կտորներ :
- (3) **Ալպեանք.** — Արեւմտեան Եւրոպայի մէջ մեծ լեռնաշղթայ մը :
- (4) **Հռենոս.** — Եւրոպայի գետերէն մէկը որուն ալը կը գտնուի Ալպեանց մէջ և որ կը թափի Հիւսիսային ծով :
- (5) **Ջառիթափ.** — Ջառիվայր, դարվար :
- (6) **Ցից.** — Ուղիղ, ցցուած :
- (7) **Ողորկ.** — Յղկուած, հարթ հաւասար :
- (8) **Մակերես.** — Մարմնոյ մը երեւող, արտաքին մասը :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երբ ձիւնագնդակը ձեր ձեռքին մէջ սեղմէք ,
ի՞նչ կ'ըլլայ : — Գնդակէն ներս թափանցող ջուրը ինչի՞ կը վերած-
ուի : — Յետոյ ի՞նչ կ'ըլլայ : — Ամէնէն վերջը ձեռքերնուդ մէջ ի՞նչ կը
մնայ : — Ալպեան լեռները ո՞ր կը գտնուին : — Ի՞նչ է սառնարանը,
եւ ի՞նչպէս կը կազմուի : — Հռենոս գետը ո՞ր երկիրներէն կ'անցնի,
եւ ո՞ր կը թափի : — Ալէզի սառնարանը ո՞ր կը գտնուի :

53. Մ Ե Մ

«Գրնա՛ , դուն որդեա՛կ , աշխարհքըս անցի՛ր ,
Պանծալի(1) անուն մեծի դուն տապի՛ր :»

Ու գրնաց որդին . շատ քրրաինք թափեց ,
Մեծ հարրատու՛թիւն , մեծ գանձ հաւաքեց ,
Ու դարձաւ հօրը ըսաւ պարծանքով .
— Հա՛յր , հիմայ մեծ չե՞մ ես քու կարծիքով :

— Չէ՛ , չէ՛ , թէև դուն պօրասայի ես դարդ ,
Բայց քեզ չեմ ըսեր տակաւին մեծ մարդ :

Ու գրնաց մըտաւ իմաստնոց(2) տաճար ,
Եղաւ խորիմաստ գիտուն և հանճար(3) ,
Ու դարձաւ հօրը ըսաւ պարծանքով .
— Հա՛յր , հիմայ մեծ չե՞մ ես քու կարծիքով :

— Չէ՛ , չէ՛ , թէև դուն գիտութեանց ես դարդ ,
Բայց քեզ տակաւին չեմ ըսեր մեծ մարդ :

Ու գրնաց որդին դարձաւ զօրավար ,
Խելքով , քաջութեամբ տիրեց շատ աշխարհ ,
Ու դարձաւ հօրը ըսաւ պարծանքով .
— Հա՛յր , հիմայ մեծ չե՞մ ես քու կարծիքով :

— Չէ՛ , չէ՛ . թէև դուն գու(4) գաշտին ես դարդ .
Բայց քեզ տակաւին չեմ ըսեր մեծ մարդ :

Իրին Եղբայրը գերի էր տարուած .
Թշնամույն ձեռքով տունը աւերած .
Ճիգ ըրաւ , գլուխը վրասանգի ճրգեց .
Ազատեց Եղբայրն ու տունը կանգնեց . . . :

Յանկարծ սար ու ձոր , ծով գղրղեցան ,
Բիւրք բիւրոց⁽⁵⁾ բերնով գոչեց ազգ մարդկան .
— Մեծ մարդու անուն հիմակ ըստացար ,
Եղբայրդ յիշեցիր , ու անձրդ մոռցար :

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ⁽⁶⁾







ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Պանծալի . — Փառաւոր :
- (2) Իմաստեց . — Իմաստուններու գրաբար ձեւն է :
- (3) Հաննար . — Փոխանակ ըսելու՝ հանճարեղ որ կը նշանակէ շատ խելացի :
- (4) Գող . — Ահուելի :
- (5) Բիւրք բիւրոց . — Այս գրաբար ձեւը կը նշանակէ հաղարաւոր :
- (6) Գամառ Քաթիպա . — Ռուսահայ բանաստեղծ և գրագէտ որուն բուն անունն է Ռափայէլ Պատկանեան , ծնած է 1830ին և մեռած 1830 ին :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Հայր մը ի՞նչ ըսաւ իր որդւոյն . — Որդին ի՞նչ ըրաւ . — Հայրը հաւնեցա՞ւ որդւոյն ըրածին . — Ե՞րբ մեծ մարդ կոչուելու արժանի եղաւ տղան . — Ի՞նչ ճասկցար այս ոտանաւորէն :

54. ՍԱՌՈՅՑԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Չմտար կ'ընդհատէ բուսաբերութիւնը և երկիրը ձիւնով կը ծածկէ . իրաւ է թէ ծաղիկներ յառաջ կը բերէ , բայց



ՍԱՌՈՅՑԻ ԾԱՂԻԿՆԵՐ
(Ապակիի վրայ սառույցին ստացած զանազան ձևերը)

մամաւոր տեսակ մը ծաղիկներ • մեր պարտէզներուն մէջ
չեն բուսնիր անոնք • ոչ բայր⁽¹⁾ ունին , ոչ թոյր⁽²⁾ , և սա-
տիկ ցուրտ օրերուն՝ մեր պատուհանները կը պաստառեն
այլանդակ ձեւեր յօրինելով :

Փութով գացէ՛ք դիտեցէ՛ք դանոնք ու զմայլեցէ՛ք ,
որովհետև սենեակը կրակէն տաքցածին պէս՝ պիտի անհե-
տանան : Ո՞ւրկէ կու գան այդ ծաղիկները :

Դիտա՞ծ էք թէ փոքրիկ ամպիկներ դուրս կ'ելլեն ձեր
բերնէն և ռուսգերէն՝ ձմեռուան ցուրտ առաւօտները
դպրոց գացած ատեննիւղ : Այդ ամպիկները խտացած ջուրի
շոգիներ են որ ցուրտ օդին հաղորդակցելով , նուրբ ու
թեթև չիթերու⁽³⁾ կը փոխուին :

Կաւ տաքցած դասարանէն ներս կը մտնէք • դարձեալ
ջուրի շոգի կ'ելլէ ձեր բերնէն և ռուսգերէն , բայց ա՛լ չի
խտանար , և չ'երեւար : Այս իրողութիւնը կրնաք ստուգել :
Շունչ առէք ցուրտ մարմնոյ մը , հայլի մը , պատուհանի
մը ապակիին վրայ • ջուրի շոգին հոն պիտի խտանայ և
անոր երեսը պիտի պղտորէ :

Գիշերները , սենեակին մէջ տարածուած շոգին աւելի
մեծ քանակութեամբ կը խտանայ ցուրտ պատուհաններուն
վրայ , և ջուրի կայլակներ⁽⁴⁾ կը ձեւացնէ որոնք անձրեւի
պէս ապակիներն ի վար կը հոսին :

Երբ դուրսի ցուրտը աւելնայ , ապակին ա՛լ աւելի կը
պաղի • անոր փակած ջուրը կը սառի , և վրան եկող նոր
շոգիներն ալ կը խտանան ու կը սառնին • ահա՛ այդ անհա-
ւասար խաւերն են որ տարօրինակ ձեւեր կ'առնեն , որոնք
ծաղիկներու կը նմանին :

Հիւսիսային երկիրներու մէջ , պատուհանները գրեթէ
միշտ սքողուած⁽⁵⁾ են այդ ծաղիկներով :

Հարաւային երկիրներու մէջ այս երեւոյթը անձա-
նօթ է :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Բոյր. — Հոտ:
- (2) Թոյր. — Գոյն:
- (3) Շիբ, (4) Կայլակ. — Կաթիլ:
- (5) Սֆոդուած. — Ծածկուած:

ՀԱՐՑՈՒԹՆԵՐ. — Սառոյցի ծաղիկները ո՞ւր կ'երեւան: — Ինչպէ՞՞ն կաթիլներ կը գոյանան ջուրի շիշին վրայ: — Ի՞նչ է ցօղը եւ ինչէ՞ն յառաջ կու գայ. — Տարութիւնը ինչի՞ կը վերածէ ջուրը: — Յըրտութիւնը ինչի՞ կը վերածէ շոգին: — Ո՞ր երկիրներուն մէջ ծանօթ են սառոյցի ծաղիկները: — Ո՞ր երկիրներուն մէջ ծանօթ չեն եւ ինչո՞ւ:

55. ԵՐԵՔ ՃԱՆՃԵՐՈՒ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ճանճ մը երեք զաւակ ունէր, որոնց անուրանիկը մանչ էր և Միւսքարէլլօ կը կոչուէր, իսկ միւս երկուքը աղջիկ էին, ու Միւսքապէլ և Միւսքաթիւն էր անուննին:

Երբ իր զաւակները ամէն բան սորվեցան, օր մը զանոնք քովը կանչեց և քաղցրութեամբ ու գորովով երեսնին նայելով ըսաւ. «Ձեր կրթութիւնը կատարելագործելու ժամանակը եկաւ հասաւ: Երխտասարգները մեծ պէտք ունին ճամբորդութիւն ընելու, ինչ որ խելքը կ'ընդարձակէ, և ամէն բան կը սորվեցնէ, նաև սիրա կու տայ իրենց ցուցնելով բոլոր այն թշուառութիւնները, որոնց անթակայ է ճանճերու սերունդը այս երկրիս վրայ:

«Գացէ՛ք ուրեմն, զաւակներս, այս փորձութիւնները գացէ՛ք սորվեցէ՛ք: Ամէն տեղ առատ ուտելիք կը գտնուի, զոր բնութիւնը ճանճերու համար սահմանած է: Պատուները, ցորենները, ճճիները ձերն են: Մի՛ վախ-

հաք ուսուցիչու անոնցմէ : Ստեղծողը առատութեամբ շնորհած է զանոնք , բայց մարդը կատաղի վայրենի կենդանի մըն է . ինչ որ անոր ձեռքը կ'անցնի խարդախուած ու պղծուած է . ան զմեզ կ'ատէ , կ'արհամարհէ . ո՛վ սիրելի զաւակներս , հեռու կեցէք մարդոցմէ , վախէ՛ք անոնցմէ , և երբում ըրէ՛ք ձեր մօրը որ իր հրամանին սխալի հնազանդիք : »

Երեք ճանձերը իրենց հեծկատուքը բռնելով , թաթիկնին վեր վերցուցին և բարձր ձայնով պոռացին . « Կ'երզնո՛ւնք : »

Հետեւեալ օրը , մայրերնին դիրենք օրհնեց , երկար ժամանակ զանոնք դիրկընդխառն համբուրեց , և զխոնց զանոնք մինչև որ հեռանալով աներեւոյթ եղան :

Երեք ճանձերը իրենց ամէն տեսածին վրայ կը հիասոյսին , ու կ'ըսէին . « Մհ , ի՛նչ մեծ է աշխարհքը , ի՛նչ ընդարձակ , ի՛նչ դեղեցիկ : » Ու ամէն բան զատ զատ զխոսելով չէին կշտանար : « Որքա՛ն ազնիւ բաներ կան , կ'ըսէին իրարու , ի՛նչ աղուոր , հոյակապ⁽¹⁾ առարկաներ դիմացնիս կ'ելլեն , և ի՛նչ յիշատակներ սխալ ունենանք մեր ծերութեան օրերուն մէջ : Ի՛նչ պատմութիւններ սխալ ընենք օր մը մեր զաւակներուն : »

Առտու մը , ճամբայ ելլելէ առաջ , կենսատու լողանք մը առին ցօղով լեցուն տերեւի մը վրայ : Ետքը արեւուն տակ մարմիննին չորցուցին , իրենց թեւերը մաքրեցին ու նորէն թռան դացին դէպ ի անձանօթ երկիրներ :

Երբ մեծ տան մը առջև հասան , սկսաւ անձրիւել , ուստի ներս մտան և սեղանատան մէջ տեղաւորուեցան : Սեղանը արդէն պատրաստուած էր . ճոխ արծաթեղէններ , սքանչելի ակնվանիներ⁽²⁾ սեղանը կը զարդարէին : Մտաներէն մէկը գաւաթ մը զինի լեցուց որ խմէ , բայց տեսնելով որ տան տէրը ներս կը մտնէ , խկոյն գինին սղասադարանին⁽³⁾ ետին պահեց :

Միւսքաթին; որ շատ հետաքրքիր էր, գաւաթը դիտելով կ'ըսէր. «Ի՛նչ գեղեցիկ գոյն ունի, ս'հ, ի՛նչ փափաք ունիմ անոր համը նայելու:» Միւսքարէլլօ զինքը սաստիկ յանդիմանեց. «Մայրիկին սլատուէրը մոռցա՞ր, գոչեց, ինչ որ մարդոց ձեռքով շինուած է, հեռու կեցիր անկէ, ըսաւ մեղի,»

Միւսքաթին գոհ չմնաց ու կրկնեց. «Գինին բնութեան պարգեւն է, խաղողով կը շինուի: Մարդ չի կրնար անոր մէջ փոփոխութիւն մտցնել, ու թէև դուն տժգոհ մնաս, ես կ'ուզեմ գինիին համը նայիլ:»

Եւ գաւաթին եզերքը երթալով, կնճիթը⁽⁴⁾ կարմիր ըմպելիքին մէջ թաթխեց, երկար ատեն խմեց, և քրոջը քով դառնալով, նստաւ ու ըսաւ. «Վա՛յ խելքիդ, ի՛նչ դէշ բան է հնազանդ ըլլալը:» Միւսքարէլլօ Միւսքաթինի վրայ կը յարձակէր թաթը վեր վերցուցած անոր ապտակ մը տալու համար, երբ յանկարծ կանդ առաւ, տեսնելով որ քոյրը դեռի գեղին կտրեր էր, և աչքերէն կ'երեւար որ սաստիկ կը տանջուէր: Դող մը մարմինը կը սարսէր⁽⁵⁾: Անորոշ, տարտամ⁽⁶⁾ ձայնով մը մօրը անուներ արտասանեց: Զղաճգութիւն մը զինքը գետինը պառկեցուց, թաթերը կարկամեցան⁽⁷⁾: Վերջին շունչը իր կուրծքը ուռեցուց, և ինքը անշարժ մնաց:

Միւսքաթին մեռեր էր, որովհետև զինին խարդախուած էր:

Միւսքապէլին ու Միւսքարէլլոյին ցաւն ու յուսահատութիւնը նկարագրելը անկարելի է. դիակը վերցնելով տարին ծառի մը քով թաղեցին: Յետոյ այն տխուր վայրերէն հեռացան, ուր իրենց սիրելի քոյրը կորստուած էր:

Բոլոր գիշերը անքուն անցուցին, ինչ որ զիրենք շատ յոգնեցուց: Արեւը ծագածին պէս իրենց ճամբորդութիւնը շարունակեցին, առանց բնաւ խօսակցելու: Քիչ մը հանգչելու համար փոքր քաղաքի մը դրան վրայ

կանդ առին, ուր ազարակ մը կար: Բակը մարդիկ թի-
թեղէ ամաններու մէջ կաթ կը լեցնէին: Ախորժելի փըր-
փրաղէզ կաթ մը կ'երևար ամաններուն ընդմէջ, ճեր-
մակ ու մաքուր:

Միւսքարէլ, որ շատ ծարաւ էր, ըսաւ կողքորը.
«Բիչ մը պիտի խմեմ սա կաթէն. ասիկա գինի չէ, չար
մարդիկ չեն դպած ասոր.» Եւ գնաց խմեց ու կողքորը
քով դարձաւ: Հազիւ տեղը հասեր էր, երբ սկսաւ պո-
ռայ. «Ո՛հ, ինչպէ՛ս կը մտիմ, աչքերս չեն տեսներ, ըսէ՛
մօրս . . . :» Չկրցաւ խօսքը աւարտել, և մեռաւ: Կաթը
խարդախուած էր:

Միւսքարէլօ վերջին ծայր յուսահատութեան մէջ ին-
կաւ, և ինչ ընելիքը չզխանալով, տկար, վհատած կարա-
սիի մը վրայ նստաւ, ըսելով.

— Ի՞նչ պիտի ըսեմ մօրս երբ ինձի պոռայ. «Միւս-
քարէլօ՛, քոյրերդ ի՞նչ ըրիր:» Կը նախընտրեմ այս ա-
նիծեալ աշխարհէս հեռանալ, և մեռնիլ կ'ուզեմ:

Այդ միջոցին ազարակապանը սննեակը մտաւ ու
ըսաւ կնոջը. «Աս գլուխ կլկելու բան չէ. մուկերը մա-
ռանին մէջ բոլոր կղածը կ'ուտեն կոր. դեղագործի մը
դնա՛, և մուկերու համար թոյն գնէ:»

Ազարակապանուհին դուրս ելաւ: Միւսքարէլօ կը
կրկնէր. «Մեռնիլ կ'ուզեմ:» Բիչ մը ետքը կինը թոյնը
բերաւ սեղանին վրայ դրաւ ու ըսաւ. «Ասիկա նոր
հնարուած թոյն մըն է կղեր, այնպէ՛ս որ եթէ փիղ մը
անպամ ուտէ անմիջապէս կը մեռնի. այսպէ՛ս ըսաւ դե-
ղագործը,»

Միւսքարէլօ կը մտածէր. «Վերջապէս պիտի կա-
րենամ գոնէ մեռնիլ:» Եւ խկոյն մահացու թոյնին վրայ
վազելով իր փողը անոր մէջ երկնցուց, և ուժով մը դայն
ծծեց, կերաւ. յետոյ բոլոր ուժը ժողվելով իր տեղը դար-
ձաւ, հին կարասիին վրայ նստաւ ծակի մը քով, ուր իր

մարմինը՝ մեռած ժամանակը՝ կրնար իյնալ, և աներև-
ւոյթ ըլլալ, առատապի սարդերուն ճանկէն ազատ ըլ-
լալու համար: Բայց չմեռաւ, որովհետև մուկերուն թոյնը
խարդախուած էր:

ՄԱՔՍԻՄ ՏԻԻ ՔԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Հոյակապ. — Փառաւոր, շքեղ:
- (2) Ակնվանի կամ Վանակն. — Տեսակ մը հանքային նիւթ՝ Թա-
փանցիկ ու ներմակ (պէլլը):
- (3) Սպասադարան. — Սեղանի սպասներու պահարան:
- (4) Կննիք. — Անասուններուն քիթը բերանը:
- (5) Սարսել. — Դողացնել:
- (6) Տարսամ. — Անորոշ:
- (7) Կարկամիլ. — Փայտ կտրիլ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երեք ճանճերուն մայրը ի՞նչ ըսաւ իր տղոցը՝
— Մասնաւորապէս ի՞նչ պատուիրեց անոնց: — Երեք ճանճերը ի՞նչ
ըրին: — Ի՞նչ պատահեցաւ ճանճերուն: — Ի՞նչ կ'ըսէր Միւսքաթին:
— Ի՞նչ ըրաւ Միւսքաթին: Եւ ի՞նչ փորձանք եկաւ զլխուն: — Ինչո՞ւ
մեռաւ Միւսքաթին: — Երկու ճանճերը ի՞նչ ըրին: — Ինչէ՞ն մեռաւ
Միւսքապէլ: — Ի՞նչ պատահեցաւ Միւսքարէլ լոյին: — Ինչո՞ւ Միւս-
քարէլլօ չմեռաւ:

56. ԽԱԲՈՂԻՆ ԽԱԲՈՂ ՈՒ ԿԷՍ

Կարմիր բրբուկ⁽¹⁾, սև սև բիւեր,
Լանջքը⁽²⁾ կանանչ, վրբան կէտեր,
Գըլուխը վեր բընած յօխորա⁽³⁾,
Կրակրտալով կրակրտալով,
Տան մ'աղբիւրին մէջ խորա ու բորա

Ինքն իրմէ դո՛ւ կը ճեմէր⁽⁴⁾ վէս⁽⁵⁾

Աքլոր մ'աղուոր ու ոսկեղէս⁽⁶⁾,


Կըտկրտալով կըտկրտալով :

Մէյ մ'ալ հայխա կամաց կամաց

Գըլուխը կախ, սիրտը ցաւ,

Աղուէս մը չոր ոսկոր դարձած,

Մեր աքլորին մօտեցաւ :



«Բարն՛ւ, ըսաւ, ո՛վ դուն փունիկդ⁽⁷⁾ հաւերու .

«Այդ ի՛նչ շնորհք, այդ ի՛նչ պերճանք աչքառու .

«Ուրկէ՞ դրտար այդ փետուրներդ արծաթէ,

«Որո՞նց ծայրէն յակինթ⁽⁸⁾, դըմբուխա⁽⁹⁾ կը կաթէ :

«Բըրուկդ հապա՛, մետաքսէ ծոպ⁽¹⁰⁾ ծիրանի⁽¹¹⁾

«Որուն շքեղ տեսքին աչխարհք կը հաւնի :

«Կըտուցդ ըսն՛ս, սաստափ⁽¹²⁾ դեղոր⁽¹³⁾ թանկազին ,

«Երբոր ըացուի, ո՛հ, կը թուլէ⁽¹⁴⁾ մեր հոգին .

«Ես չեմ ճանչնար թռչուն մ'աղուոր քեզ նրման .

«Կարասին⁽¹⁵⁾ ու լոր⁽¹⁶⁾ քեզմէ շատ վար կը մընան :

«Մէկը միայն կը ճանչնայի . քու հայրդ էր .

«Քեզ պէս սիրուն երդովն ըզմեզ կը կարթէր⁽¹⁷⁾ :

«Բայց ձիրք մ'ունէր ան, դոր անչուշտ դուն չունիա ,

« — Ինչպէ՛ս մտնամ ձիրքերն անուշ թռչունիս — .

«Երզած տանն՝ աչքերը դոց կը կենար .

«Ի՛նչ ձայն եր այն, սրբի՛նդ, ջութակ թէ քընար :»

Աքաղաղին անսորձ տղան
Հաւատարով անոր խօսքին ,
Գոցեց աչքերն ու բարձրաձայն՝
«Կուկուկիկո՛ւ» , գոչեց ուժղին :
Աղուէն խկոյն վրայ հասաւ ,
Եւ խածնելով դայն ըշտապաւ ,
Թեթեւ թեթեւ ու սրրընթաց
Շուտ մ'աղբիւսէն⁽¹⁸⁾ վախաւ գընաց :
Բայց մըշակներ դաշտին մէջ շէն ,
Նշմարելով արշաւն անոր խելագար ,
Մեծ բազմութեամբ ինկան անոր հտեւէն
Ցուպերով⁽¹⁹⁾ լայն ու երկար :
Աքլորն յանկարծ ուշաբրելով⁽²⁰⁾ դողգոջուն՝
«Աղուէ՛ս , ըսաւ , ասոնք քեզմէ ի՞նչ կ'ուզեն .
«Սա անճարակ մշակներուն պոռա՛ դուն ,
«Որ ետեւէդ պարապ տեղը չըվազեն :»
Աղուէն անվախ օրօրելով իր ազին ,
Բըռնած որսին սիրովն արբշիռ⁽²¹⁾ , երջանիկ ,
Բացաւ բերանն աղաղակեց զայրագին .
«Աքլորն իմս է . պարապ տեղը մի՛ յոգնիք :»
Բայց աքլորը ծառին դագաթն էր թըռեր :
Չորքոտանին վեր նայեցաւ խենդի պէս ,
Սըմքած⁽²²⁾ մընաց , յետոյ գոչեց անհամբեր .
«Սա խեղճ տըխմար կենդանին աներես
Ինչպէ՛ս ծուղակն ինկայ ես :»

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Բբուկ. — Կարմիր և մսեղէն ուռեցք որ կը զտնուի աքաղաղներու ճակտին վիայ :
- (2) Լանջբ. — Կուրծք :
- (3) Յոխորս. — Գոռոզ :
- (4) Ճեմիլ. — Պտըտիլ :

- (5) **Վ.Էս.** — Հպարտ:
- (6) **Ոսկեգէս.** — Ոսկեգոյն պոչով:
- (7) **Փիւնիկ.** — Առասպելային թռչուն մը: [Է-Գ-Բ]:
- (8) **Յակիմք.** — Ընդհանրապէս կարմիր գոյնով թանկագին քար մը:
- (9) **Զմրուխտ.** — Կանանչ գոյնով թանկագին քար մը (չէ-Տէ-Բ):
- (10) **Ծոպ.** — Խուրձի ձեւով հիւսուածք ուրկէ թելեր կը կախուին:
- (11) **Ծիրանի.** — Կարմիր: [Է-Գ-Բ]:
- (12) **Սասափ.** — Կարգ մը ծովային խեցիներու մէջ գանուած կարծր փայլուն մարմին (Է-Գ-Բ):
- (13) **Գեղոր.** — Պերճանքի փոքրիկ առարկայ որ սրահներու մէջ դարաններու, սեղաններու վրայ կը դրուի:
- (14) **Թսվել.** — Հրապուրել, հմայել:
- (15) **Կարապ.** — Զրային թռչուն մը:
- (16) **Լ.որ.** — Համեղ միտով թռչուն մը (ԿԼՐԷՐՏԷՆ):
- (17) **Կարթել.** — Ոքսալ, խաբել:
- (18) **Աղբիւս.** — Աղբանոց:
- (19) **Յուպ.** — Գաւազան:
- (20) **Ուտարիկ.** — Խելքը զլուխը գալ:
- (21) **Արբժիռ.** — Գինով:
- (22) **Սմֆիկ.** — Գլխուն զարնուած մնալ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Աքլորը ի՞նչպէս էր եւ ի՞նչ կ'ընէր: — Ո՞վ մօտեցաւ իրեն եւ ի՞նչ ըրաւ: — Աքլորը ի՞նչ ըրաւ: — Աղուէսը ինչո՞ւ մօտեցեր էր անոր եւ ի՞նչ ըրաւ: — Աքլորը ի՞նչ ըսաւ անոր եւ ի՞նչ ըրաւ: — Ի՞նչ է այս առակին բարոյականը:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

17. ԱՆՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Նկարագրել աննեղապահ առակերսի մը անյաջողութիւնները վարժարանին մէջ, եւ բաղդասել զայն նեղապահ սիւնն հետ, որ ամեն բան իր ժամանակին կ'ընէ, եւ այս օրուան գործը վաղուան չի ձգէ:

57. ԿԱՐԳ ՄԸ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամէն մարմին ծակափք ունի, այսինքն ծակ ծակ է :
Փայտի կտոր մը, ջուրի մէջ մնալով, աւելի կը խոշոր-
նայ և կ'ուռի, երբ ջուրը իր ծակափքներուն մէջ մտնէ :
Քարերը երբ թրջենք ու կշռենք, ետքը կրակով չոր-
ցընենք ու վերստին կշռենք, շատ տարբերութիւն կը
դանենք : Ներմակ քարի կտոր մը կրակով չորցնելէ յե-
տոյ, երբ դուռաւոր ջուրի մը մէջ ձգենք, կը տեսնենք որ
քարին դոյնը չ'ելլեր, և եթէ կտարենք, յայտնի կը տես-
նուի որ դուռաւոր ջուրը քարին մինչև խորունկը թա-
փանցեր է :

Ուղտին կաշիին մէջ ալ եթէ անդիկ լեցնելով սաա-
տիկ սեղմենք զայն, անդիկը կաշիին ծակերէն դուրս կ'ել-
լէ : Միայն թէ խաղախորդին⁽¹⁾ դործարանը երթալէ ա-
ռաջ, թարմ կաշիին ծակափքները դոցուած կ'ըլլան կեն-
դանիին մարմնէն արտադրուած նիւթերով . ահա այդ կա-
շիին մէջ կը դնեն անդիկը :

* * *

Երբեմն մեռելներու դիակներ կը գտնուին, երկար
ժամանակ առաջ թաղուած, որոնք փտութեան նշան ցոյց
չեն տար . այս երեւոյթը քննելով կը հասկնանք որ տե-
սակ մը հողի ազդեցութեամբ այդպէս մնացած են, վասն
զի երկրի երեսը գտնուած հողին անմիջապէս տակը սուրբ
(tourbe) կոչուած հող մը կայ, որ ճախնային ու ցափա-
րակ տեղեր կը գտնուի, և այնպիսի յատկութիւն մը ու-
նի, որ իր մէջ թաղուած դիերը⁽²⁾ փտութենէ զերծ կը
պահէ, ինչպէս հետեւեալ ստույգ իրողութիւնները կը հաս-
տատեն :

1747ին Յուճիս ամսուն, Անդլիոյ կղզիներէն մէկուն մէջ, տուրք փորելու ատեն, 16 ոտք խոր տուրքի խաւերու տակէն կնոջ մը դիակը դտան, որուն լաթերն ու մարմինը անաղարտ մնացած էին, և ոտքի ամաններուն հին ձեւը կը ցուցնէր որ շատ դարեր առաջ թաղուած էր այդ խոնաւ գերեզմանին մէջ:

Իրլանտա, տուրքի ճախինի(3) մը մէջ, 12 ոտք խորութեամբ գետնին տակէն, մարդու մը մարմինը գտնուեցաւ, որ ապականութեան(4) նշան մը չունէր, և մազերէն ու զգեստներէն յայտնի էր թէ շատ հին է:

1674ին, երկու մարդոց դիակներ թաղեցին խոնաւ տուրքի մէջ, գրեթէ երկու ոտք խորութեամբ, և 28 տարի, 9 ամիս ետքը քննեցին ու տեսան որ այդ մարմիններուն մորթին զոյնն իսկ դեռ կենդանի է, և միսերնին ալ՝ նոր մեռած մարդոց միսին պէս:

Կը կարծուի թէ տուրքին այս զօրութիւնը իր կըպրային(5) մասն է: Ասով է որ Եգիպտոսայիք իրենց մեռելները կը պահէին ատանց ապականութեան:

ԳԱՆՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ(6)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Խաղախորդ. — Կաշին մաքրող և յղկող գործաւոր:
- (2) Գի. — Դիակ:
- (3) Ճախին. — Խիստ թաց տղմուտ տեղեր (ածականն է **ճախնային**):
- (4) Ապականութիւն. — Աղտոտութիւն:
- (5) Կըպրային. — Կուպրի վերաբերեալ: Կուպրը հողին տակէն ելլող դիւրավառ մարմին մըն է (**Գ-Բ-Ն**):
- (6) Գալուստ Կոստանդեան. — Իզմիրցի Հայ գիտուն, մեռած 1898ին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երբ փայտի կտոր մը ջուրին մէջ մնայ ի՞նչ կ'ըլլայ. — Ի՞նչ է ատոր պատճառը. — Քարերն ալ ջուրի մէջ մնալով փոփոխութիւն մը կը կրն՞ն. — ձերմակ քարի կտոր մը եթէ ցունաւոր

ջուրի մէջ ձգենք ի՞նչ կ'ըլլայ: — Ասիկա ի՞նչ կ'ապացուցանէ: — Ուղտին թարմ կաշիին մէջ եթէ սնդիկ լեցնենք ու սեղմենք, ի՞նչ կը պատահի: — Ի՞նչ է պատճառը որ երկար ատենէ ի վեր թաղուած դիակներ կան որոնք չեն փտտած: — 1747ին Անգղիոյ կղզիներէն մէկուն մէջ ի՞նչ պատահեցաւ: — Ինչէ՞ն յայտնի էր այդ դիակին շատ դարեր առաջ թաղուած ըլլալը: — Ի՞նչ պատահեցաւ Իրլանտայի մէջ: — Ո՞վ է Գալուստ Կոստանդեան:

58. ԳՕԶԷԹԻՆ ՊՈՒՊՐԻԿԸ

Գօզէթ հաին դարձեր՝ ու տեսեր էր պզտիկ թէնարտիէներուն պուպրիկը, զոր կատուին քով երթալու համար ձգեր էին խոհանոցին սեղանէն քանի մը քայլ անդին(*):

Սեղանին տակէն դուրս ելած ծունկերուն և ձեռքերուն վրայ սողալով, անգամ մըն ալ ասպահովուեցաւ որ զինքը չէին լրտեսեր, յետոյ յանկարծ մինչև պուպրիկը սպրդեցաւ⁽¹⁾ և առաւ դայն: Բոպէ մը ետքը իր տեղն էր նստեր անշարժ, այնպէս մը դարձած որ իր ձեռքը բռնած պուպրիկը մութին մէջ մնաց: Պուպրիկի մը հետ խաղալու այս երջանկութիւնը այնքան հազուադէպ⁽²⁾ բան էր իրեն համար որ մեծ հաճոյքի մը բոլոր սաստկութիւնը ունէր:

Ոչ ոք տեսեր էր զինքը, բայց ի ճամբորդէն որ կամայ կամայ իր խեղճուկ կերակուրը կ'ուտէր:

Այս ուրախութիւնը քառորդ ժամու մը չափ տևեց:

(*) Վիգթօռ Հիւկոյի մէկ վէպին մէջ գեղեցիկ դրուագ մըն է այս հատուածը: Գօզէթին մայրը թէնարտիէի ընտանիքին քով ձգած էր զայն՝ խնամուելու համար, ամասկան գուճարի մը փոխարէն: Թէնարտիէները շատ կը չարչարէին խեղճ պզտիկ սղջիկը:

Բայց որքան ալ դժուշութիւն ըրաւ Գօզէթ, չէր նշմարած որ պուպրիկին մէկ ոտքը դուրս ելեր էր, և վառարանին կրակը վառաւորապէս կը լուսաւորէր զայն : Այդ վարդագոյն լուսափայլ ոտքը որ ստուերէն դուրս կ'ելլէր, յանկարծ Ազէլմայի(*) աչքին զարկաւ, որ ըսաւ Էբոնինին(**) . «Նայէ՛, քուրիկ» : Երկու պզտիկ աղջիկները ապշած մնացին : Գօզէթ համարձակեր էր իրենց պուպրիկը առնելու :

Էբոնին տեղէն ելաւ, և առանց կատուն ձեռքեն ձգելու, մօրը քով գնաց ու սկսաւ քղանցքէն քաշել :

— Է՛յ, ձգէ նայի՛նք, ըսաւ մայրը, ի՞նչ կ'ուզես :

— Մա՛յր, ըսաւ տղեկը, հո՛ն նայէ :

Եւ մատովը Գօզէթը ցոյց կու տար :

Գօզէթ, ինքզինքը ամբողջովին տիրացման(3) հաճոյքին տուած, ոչինչ կը տեսնէր, ոչինչ կը լսէր :

Թէնարտիէին դէմքը այն արտայայտութիւնը առաւ, որ այս տեսակ կլինները մեղերայ(4) կոչել կու տայ : Այս անգամ, վիրաւորուած հպարտութիւնը իր զայրոյթը ա՛լ աւելի կը սաստկացնէր . Գօզէթ չափը շատ անցուցեր էր . Գօզէթ ձեռք դպցուցեր էր «այդ օրիորդներուն» պուպրիկին :

«Գօզէ՛թ», աղաղակեց ցասումէն(5) մարած ձայնով մը :

Գօզէթ սարսուաց իբր թէ գետինը իր ներքեւ շարժած ըլլար : Ետին դարձաւ :

«Գօզէ՛թ», կրկնեց Թէնարտիէն :

Գօզէթ պուպրիկը առաւ, և կամացուկ մը գետինը դրաւ յուսահատութեամբ խառն տեսակ մը մեծարանքով : Այն ատեն առանց աչքը վրայէն վերցնելու, ձեռքերը միացուց, և ինչ որ սարսափելի է ընել այդ տարիքը տղու մը համար, զանոնք գալարեց, յետոյ սկսաւ լալ : Հեծկլտալով լացաւ :

(*) (**) Ազէլմա և Էբոնին Թէնարտիէներուն երկու աղջիկներն են :

Սակայն ճամբարդը ոտք ելեր էր :

«Ի՞նչ կայ որ» ըսաւ Թէնարտիէին :

— Չէ՛ք տեսներ , ըսաւ Թէնարտիէ , մատուլը ցոյց ապրով յանցանքին ապացոյցը որ փռուեր էր Գօղէթին ոտքերուն տակ :

— Է՛յ , ի՞նչ է եղեր , յարեց մարդը :

— Այս ջլղիկը , պատասխանեց Թէնարտիէ , համարձակեցաւ տղոցս պուպրիկին ձեռք դպցնել :

— Այսչափ աղմուկը ատ՞ր համար է , ըսաւ մարդը : Է՛յ , ի՞նչ կ'ըլլայ եթէ այդ պուպրիկին հետ խաղայ :

— Իր աղատտ ձեռքերովը դպաւ անոր , շարունակեց Թէնարտիէ , իր նողկալի՛ (6) ձեռքերովը :

Հոս Գօղէթ իր հեծեծանքները կրկնապատկեց :

«Պիտի լռե՛ս» , գոչեց Թէնարտիէ :

Մարդը շիտակ փողոցին դուռը դնաց , բացաւ ու դուրս ելաւ : Անիկա դուրս ելլելուն պէս , Թէնարտիէ անոր բացակայութենէն օգուտ քաղելով , սեղանին տակը , ոտքովը սոսկալի հարուած մը տուաւ Գօղէթին , որուն վրայ տղան սկսաւ բարձրաձայն աղաղակել :

Գուռը նորէն բացուեցաւ , մարդը երևան ելաւ : Երկու ձեռքովը բռներ էր առաապելական(7) պուպրիկ մը զոր առաւօտէն ի վեր բոլոր փողոցի տղաքը կը դիտէին , և որուն առջև հիացած մնացեր էր Գօղէթ , ու կայնեցուց դայն Գօղէթին առջև , ըսելով .

«Ա՛ռ , ասիկա քուկդ է . . . »

Գօղէթ աչքերը վեր վերցուց . տեսեր էր մարդուն իր քով դալը իբր թէ արևուն դալը տեսած ըլլար : Լսեց սա անլուր խօսքը . «Ասիկա քուկդ է :» Նայեցաւ անոր , նայեցաւ պուպրիկին , յետոյ կամաց կամաց ետ քաշուեցաւ , և դնաց պահուրտեցաւ սեղանին տակ , պատին անկիւնը :

Ա՛լ չէր արտասուեր , ա՛լ չէր աղաղակեր , կարծես ա՛լ չունչ չէր տռներ :

«Իրա՞ւ, պարո՞ն, իրա՞ւ կ'ըսէք, ի՞նչ է այս տիկինը:»
Օտարականին աչքերը արցունքով կը լեցուէին կար-
ծես . . . :

Գլխովը նշան մը ըրաւ Գօզէթին, և տիկինին ձեռ-
քը անոր թաթիկին մէջ դրաւ . . . :

«Անուէր Գաթրին պիտի դնեմ» ըսաւ :

Գօզէթ Գաթրինը աթոռի մը վրայ դրաւ, յետոյ գե-
տինը նստաւ անոր առջև, և անշարժ կեցաւ առանց բառ
մը ըսելու, հիացման դիրքով :

— Խաղա՛ նայինք, Գօզէթ, ըսաւ օտարականը :

— Ո՛հ, կը խաղամ կոր, պատասխանեց Գօզէթ :

ՎԻԳԹՕՌ ՀԻԻԿՕ

ԱՌԱՄ . — Դռն ֆռն.

Բախսդ արթուն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Սպրդիլ. — կամացուկ մը մտնել:
- (2) Հազուադէպ. — Քիչ պատահող:
- (3) Տիրացում. — Տէր ըլլալ:
- (4) Մեզերայ. — Չար ու զայրացկոտ կին:
- (5) Ճասում. — Բարկութիւն:
- (6) Նողկալի. — Քանելիք:
- (7) Առասպելական. — Այստեղ կը նշանակէ՝ նմանը չտեսնուած:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ո՞վ էր Գօզէթ. — Ո՞վ էին թէնարտիէները.
— Ի՞նչ ըրաւ Գօզէթ. — Ո՞վ տեսեր էր զինքը. — Ո՞վ նշմարեց պուս-
րիկը. — Ո՞վ են Ազէլմա եւ Էբօնին. — Ի՞նչ ըրաւ Տիկին թէնարտիէ.
— Գօզէթ ի՞նչ ըրաւ, երբ թէնարտիէին ձայնը լսեց. — Ճամբորդը
ի՞նչ ըրաւ. — Ճամբորդին դուրս ելլելէն յետոյ թէնարտիէ ի՞նչ ըրաւ
Գօզէթին. — Ճամբորդը ի՞նչ բերաւ Գօզէթին. — Գօզէթ ի՞նչ զգաց
եւ ի՞նչ ըրաւ:

59. ՅՈՐԵՆԻ ԾԱՂԻԿԸ

Դուքն պիտի չեքթանս, ո՛վ ծաղիկ սիրուն,
Գեղջկուհի անսխալ,
Սենեակի մը մէջ բոյրերով լեցուն՝
Ակնարկ մը մուրալ :

Մարմար և ակաա⁽¹⁾ բաժակներն աղուոր
Կը վայլեն՝ կապոյտ,
Փափուկ ծծմորին⁽²⁾, մեկոնին⁽³⁾ բոսոր,
Ծոյլ ընկերներու դ :

Դուքն չես բընաւ սէգ՝ նըման վարդերուն .
Խեղճին կը ժպտիս,
Ձի ան քրտինքովն իր կ'օժէ համբուն⁽⁴⁾
Հողն ուր կը փթթիս :

Ան կը հիւսէ միշտ քեզմով պըսակներ
Իր կոպիտ ձեռքով,
Կը տանի կախել իբր ուխտի նըւէր
Ճամբուն խաչին քով :

Թէ չես վարդապոյն, և չես գեղանի,
Աղուո՛ր կ'աճիս դուն,
Եւ մանանայովդ ալ կը սընանի
Յաւէ՛տ մարդկութիւն :

Միշտ կը բողբոջես դաշտին մէջ քու մայթ⁽⁵⁾,
Երբ յունիան է տաք,
Բեղմնատոր դործիդ վերջ տալով անդայթ⁽⁶⁾
Տէրոջ աչքին տակ :

Քու պրասակիդ մէջ, հոյզն⁽⁷⁾ հատիկներուն
լա՛ւ է ուռճացած .

Արեւով կ'ըլլան հատուն, ոսկեզոյն .

Յորե՛նն ընենք հաց :

Ողջո՛յն քեզ, ծաղի՛կ, ժիր ու անմեղաւկ ,

Ծաղի՛կ ցորենի ,

Դուն որ հասկին մէջ կը փթթիս անշուք՝

Հասկին մօրուանի⁽⁸⁾ :

ՇԱՌԼ ՌԷՆՑ

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԳ . — Մանուկ մը կար զօրեղ հրեղեկ
իշխեց հասցուց ցուրդ գեհեկ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Ակաս.** — Տեսակ մը ազնիւ բար, որուն վրայ դունաւոր երակներ կ'երեւան
- (2) **Ծծմոր.** — Տեսակ մը կապոյտ ծաղիկ որ ցորեններուն մէջ կը բուսնի:
- (3) **Մեկոն.** — Տեսակ մը ծաղիկ որմէ ափիոն կը հանեն
- (4) **Համբուն.** — Ամբողջապէս, ամբողջ:
- (5) **Քումայր.** — Խարտեաշ:
- (6) **Անգայր.** — Առանց սահելու, անսայթար:
- (7) **Հոյգ.** — Հիւթ:
- (8) **Մօրուանի.** — Մօրուք ունեցող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչո՞ւ անխայլ գեղջկուհի կոչուած է ցորենը այս ոտանաւորին մէջ: — Ի՞նչ կը նշանակէ քրտինքով հողը օծել: — Ի՞նչ է մանանան: — Ո՞րն է ցորենին բեղմնաւոր գործը: — Ինչո՞ւ մօրուանի կոչուած է ցորենը:

60. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅ ՊԷՋՃԵԱՆ

Պէզճեան ծնած է 1770ին . զաւակն էր Կարսեցի վաճառական Պէզճի Պօղոս աղայի :



Յարութիոց Ամիրայ Պէզճեան

Իր մանկութեան տարիները՝ հետեւեցաւ Մայր վարժարանի դասերուն , ուր հազիւ նախնական կրթութիւն մը ստացած , շուկայ ելաւ՝ մետաքսի առեւտուրով զբաղելու :

Քիչ ատենէն , շնորհիւ իր ուշիմ և խոհական գործունէութեան , յաջողութիւն գրտաւ , և հեազհետէ բարձրահարկով , կարեւոր դիրք մը գրաւեց : Երկար տարիներ վարեց Արքունի Փողերանոց

ցի⁽¹⁾ վերատեսչութեան⁽²⁾ պաշտօնը , հաւատարմօրէն ծառայելով Կայսերական կառավարութեան :

Պէզճեանի բարեգործութիւնները բազմաթիւ են . ԺԹ . դարուն մէջ ոչ մէկ . Հայ իրեն չափ հոգ տարած է հայ եկեղեցիներուն և դպրոցներուն : Ինք եղած է Եէտի Գուլէի Ազգ . Հիւանդանոցի հիմնադիրը և բարերարը . իր ջանքով և նիւթական օգնութեամբ կառուցուած են Գուլ Գափուի Մայր եկեղեցին , Պատրիարքարանը և ուրիշ եկեղեցիներ ու դպրոցներ : Ինք է որ հիմնած է Բերայի մէջ աղջկանց ասկընադործութեան վարժարան մը որուն , տարիներ ետքը , սլխի յաջորդէր արդի Արուստանոցը :

Կրօնատէր, աղքատատէր, դպրոցատէր, ամիրան մեծ սէր ունէր նաև հայ գրականութեան վրայ: Ինք հոգացած է քանի մը կարեւոր դիրքերու տալագրութեան ծախքը: Իր ժամանակակից ամիրաներուն մէջ չկար մէկը որ այնքան մտերիմ ըլլար իրեն, որքան Գրիգոր պատուելի Փէշտիմալեան(3), իր ատենին Պոլսեցի հայ գրագէտներուն ամէնէն հմուտն ու նշանաւորը:

Պէզճեան իբր պետական պաշտօնեայ և իբր Հայ, գիտցած է կատարել իր պարտքը: Ժրաջան(4), աչալուրջ(5), հանձարեղ, յաջողած է գրեթէ իր բոլոր ձեռնարկներուն մէջ, իր ազգակիցներուն պատկառանք ու սէր ազդելով. այնպէս որ իր մահը, որ պատահեցաւ 1834 Յունուար 3ին, ճշմարիտ սուգ մը եղաւ ազգին համար, և զաւ պատճառեց կառավարական շրջանակներու մէջ ալ, ուր այնքան մաքուր համբաւ մը չինած և այնքան սիրուած էր:

Պէզճեան Յարութիւն Ամիրայ թաղուած է Մայր Եկեղեցին, որուն մէջ իր կենդանութեանը ինք իսկ շինել տուած էր իր գերեզմանը:

Ա.Ռ.Ա.Ծ . — Ով որ արժը ցան(6) ունի
Եկեղեցին ձայն ունի:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

- (1) Արեւնի Փողեբանց. — Պետական պաշտօնատուն ուր դրամ կը շինեն:
- (2) Ա.եբասեսաւրիւն. — Տնօրէնութիւն:
- (3) Գրիգոր Պատուելի Փէշտիմալեան. — Կ. Պոլսեցի նշանաւոր ուսուցիչ որ ծնած է 1773ին և մեռած 1837ին:
- (4) Ժրաջան. — Աշխատատէր:
- (5) Աչալուրջ. — Աչքը բաց:
- (6) Ծան. — Ցանուած ցորեն, գարի և այլն. սովորաբար ցանք կը գործածուի:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ե՞րբ ծնած եւ ո՞ւր ուսում առած է Պէզճեան Ամիրայ: — Ամէնէն առաջ ի՞նչ գործով զբաղած եւ յետոյ ի՞նչ պաշտօնի կոչուած է: — Ի՞նչ է Արքունի Փողերանոցը: — Պէզճեան Ամիրայ ի՞նչ բարեգործութիւններ ըրած է: — Գրական գործերու աչնը պաստա՞ծ է: — Ո՞վ էր իր ամէնէն մտերիմ բարեկամը: — Ի՞նչպէս էր իր նկարագիրը: — Ե՞րբ մեռած եւ ո՞ւր թաղուած է:

61. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Կրթութիւնը քանի տարածուի, այնքան կ'աւելնայ ընթերցանութեան սէրը. քիչ շատ քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ, ամէն աստիճանի մարդիկ ու կիներ իրենց կացութեան, վիճակին, հասակին և իմացական⁽¹⁾ կարողութեան յարմար ընթերցանութեան նիւթեր կը գտնեն: Անթիւ ևն ընթերցանութեան օգուտները ոչ միայն գրասէր և գրագէտ անձերու. այլ և անգրագէտ, թիրակիրթ մարդոց համար:

Լաւ գիրքերու ընթերցանութիւնը կեանքի ամէնէն մեծ սիտիանքն ու հրահանգն է. միտքը կը լուսաւորէ, օգտաւէտ խօսակցութեան նիւթ կը հայթայթէ, մենտալութեան և տաղտկալի ժամերու դէմ ազդու դարման մըն է, վշտահար սիրտերու մխիթարանք և մտային ու բարոյական գանձեր կը բերէ:

Կանանց և օրիորդներու համար ալ չկայ ընթերցանութենէ աւելի դրօսալի և հրահանգիչ դրագում, մանաւանդ այն վայրկեաններուն մէջ ուր, անական գործերէ ազատ, ընկերութենէ զուրկ կամ հեռու կը գտնուին, և տաղտուկը կրնայ իրենց միտքն ու սիրտը պաշարել ու մոլորեցնել:

Կանանց ամէնէն մեծ թշնամին անդործութիւնն է, դանդաղութիւնն է, որոնց յարակից⁽²⁾ են պճնասիրութիւն⁽³⁾, բամբասանք և մոլութիւն:⁽⁴⁾ Ուստի անհրաժեշտ է որ օրիորդները ընթերցանութեան ճաշակը մշակեն, ունայն⁽⁵⁾ ու անշահ խօսակցութենէ, անհամ և անվայել ընկերութենէ հարիւրապատիկ աւելի սիրեն տեսակցիլ այն նշանաւոր հեղինակներուն հետ որոնք կարող են բնութեան գեղեցկութիւնները, դիտութեան հրաշալիքը և ազնիւ զգացումներու տեսարանը պարզել՝ իրենց գրչով՝ ընթերցողին առջև:

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ա.Ռ.Ա.Ծ. — Լաւ է յարևար գիտք մը կարդաս,
Խըրատուիս շուրջ խօսքերէն,
Քան թէ յիմար մեկուն Երբաս,
Չանձրսնասս փուն խօսքերէն:

ՀԱՆԵԼՈՒԿ Ժ.Գ. — Տուն մը տեսայ ներմակ բըռած
Ու սեւ հատեք ներսը թռած .
Լեզու մ'ունիսն շատ դիւրիմաց:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Իմացական. — Մտքի վերաբերեալ:
- (2) Յարակից. — Մէկտեղ գտնուող:
- (3) Պճնասիրութիւն. — Չարդասիրութիւն:
- (4) Մոլութիւն. — Ուղիղ ճամբէն շեղիլ:
- (5) Ունայն. — Ոչինչ, պտրապ:

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ. — Ո՞ր պարագային մէջ ընթերցանութեան սէրը կ'աւելնայ: — Ո՞րն է կանանց ամէնէն մեծ թշնամին: — Ըսէք թէ ի՞նչ հասկցար այս ընթերցուածէն:

62. Մ Ե Մ Մ Ա Յ Ր Ը

Կը քընանան , դարթի՛ր , մեծ մայր սիրական :
Յարդ քունիդ մէջ բերանդ ըստէ՛յ կը շարժէր ,
Ձի աղօթքներդ ալ քու նինչիդ⁽¹⁾ են նրման .
Բայց արձանն ես կարծես Կոյսին այս գիշեր .
Շրթունքդ անշարժ և մեղմիկ շունչդ է լըռեր :

Ինչո՞ւ ճակատդ այդպէս կ'իյնայ վայրահակ⁽²⁾ .
Մենք ի՞նչ ըրինք որ ա՛լ ըզմեզ չեն սիրեր .
Ջահն է սովոյն , և կը մըխայ մերկ կըրակ .
Եթէ լըռես , պիտի մեռնինք մենք անտէր ,
Մենք , կանթեղնիս , վառարանին հուսկ⁽²⁾ կայծեր :

Յուրտ են ձեռքերդ . աչքերըդ շո՛ւտ թող բացուին :
Գուն կ'ըսէիր . աչխարհք մը կայ մեղմէ վեր .
Թէ կայ երկինք և գերեզման , կեանքն է սին⁽⁴⁾ .
Մահուան վըրայ կը խօսէիր անվեհեր⁽⁵⁾ .
Ի՞նչ է մահը , մայրի՛կ , ինչո՞ւ չես ըսեր :

Սուրբ Գիրքդ՝ աղուսը պատկերներով՝ մեզ ցուցո՞ւր ,
Երկինքն ոսկի , կապոյտ սուրբն ու սրբունին ,
Մանուկն Յիսուս , եղն ու մողերն⁽⁶⁾ ու մըսուր .
Մեզ կարդացո՞ւր մաստովդ էջերն այն լատին ,
Որոնք Տէրոջ՝ միշտ մեր վըրայ կը խօսին :

Մեծ մայր . . . : Տակաւ կը մարմըրի լոյսն ահա ,
Ըստուերն ուրախ սեւ երդին⁽⁷⁾ շուրջ կը յածի⁽⁸⁾ ,
Ոգիները գուցէ մաննն ներս հիմայ . . . :
Ո՛հ , արթնցի՛ր , ձդէ՛ աղօթքդ ա՛լ մէկդի ,
Վա՞խ կու տաս արդ , սի՛րտ կու տայիր միշտ մեզի : »

Այսպէս ի դո՛ւր հեծկրլտացին անյարիր⁽⁹⁾ .
 Այդն⁽¹⁰⁾ արթնցաւ , կը քնանար դեռ հանին .
 Զանգակն հնչեց խուլ հարուածներ օղային ,
 Եւ անցորդ մը տեսաւ դուռնէն հիւղակին
 Թափուր⁽¹¹⁾ մահճին , Սուրբ Գրքին քով լալապին՝
 Որք տղաքն որ կ'աղօթէին ծնրադիր :

ՎԻՔԹՅՈՒ ՀԻԻԿՅՈ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- (1) **Նիւջ.** — Գուն :
- (2) **Վայրահակ.** — Դէպ ի վար ծուած :
- (3) **Հուսկ.** — Վերջին :
- (4) **Սիւն.** — Զնչին , փուճ :
- (5) **Անվեհեր.** — Աներկիւղ :
- (6) **Մոգ.** — Մարաց և հին Պարսից մէջ՝ կղերական :
- (7) **Երդ.** — Տանիք :
- (8) **Յաժիլ.** — Պտըտիլ , շրջիլ :
- (9) **Անյարիր.** — Անշարժ :
- (10) **Այգ.** — Արշալոյս :
- (11) **Թափուր.** — Պարսպ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչո՞ւ այս տղաքը իրենց մեծ մայրը Ս. կոյսին արձանին կը նմանցնեն : — Ի՞նչ կը հարցնեն տղաքը իրենց մեծ մօր՝ այս ոտանաւորին երրորդ տունին մէջ : — Ի՞նչ կ'ուզեն որ ցոյց տայ իրենց Ս. Գրքին մէջ : — Ինչո՞ւ այս տղաք Հասիւն Էջեր կ'ըսեն Ս. Գրքին էջերուն : — Ինչո՞ւ մեծ մայրը չէր պատասխաներ :

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

18. **Ն Ա Մ Ա Կ**

Իբրեւ մրցանակ լուսանկարներու գեղեցիկ սեւրակ մը ստացած էք . կը նկարագրեք զայն ձեր բարեկամին , եւ կը խնդրեք իրեք որ իր կենդանագիրը դրկէ ձեզի : — Բացատրել թէ ինչո՞ւ կ'ուզեք զայն ունենալ , թէ այդ կենդանագիրը ի՞նչ պիտի յիշեցնէ ձեզի :



63. ՅԱՅՏԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Յայտադրիւր կը կոչուին այն ջերմուկները⁽¹⁾, որոնց ջուրերը երկրէն դուրս կը ժայթքին. անոնք մեծ քանակութեամբ ջուրի շոգի կ'արտադրեն: Յայտադրիւրներ կան Իսլանտայի⁽²⁾, Նոր Զելանտայի⁽³⁾ և Միացեալ Նահանգաց մէջ:

Յայտադրիւրները ամէնէն առաջ ուսումնասիրուեցան

Իսլանտայի մէջ, ուր հշանաւոր են Մեծ Յայտադրիւրը
և Նոր Յայտադրիւրը :

Իսլանտայի Մեծ Յայտադրիւրը³ հանդարտ եղած
ատեն՝ եթէ քովը մօտենաս, մեծ տաշտածե⁽⁴⁾ շրջապատ մը
կ'երևայ, որուն մէջտեղէն թանձր ամպանման շողի մը
կ'ելլէ. այդ տաշտին⁽⁵⁾ մէկ մասը լեցուած է տաք ջու-
րով, ապակիի նման յստակ, որ ծանր ծանր եռալով կը
շարժի : Զուրին ժայթքումի⁽⁶⁾ ժամանակը որոշ չէ, բայց
երբ գետնին տակէն թնդանօթի ձայնի նմանող աղմուկներ
լսուին, ջուրը հետդհետէ կ'սկսի եռալ : Տաշտին մէջի
ջուրը յանկարծ ուռենալով դէպի վեր կը բարձրանայ ան-
կանոն ժայթքումներով. քիչ ետքը ահարկու ջրեղէն սիւն
մը կը ցցուի՝ թանձր շողիով պատած : Օդը կը լեցուի շողիի
ամպերով որոնք կը թաւալին մէկ մէկու վրայ, և այն
ամպերուն մէջէն կը տեսնուին ջրեղէն սիւները, որոնց
փրփուրները ամէն կողմ կը տարածուին : Զուրին մէկ մասը
շողի կը դառնայ, և մեծ մասը անձրեւի նման գետին կ'իջնէ :

Երբ տաշտին մէջէն ջուրը դուրս ցայտել սկսի, երփ-
նազան⁽⁷⁾ գոյներու հիանալի տեսարան մը կը պարզուի,
բայց երբ սաստկանայ ժայթքումը, բոլոր գոյները կը
կորսուին և ճերմակը կը տիրապետէ : Ժայթքումը կը
շարունակէ մինչև որ տկարանայ այն ուժը որ երկրիս
խորէն դուրս կ'արձակէ եռացեալ ջուրը :

Միացեալ Նահանգաց ցայտադրիւրները կը գտնուին
Ելլօսթոնի աղգային դարաստանին (8—9) մէջ. ութսու-
նըչորս ցայտադրիւրներ կան հոն. անոնց գլխաւորներէն
Հսկայ կոչուածին ժայթքումները կը բարձրանան մինչև
60 մէթր. Մեղուի Փերակին ջուրերը կը ժայթքին մինչև
70 մէթր. Մեր Հաւասարիս կոչուած ցայտադրիւրը կը
լորբոքի վաթսուներհինգ վայրկեանը անգամ մը : Ելլօս-
թոնի մէջ այս հրաշալի երևույթը կը ներկայանայ փառա-
ւոր շքեղութեամբ մը, որ զմայլանք կ'ազդէ դիտողին :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Ջերմուկ.** — Տաք ջուրի աղբիւր:
- (2) **Իսլանսա.** — Հիւսիսային Սառուցեալ ծովուն մէջ դանիական մեծ կղզի:
- (3) **Նոր Զելանսա.** — Ովկիանիոյ մէջ անգղիական երկու կղզիներ, զորս կը բաժնէ ֆուքի նեղուցը:
- (4) **Տաւսանի.** — Տաշտի ձեւ ունեցող:
- (5) **Տաւս.** — Նաւակի ձեւով փայտեղէն անօթ:
- (6) **Ժայթօւմ.** — Պոռթկալը:
- (7) **Միֆնագան.** — Զանազան գոյներով:
- (8) **Գարասան.** — Ծառազարդ շրջափակ տեղ մը, որտարդուծեան կամ պտոյտի յատկացած:
- (9) **Ելլօսթոնի դարասանը.** — Այս դարաստանը կը վերաբերի Միացեալ Նահանգներու կառավարութեան 1872էն ի վեր: Ամէն տարի բազմաթիւ զբօսաշրջիկներ հոն կ'երթան ցայտաղբիւրները դիտելու:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ են ցայտաղբիւրները եւ ո՞ւր կը գտնուին — Ի՞նչ է Իսլանտան — Նոր Զելանտա՞ն — Իսլանտայի մեծ ցայտաղբիւրին հանդարտ եղած ժամանակ, եթէ քովը մօտենաւ, ի՞նչ կը տեսնես — Ի՞նչպէս տեղի կ'ունենայ ցայտաղբիւրներուն ժայթքումը — Միացեալ Նահանգներուն մէջ քանի՞ ցայտաղբիւր կայ — Հսկայ ցայտաղբիւրը քանի՞ մէթր կը բարձրանայ — ո՞ւր է Ելլօսթոն:

64. ՊԶՏԻԿ ԿՈՅՐԻՆ ՔՈՅՐԸ

Տընիզ այնպէս կը ցուցնէր որ ամէն բանի մէջ պէտք ունի Կռասիէնին, և իր գարծերուն մէջ՝ միշտ բան մը կը յանձնէր անոր: Երբեմն այծերուն կոտորչները բռնել կու տար՝ զանանք կլթած միջոցին, երբեմն ոչխարները՝ երբ կը պառկեցնէր զանոնք բուրդերնին խուղելու⁽¹⁾ հա-

մար . մերթ կողովները՝ կասքենիներուն⁽²⁾ ներքե , երբ կը ժողովէր թափոցէն⁽³⁾ կամ հովէն գետինը ինկած շագանակները . մերթ իր բրիչը , քաղահանը⁽⁴⁾ և տրամուխը⁽⁵⁾ , երբ մարդը կ'ելլէր անոր առջեւէն իր աղեկատը մանելով , և ձայնով կամ ձեռքով առաջնորդելով զայն , որպէս զի տախտակէ կամուրջէն կամ վտակին հունէն⁽⁶⁾ դուրս չելլէ : Այն ատեն իր գոգնոցին ծայրը անոր ձեռքը կու տար , ինչպէս կ'ընէ ճշմարիտ մայր մը զաւակներուն՝ դեռ ինքնիրեննին քալել չսկսած :

Երբ հողը կը փորէին ցանքէն առաջ , բրիչ մը կու տար ձեռքը և կը նստեցնէր զայն արտին ծայրը , իր քով , որպէս զի կարծէ թէ ինք ալ ուրիշներուն հետ գործ կը տեսնէ , և երբ իր գծէն դուրս ելլելով դէպ ի ձախ կամ դէպ ի աջ երթար , կամացուկ մը արմուկէն կը բռնէր և ուղիղ գծին վրայ կը բերէր :

Եւ եթէ արտին այդ մասը աղէկ փորուած չլլար , եթէ Կոասիէն աղամայ խոտի գուղձեր⁽⁷⁾ կամ քաբեր ձգած ըլլար , բան մը չէր ըսեր անոր որ չվշտանայ , և հետեւեալ օրը , ինք անձամբ եղբօրը աշխատութեան վրայէն կ'անցնէր :

Փոխանակ անոր ըսելու որ իր աշխատանքը բանի մը չէր ծառայեր , կը քաջալերէր զայն , իբր թէ լաւ մշակ մը եղած ըլլար , և կ'ըսէր . «Մեր երկուքին գործերուն միջև տարբերութիւն չկայ , Կոասիէն :»

Միշտ կը ջանար որ , թէ՛ դաշտը և թէ՛ տունը՝ եղբօրը մօտերը կենայ անոր օգնելու համար ամէն բանի մէջ . հացը կտրելու , բաժակը ձեռքը տալու , գաւաթը լեցրնելու , նստարանին վրայ անոր տեղ բանալու : Երբ հետը մինակ մնար , կարծես բարձրաձայն կը մտածէր՝ կէս մը զայն իր կեանքին տեղեակ ընելու համար :

Չկար մտէս⁽⁸⁾ մը ծակին մէջ , ծիծեռնակ մը բոյնին մէջ , սարսիհնայի⁽⁹⁾ տերև մը սլատին վրայ , կայծ մը

կրակարանին մէջ որոնց մասին չխօսէր անոր, որպէս զի ժամանակը երկար չերեւայ խեղճ վշտացեալին :

Եւ ան իրապէս չէր զզար բնաւ իր կոյր ըլլալը երբ քոյրը քովը ըլլար, և միշտ իր քովն էր անիկա :

ԼԱՄԱՌԹԻՆ⁽¹⁰⁾

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **ԽՈՒՂԵԼ.** — Անասուններէն մազը կամ բուրդը կտրել :
- (2) **ԿԱՄԲԵՆԻ.** — Շագանակի ծառ,
- (3) **ԹԱՓՈՑ.** — Պտուղ թափելու սահմանուած փայտ :
- (4) **ՔԱՂԱԿԱՆ.** — Դաշտին զէշ խոտերը հանելու գործիք :
- (5) **ՏՐԱՆԼԻ.** — Ակռաներով գործիք մը որով հողը կը հաւասարեցնեն և հունտերը կը ծածկեն :
- (6) **ՀՈՒՆ.** — Գետին այն մասը ուրկէ կտրելի է անցնիլ առանց լողալու :
- (7) **ԳՈՒՂՃ.** — Քիչ մը հող :
- (8) **ՄՈՂԷԱ.** — Չորս տոտիկով ու երկայն պոչով սողուն մը (+էրբէն+էլէ) :
- (9) **ՍԱՐՓԻՆԱՅ.** — Փայտ, որուն վրայ խաղողի տունկը կը փամթուռի :
- (10) **ԼԱՄԱՌԹԻՆ.** — Ֆրանսացի բանաստեղծ : [...հալէի :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Տընիզ ի՞նչ գործ կը յանձնէր եղբօրը : — Ինչո՞ւ կ'աշխատցնէր զայն : — Մարզը ելած ատենին ի՞նչ կու տար անոր ձեռքը : — Երբ հողը փորէին ցանքէն առաջ, ի՞նչ ընել կու տար անոր, — Ի՞նչ է ցանքը : — Եթէ եղբայրը աղէկ հերկած չըլլար, ի՞նչ կ'ընէր : — Ինչո՞ւ կ'ուզէր միշտ եղբօրը քով գտնուիլ : — Երբ երկուքը մինակ մնային ի՞նչ կ'ընէր : — Ի՞նչ կը մտածէր Տընիզի բնաւորութեան մասին : — Ո՞վ է Լամարթին :

65. Բ Ո Ւ Ն

«Ինչ տխուր է բուին ձայնը զիշեր ատեն»,
Հեծեց մայրը : Ո՛հ, կիները միշտ բուն կ'ատեն :
Եւ պաշարուած սեւ անդոսով⁽¹⁾ մ'ու սրտալեկ⁽²⁾
Բարախեցին աչքերն յանկարծ վախով՝ բեկբեկ⁽³⁾ :

Ձոյգ գըլուխներ իր քով դանդուր⁽⁴⁾ և ոսկեթել,
Ձոր լամպարին կու դար ճերմակ շողքն արծաթել,
Լուռ, մըտամիտի, հակած իրենց գրքին վըրայ,
Կը գըրէին իրենց դասերն ամենօրեայ :

Առոյգ մարդ մը իրենց հայրը, աշխոյժ մտքով,
Բաղկաթողին խորն ընկըղմած կըրակին քով,
Կը թղթատէր հընամենի⁽⁵⁾ հատոր մ'ըստուար :
Տանիքներէն անձրեւն անդուլ կը թափէր վար :



Բուրսը, կ'ոռնար ամպրոտն⁽⁶⁾ ուժգին մոլեղնօրէն .
Քամին⁽⁷⁾ կոծեր⁽⁸⁾ կ'արթնցընէր հովտին խորէն,
Եւ կը լըսուէր լացը բուին թախծոտ⁽⁹⁾, երկա՛ր,
Որ երդիքին վըրայ տրտում կը հեկեկար⁽¹⁰⁾ :
«Ձա՛յնըդ մարի, թռչո՛ւն», դոչեց մայրը կրկին .
«— Ինչո՞ւ, հարցուց, փոքրիկ աղջիկն աղերսագին .
«Մեղք է, մա՛յրիկ, խեղճ թռչունն ի՞նչ ըրաւ մեզի .
«Բուցէ թօնին⁽¹¹⁾ ու փոթորկին տակ կը մըսի :»
Ու ոտք ելաւ : Կէս գիշերուան մօտ էր արդէն .
Բուրսը, շուն մը կը կաղկանձէր⁽¹²⁾ սառած ցուրտէն :
Խաւարին մէջ անցուսութիւն մը կը հոսէր .

ՍԵ երկինք մը , սԵ անջրայեա⁽¹³⁾ մ'ու սԵ փոսեր :
Պատուհանէն հեռանալով , փոքրիկն ընդհուպ
Ոստում մ'ըրաւ վէտվէտելով⁽¹⁴⁾ ծամն ալեծուփ ,
Ճրրալն առաւ . «Ո՛ւչ է , ըսաւ , գիշե՛ր բարի» :
ԵԼ մասերովն իր վարդադեղ , լնչպէս հուրի⁽¹⁵⁾ ,
Համբուրիկներ ուղարկելով իր արփաւէտ⁽¹⁶⁾
Շրթունքներէն , ծաղկի նըման , թարմ ու համէտ⁽¹⁷⁾ ,
Խուցը ելաւ , շուշանադեղ բո՛յն կարապի :
«ՍԵ՛ղ , ըսաւ , խեղճ կենդանին կը տառապի .
«Ձէի՞ կրնար արդեօք մեղմել իր քաղցն ու ցաւ» :
Քաշեց վիժակն⁽¹⁸⁾ ու մեծ ճիգով փեղկը բացաւ :
Քիւլին⁽¹⁹⁾ կառչած⁽²⁰⁾ մազիկներովն⁽²¹⁾ իր նրբալար⁽²²⁾ ,
Սուգի թռչունն հոն չարաշուք⁽²³⁾ ձայնով կու լար ,
Տրտում հեծք մը թոցընելով , վայլուն⁽²⁴⁾ մը սուր ,
Որուն հովը իր սոյլերով⁽²⁵⁾ կու տար սարսուռ :

«Ի՛նչ տըխուր է» , գոչեց վարը մայրն այլայլած .
«Պէտք է վանել⁽²⁶⁾ սա կենդանին արտահալած⁽²⁷⁾» :
Հայրն այն ատեն վերցուց գըլուխն ու լուրջ , ըզգոյշ ,
Պահ մը ականջ դրրաւ ձայնին այդ մահագոյժ ,
Յետոյ , հրացանն առաւ , մըղեց փեղկն ամրակուռ⁽²⁸⁾
Ուրկէ ջուրը վար կը տեղար փրփուր փրփուր ,
Եւ մութին մէջ թարթափելով նշմարեց բուն .
(Անտանելի էր զայն լսել գիշերն ի բուն) :
Վերնայարկի պատուհանին առջև թառած
Թուխ գըլուխ մ'էր փետուրներով լայնատարած .
Նըշան առաւ , բա՛մբ , պայթեցաւ , բո՛յ վաղաշէջ⁽²⁹⁾ ,
Աղիողորմ⁽³⁰⁾ ճիչ մը գոռաց գիշերուան մէջ ,
Ճիչ մ'օրհասի⁽³¹⁾ որ թռչունին կառաչը⁽³²⁾ չէր ,
Իր աղջրկան ձայնն օգնութեան զինք կը կանչէր . . . :
Ո՛հ , հէ՛ք տըղայ , ի՛նչ փոյթ քեզի բուն օղաչու⁽³³⁾ .
Պատուհանէն դուրս հանեցիր գըլուխդ ինչո՞ւ :

Վազեց հայրը, մայրը, քոյրն ալ խելակորոյս :
Սննեակին մէջ գիշեր մըն էր անարշալոյս .
Ոսկի գիսակն⁽³⁴⁾ արիւնլըւայ, շրթունքը մունջ՝
Գեանին վըրայ փրոուած գըտան տըղեկն անշունչ :

Գուժկան⁽³⁵⁾ կառաջն հիմայ կու լար երդին⁽³⁶⁾ մօտէն :
Ի՛նչ տըխուր է բուին ձայնը գիշեր ատեն :

Ա.Ռ.Ա.Ծ. — Հագար շե,
Մեկ խօսե՛ .
Հագար խորհե,
Մեկ գործե :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ա.Գրոհ. — Սաստիկ վախ :
- (2) Սրտաբեկ. — Սիրտը կոտրած :
- (3) Բեկբեկ. — կոտրտած. հոս կը նշանակէ «ասդին անդին» շարժել :
- (4) Գանգուր. — Ուրրած, գռուզ (գըլըրճըր) :
- (5) Հնամենի. — Հին ժամանակներու յատուկ :
- (6) Ամպրոպ. — Փոթորիկ :
- (7) Բամի. — Սաստիկ հով :
- (8) Կոծ. — Ողբ, հառաչանք :
- (9) Թախծոս. — Տխուր :
- (10) Հեկեկալ. — Լալով հառաչել :
- (11) Թօն. — Սաստիկ անձրև :
- (12) Կաղկանձել. — Շունին լալը :
- (13) Ա.Գըրպե. — Տարածուածիւն :
- (14) Վէսվէսել. — Ալիքի պէս երերցնել :
- (15) Հսւրի. — Երեւակայական գեղեցիկ էակ :
- (16) Արփաւէ. — Արեւի պէս փայլուն :
- (17) Նամէ. — Խոնաւ :
- (18) Վ.իժակ. — Իջնող ելլող վարագոյր («ֆօր») :
- (19) Գիւ. — Շէնքի մը դուրս ցցուած եզերքը («աւի») :
- (20) Կառչիլ. — Տեղ մը բռնել կենալ :
- (21) Մագիլ. — ձանկ :

- (22) **Նրբալար.** — Բարակ:
- (23) **Չարաւոբ.** — Գէշ ազդող:
- (24) **Վայիւն.** — Հաց ու կոծ:
- (25) **Սոյլ.** — Սուլեկու ձայն:
- (26) **Վանել.** — Վանտել:
- (27) **Արսահալած.** — Դուրսէն հալածելով:
- (28) **Ամբակուռ.** — Հաստատ շինուած:
- (29) **Վաղաւէջ.** — Շուտ մարող:
- (30) **Աղիողորմ.** — Սիրտ յուզող:
- (31) **Օրհաս.** — Հոգեվարք:
- (32) **Կառայ.** — Թռչունի ձայն:
- (33) **Օղաչու.** — Օղին մէջ պտըտող:
- (34) **Գիսակ.** — Մազ:
- (35) **Գուժկան.** — Գէշ լուր տուող:
- (36) **Մրդ.** — Այստեղ կը նշանակէ «տանիք»:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մայրը ի՞նչ ըսաւ: — Ինչո՞ւ այդպէս ըսաւ: — Տղարը ի՞նչ կ'ընէին այդ պահուն: — Հայրերնին ինչո՞վ գրադած էր: — Օգը ի՞նչպէս էր: — Ի՞նչ ձայն կը լսուէր շարունակ: — Փոքրիկ աղջիկը ի՞նչ ըսաւ մօրը: — Յետոյ ի՞նչ ըրաւ: — Ինչո՞ւ սենեակէն մեկնեցաւ: — Երբ իր սենեակը գնաց, ի՞նչ ըրաւ: — Այդ միջոցին վարը ի՞նչ պատահեցաւ: — Հայրը ինչո՞ւ հրացանը առեր էր: — Ո՞վ սպաննուեցաւ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

19. ԱՂԷԿ ՆԱՅՈՒԱԾ ՏՈՒՆԸ

Սահակեանները հարուստ չեն: — Բայց Տիկին Սահակեան շատ խնամոտ կին մըն է: — Բացաւեցե՛ք թէ ի՞նչ կ'ընէ տունը առողջապահիկ պայմաններու մէջ պահելու համար: — Տանը մէջ օդը միշտ կը փոխէ (ի՞նչպէս), խոհանոցը մաքուր կը պահէ (նկարագրել թէ ինչ կանոնաւորութիւն կը տիրէ հոն):

66. ԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԱԳՈՒՄԸ

Նախամարդիկ⁽¹⁾ ռնգեղջիւրր բնաջինջ ըրին, և մեծ արջերու ձեռքէն առին անձաւներու⁽²⁾ ապաստանարանը: Ատկէ յետոյ, այն թուականին ուր ձին մամուլիս⁽³⁾ հետ անասուններուն ամէնէն հասարակ տեսակը կը կազմէր, քարէ զանազան գործիքներ զանազան աշխատութեանց կը յատկանային, պատերազմի, որսորդութեան, ձկնորսութեան, մշակութեան:

Քիչ ետքը, կայծքարէն⁽⁴⁾ ու գաւարզէն⁽⁵⁾ տարբեր նիւթ մը երեւան ելաւ գործարանատէրերու աշխատանոցներուն մէջ. անոնք կը գործածէին սրեղջերուներու⁽⁶⁾ ոսկորներն ու եղջիւրները. որսորդները, անտառներուն կամ արօտներուն⁽⁷⁾ մէջ, կ'սպաննէին այդ կենդանիները, որոնց օգտակարագոյն մասերը բնակարանին կը բերէին:

Գործաւորը, որչափ աւելի գործելու նիւթ ունեցաւ իր տրամադրութեան տակ, այնչափ աւելի ճաշակ, աւելի նախաձեռնութիւն⁽⁸⁾ ցոյց տուաւ իր աշխատութեան մէջ: Ոսկորներու վրայ մամուլի, սրեղջերուի, կիտազգիի⁽⁹⁾ պատկերներ փորագրելու արուեստը հնարեց, նոյն իսկ մարդկային ձեւեր ալ քանդակեց, թէպէտ կենդանիներէն նուազագոյն յաջողութեամբ: Սորվեցաւ դաշոյնի կոթերուն վրայ պատկերներ քանդակել:

Բուն իսկ արուեստը սկսեր ու գործադրուեր էր արուեստագէտներու կողմէ, որոնց անունը մշտնջենապէս կորսուած է:

ԷԼԻՁԷ ՌԸՔԼԻԻ⁽¹⁰⁾

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Նախամարդիկ. — Նախապատմական մարդիկ:

(2) Անձաւ. — Գարայր:

- (3) **Մամուր.** — Փրածոյ փիղի տեսակ մը որուն սերունդը անհետացած է. ոսկորները գտնուած են հողին տակ:
- (4) **Կայծքար.** — Կարմիր քար մը (շֆֆֆ Բ-ը):
- (5) **Գաւարգ.** — Շատ կարծր քար մը:
- (6) **Սրեղջերու.** — Տեսակ մը եղջերու որ հիւսիսային ցուրտ երկիրներու մէջ կը գտնուի:
- (7) **Արօս.** — Ոչխարներուն և արջառներուն ճարակելու տեղը:
- (8) **Նախաձեռնուրիւն.** — Ամէնէն առաջ բան մը ընել կամ առաջարկել:
- (9) **Եիսազգի.** — Այսպէս կը կոչուին ծովուն մէջ ապրող կաթնկեր անասունները, ինչպէս կէտերը, դլփինները, և այլն:
- (10) **Էլիզէ Ռըֆլիւ.** — Նշանաւոր ֆրանսացի աշխարհագիր, հայասէր, մեռած 1905ին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչ տեսակ կենդանի է ռնգեղջիւրը: — Որո՞նք եղան նախամարդոց առաջին գործիքները: — Ամէնէն առաջ ի՞նչ արուեստներ հնարեցին մարդիկ:

67. ԵՐԱՒՏԱԳԷՏ ԱՐՄՈՒԻԿԸ

Հնդիկ տղեկ մը, Վատկելիւս սարերուն վրայ որսորդութիւն կ'ընէր, երբ ժայռի մը ստորտը արծուիկ մը գտաւ, որուն թեւերը խորտակուած էին: Կ'երեւայ թէ ձագուկը վար ինկեր էր բարձրաբերձ սարին կատարը⁽¹⁾ զետեղուած⁽²⁾ բոյնէն: Այնքան փոքր էր տակաւին որ չէր կրնար թռչիլ, և ինկած ատենը վիրաւորուել էր:

Վատկելիւսն տեսնելով որ իր ոտքերուն տակ ինկած թռչունը ցաւէն կը դողդղար, գլխաց անոր վրայ: Վիրաւոր թռչունին և փոքրիկ Հնդիկին աչքերը իրարու հանդիպեցան, և պահ մը իրարու նայեցան: Արծուիկին վայրագ դայրոյթը⁽³⁾ իսկոյն լիջաւ, և թողուց որ Վատկելիւսն ձեռքը մօտեցնէ և շոյէ իր աղտոտ վետուրները: Ինք-

զինքը պաշտպանելու, կուռելու կատաղի ցանկութիւնը⁽⁴⁾ խակոյն ամոքեցաւ⁽⁵⁾ փոքրիկ տղուն փաղաքշանքներէն և զթոտ գուրգուրանքներէն: Այդ վայրկեանէն վառւկեւման և արծուիկը բարեկամ եղեր էին:

Վիրաւոր թռչունը դրկած, տղան դէպ ի հօրը անակը վազեց. բայց այնքան զղուշութեամբ կը տանէր արծուիկը որ կենդանին իր խոցուած⁽⁶⁾ թեւերուն ցաւը չէր զգար, և հանգիստ նստած, բնաւ չփորձեց իր սև կառւոյով զինքը բռնող ձեռքը խածնել:

Երբ տուն հասաւ վառւկեւման, դաղջ ջուրով լուաց թռչունին ջախջախուած⁽⁷⁾ թեւերը, փափուկ կաշիով կապեց, յետոյ անակին մէկ անկիւնը յարդէ և խօտէ բոյն մը շինելով, թռչունը մէջը տեղաւորեց:

Տղուն մայրը գոհ էր անոր այս հողածութիւնը տեսնելով հէք կենդանին նկատմամբ, բայց հայրը երբ տուն դարձաւ, ուզեց բռնել արծուիկը և վիզը ոլորել, սակայն մանուկը այնքան աղաչեց պաղատեցաւ, որ բիրտ որսորդը վերջապէս հաւանեցաւ պահել այդ գող անասունը մինչև որ առողջանայ և կարենայ թռչիլ, պայմանաւ որ յետոյ տանի հեռուները արձակէ:

Ամիսէ մը արծուիկին թեւը բուժուեցաւ⁽⁸⁾, և տղուն խնամքներով այնքան կազդուրուեցաւ ու զօրացաւ, որ սկսաւ թռչիլ: Վառւկեւման անոր մօտ կը նստէր՝ գուրգուրանքով հետը կը խօսէր, և իրենց մտերմութիւնը այնքան սաստկացաւ որ թռչունը չէր կրնար բաժնուիլ անկէ:

Վերջապէս եկաւ ժամանակը որ աղատութիւն տայ այդ օղաչու գերիին: Վառւկեւման առաւ տարաւ զայն գիւղէն շատ հեռու ամայի տեղ մը ուր ոչ որսորդ կար, ոչ ալ մէկը կրնար տեսնել գիրենք, և ազատ արձակեց արծուիկը:

Վայրենի թռչունը իր աղատութենէն գոհ, խակոյն դէպ ի վեր սլացաւ⁽⁹⁾, դէպ ի երկինք լայն լայն շրջաններ

գծելով օղին մէջ : Բայց երբ Վատկեւիան կ'ուզէր հեռա-
նալ , արծուիկը խկոյն վար իջաւ , և մինչև իրիկունս չհե-
ռացաւ մանուկէն անոր որսորդութեան միջոցին :

Իրիկունս , երբ աղան ճամբայ ելաւ դէպ ի իր բնա-
կավայրը , թռչունը ուղեկցեցաւ անոր , բայց Վատկեւիան
պահուլտեցաւ ծառերուն խիտ սաղարթներուն⁽¹⁰⁾ տակ
և աներեւութացաւ : Արծուիկը երկար ատեն փնտռեց
դայն , երկար ատեն սաւառնեցաւ աչքերը շուրջը յածե-
լով , վերջապէս յամբ յամբ ու տխուր հեռացաւ դէպ ի
լեռները :

Ամառը անցաւ . եկաւ ձմեռը , ու յետոյ հասաւ գա-
րունը վերստին , բերելով իրեն հետ նորանոր ծաղիկներ
և բազմաթիւ ձուկեր գետերուն և լիճերուն մէջ : Այդ
եղանակին՝ բոլոր Հնդիկները ձկնորսութեան կ'ելլին : Ա-
պահոկի մեծ ջրվէժին վերև , սաղմոնները⁽¹¹⁾ կը վխտային
արագ գետին սառնորակ⁽¹²⁾ հոսանքին մէջ , կը գահավի-
ժէին⁽¹³⁾ ափերուն մօտ գտնուած խարակներուն վրայ , և
այնպէս բարձրերը կը ցատքէին որ կարծես կ'ուզէին օղին
մէջ թռչիլ : Ոչ մէկ տեղ կարելի էր այնքան գեղեցիկ սաղ-
մոններ գտնել որքան Ապահոկի ջրվէժին վերև , բայց
ճարտար ձկնորսներէն շատ քիչերը կը համարձակէին այդ
տեղ որսալ , որովհետև հոսանքը շատ բուռն⁽¹⁴⁾ էր , և
եթէ ձկնորսը որոշ տեղէն քիչ մը վար իջնէր և իյնար ա-
րագ հոսանքին մէջ , այլ ևս անհնար էր որ ազատէր
սասակամուռնչ⁽¹⁵⁾ ջրվէժէն :

Ապրիլի գեղեցիկ օր մը , արեգակը հազիւ լուսաւորեր
էր սարերու դադաթները , երբ Վատկեւիան իր նաւակը
Ապահոկի ջրվէժէն կէս մղոն հեռու ջուրը իջեցուց : Ոչ մէկ
հնդիկ պատանի համարձակած էր տակաւին ջրվէժին
վերև որսալ , բայց Վատկեւիան յաճախ դացած էր այդ
տեղ , որովհետև քաջ դիավար էր :

Այն առտուն , զեռ լոյսը չձագած գործի սկսեր էր :

Ափին մօտ տեսաւ մեծ դեղեցիկ սաղմոն մը , որ արծաթէ ժապաւէնի մը պէս կ'անցնէր կը դառնար իր նաւակին մէկ կողմէն միւսը խայտալու(16) : Վառակեւի վերջապէս բռնեց փայլուն ձուկը , և այնպէս յափշտակուեցաւ իր որսով , որ չնչմարեց ջրվէժին մօտենալը , և այն ատեն միայն սթափեցաւ(17) երբ նաւակը յանկարծ երկու ժայռերուն մօտէն արագ լողաց և առաջ անցաւ : Տղան խկոյն հասկցաւ սպառնացող վտանգը , շտապով ձեռք առաւ թին և սկսաւ նաւակը մէկ կողմ թեքել(18) : Նաւակը դողդղաց և սկսաւ ծանր ծանր հոսանքին հակառակ՝ ափին մօտենալ : Բայց յանկարծ թիակը հոսանքին դէմ խորտակեցաւ : Վառակեւի անաբեկ ճիչ մը արձակեց , փոքրիկ կտորած թիակով կռուիլ սկսաւ հոսանքին դէմ . այլ անհնար էր :

Այն ատեն դեռատի Հնդիկը ծունկի եկաւ նաւակին մէջ և ձեռքերը խաչաձեւեց : Դէմքը սուր և խրոխտ(19) արտայայտութիւն մը առաւ , ու պատրասուեցաւ արիութեամբ(20) մեռնելու :

Նաւակը արագ արագ կը մօտենար ջրվէժին . ափերուն սև խարակները տեսիլքի պէս կը սահէին աչքին առջեւէն . ջուրին դահավիժման անեղ դոռումը կը խուլցնէր հէք պատանին : Քանի մը բոսլէ ետքը , ամէն բան պիտի վերջանար :

Յանկարծ նաւակին վրայ ստուեր մը ինկաւ : Վառակեւի վան աչքերը բարձրացուց , ու մեծ արծիւ մը տեսաւ , որ ոտքերը դէպ ի վար պարզած , ու թեւերը բացած կը թռչէր : Պատանին ու արծուին աչքերը իրարու հանդիպեցան . բայց այս անգամ ուժը արծուին կողմն էր :

Պատանին դուարթ ճիչ մը արձակեց և ոտք ելաւ , իսկ արծիւը հետզհետէ վար կ'իջնէր : Ջրվէժին վերև ալիքը արդէն կը բախէր նաւակին , երբ պատանին ձեռքը բարձրացուց և բռնեց արծուին ոտքերէն : Եւ ահա՛ պահիկ մը

եաքը օղին մէջ էր : Դատարկ նաւակը ընկղմեր էր մռայլ փրփուրներուն ներքեւ , իսկ Վառուկեւիան կախուած արծուին օտքերէն , կը թռէր ջուրին փոշիացող ամպերուն մէջէն : Ջուրին ցայտքերը կը շրայնէին զինքը , քամին ուղղակի երեսին կը փչէր . բայց արծիւը անվեհեր⁽²¹⁾ կը կրունէր բոլոր արգելքներուն դէմ , ու յաջողեցաւ վերջապէս իր բնօրն հետ դուրս ելլել խաւարէն և ջուրի ցայտքերէն : Իր ահագին թեւերը կը կարէին անջրպետը : Հետըզհետէ վար կ'իջնէր , բայց արդէն շատ հեռացած էր ջուրի յորձանքներէն և ոլորաններէն⁽²²⁾ :

Վերջապէս , թեւերը քանի մը անգամ ուժգին թափահարելով , իջաւ ջրվէժին ներքեւ գտնուած աւազուտին վրայ : Թէ արծիւը , թէ պատանին ուժասպառ և շնչատգեանը փռուեցան : Բիչ եաքը , արծիւը սթափուցաւ , թեւերը ուղղեց և յանկարծ սլացաւ վեր : Իսկ փոքրիկ Հընդիկը ծունկի եկած՝ իր աչքերով կը հետեւէր մեծ թռչունին , մինչև որ անհետացաւ երկնաբերձ⁽²³⁾ ապառաժներուն ետին :

ԹԱՎԾԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Կասար. — Լերան գլուխ :
- (2) Ջեհեղուած. — Տեղաւորուած :
- (3) Ջայրոյք. — Բարկուծիւն :
- (4) Տանկուրիւն. — Մեծ փափաք :
- (5) Ամոքիլ. — Հանդարտիլ :
- (6) Խոցուած. — Վիրաւորուած :
- (7) Ջախջախուած. — Կոտորուած :
- (8) Բուժուիլ. — Աղէկնալ :
- (9) Սլանալ. — Թռչիլ :
- (10) Աադարք. — Տերևոտ եիւղեր :
- (11) Սաղմոն. — Երկար մարմնով տեսակ մը ձուկ :
- (12) Սառնորակ. — Սառի պէս սառ :
- (13) Գահապիժիլ. — Իյնալ :

- (14) **Բուռն.** — Սաստիկ
- (15) **Սասկամուռնչ.** — Շատ ուժով ձայն հանող
- (16) **Խայսալ.** — Յատքուտել
- (17) **Սրափիլ.** — Խելքը զուխը զալ
- (18) **Թեֆել.** — Ծռել
- (19) **Խրոխս.** — Հպարտ
- (20) **Արիուքիւն.** — Քաջուձիւն
- (21) **Անվեհեր.** — Անվախ
- (22) **Ոլորս.** — Շրջան, պտոյտ
- (23) **Երկնաքերձ.** — Երկինքին հասնող

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

20. Գ Ա Ր Ո Ւ Ն

Նկարագրել քե ձիւները հայելի վերջը, հողը ի՛նչ կ'ըլլայ. ծառերը ի՛նչ փոփոխուքիւն կը կրեն. երկինքը ի՛նչ երեւոյթ կ'ստանայ. անտառներուն մէջ ի՛նչ հիւրեր կու գան. օդը ի՛նչ կ'ըլլայ. մարդիկ եւ տղաք ինչո՛ւ հանոյք կ'զգան :

68. ԱՐՏՈՅՏԻՆ ԵՐԳԸ

Ուրախութեան ձայնիկն եմ եւ
Որ նորազարթ կ'եղլեմ մարգէս.
Ես կը տանիմ երկրէն բարեւ
Երբոր աւտուն ծագի արեւ :

Խողաններէն⁽¹⁾ ցողասպիտակ
Ես կը մեկնիմ. և ոտքիս տակ
Կը ծածանի թելիկ մ'արծաթ.
Շաղը կ'օժէ մարդարտակաթ՝
Փետուրներըս դոհար լոյսով
Զոր կը ցանեմ օդին մէջ զով :

Ես կը թըռիմ ու կ'երգեմ յար
 Այգափրթիթ⁽²⁾ լուրթին⁽³⁾ մէջ վառ,
 Լայն լոյսին մէջ լուալով դիտ,
 Եւ ջինջ ալեակն է հայելիս:

Չայնըս չունի շեշտ վշտալուր.
 Ես չեմ խօսիր ցայգին⁽⁴⁾ տըխուր.
 Խօլ և առոյգ երգն եմ անգին
 Չուարթ յոյսի և թարմ կեանքին:

Զ. Ա.

ԼԱՐՌԱՏ

ԲՍՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Խոզան. — Խոզած ցորենի կոծ:
- (2) Այգափրթիթ. — Առտուն բացուող:
- (3) Լուրթ. — Կապոյտ:
- (4) Ցայգ. — Գիշեր:

69. Պ Ա Ր Ծ Ե Ն Ք Ո Տ Ը

Կը տեսնեմ ամենուրեք մարդիկ որոնք շարունակ իրենց վրայ կը խօսին. իրենց խօսակցութիւնը հայլի մըն է, որ միշտ իրենց լիրբ դէմքը կը ցոլացնէ: Կը խօսին անոնք իրենց պատահած ամէնէն ոչինչ բաներուն վրայ. ամէն բան իրենք ըրած են, ամէն բան լսած, ամէն բան տեսած, ամէն բան խորհած, համաշխարհիկ⁽¹⁾ տխար մըն են, համեմատութեան անսպառ նիւթ մը, օրինակներու անցամաքելի աղբիւր մը: Ո՛հ, ս'ըչափ անհամ է գովեստը երբ իր մեկնած տեղը կ'անդրադառնայ⁽²⁾:

Քանի մը օր առաջ, այս նկարագրին տէր մարդ մը երկու ժամ հողինիս բերաննիս բերաւ խօսելով իր անձին, իր արժանիքին, իր տաղանդներուն վրայ. բայց ըստ ու

րում աշխարհիս վրայ մշտնջենական շարժում չկայ, դադարեցաւ խօսելէ: Ուստի խօսակցութիւնը մեղի մնաց, և սկսանք:

Մարդ մը, որ բաւական սրտնեղած կ'երեւար, կը դանդատէր ձանձրալի խօսակցութիւններէն. «Այս ի՞նչ է միշտ տխամար մարդիկ, որոնք շարունակ ինքզինքնին կը պատկերացնեն և ամէն բան իրենց կը վերագրեն»:

— Իրաւունք ունիք, յարեց յանկարծ մեր ճառախօսը, ամէն մարդ ինծի պէս ընելու է. ես երբեք ինքզինքս չեմ գովեր. հարստութիւն ունիմ, ազնուական եմ, շատ դրամ կը ծախսեմ, բարեկամներս կ'ըսեն թէ բաւական խելքի տէր եմ, բայց երբեք այս բաներուն վրայ չեմ խօսիր. ունեցած մէկ քանի յատկութեանցս մէջ, ամէնէն աւելի համաատութիւնս է որուն կարեւորութիւն կու տամ:

Կ'սքանչանայի այս վրբ մարդուն վրայ, և մինչ բարձրաձայն կը խօսէր ան, ինքնիրենս կ'ըսէի. «Երանի անոր որ ինքզինքը երբեք չգովելու չափ մնափառութիւն⁽³⁾ ունի, որ կը վախնայ զինքը մտիկ ընողներէն, և իր արժանիքը չի վտանգեր ուրիշներուն հպարտութեանը դպչելով:»

ՄՕՆԹԵՍԷԻՏ⁽⁴⁾

ԱՌԱՄ. — Փխսիկն ունի հաց ու պանիր
Գիշերը ֆռնը չի սանիր:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Համաեխարհիկ. — Բոլոր աշխարհքին վերաբերող
- (2) Անդրադառնալ. — Նորէն դառնալ
- (3) Մնափառութիւն. — Ոչինչ բաները ինքզինքին փառք սեպել
- (4) Մօնթէսէիտ. — Ֆրանսացի նշանաւոր հեղինակ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ ըսել է «իրենց խօսակցութիւնը իրենց դէմքը կը ցոլացնէ» խօսքը: — Քանի մը օր առաջ ի՞նչ պատահեր է: — Սրտնեղած մարդը ի՞նչ ըսաւ: — Ի՞նչ պատասխանեց ճառախօսը: — Ի՞նչ կը մտածէր այս մարդուն վրայ:

70. ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ

Փարոսի⁽¹⁾ աշտարակը, որ Պտղոմէոս⁽²⁾ եղբայրասէրի հրամանով կառուցուեցաւ, աշխարհիս եօթը հրաշալիքներուն կարգը դասուած էր, և անոր անունովը կոչուեցան բոլոր նամանորինակ շէնքերը որոնք նաւորութներուն ճամբան լուսաւորելու սահմանուած էին:

Քառակուսի մեծ շէնք մըն էր ասիկա ճերմակ մարմարէ, բազմաւայրկ, որոնց ամէնէն վրայինը պատշգամի ձև ունէր, և հոն ամէն գիշեր ահագին խարոյկ⁽³⁾ մը կը վառէին, որպէս զի նաւազները շատ հեռուէն կարենան տեսնել և ճամբանին դանել:

Այս հրաշալի փարոսին յատակագիծը⁽⁴⁾ պատրաստող և շինութեանը հսկող ճարտարապետը Սոստրակ կը կոչուէր: Այս մարդը ուզելով գործին հեղինակութեան⁽⁵⁾ փառքը իրեն սեփականել ապագային, և չհամարձակելով իր անունը նշանակել իշխանին անուան քով, նորանշան հնարք մը ի գործ դրաւ. շէնքին քարը կիրի խաւով մը ծեփեց⁽⁶⁾, և վրան հոյակապ արձանագրութիւն⁽⁷⁾ մը փորագրեց ի պատիւ Եգիպտոսի թագաւորին. բայց այդ դիւրարեկ⁽⁸⁾ ծեփին ներքեւ ուրիշ մը քանդակած էր մարմարիոնին վրայ, այնպէս որ դար մը ետքը, կիրը թափելով, այլ ևս Պտղոմէոսի անունը անհետացաւ, և միայն հետեւեալ քառերը երեւան ելան խոշոր գիրերով դրոշմուած. «Սոստրակ Կնետ՝ ազատարար դիքերուն⁽⁹⁾՝ նաւարկութեան օգտին համար:»

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Փարոս. — Աշտարակ մը որուն ծայրը լապտեր մը կայ:

(2) Պտղոմէոս եղբայրասէր. — Եգիպտոսի թագաւորը, ծնած Քրիստոսէ առաջ 285 թուականին:

- (3) Խարոյկ. — Կրակ:
- (4) Յասակագիծ. — Գործի մը նախնական զաղափարը:
- (5) Հեղինակութիւն. — Շինութիւն:
- (6) Ծեփել. — Որ և է նիւթ մը քսելով աղէկ մը ծածկել:
- (7) Արձանագրութիւն. — Գրուածք:
- (8) Դիւրաբեկ. — Շուտով աւրուելիք, կոտլելիք:
- (9) Դիք. — Սուտ աստուածներ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Պտղովէոսի կանգնած աշտարակը լճնէ կոչ-
 ուեցաւ. — Խնչ բանի կը ծառայէ փարոսը. — Խնչ տեսակ շէնք էր
 այդ փարոսը. — Ինչո՞ւ վրայի յարկը խարոյկ կը վառէին. — Այս
 շէնքին նարտարապետը ո՞վ էր. — Լճն հնարք ի գործ դրաւ նարտա-
 րապետը. — Խնչ նպատակաւ. — Իր նպատակին հասաւ:

71. ԵՐԿՈՒ ՃՆՃՂՈՒԿՆԵՐԸ

Երաշտ⁽¹⁾ էր տարին, դաշտերը ցամաք,
 Գետինը չոր էր, և ասդին անդին
 Խանձած ծրղօտներ⁽²⁾ բարկ⁽³⁾ արեւուն տակ
 Կը տոչորէին⁽⁴⁾ հասկերուն ետին,
 Լերկ, կորաքամակ:

Երկու ճնճղուկներ, անօթի ծարաւ,
 Կը թափառէին չորս օրէ ի վեր,
 Բայց հասկը⁽⁵⁾ չունէր հատիկ մը բընաւ.
 Ա՛լ յողներ էին իրենց հէք թեւեր.
 Կը փրչէր հարաւ:

Մէկը մանուկ էր, աղջիկ մը մատաղ,
 Դեռ փորձառու չէր կեանքի իրերուն,

Ու կ'ըսէր լալով ընկերին . «Աւա՛ղ ,
Պիտի մեռնիմ ես չեղած իրիկուն
Այստեղ անարւաղ⁽⁶⁾ :

Գրնա՛ , կ'աղաչեմ , ճամբայ գիտես դուն ,
Քիչ մը բուտ⁽⁷⁾ ճարէ դաշտէն ու ձորէն .
Քեզի կ'սպասեմ այստեղ հռանդուն .
Օր մը բարիքիդ կ'ընեմ փոխարէն ,
Քուրի՛կս իմ սիրուն» :

Ու համբոյրով մը զատուեցան իսկոյն .
Ճնճղուկը գնաց ճիւղէ ճիւղ թրուաւ ,
Մինչև սարի⁽⁸⁾ մը ծայրը բարձրագոյն
Տեսաւ պողաւէտ բալենի⁽⁹⁾ մը թաւ⁽¹⁰⁾ ,
Կուռ ու կարմրագոյն :

Եւ սովալըլուկ⁽¹¹⁾ հէք թռչնիկն անյագ⁽¹²⁾
Փարեցաւ աղուոր , կարմրուկ միրգերուն⁽¹³⁾ ,
Ծրծեց վայելեց ինք արագ արագ
Այդ ճոխ սեղանը , զոր կու տար գարուն
Ձինջ երկինքին տակ :

Յետոյ խորհեցաւ փոքրիկ քուրիկին ,
Որ կը մեռնէր հոն ծարաւ անօթի :
«Մէկին տեղ , ըսաւ , կը տանիմ կրկին .
«Չեմ կրնար թողուլ առանց սընունդի
Ընկերս անմեկին⁽¹⁴⁾» :

Բայց այդ բալերը , ո՛հ , կարմիր , կարմիր ,
Շատ աղուոր էին , և այնքան համեղ ,
Որ հեռանալը փափաք մ'էր նանիր⁽¹⁵⁾ :
Չըկըրցաւ զատուիլ . ճաշակեց շատ հեղ
Անկուշտ անձանձիր⁽¹⁶⁾ :

Եւ մութը կոխեց • ըստուերներն իջան ,
Սեւ ազոաւները և ուղբերգակ բուն
Ըսկըսան չորս դին բոլորել շրջան :
Բոյներնին մըտան թըռչնիկներն համբուն
Աշխոյժ , ժըրաջան :

Մեր ճնճղուկին ալ քունիկն էր եկեր :
«Վաղն առտու , ըսաւ , ես , առա՛ջ Աստուած ,
«Կը տանխմ իրեն կըտուց մ'ամբողջ կեր⁽¹⁷⁾ .
«Անտէր ու մինակ չեմ թողուր լքուած
Իմ սիրուն ընկեր» :

Աստուն շատ կանուխ վազեց արտորնօք
Կըտուցը լեցուն՝ մեկնելով արտէն .
Բայց լքուած՝ քուրիկն ընկերէն անհող ,
Չոր խոտերուն տակ մնուած էր արդէն
Անտէր ու անոք :

Ընկերիդ ցաւին մի՛ մընար անսիոյթ .
Թէ կրնաս օգնել , ըշտապէ՛ այսօր .
Մի՛ ճըգեր վաղուան , մահը կու գայ շուտ .
Յետոյ դղջումէ ալ , ճիգերդ ալ բոլոր
Կ'ըլլան անօդուտ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Մրաց.** — Չոր, առանց անձրեւի :
- (2) **Ծղօս.** — Հունտէն վեր բարձրացող ցօղուն :
- (3) **Բարկ.** — Ազդու, ուստիկ :
- (4) **Տսչորել.** — Այրել :
- (5) **Հասկ.** — Յօղունի գլուխ որ ցորենի հատիկներ կը սլարունակէ :
- (6) **Անսուաղ.** — Անօթի :
- (7) **Բուս.** — Մնունդ :
- (8) **Սար.** — Լերան գլուխ :

- (9) **Բալենի.** — Բալի (ֆէլէ) ծառ:
- (10) **Թաւ.** — Խիտ:
- (11) **Սովալլուկ.** — Անօթուծենէ տանջուած:
- (12) **Անյագ.** — Չկշտացող:
- (13) **Միբգ.** — Պտուղ:
- (14) **Անմեկին.** — Անբաժանելի:
- (15) **Նանիր.** — Պարապ:
- (16) **Անձանձիր.** — Առանց ձանձրանալու:
- (17) **Կեր.** — Ուտելիք:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ճնճողուկները ինչո՞ւ անօթի էին: — Ի՞նչ ըրաւ փոքրիկ ճնճողուկը իր ընկերոջ: — Ի՞նչ ըրաւ ճնճողուկը երբ մեկնեցաւ: — Ինչո՞ւ իր ընկերոջ ուտելիք չտարաւ թռչսւնը: — Հետեւեալ առտուն ի՞նչ ըրաւ ճնճողուկը: — Ի՞նչ վիճակի մէջ գտաւ իր լն'իերը: — Ի՞նչ բարոյական կրնանք քաղել այս ոտանաւորէն:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

21. Ծ Ո Վ Ը

Նկարագրել ծովը իր հանդարտ վիճակին մէջ. ըսել թէ ինչ գոյն ունի, իր ալիքները ի՞նչպէս են. արեւը ի՞նչ երեւոյթ կու տայ անոր: Թէ ծովուն վրայեն ի՞նչ տեսակ նաւեր կ'անցնին. թէ անոնք ի՞նչ յառաջ կը բերեն ծովուն վրայ: Թէ ծովուն խորը ինչէ՞ր կը գտնուին: Յետոյ նկարագրել թէ ի՞նչ երեւոյթ կ'առնէ փոթորիկի ատեն:

72. ԾԱՂԻԿՆԵՐ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐ



Երբ դարնային արեւուն առաջին ճառագայթները ակսին երկիրը տաքցնել, հիւթը աւելի արագօրէն կը շրջաբերի⁽¹⁾, և բոյսերը նոր կեանքով կ'ոգեւորուին :

Դեռաբողբոջ ոստերուն վրայ, տեղ տեղ, ծիլեր երեւան կու գան, կ'ուռին, կը ծաղկին ու կը փթթին :

Բուն ծիլերը տերեւներ պիտի ընծիւղեն⁽²⁾, և ծաղկի ծիլերը կամ կոկոնները ծաղկի փունջեր պիտի ըլլան :

Որովհետև ծաղիկները բոյսերուն կեանքին մէջ մեծ դեր մը ունին, շահեկան է դանոնք ուսումնասիրել և հետեւիլ անոնց կերպարանափոխութեանց :


Ծաղկած ծիլ



Գնունք, օրինակի համար, սա տանձենիի ծաղիկը որ ամէնուղ ծանօթ է :

Առաջին անգամ մեր աչքին կը զարեւն հինգ ճերմակ թերթիկներ, փափուկ հիւսուածքով, վարդի ձեւով կանոնաւորապէս շարուած : Այս թերթիկներուն լւրաքանչիւրը շափրակ կը կոչուի, և շափրակներուն ամբողջութիւնը՝ պսակ :

Ծաղիկը հակառակ կողմը դարձնենք : Դուրսէն կանանչ մաս մը կը նշմարենք, որուն վրայ կը յենու(3) պսակը : Բաժակն է այն, տանձենիի ծաղկին մէջ՝ հինգ կտորէ բաղկացած, որոնք վերիժ կը կոչուին :



Պսակին շափրակները փեթթենք : Բաժակին վրայ կը մնան զանազան երկարութեամբ քանի մը ցլիկներ, առոնք առէջքները և սերմնափակն են :



Առէջքները սերմնափակին շուրջը շարուած են, և իւրաքանչիւրը մէյ մէկ շատ բարակ ծղօսէ կամ թելիկէ բաղկացած է. առոնք իրենց վրայ կը կրեն տեսակ մը պարկիկ բեղնան կոչուած, լի բուրումնաւէտ դեղին փոշիով մը զոր բեղմնափոշի կ'անուանեն :

Հիմայ եթէ առէջքները վրցնենք, փոքրիկ տանձ մը միայն պիտի մնայ վրան, քանի մը սիւնակներով որոնք սերմնափակը կը յօրինեն : Այդ սիւնակները ծաղկէզ կը կոչուին և մէջերնին պարապ է : Իրենց վերի ծայրը սպունգի պէս բան մը կայ որ սոսոր կը կոչուի, և վարի ծայրը ձուարանը, ճշմարիտ պարկ մը որ կը պարունակէ ձուիկ կոչուած հաւկիթները :

Ահա՛ ասոնք են ծաղկին զլիսաւոր մասերը : Հիմայ տեսնենք թէ ի՛նչպէս կը կատարուի պաղարեւութիւնը , այսինքն թէ ի՛նչպէս ծաղիկը պտուղի կը փոխուի :

Ծաղիկը փթթելէ յետոյ սերմնափակը կը բացուի , թեթեւ սերմնափոշիի հատիկներ օդին մէջ կը ծփան և կուգան բեղնանին վրայ կ'իյնան , սոսորին խողովակին մէջէն կ'անցնին և ձուիկներուն մէջ կը թափանցեն : Այդ վայրկեանէն՝ շափրակները , առէջքները և բեղնանը կը չորնան ու կը թափին , իրենց պաշտօնը լրացած է : Փոքրիկ տանձը կը խոշորնայ , ձուիկները կը դարգանան և կուտ կ'ըլլան : Կուտերն ալ պտուղին հետ կը հասուննան , և այն ատենէն ա՛լ կարող են նոր տունկ մը յառաջ բերելու : Գիտէք անշուշտ թէ այդ կուտերէն մէկը եթէ հողին մէջ թաղենք , նոր տանձի մը կը բուսնի :

Այսպէս ծաղիկը կը բաղկանայ բաժակէ , պսակէ , առէջքներէ և բեղնանէ :

Այս վերջին մասերը միայն անհրաժեշտ են : Պսակը կերպով մը ծաղիկին դարդարանքը , պերճանքի ղզեստն է , և բաժակը՝ անոր արտաքին վերարկուն :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Ծրջաբերիլ . — Ծրջան ընել , պտրտիլ :

(2) Ընձիւղել . — Բուսցնել , դուրս տալ :

(3) Յեցուլ . — Կռթնիլ :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ . — Երբ գարունը գայ ի՞նչ կը պատահի . — Բուն ծիւերը ի՞նչ պիտի ընծիւղեն . — Ծաղկի կոկոնները ի՞նչ պիտի ըլլան . — Երբ տանձենիին ծաղկին նայինք , ի՞նչ կը տեսնենք ամէնէն առաջ . — Ծաղկին թերթերը ի՞նչ կը կոչուին . — Ի՞նչ է շափրակը . — Ծաղկին պսակը ո՞րն է . — Ո՞րն է բաժակը . — Ի՞նչ է փերթը . — Որո՞նք են առէջքները , սերմնափակը , թելիկը , բեղնանը , բեղմնափոշին , ծաղկէզը , սոսորը , ձուարանը , ձուիկները . — Ծաղիկը փթթելէ յետոյ , ի՞նչ երեւոյթ տեղի կ'ունենայ . — Պտուղին կուտը ո՞րկէ յառաջ կու գայ , եւ ի՞նչ յառաջ կը բերէ :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ

Կուշտ մաքիին
Դառն է գարին :

Ուր տեղ հաց ,
Ս, յնտեղ կա՛ց :

Քիչ բեռցիր
Շո՛ւտ դարձիր :

Մեղքը լալով .
Պարտքը տալով :

Ո՛ւշ եկո՛ւր ,
Անձ՛ւշ եկուր :

Հարսնիք երթամ ,
Տուն ի՞նչ տանիմ .
Թէ ձութ ծամեմ ,
Կուլ ի՞նչ տանիմ :

Բերնէ բերան
Կ'ըլլայ գերան :

73. ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

ԵՒ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Քսան տարի առաջ , երբ տակաւին կաղմուած չէին այս երկու ընկերութիւնները . զրեթէ բնաւ վարժարան չկար Հայաստանի և Կիլիկիոյ մէջ : Բոլոր տղաք , մանչ թէ աղջիկ , զուրկ ոչ միայն ուսումէ , այլ և քաղաքակրթութեան ամէնէն տարրական օրէնքներուն անպէտ , անբանի կեանք մը կ'ապրէին : Ուսուցիչները , որ յետոյ զրկուեցան վերոյիշեալ ընկերութեանց կողմէ դանազան գաւառները , կը լռնդրէին գիրքի և զրչի հետ՝ սանտր , օճառ , ասեղ , մասնոց զրկել : Որովհետև ոչ երեսնին լուալ գիտէին խեղճ տղաքը , ոչ սանտրուիլ , սրբուիլ , ոչ



ԲԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ՝ ԶԷՅԹՈՒՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍԱՆՈՒՀԻՆԵՐԷՆ ՄԱՍ ՄԸ

ալ վրանին գլուխնին փոխել, մաքրել, կարկտել: Բոկոտ, շատ անգամ կիսամերկ, միշտ առանց ճերմակեղէնի, ամառը արեւուն տաքին, ձմեռը ձիւնին ցուրտին, փողոցները կը դեգերէին⁽¹⁾:

Երբ հիւանդանային, ոչ դեղ տուող կար, ոչ դարման: Առողջապահական կանոններ, փոխանցման⁽²⁾ արգելք եղող միջոցներ, հիւանդապահական օրէնքներ կատարելապէս անձանօթ էին իրենց. նոյն իսկ տղաքը պատուաստել⁽³⁾ չէին դիտեր, և ծաղկախտէ բռնուողները կը մեռնէին կամ կը կուրնային: Համաճարակներ⁽⁴⁾ կայծակի արագութեամբ կը տարածուէին ամէն կողմ, և ամբողջ գիւղեր կ'աւերէին:

Բնակարանի, մարմնի, ուտեստի վերաբերեալ մաքրութեան և զգուշութեան ամէնէն պարզ ծանօթութիւնները կ'անդիտանար գաւառի թշուառ ժողովուրդը, և դիւրակեցութեան⁽⁵⁾ ամէն պայմաններէ զուրկ կ'ապրէր, որքան իր վրայ տիրող բռնակալութեան հետեւանքը եղող չքաւորութեան՝ նոյնքան ալ տղխտութեան պատճառաւ:

Մինչդեռ մենք Պոլսոյ մէջ, յարաբերական հանգիստ մը կը վայելէինք. դպրոցներ, լսարաններ, հիւանդանոցներ, թատրոններ, բժիշկներ, դեղարաններ ունէինք, նաև ընկերութիւններ որոնք քիչ շատ կ'օգնէին աղքատներու, հիւանդներու, և գիրք, զգեստ և այլն կուտային չքաւոր տղոց. իսկ գաւառացիները այս ամէնէն զուրկ էին բացարձակապէս⁽⁶⁾:

Մեզի համար, գաւառացի Հայը բեռնակիր, պահնորդ, ջրհանակիր էր, իսկ Հայուհին՝ սպասուհի, լուացարար միայն կրնար ըլլալ, որովհետև տղէտ մարդիկ որ դրամ չունին ուրիշ գործ չէին կրնար գտնել Պոլսոյ մէջ:

Այդ խեղճերը իրենց ընաանիքը, զաւակները գաւառին խորը լքած, կու գային ողորմելի օրական մը շահիլ վճարելու համար իրենց պարտքերը: Եւ տարիներով կը

չարչարուէին , կը տառապէին կեղտոտ խաներու անկիւնը , ընտանեկան ամէն խնամքէ զուրկ , ստէպ առանց բնաւ լուր ստանալու իրենց երկրէն , որովհետեւ այնտեղ կարգալ գրել զխոցող չէր գտնուեր :

Ու կը մեռնէին տղաքը երկիրը , կը մեռնէին հայրերն ալ Պոլսոյ անձանօթ գոիհներուն⁽⁷⁾ խորը առանց իրարու վերջին հրաժեշտ⁽⁸⁾ մը զրկելու , առանց իրենց կարօտը , գուրգուրանքը հաղորդել կարենալու իրարու :

Պոլսոյ հայ երիտասարդութիւնը այս սրտաճմլիկ , այս անգութ իրողութեանց հանդէպ ըմբոստացած⁽⁹⁾ գեղեցիկ շարժում մը ունեցաւ , և կաղմեց Սրարատեան ընկերութիւնը , որ անմիջապէս գործի ձեռնարկելով , հետզհետէ վարժարաններ բացաւ Վասպուրականի և Տէրսիմի կողմերը : Անկէց առաջ հիմնուած էր արդէն Դպրոցասիրաց-Արեւելեան Ընկերութիւնը որ իր գործունէութիւնը տարածեց Տուրուքերանի և Տարօնի մէջ . այս ընկերութեանց հետեւեցաւ Կիլիկեանը՝ գործունէութեան ասպարէզ ընտրելով իրեն Կիլիկիոյ գաւառները : Տարիներ վերջը , այս երեք ընկերութիւնները , որոնց նպատակը նոյն էր , ի մի ձուլուելով⁽¹⁰⁾ երեւան բերին Հայոց Միացեալ Ընկերութիւնը , որուն գաւառներու մէջ կատարած նախախնամական դերը կարելի է բացատրել նկատի առնելով գաւառացի երիտասարդներուն արդի զարգացած վիճակը , որոնց մէջէն գրագէտներ , ուսուցիչներ , արուեստագէտներ և հանրային գործիչներ⁽¹¹⁾ պատրաստուած են :

Բայց Միացեալ Ընկերութիւնը այրերուն դաստիարակութեան ուժ կու տար , և իգական սեռը կը մնար միշտ խորին տգիտութեան մէջ , ինչ որ արգելք մըն էր գաւառի հայուն ներքին կեանքը բարւոքելու :

Այս պարագան էր որ մղեց պոլսեցի Հայուհիները ասպարէզ նետուելու , և կաղմուեցաւ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը Սկիւտարի մէջ , տեղւոյն ձեմարան

վարժարանի շրջանաւարտ աշակերտուհիներուն ձեռքով ,
իգական սեռի դաստիարակութեան նպատակու նպատակաւ :

Ու այս ընկերութիւնը 15 տարի շարունակ գործեց
գաւառներու մէջ Միացեալ Ընկերութեանց հետ կրթելով ,
դաստիարակելով , ուսուցանելով , զարգացնելով օրիորդները :

Յետոյ եկան բռնակալութեան օրերը , և կառավա-
րութիւնը լուծեց ընկերութիւնները , փակեց վարժարան-
ները , և 20 տարի անգործութեան դատապարտեց այս
երկու լուսաւափիւս ընկերութիւններ , մինչև Սահմանա-
դրութիւնը եկաւ վերստին , իրեն հետ բերելով խօսքի ,
գրչի և գործի ազատութիւնը :

Ուրեմն երեք տարիէ ի վեր կազմուած Միացեալը
այսօր 50 վարժարան ունի , և Ազգանուէրը 36 վարժա-
րան և մէկ վարժուհիներու , որոնց կը հայթայթէ բոլոր պի-
տոյքները ճրիարար : Պոլսեցի փափուկ օրիորդներ գացին
գաւառներու խորերը՝ դաստիարակութեան լոյսը տանելու ,
և հետզհետէ կ'երթան՝ իրենց քոյրերուն վայելել տալու
համար քաղաքակրթութեան բարիքները ուսման և կրթ-
թութեան միջոցաւ :

Մինչդեռ բազմաթիւ տիկիւններ և օրիորդներ այլա-
պէս⁽¹²⁾ օգտակար կ'ըլլան , ամէն ճիւղ թափելով , ամէն
զոհողութիւն չխնայելով ընկերութեան յառաջդիմութեանը
համար , որպէս զի հետզհետէ աւելցնեն իրենց վարժարան-
ներուն թիւը , և կարենան ամէնէն յեաին զիւզին մէջ
հաստատել ուսման վառարան մը :

Ամէն ուսանող և ուսանողուհի պարտք և պատիւ
պէտք է համարի իր անձին , վարժարանին սեմէն մեկնե-
լուն պէս՝ սատար հանդիսանալ⁽¹³⁾ այս երկու բարենպա-
տակ ընկերութեանց , նիւթապէս և բարոյապէս օժանդա-
կելով⁽¹⁴⁾ անոնց յառաջդիմութեան :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Գեգերիլ.** — Անգործ ասդին անդին պտըտիլ:
- (2) **Փոխանցում.** — Մէկէն միւսին անցնիլ:
- (3) **Պատուասել.** — Առողջ անձերու մարմնին մէջ ներարկում մը որ կարգ մը հիւանդութիւններէ զերծ կը պահէ:
- (4) **Համանարակ.** — Հիւանդութիւն մը ուրկէ կը բռնուին քաղաքի մը կամ գիւղի մը բոլոր բնակիչները:
- (5) **Գիւրակեցութիւն.** — Հանգիստ ապրիլ:
- (6) **Քացարձակապէս.** — Բոլորովին:
- (7) **Գռի.** — Նեղ փողոց:
- (8) **Հրածեց.** — Մնաք բարով:
- (9) **Ըմբոսանալ.** — Դէմ ելլել:
- (10) **Ի մի ձուլուիլ.** — Միանալ:
- (11) **Հանրային գործիչ.** — Ան որ ընդհանուրին օգտին կ'աշխատի:
- (12) **Սյլապէս.** — Ուրիշ կերպով:
- (13) **Սասար հանդիսանալ.** — Օգնել:
- (14) **Օժանդակել.** — Օգնել:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

22. **Փ Ի Լ Ի Կ Ա Ղ Բ Ա Ր**

Փիլիկ աղբար իր Թօթօս անուն ջորիին վրայ հեծած կ'երբար կես օրին : — Յղը սաք էր եւ Թօթօս պարսեգի մը պատին սակեց կը քալէր , որուն վրայեց սալորենիի հիւղեր վար կը կախուէին պտուղներով բեռնաւորուած : — Փիլիկ աղբար կը տեսնէ զանոնք (նկարագրեցեք) եւ կը փափաքի ուտել (խօսեցուցեք զինքը) : — Ոտքի վրայ կ'ելլէ կը կայնի եւ ձեռքը կ'երկնցնէ , վախճալով որ չելլէ մէկը պոռայ «տէն, Թօթօս» (այս խորհրդածութիւնը բարձրաձայն կ'ընէ) : — Թօթօս կը հնազանդի : — Փիլիկ գետինը կ'իյնայ :

74. ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼԸ

Փոքրիկ կաթիլ մ'անձրեւի
Ամպին ցանցէն⁽¹⁾ ցօղուած⁽²⁾ վար,
Երբ տեսաւ ծովն ամենի⁽³⁾
Անհուն, անծիր⁽⁴⁾ ու անծայր,

«Որքան փոքր եմ, որքան ցած,
Ըսաւ, այս մեծ ծովին քով:
Ու շիկնելով⁽⁵⁾ ամօթխած,
Խոնարհեցաւ յարգանքով:

«Ջրնջին կաթիլ մ'եմ խոնարհ
Առանց շուքի և փայլի,
Որ արեւէն դողահար
Շողի մը տակ կ'այլայլի⁽⁶⁾ :»

Բայց ոստրէ⁽⁷⁾ մը տեսաւ դայն,
Առաւ գրրկին մէջ վըտիտ.
Ու այն կաթիլն աննըչան
Դարձաւ անգին մարգըրիտ^(*) :

Թէ բարձրացաւ շիթն այնքան
Իր խոնարհիլն էր պատճառ.
Եւ ըստացաւ կեանք երկայն
Քանզի մահուան կը տենչար:

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ ՍԱԶԻԻ⁽⁸⁾

(*) Արեւելեան ասուծեան մը համեմատ, մայիսի առաջին ցօղը եթէ ոստրէի մը մէջ լինայ, մարգըրիտ կը դառնայ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Յանց. — Ծակ ծակ հիւսուածք:
- (2) Յօղել. — Կաթել:
- (3) Ամեհի. — Շատ մեծ:
- (4) Անծիր. — Սահման չունեցող:
- (5) Շիկնիլ. — Կարմրիլ:
- (6) Այլայլիլ. — Աւրուիլ:
- (7) Ուսրէ. — Ծովային խեցեմորթ մը («Երէրէ»):
- (8) Սազի. — Փարսիկ բանաստեղծ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Փոքրիկ կաթիլը ի՞նչ տեսաւ. — Ի՞նչ ըսաւ ինքնիրեն. — Ինչո՞ւ ամչցաւ. — Յետոյ ի՞նչ պատահեցաւ. — Այս գաղափարը ի՞նչ աւանդութեան վրայ ձիւնուած է. — Ինչո՞ւ բարձրացաւ ջուրի կաթիլը. — Ի՞նչ կը սորվինք այս ջուրի կաթիլէն.

75. ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Մկրտիչ Սանասարեան ծնած է Թիֆլիս, 1818ին: Իր մանկութեան տարիներուն՝ իր ծննդավայրին մէջ տակաւին կանոնաւոր դպրոց չկար, ուստի Աբամելիք անունով քահանայէ մը կարդալ կը սորվի:

Երբ Ներսէս Աշտարակեցի⁽¹⁾ կաթողիկոսը Թիֆլիսի Ներսէսեան վարժարանը կը հիմնէ, Մկրտիչ հոն կը մտնէ և կ'ստանայ իր նախնական կրթութիւնը:

Դեռ դպրոցին ընթացքը չաւարտած, իր դասընկերներէն մէկուն հետ 1835ին ճամբայ կ'ելլէ դէպ ի Էրզրում, Վենետիկ երթալու և հոն բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով, սակայն իր խնամակալը կը հասնի ետեւէն և արգելք կ'ըլլայ: Անմիջապէս Ռուսիոյ մէջ պետական ծառայութեան կը մտնէ, ուր կը մնայ տասը տարի:

1849ին Բեդերսպուրկ կը հաստատուի, և իր խնայած դրամին մէկ մասը կը յատկացնէ շոգենաւային ընկերութեան մը բաժնետոմսերուն գուման: Այդ ընկերութիւնը հաղորդակցութիւն հաստատած էր Ռուսաստանի, Կովկասի և Պարսկաստանի միջև, և իր շոգենաւիրը կը բանեցնէր Վօրկա դետին և Կասպից ծովուն մէջ: 1864ին ընտրուեցաւ նոյն ընկերութեան սնօրէն, պաշտօն գորուրիչ քանի մը սնօրէններու հետ վարեց մինչև իր մահը. ի պատիւ իրեն այդ ընկերութեան շոգենաւիրէն մէկը կոչուած է «Մկրտիչ Սանասարեան»:

Սանասարեան մեռաւ Բարիդ 1890 մայիս 19ին: Մարմինը փոխադրուեցաւ Թիֆլիս, ուր թաղուեցաւ, Թիֆլիսի Մայր Եկեղեցւոյն լակին մէջ, փառաւոր յաղարկաւորութենէ մը ետքը: Հայաբնակ շատ մը քաղաքներու մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Սանասարեանի:

Մկրտիչ Սանասարեան մեծ բարերար մը եղած է: Հիմնած է Էրզրումի մէջ երկրորդական վարժարան⁽²⁾ մը, որուն գոյութիւնը ապահոված է 100,000 ոսկիի մօտ գումար մը կտակելով: Այդ կտակին գործադրութեան կը հսկեն Կ. Պոլսոյ մէջ խնամակալութիւն մը որուն նախագահն է Ս. Պատրիարք Հայրը, և Էրզրումի մէջ Հոգաբարձութիւն մը որուն նախագահն է Էրզրումի Հայոց առաջնորդը: Սանասարեան վարժարանը քսանըօրս տարիէ ի վեր կը յարատեւէ և ունեցած է 100է աւելի շրջանաւարտներ:

Այս կարեւոր կտակէն դատ, որ յաւերժացուցած է իր անունը, Մկրտիչ Սանասարեան միշտ օգնած է Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանին, ինչպէս նաև ուրիշ դրպրոցներու. իր ծախքով վերաշինել ստեւած է Վանայ Սանդխտեան աղջկանց վարժարանը զոր Վանեցիք կոչած են Մարիամեան, ի յիշատակ Սանասարեանի մօր, որ կը կոչուէր Մարիամ:

Սանասարեան թոշակներ կապած էր բարձրագոյն վարժարանի և վարժապետանոցի⁽³⁾ մէջ ուսանող երիտասարդներու . իր պաշտպանեալներուն վրայ միակ պարտաւորութիւն մը կը դնէր , այն է՝ ընթացաւարտ ըլլալէ ետքը կրթական գործին ծառայել :

Ա.Ռ.Ա.Ծ. — Մեկ կայ հազար կ'արժէ
Հազար կայ մեկ չ'արժէր :


ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Ներսէս Աւետարակեցի.** — Կաթողիկոս Ամենայն Հայոց, ընտրուած 1843ին, մեռած 1857ին .
- (2) **Երկրորդական վարժարան.** — Այն դպրոցն է ուր կը մտնեն նախակրթարանի շրջանաւարտները ուսումնին կատարելագործելու համար .
- (3) **Վարժապետանոց.** — Ուսուցիչ պատրաստող դպրոց :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞ւր կը գտնուի Թիֆլիս : — Ո՞վ է Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսը : — Ո՞վ հիմնած է Թիֆլիսի Ներսէսեան վարժարանը : — Ո՞ւր կը գտնուի Էրզրում : — Վենետիկ : — Ի՞նչ նշանաւոր հայ վանք կայ Վենետիկի մէջ : — Ո՞ւր կը գտնուի Վօլկա գետը եւ Կասպից ծովը : — Ե՞րբ մեռաւ Սանասարեան եւ ո՞ւր թաղուեցաւ : — Սանասարեան վարժարանը քանի՞ տարի է ի վեր կը յարատեւէ : — Ո՞րչափ շրջանաւարտ ունեցած է : — Ո՞ւր է Գէորգեան ձեմարանը : — Ո՞ւր կը գտնուի Սանդիստեան վարժարանը : — Ինչո՞ւ Վանեցիք Մարիամեան կոչած են այդ վարժարանը : — Ի՞նչ պարտաւորութիւն կը դնէր Սանասարեան իր սաներուն վրայ :

76. ԾՆՈՒՆԴԻ ԾԱՌԸ

Ծնունդին նախընթաց օրը, իրիկուան, տղայ մը դէպ ի քաղաք կը վազէ փութկոտ քայլերով. կ'ուզէր տեսնել այն ճրագները զոր ամէն կողմ վառած էին :



Կը կենայ իւրաքանչիւր տան առջև, և կը դիտէ շողշողուն ծաղկեպսակները, որ մոմերով դարդարուած Ծնունդի ծառին⁽¹⁾ վրայէն իրենց շքեղութիւնը կը ցոլացնեն դուրսը : Որքան տըխուր է խեղճ պղտիկը :

Արցունք կը թափէ, ու կը հառաչէ. «Այսօր ամէն տղայ իր պղտիկ ծառը և իր մոմը ունի, ամէն տղայ, ծնողքին քով, իր քաղցր անակնկալները⁽²⁾ ունի. ես, խեղճ ու միհասկ, բան մը չունիմ :

«Ինձի համար ալ կը վառէին մոմեր, երբ, տունը, եղբայրներուս և քուրիկներուս մէջտեղը նստած էի, բայց հոս, այս օտար հողին վրայ, ամէն մարդ կը մոռնայ զիս :

«Մէկը իր տունը չպիտի ընդունի զիս : Ո՛հ, ես նուէր չեմ ուզեր բնաւ, միայն ուրիշներու շտկած Ծնունդի ծառին նայելով թո՛ղ ներեն ինձի որ ոպեւորուիմ :»

Կը բախէ մեծ ու պղտիկ դուռները, պատուհանները, խանութները. ոչ մէկը կը հիւրընկալէ փոքրիկ օտարականը. այդ տուններուն մէջ՝ չեն լսեր :

Բոլոր հայրերը միմիայն իրենց զաւակներովը դբաղած

են . մայրերը անոնց համար ընծաներ կը պատրաստեն , անոնց վրայ միայն կը խորհին իրենք , ուրիշ ոչ մէկ բանի վրայ . մէկը մտքէն չ'անցընեն խեղճ պղտիկը :

«Ո՛վ սիրելի , ո՛վ երկնաւոր Յիսուս , իբրև հայր և իբրև մայր զքեզ միայն ունիմ . մարդիկ երեսի վրայ կը թողուն զիս , դուն եղի՛ր իմ պաշտպանս :»

Տղան կը շփէ իր ձեռքերը , որոնք ցուրտէն սառած էին , իր հագած քուրջերուն տակ կը սարսռայ , և նայուածքը սեւեռած առջին , անձկութեամբ կ'սպասէ փողոցին մէջ :

Այն ատեն , կամաց մը ուրիշ տղեկ մը կը մօտենայ իրեն . ճերմակներ հագած է , և ձեռքի ճրագովը կը լուսաւորէ մութ փողոցը : Ի՛նչ քաղցրութիւն իր գէմքին վրայ , երբ խօսք կ'ուղղէ պղտիկին . «Ես երկնաւոր Յիսուսն եմ . ես ալ երբևի՛ն տղայ էի քեզի պէս . ամէնքը զքեզ կը մոռնան , ես չեմ մոռնար :

«Չկայ տեղ մը , ուր ներկայ չըլլամ ես . իմ պաշտպանութիւնս կը տարածեմ այս փողոցները թափառողներուն վրայ , ինչպէս նաև անոնց , որ հոն , վարը , սևեակներու մէջ հանդիստ են :

«Օտարական տղայ , կ'ուզեմ , հոս , սա բաց տեղը , Ծնունդի ծառ մը կանգնել քեզի համար , տուներու մէջ շտկուածներուն պէս և ա՛լ աւելի աղուոր :»

Յիսուս Մանուկը այն ատեն մասնանիչ կ'ընէ անոր երկինքը . հոն , վերը , կը շողար ծառ մը , որուն ճիւղերը զարդարուած էին հաղարաւոր արեւներով :

Ինչպէ՛ս կը փալփլին այն հեռաւոր ջահերը , որ շատ մօտիկ կ'երեւան . ի՛նչ ցնծութիւն կը զնդու(3) օտար տղեկին սիրտը , երբ կը տեսնէ ինքն ալ իր ծառը :

Ինչպէ՛ս երազի մը մէջ , հոս ալ նոյնպէս հրեշտակներ երկար շարքով մը կ'իջնեն աղուն քով , և կը տանին զայն լուսեղէն բնակարանը :

Օտար տղան իր բնավայրը հասած է, իր երկնաւոր
Փրկչին քովն է. ա՛լ չի մտածեր աշխարհիս մէջ մեր ստա-
ցած չնչին ընծաներուն վրայ :

ՖՐԻՏՐԻԽ ՐԻԻՅԵՐ

Ա.Ռ.Ա.Ծ. — Ապրիլ կայ արծաթ .
Ապրիլ կայ երկաթ :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **ԾՆՈՒՆՂԻ ԺԱՌ.** — Փոքրիկ եղեւին մը կամ Թուփ մըն է, զոր
Եւրոպացիք Ծնունդի առթիւ կը զարդարեն վրան խաղալիքներ,
շաքարեղէններ, մոմեր ու ծաղիկներ կախելով: Մեր Կաղանդի
սեղանին մէկ տարրեր ձեւն է:
- (2) **Ա.ՆԱԿՆԿԱՎ.** — Չապատուած բան մը:
- (3) **ԶԵՂՈՒՎ.** — Չափազանց լեցնել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ է Ծնունդի ծառը: — Ծնունդին նախըն-
թաց իրիկունը պզտիկ տղան ո՞ւր կ'երթար եւ ի՞նչ կ'ընէր: — Ինչո՞ւ
արցունք կը թափէ պզտիկ տղան: — Ի՞նչ կ'ուզէ օտար փոքրիկ տղան
եւ ինչո՞ւ դուռները կը քախէ: — Ինչո՞ւ ուշադրութիւն չեն ըներ
իրեն: — Իր աղաչանքը որո՞ւ կ'ուղղէ հէք տղան: — Ի՞նչ կը պա-
տահի իրեն: — Անծանօթ մանուկը ո՞վ է, եւ ի՞նչ կ'ըսէ իրեն: — Յի-
սուս Մանուկը ի՞նչ ցոյց կու տայ անոր: — Հրեշտակները ի՞նչ կ'ընեն:

77. ԲՆՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԵՐ

Ամենուրեք խորհրդատու բընութեան
Մենք կը լըսենք զրդոտ⁽¹⁾ ձայն:
Լուրթ⁽²⁾ երկինքին խորը փայլող ցուքը⁽³⁾ հուր
կ'ըսէ. Եղի՛ր դուն մաքուր:

Խօլ⁽⁴⁾ հովին տակ՝ թուփը դողդոջ ու տրկար

կ'ըսէ. Եղի՛ր դուն արդար :

Վերն՝ արծիւը ամպերուն մէջ թափառուն՝

կը գոչէ. Մե՛ծ եղի՛ր դուն :

Մեղուն մուրով կ'օծէ փեթակն իր յարդէ ,

Եւ կը բղղայ . Աշխատէ :

Ծառն ատենին պըտուղներուն երբ փարի ,

կ'ըսէ . Եղի՛ր դուն բարի :

Ու շափիւղան⁽⁵⁾ կ'ըսէ . Անարգ չըկայ ինչ .

Աւազ մըն եմ ես ոչինչ :

Ծաղիկն , օղին բացուած , կ'ըսէ , հոտաւէտ .

Սիրել գիտցիր դուն յաւէտ :

Գետը կ'ըսէ . Գընա՛ ուղիդ քու ճամբադ .

Գիտցի՛ր ասլրիլ անվըհատ :

Չոր տերեւն ալ կ'ըսէ . Պէտք է ամէն ինչ

Թօշնի⁽⁶⁾ ըլլայ բընաջինջ :

Ու գետ , ծառ , ցոլք , մեղու , ծաղիկ , ամէն իր

կը գոչէ . Դուն մա՛րդ եղի՛ր :

ԷՏԱԻԱՌ ԿՈՂՆԻԷ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Գրգոս . — Գորովոտ :

(2) Լուրք . — Կապոյտ :

(3) Տոլք . — Ճառագայթ :

(4) Խօլ . — Խենդուկ :

(5) Շափիւղայ . — Թանկագին քար մը (կեօ+ե-դ-ւ-ն) :

(6) Թօշնիլ . — Թառամիլ :

ՀԱՐՑՈՒԾՆԵՐ . — Ամենուրեք ի՞նչ կը լսենք մենք . — Ի՞նչ կ'ըսէ երկինքին ցոլքը . — Ի՞նչ կ'ըսէ թուփը . — Արծի՞ւր . — Ի՞նչ կը բղղայ մեղուն . — Ի՞նչ կ'ըսէ ծառը . — Ի՞նչ կ'ըսէ շափիւղան . — Ծաղիկը ի՞նչ կ'ըսէ . — Ի՞նչ կ'ըսէ գետը . — Ի՞նչ կ'ըսէ չոր տերեւը . — Ասոնք ամէնքը մէկտեղ ի՞նչ կ'ըսեն . — Մարդ ըլլալ ըսելով ի՞նչ կը հասկնար :

ՇԱՐԱԴՐՈՒՅԻՒՆ

23. Հ Ա Ց Ը

Հացը սեղանին վրայ է . նայեցե՛ք , խորհեցե՛ք եւ գրեցե՛ք թէ ո՛րչափ գործաւորներ աշխատած են մինչեւ որ այդ հացը մեջտեղ ելած եւ ձեր սեղանին վրայ եկած է :

78. ՇԻՆ ՇԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Հայոց հին եկեղեցիները , անոնք մանաւանդ որ շինուած են Ժ . և ԺԱ . դարերուն մէջ , հոյակապ⁽¹⁾ շէնքեր էին : Այդ եկեղեցիները սովորաբար շինուած են տեղական քարերով : Ներքին կողմէն կ'երևայ , շէնքին մէջտեղն իսկ , գմբէթ մը որուն շուրջը կամարները կը հանգչին սիւներու վրայ . այդ գմբէթը սրածայր է , ձաղարածե , երբեմն ութանկիւն , և աւելի յաճախ բաղմանկիւն :

Հայ եկեղեցիներու յատակագծին ձևը նեղ է և երկար . մէջտեղը , գմբէթին տակ , երկու կողմէ յաւելուածներ կան որով յատակագիծը կ'ստանայ հայ խաչի ձև , որուն վերի և վարի մասերը երկար են , իսկ թեւերը կարճ :

Եկեղեցիներու դուռները ցած կը շինուէին , մերթ քառակուսի և մերթ կամարածե դուռիսով :

Շէնքերուն մէջ ուշադրաւ են արտաքին քանդակները . անոնք մտացածին⁽²⁾ են գրեթէ միշտ . երբեք չէք հանդիպիր անասունի կամ մարդու պատկերի , և շատ քիչ անգամ ծաղիկի կամ տերեւի : Հին հայ եկեղեցիներու քանդակներուն գլխաւոր հիմը կը կազմեն ժապաւինածե

զարդերը . անոնք կը սողոսկին⁽³⁾ կամարներուն , դուռներուն , պատուհաններուն վերև , ու կը հիւսեն խաչեր և նշխարքի ձեւով զարդեր :

Այս ոճով շինուած եկեղեցիներուն մէջ ամէնէն նշանաւորն է Ս . Հռիփսիմէի տաճարը , որ կը գտնուի Էջմիածնայ մօտ , և կը յիշուի իբր տիպար⁽⁴⁾ հայ ճարտարապետութեան :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Հոյակապ . — Փառաւոր , շքեղ :
- (2) Մտացածիւն . — Երեւակայական :
- (3) Սողոսկիլ . — Հոս կը նշանակէ պտուտքիլ :
- (4) Տիպար . — Առաջին օրինակ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Ի՞նչ տեսակ շէնքեր էին Հայոց հին եկեղեցիները . — Եկեղեցիներու յատակագծին ձեւը ի՞նչպէս էր . — Հայ խաչի ձեւը ո՞րն է . — Եկեղեցիներու դուռները ի՞նչպէս կը շինուէին . — Ո՞ւր կը գտնուէր Սուրբ Հռիփսիմէի տաճարը :

79. Կ Օ Շ Ի Կ Ն Ե Ր Ը

(Ծնունդի պատմութիւն)

Կէս դիշերուան մօտ արթնցաւ Զարմինէ , և անուկները շփելով , խոշոր խոշոր բացաւ մութին մէջ :

Միտքը եկաւ թէ Ծնունդի դիշեր էր , և թէ կօշիկներնին առջի իրիկուընէ վառարանին մէջ դնել տուած էր իրենց անդլիաղի վարժուհին , որպէս զի Յիսուս մանուկը նուէրներով լեցնէ զանոնք : Յետոյ յիշեց Ծնունդի աղուոր

պատմութիւնները , զորս մայրիկն ու օրիորդը պատմեր էին իրենց՝ շարաթէ մը ի վեր :

Աչքին առջև եկաւ չոր խոտերով ու խողաններով⁽¹⁾ յարկածածուկ⁽²⁾ գոմի⁽³⁾ մը մտուրին մէջ ծնած վոքրիկ Աստուածը , որուն առջև ծունդի կու գային ոսկեհուն⁽⁴⁾ պատմուճաններով⁽⁵⁾ հագուած ալեխառ⁽⁶⁾ Մոգերը : Ու երեւակայութեանը մէջ կը բաղմապատկուէր վարդագեղ դէմքը երկնաւոր Մանուկին՝ լուսեղէն ճաճանչով պսակուած , զոր այնչափ համբուրեր էր Կաղանդի պատկերներուն մէջ :

Գլուխը դեռ լեցուն էր , և հոգին ալ՝ սրտառուչ պատմութիւններովը Յիսուսին որ թեւերը կը բանար աղքատներուն և մանուկներուն :

Արդեօք ի՞նչ նուէր պիտի դրկէր իրեն :

Ան , որ առտու իրիկուն մտիկ կ'ընէր երկինքէն խելօք տղոց աղօթքը , հարկաւ լսեր էր իր սրտին բաղձանքը : Շատ բան չէր ուզեր , միայն ոսկի մազերով աղուորիկ պուպրիկ մը կապոյտ հագուած , որ մտնա , պարսա ըսէր : Եւ ա՛լ ասիկա չպիտի կտորէր առջի տարուան խամաճիկին⁽⁷⁾ պէս : Աչքին լոյսին պէս պիտի խնամէր , ինչպէս մայրիկը զինքը կը խնամէր : Յետոյ կնունք պիտի ընէր , ու մայրիկին անունը պիտի դնէր անոր՝ Լուսիկ . . . : Ի՞նչ ծաղիկներ , ի՞նչ ժապաւէններ , ճերմակ , ճերմակ , բոլորն ալ ճերմակ . . . :

Յանկարծ այս լուսադեղ պատկերը ցրուեցաւ ժամահարին հնչումովը :

Տղան համրեց . մէկ , երկու , երեք , մինչև տասերկու :

— Կէս գիշեր է , խորհեցաւ , հիմայ նուէրները եկած ըլլալու են :

Ու ելաւ անկողնին մէջ նստաւ , ականջ դնելով անձանօթ , խորհրդաւոր շշուկներու որոնք այդ պահուն պիտի անցնէին օդին մէջէն , ամպերն ի վար թափթփելով

աղամանդներ, մարգարիտներ, զանակներ⁽⁸⁾, հրեշտակի կապոյտ ու վարդագոյն փետուրներ . . . :

Ցուրտ սենեակին մէջ քնացող փոքրիկ քրոջը և վարժուհիին շնչառութիւնը միայն կը սաւառնէր⁽⁹⁾ ընդհատ, թեթև :

Զարմնէ մէկդի ըրաւ սաւահները, և կամացուկ մը վար իջաւ անկողնէն :

Զիւնաթոյր ցայգաղղկատին⁽¹⁰⁾ մէջ, բոպիկ, ոտքին մատերուն վրայ կոխելով, քանի մը քայլ առաւ, մատը բերնին վրայ դրած լռութիւն պատուիրելով ինք իր անձին, և առաջ երթալով, կանթեղին մօտեցաւ, առաւ զայն, դուռը բացաւ և սենեակէն դուրս ելաւ :

Սանդուխին գլուխը՝ խոշոր պատուհանէ մը ներս կը յորդէր լուսինին և ձիւնապատ տանիքներուն ցուքը :

Լոյս ցորեկ էր կարծես . մութ անկիւն մը, մռայլ խորշ մը չկար իր շուրջը, և մինինիկ⁽¹¹⁾ քայլերուն դփըրտութիւնը կը մարէր կակուղ գորգին վրայ :

Այս դիչերային շահատակութիւնը⁽¹²⁾ միւս մինաւորիկ՝ քնացող տան մը մէկ յարկէն միւսը, փոխանակ ահաբեկելու, կը զուարճացնէր զինքը :

Եւայի հարազատ աղջիկ, հետաքրքրութեան տենդով զօրացած՝ դիտութեան ծառին կ'երթար . անպատճառ կ'ուզէր հասկնալ թէ ի՞նչ բերեր էր իրեն Մուռնդը : Անկողնին մէջ քունը չպիտի տանէր :

Մեծ սրահին առջև հասնելով, դուռը հրեց խկոյն, բայց երբ ներս մտաւ, հոն աիրող աղջամուղջին հանդէպ, անբացատրելի վախ մը պատեց զինքը : Լայն ու թանձր սրահակներով⁽¹³⁾ պատած, վէժերով ծածկուած պատուհանները, օթոցներով⁽¹⁴⁾ պատառուած պատերը սեփ սեփէին : Բարձր առաստաղէն վար մռայլ սարսափ մը կ'իջնէր և զինքը կը պարուրէր⁽¹⁵⁾ կարծես օղակ օղակ ստուերի մը մէջ սեղմելով :

Հոն դամուած մնաց վայրկեան մը , անծանօթ սոսկուամով մը համակուած : Յետոյ , յանկարծ , ինք իր անշարժութեան դադափարէն անարեկ՝ շարժում մը ըրաւ . ետին դարձաւ , և ձեռքի կանթեղին շողքը հայլի մը մէջ անդրադառնալով , աչքերը շացմամբ լեցուց . . . : Իր պատկերը տեսաւ հոն :

Ասիկա բաւական եղեր էր իր վախը վարատելու : Շուրջը կը տեսնէր ամենօրեայ մտերիմ առարկաները , թիկնաթոռները , փոքրիկ նոսր(16) մայրիկին կարին կողովը վրան , յետոյ վառարանը :

Հիմայ նորէն արթնցաւ իր ջղուտ տղու հետաքրքրութիւնը , և վար ծոնցաւ մարմարէ բարձր վառարանին եղերքին վրայ : Կօշիկները կարգաւ շարուած էին : Բայց ի՛նչ անպատում ուրախութիւն մը կ'սպասէր իրեն :

— Ախ , իմ անուշիկ Յիսուս , աղաղակեց յուզմունքէն սլալալած :

Հիանալի պուպրիկ մը դրեր էին իր կօշիկին մէջ , կապոյտ բննդէ թռաններով(17) հագուած ճիշդ տիկինի մը պէս . վտաւակն(18) ալ կապոյտ դիպակէ(19) էր , և անանկ աղուոր ջրչիւն(20) մը ունէր ո՛ր , խենդեմալո՛ւ բան . . . :

Փոքրիկ քրոջը ջութակիկ մը տուեր էին ծաղիկնակներով լեցուն կողովի մը մէջ :

— Բարի՛ Յիսուս , ի՛նչպէս ալ ամէնուն սրտին ուզածը գտեր բերեր էր :

Զարմնէ կանթեղը վար դրաւ , ու ինք ալ գետինը նստաւ :

Տղոյ յատուկ անուշ փափոխամտութեամբ մը , մոռցեր էր քիչ մը առաջուան վախը , անագին սրահին մէջտեղը մինակ դռնուիլը , ու ձեռքին մէջ կը դարձնէր իր դիւթագեղ(21) պուպրիկը , որ շարժումներ կ'ընէր , քայլեր կ'առնէր , մտնա , սրասրս կ'ըսէր :

Իր պղտիկ կեանքին բոլոր երազն էր ատիկա : Մա-

տերու վր կը փայտիայէր անոր զլխարկին կապոյտ փետուրներէն դուրս թափող խոպոպները⁽²²⁾ ու կը համբուրէր զայն լանջքին վրայ գրկած :

Բայց, ի՞նչ էր վառարանին մէկ քովը դրուած սա աղտոտ առարկան :

Տեղէն ելաւ :

Զոյգ մը կօշիկներ էին ցեխոտ, մաշած, ծակծկած : Քիչ մը դարչանքով, ոտքին ծայրովը մէկդի ըրաւ զանոնք իրենց նոսի նոր փայլուն մուճակներուն քովէն, և վեր առնելով քղանցքը, նայեցաւ թէ ոտքը աղտոտե՞ր էր այդ հպումէն :

Այդ վայրկեանին, գաղափարներու տարօրինակ զուգորդութեամբ, մէկէն ի մէկ միտքը ինկաւ Նունիկը, իրենց սպասուհիին աղջիկը, զոր երկու օրէ ի վեր Որբանոցէն բերել տուեր էին Մնունդը մօրը քով անցընելու համար :

Յիշեց անոր վախտ, ցամքած, վախկոտ դէմքը, ճակտէն վեր սօթթուած անշնորհք մազերով, և մայրիկին պատուէրը՝ իրենց վարժուհիին որ տղոց կօշիկներէն զոյգ մը տայ անոր : Ապահովարար անոնք Նունիկինն էին, որ առջի իրիկունը վառարանին քով կայնած, ուշադիր դիտեր էր զիրենք, երբ մուճակնին հոն կը դնէին, և հարցուցեր ու հասկցեր էր պատճառը :

Տեսնենք Յիսուս ի՞նչ նուէր կու տար անոր : Ու ապշած մնաց անմեղ աղջնակը : Թեւերը ոտքերը կոտորած հին խաղալիկ մը : Հապա՛ Յիսուս որ կը սիրէր աղքատները և մանուկները, ա՞ն ալ գրկանք կ'ընէր⁽²³⁾ այդ խեղճին :

Կօշիկներուն, պուպրիկներուն բազդատութիւնը արթնցուց այդ ութը տարեկան ուշիմ աղջկան մտքին մէջ, չքաւորութեան և դրկանքի հեռանկար մը ամբողջ՝ իրենց ճոխութեան և վայելքներուն հանդէպ :

Ձեռքը առաւ աղքատին առջև նետուած այդ տխուր նուէրը, իբրև չոր հացի պատառ մը: Այն ատեն զարմանքով նշմարեց որ նախորդ տարուան իր խամաճիկն էր կոտրած, կոտրտած, մէկդի ձգուած:

Ուրեմն իրենց նուէրներն ալ երկինքէն ու ամպերէն իջած չէին, խորհեցաւ, աչքերը արցունքով թաց: Մն դ.ք. . . .:

Իր խմացուն⁽²⁴⁾ տղու հոգիին առջեւէն հետզհետէ և կան անցան շատ մը պատկերներ, շատ մը տեսիլքներ, շատ մը հակադրութիւններ, սինեմաթոկրաֆի⁽²⁵⁾ երեւոյթներու պէս արագ, խուսափուկ:

Մինչև էութեանը խորը ցնցուեցաւ խանդաղատանքով ու կարեկցութեամբ⁽²⁶⁾ և, գեղեցիկ շարժումով մը, տարաւ կապոյտ պուպրիկը Նունիկի կօշիկներուն մէջ գետեղեց, ու թեւատ խամաճիկը դրաւ իր նոր մուճակին⁽²⁷⁾ մէջ:

Յիսուս, որ աղքատները և մանուկները կը սիրէր, պիտի ներէր իրեն այս խուլ բողոքը իր ծնողքին կամ վարժուհիին անիրաւութեան դէմ:

Եւ առանց ետին դառնալու, կանթեղը առաւ վեր ելաւ:

Զ. Ա.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Խոզան.** — Հունձքէն ետքը դաշտին մէջ մնացած ցորենի կամ գարիի ծղօտներ:
- (2) **Յարկածածուկ.** — Տանիքը ծածկուած:
- (3) **Պօմ, փարախ.** — Ոչխարներու և արջառներու բնակարան:
- (4) **Ոսկեհուռ.** — Ոսկիով հիւսուած:
- (5) **Պասմուհան.** — Երկայն հանդերձ:
- (6) **Ալեփառ.** — Ճերմակ մազերով զարդարուած:
- (7) **Խամանիկ.** — Տեսակ մը պուպրիկ:
- (8) **Զանակ.** — Ոսկիէ, արծաթէ կամ Թիթեղէ մանր Թերթիկ զոր կերպասի վրայ կը փակցնեն իբրև զարդ:

- (9) **Սաւառնիլ.** — Տարածուիլ:
- (10) **Ցայգազգես.** — Գիշերազգեստ:
- (11) **Միցիցիկ.** — Պզտիկ և սիրուն:
- (12) **Շահասակուքիւն.** — Քաջագործուծիւն:
- (13) **Սրահակ.** — Օթոցէ ծալածոյ թանձր վարագոյրներ:
- (14) **Օթոց.** — Գորգ:
- (15) **Պարուրել.** — Շրջապատել:
- (16) **Նգոյր.** — Եռոտանի փոքրիկ սեղան (guéridon):
- (17) **Թռան.** — Թեթև փոթթուած կերպասի կտոր մը որ շրջազգեստներուն իբրև զարդ կը գործածուի (volant):
- (18) **Վսաւակ.** — Մէջքէն վար զգեստ (Դոս):
- (19) **Դիպակ.** — Մետաքսէ կերպաս (Ճանֆէս):
- (20) **Շրցիւն.** — Մետաքսի, տերեւի, անձրեւի ձայն:
- (21) **Դիւրագեղ.** — Զմայլելի զեղեցկուծեամբ:
- (22) **Խոպոպ.** — Գանգուր:
- (23) **Զրկանք ընել.** — Անիրաւուծիւն ընել:
- (24) **Իմացուն.** — Խելացի:
- (25) **Սինեմաքուրաճ.** — Գործիք մը որով կենդանի և շարժուն պատկերներ կ'արձակուին ճերմակ պաստառի մը վրայ:
- (26) **Կարեկցուքիւն.** — Գթուծիւն:
- (27) **Մուճակ.** — Կօշիկ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Զարմինէ երբ արթնցաւ, ի՞նչ յիշեց. — Կօշիկներնին ինչո՞ւ վառարանին մէջ դրեր էին. — Ի՞նչ տեսակ սովորուծիւն է այդ. — Ի՞նչ նուէր ունենալ կը բաղձար Զարմինէ. — Ի՞նչ ըրաւ Զարմինէ երբ անկողնէն ելաւ. — Ի՞նչ ընելու գնաց Զարմինէ. — Ի՞նչ դրեր էին իր կօշիկներուն մէջ. — Ի՞նչ զգաց Զարմինէ. — Այդ պահուն աչքին ի՞նչ հանդիպեցաւ. — Ո՞վ էր նունիկ, եւ ի՞նչպէս աղջիկ էր. — Զարմինէ ինչէ՞ն գուշակեց թէ այդ կօշիկները նունիկինն էին. — Ի՞նչ նուէր կար նունիկին կօշիկներուն մէջ. — Ի՞նչ զգաց եւ ի՞նչ մտածեց Զարմինէ երբ տեսաւ նունիկին տրուած նուէրը. — Այն ատեն ի՞նչ ըրաւ Զարմինէ. — Ի՞նչ կը մտածէր Զարմինէի այս վարմունքին վրայ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ (*)

Խօսք ըսածդ կըլոր է .
Խորհէ՛ , ետքը գըլորէ՛ :

—

Կ'ելլէ ոտքով իյնողը .
Չ'ելլեր լեզուով իյնողը :

—

Ով մարդու մէջ չէ մըտեր ,
Խակ պըտուղ է . մի՛ ուտեր :

—

Լաւ է այսօր հաւու ձագը
Քան թէ վաղուան գիրուկ սագը :

—

Մի՛ հաւանիր այն հացին
Որ աղ չունի , համ չունի .
Մի՛ հաւատար այն լացին
Որ օր չունի ժամ չունի :

—

Կ'ըսեն . Գեանառիւծը ամէն գոյն կ'առնէ
Բաց ի ճերմակէն .

Մոլորած մարդը ամէն ձև կ'առնէ
Բաց ի շիտակէն :

—————

(*) Այս առածները, ինչպէս այս գրքին մէջ տեղ տեղ դրուած առածներուն մէկ մասը, քաղուած են Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազովսքիի մէկ աշխատասիրութենէն :

80. ՈՍԿԻ ԶԿՆԻԿԸ

Ա.

Կապուտակ ծովունս եղերքին մօտիկ ,
Երեսուն տարի , ծեր մարդ մ'ու կրնիկ
Տընակի մը մէջ հինուկ գետնափոր ,
Կ'ապրէին մինակ , լըռիկ ու անդորր(1) .
Ծերուկը ծովէն միշտ կ'որսար ձուկեր ,
Պատաւն ալ տան մէջ թելը կը մանէր :
Օր մը ցանցը ծով նետեց ծերունին
Ու տիղմով լեցուն դուրս քաշեց կրկին .
Եւ երբոր նորէն վարմը(2) ձրգեց ծով ,
Ամբողջ լեցուեցաւ ջրբարոյս խոտով .
Բայց դարձեալ նետեց ձկնորսն իր արձոյլ(3)
Ու բռնեց սիրուն ձկնիկ մ'ոսկեծոյլ ,
Որ ձայն հանելով ըսաւ ծերուկին ,
Ճիշդ մարդու մը պէս խօսելով մեկին(4) .
«Թո՛ղ դիս որ երթամ ծով մտնեմ նորէն .
Ինչ ուզես , կու տամ քեզի փոխարէն» :
Ու խեղճ ծերունին դարմացած մընաց .
Այսպիսի հրրաշք երբեք չէր տեսած :
Հանեց ձկնիկը վարմէն ըշտապաւ ,
Եւ ջուրին խորը նետելով ըսաւ .
«Աստուած հետդ ըլլա՛յ , խեղճ անմեղ ձկնիկ ,
Գընա՛ ծովունս մէջ լո՛ղա՛ հանդարտիկ ,
Կոհակներուն հետ խաղա՛ մեղմօրէն .
Փրկանք(5) չեմ ուզեր կեանքիդ փոխարէն :»

Բ.

Ըսաւ , ու գընաց իր պառաւ կնկանս
Պատմեց կէտ առ կէտ հրրաշքն այն օրուան :

Բայց չար պառաւր դայրացաւ այնքան
Որ բիւր նախատինք տեղացուց վրան .
«Դո՛ւն , անմիտ ծերուկ , դո՛ւն , ծերո՛ւկ յիմար ,
Ինչո՞ւ վարձք չառիր փրկանքիդ համար .
Խնդրէիր դոնէ տաչտ մը լուացքի ,
Կոտրած տաչտին մէջ հողիս կը քակուի :»
Ծերուկը ելաւ ծովափը դնաց ,
Մինչ ալիքները կը ծրփայլին ցած ,
Ձկնիկը ոսկի կանչեց իրեն քով ,
Որ խկոյն եկաւ ու հարցուց փութով .
«Ի՞նչ կ'ուզես ինձմէ , ծերո՛ւկ պատուական .»
Ձկնորսը անոր տուաւ պատասխան .
— «Կընիկս ինձի դէմ դայրացած է շատ ,
Ու կը պահանջէ լուացքի մը տաչտ :»
— «Մի՛ տրտմիր , ըսաւ ձկնիկն անոր , դուն :
Տաչտ մը կ'ուեննայ կիմդ այս իրիկուն :»

Գ.

Ծերուկը դարձաւ տուն գընաց թիթե ,
Նոր տաչտ մը դրտաւ կնկանը առջև .
Բայց ան գոհութիւն տալու փոխանակ՝
Նոր նոր դանգատներ կ'ընէր շարունակ :
«Ծերո՛ւկ դուն անմիտ , ծերո՛ւկ խելագար ,
Մեծ բա՛խտ կը կարծես այս տաչտն ինձ համար :
Շուտ բրէ՛ , գընա՛ քու ձուկէդ ուղէ
Աղուոր խրճիթ մը շինուած աղիւսէ :»
Ծերն ելաւ գընաց նորէն ձուկին քով
Ու ըսաւ անոր աղի արցունքով .
— «Կընիկս իր հիւղէն ձանձրացեր է ա՛լ ,
Եւ կը փափաքի խրճիթ մ'ուեննալ :»
— «Հող մ'ըներ , ըսաւ ձուկն անմիջապէս ,
Խրճիթ կ'ուեննայ կիմդ ուղածին պէս :»

Ծերն ելաւ գնաց , և հիւղին փոխան ,
Խրճիթ մը գրտաւ իր հողին վըրան ,
Ձիւնի պէս ճերմակ գոյգ վարագոյրներ
Պատուհանէն վար ուղիղ են կախուեր :
Բայց պառաւ կինը բարկութեամբ պոռաց .
— « Ծերո՛ւկ դուն անմիտ , ծե՛րուկ դուն ցնդած ,
Արժանի չէի՞ լաւագոյն կեանքի
Որ խեղճ խրճիթ մը կամեցար ինձի .
Գրնա՛ նորէն ծով , ու ըսէ՛ ձուկիդ
Թէ ա՛յ չի բաւեր ինձ այսպէս խրճիթ ,
Ձի բաւեր այս կեանքն ինձի պէս կնկան .
Կ՛ուզեմ որ ըլլամ ևս ազնւական : »

Գ.

Ծերը ծով դրնաց տրտում գլխիկոր ,
Ալիքներն էին յուզուած ու պղտոր .
Կանչեց ձուկն իրեն , խեղճ սիրտը կոտրած ,
Ձուկն խկոյն իր քով գալու արտորաց⁽⁶⁾ :
« Ի՛նչ կ՛ուզես , ըսաւ , ծերո՛ւկ պատուական : »
Ծերունին կրկնեց խօսքերն իր կնկան ,
Եւ ձուկը ըսաւ . « Ի՛ուն մի՛ մըտածեր ,
Նորէն գոհ կ՛ընեմ քու կնիկըդ ձեր : »
Ծերուկ ձկնորսը երբոր տուն դարձաւ ,
Աչքին տեսածը հըրաչք էր , իրա՛ւ .
Կանգնած էր առջին տուն մը փառաւոր ,
Տիկինը հագուած զարդերով աղուոր ,
Բաղմոցին վըրայ բազմած յուլաբար⁽⁷⁾ ,
Իր ծառաներուն հրամաններ կու տար :
Մարդը զարմանքով մօտեցաւ իրեն ,
Յուզուած , շրլացած այդքան զարդերէն .
— « Բարե՛ւ ձեզ , տիկի՛ն , ըսաւ դողդոջուն ,
Այ անշուշտ հասաք ձեր փափաքներուն : »

Բայց կինը իրեն չըտըւաւ երես ,
Ու ծառաները՝ մուրացկանի պէս
Զինքը դուրս ըրին , դրկեցին ախոռ ,
Ուր յարդին վըրայ մընաց երեք օր :

Ե.

Մէյ մըն ալ նայիս , պառաւն անօրէն
Մարդ դրկեց զինքը կանչելու նորէն .
«Շուտ վազէ՛ , պոռաց , ու ձուկը գըտի՛ր ,
Ես ա՛լ յագեցայ այս շուքէն⁽⁸⁾ պատիր⁽⁹⁾ .
Ոսկի և արծաթ ամէն մարդ ունի .
Ես կ'ուզեմ ինչ որ ուրիշը չունի .
Կ'ուզեմ ծովուն մէջ դըղեակ մը աղուոր ,
Վարդի թերթերով կառուցուած բոլոր ,
Պատուհանները ըլլան արեւէ ,
Որպէս դի լոյսը գիշերն ալ տեւէ .
Եւ հոն իմ առջիս ծառայ ունենամ
Ոսկի ձկնիկը , ծերո՛ւկ անըզգամ :»
— «Խելքի՛դ է եկեր , պոռաց ծերունին ,
Լաւ է որ ըդքեզ շուտ Փրկիչ տանին :
Կոտորուած տաշտըդ ի՞նչ շուտով մոռցար
Որ ա՛լ չես հաւնիր այս կեանքին պայծառ :»
Պառաւը կատղած՝ խոյացաւ⁽¹⁰⁾ վըրան ,
Ապտակեց , ծեծեց , ու ըրաւ հրաման
Իր ծառաներուն որ տանին դայն ծով ,
Ու եթէ չերթայ , քաշկոտեն ծեծով :
Ծերուկն երբ ծովեզր հասաւ գլխիկոր ,
Կը փրփըրային ալիքներ խոժոռ .
Կանչեց ձկնիկը ձայնով լալաղին ,
Որ խակոյն փութաց , հարցուց ծերուկին .
«Ի՞նչ կ'ուզես , ըսէ՛ , ձկնո՛րս պատուական :»
Եւ խեղճ մարդուկը սըւաւ պատասխան .

«Ախ, ե՞րբ պիտի դայ վերջը ցաւերուս .
 Կինըս հաղար ձիւն կը բերէ գլխուս :
 Հիմայ կ'ուզէ որ ծովուն մէջ ապրի ,
 Դրդեակ մ'ունենայ թերթերով վարդի .
 Պատուհանները ըլլան միշտ արև ,
 Եւ դուն իր առջին կայնիս ծունգ բարև :»
 Զուկը անխօսուկ դարձաւ ու գընաց
 Ալիքներուն մէջ սուզեցաւ⁽¹¹⁾ կամաց ,
 Եւ ծերուկն անոր ըսպասեց ի դուր .
 Ոչ պատասխան մը առաւ և ոչ լուր :
 Յոգնած երբոր տուն դարձաւ իրիկուան ,
 Իր փրլած հիւղը տեսաւ առաջուան ,
 Եւ պառաւ կինն ալ ծրուած մէջքէն վար ,
 Կոտրած տաշտին մէջ միշտ լաթ կը լըւար :

ԲՈՒՇԿԻՆ⁽¹²⁾

ԱՌԱՇ. — Մեկը շաւ է,
 Երկուքը քաւ է,
 Երեքը ցաւ է:

ՔԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Անդորր. — Հանգիստ :
- (2) վարմ, (3) Արձույլ. — Զուկ որսալու յատուկ ծակ ծակ հիւս-
 [ուածք՝ մը :
- (4) Մեկին. — Որոշ :
- (5) Փրկանք. — Մէկը ազատելու համար վճարուած դրամ :
- (6) Արտուալ. — Անապարել :
- (7) Յուլաբար. — Ծուլութեամբ :
- (8) Ծուք. — Շքեղութիւն :
- (9) Պատիւ. — Սուտ :
- (10) Խոյանալ. — Վազել, յարձակիլ :
- (11) Սուզիլ. — Զուրին տակը իջնել :
- (12) Բուշկին. — Ռուս բանաստեղծ :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ծերուկն ու պառաւ կինը ո՞ւր կ'ապրէին եւ ի՞նչ կ'ընէին: — Օր մը ծերունին ի՞նչ բռնեց ծովէն: — Ոսկի ձկնիկը ի՞նչ ըսաւ անոր: — Ի՞նչ պատասխանեց ձկնորսը: — Երբ ծերուկը կնկանը պատմեց այս դէպքը, ի՞նչ ըսաւ ան: — Ձկնորսը ի՞նչ ըրաւ: — Ձկնիկը ի՞նչ պատասխան տուաւ: — Յետոյ ի՞նչ պահանջեց ձկնորսին կինը: — Իր փափաքը կատարուեցա՞ւ: — Պառաւը գոհ մնա՞ց: — Պառաւ կնկան այդ նոր փափաքն ալ կատարուեցա՞ւ: — Պառաւ կինը շնորհակալ եղա՞ւ իր ամուսնոյն: — Պառաւին վերջին փափաքներուն ի՞նչ պատասխանեց ձկնորսը: — Այն ատեն ի՞նչ պատահեցաւ: — Ծերունին երբ տուն դարձաւ, ի՞նչ տեսաւ: — Պառաւը արժանի՞ էր այս պատիժին:

ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

24. Ա Ր Ձ Ա Կ Ո Ւ Ր Դ

Քննութիւննիդ աւարտած է, մրցանակի հանդէսը կատարուած: — Խորհրդակցութիւններ ըրէ՛ք ամբողջ դրպրոցական սարիին վրայ, խորհեցե՛ք թէ ի՞նչ սորվեցա՛ք: — Բաղդասեցե՛ք անցեալ տարուան ձեր վիճակը ներկային հետ: — Ըսե՛ք թէ ինչպէս մտադիր է՛ք անցընել ձեր ժամանակը ձեր արձակուրդին ասե՛ն:



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ



Հանելուկ	Ա. —	ԳԻՐ
»	Բ. —	ԽՈՉԱՆԱԿ
»	Գ. —	ԱՐՉԱԳԱՆԳ
»	Դ. —	ՓԱՐՉ
»	Ե. —	ՏԱՊԱԿ
»	Զ. —	ԱՉՔ
»	Է. —	ՓՔՈՑ
»	Ը. —	ԿՐԻԱՅ
»	Թ. —	ԱՉՔ
»	Ժ. —	ՍԻՐԱՄԱՐԳ
»	ԺԱ. —	ԱՅԾ
»	ԺԲ. —	ԳԵՏ
»	ԺԳ. —	ԱՄԱՌ
»	ԺԴ. —	ԳԻՐՔ





Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ Ը





Նորման գրեռով նշանակուած նիւթերը ուսանաւոր եւն

		Էջ
1. Գրքի մը յառաջարը	Լը Սաժ	1
2. Գայլը եւ Ա. բագիլը	Զ. Ա.	3
3. Կամքին ուժը		5
4. Գիւտ խաչ	Մադաֆիա Արք. Օրմանեան	7
5. Աղուէսն ու Ա. բագիլը	Զ. Ա.	9
6. Լեւակին ճիւղը	ՇանՓշկոնի	11
7. Որո՞նք են խմուելիք ըմպելիները		12
8. Ագուանն ու Աղուէսը	Թարգմանութիւն	14
9. Ո՞ր ըմպելիները պէտք չէ խմել		17
10. Փորրիկ տակաւը	Կի Տը Մօքսսան	19
11. Խեչեփառին պատասխանը	Զ. Ա.	23
12. Ս. Էջմիածնայ թանգարանը		24
13. Աղջիկներուն լաւագոյն բարեկամը	Է. Լըկուշի	26
14. Գոհարիկ	Մկրտիչ Պեշիկբաշեան	28
15. Մայր մը	Թարգմանութիւն	30
16. Մարդոց լեզուները		33
17. Ժիժին եւ Մրջիւնը	Զ. Ա.	37
18. Պարկեշտ տղայ մը	Է. Բեֆօ	39
19. Սուրբ Ներսէս Հայրապետ	Մեշիսեդեկ Արք. Մուրաշեան	43
20. Մրջիւնն եւ Աղաւնին	Զ. Ա.	45
21. Երկրագունտը		47
22. Հնդկահաւի տոտիկ	Էռնեստ Լըկուշի	51
23. Շեքամը	Թարգմանութիւն	55
24. Արեւուն խաւարումը		57
25. Հետաքրքրութիւն	Կարապետ Ռսկեան	60
26. Մանուգին երգը	Լըֆոնք Տը Լիշ Զ. Ա.	65
27. Միջին դարու վախճանը		67

		52
28. Փիլիսոփայ կօշկակարը	Զ. Ա.	70
29. Գիւղացիք եւ Մահը	Զ. Ա.	72
30. Առաջին բարեկամը		75
31. Անձնուէր շուն		77
32. Երկու պուպրիկներ	Հեռուորփուն Զ. Ա.	81
33. Կենդանիներուն հանդէպ		83
34. Անտառին տնակը (հէքեաթ)		84
35. Հողագործուհիք	Յակոբ Յակոբեան	91
36. Բնական թերութիւնները կրնան ուղղուիլ		93
37. Ռիւպէնսի աշակերտը		95
38. Կապիկը	Քոիլով	98
39. Գնդասեղը		100
40. Միջատներուն պարիկը	Թարգմ. Ֆրէսկրիկ Պաքայլ	101
41. Կոսրած ամանը	Թարգմ. Վիսթօն Հիւկոյեան	104
42. Տպագրուած առաջին գիրքերը		106
43. Բաւական չէ արդար ըլլալ		107
44. Թիթեռնիկին	Հեռուորփուն Զ. Ա.	109
45. Գոյնը		111
46. Քարակոտիը (հէքեաթ)	Հեռուորփուն Զ. Ա.	114
47. Հանիք	Թարգմ. Ֆրէսկրիկ Պաքայլ	116
48. Խնայողութիւն եւ տան մատակարարութիւն	Ռեքեոս Պերպրեան	119
49. Ֆրանսայի զինուոր մը	Լիւսովֆ Հաշկվի	121
50. Կրիան եւ բաղերը	Զ. Ա.	123
51. Մաթէոս Մամուրեան		126
52. Սառնարանները		128
53. Մեծ	Գամառ Քաթիպա	130
54. Սառոյցի ծաղիկները		131
55. Երեք ճանճերու ճամբորդութիւնը	Մախիմ սիւ Քան	134
56. Խաբօղիք խաբօղ ու կէս	Զ. Ա.	138
57. Կարգ մը մարմիններու յատկութիւնները	Գաշուս Կոստանդեան	142
58. Գօզէթին պուպրիկը	Վիսթօն Հիւկօ	144
59. Տօրեցի ծաղիկը	Շառլ Ռեկօ Զ. Ա.	148
60. Յարութիւն Ամիրայ Պէզնեան		150
61. Ընթերցանութեան օգուտները	Մասթոս Մամուրեան	152

62. Մեծ մայրը	Վիթթոն Հիւկօ Զ. Ա.	154
63. Ցայտադրիւրները		156
64. Պզտիկ կոյրին քոյրը	Համառփին	158
65. Բուճ	Զ. Ա.	160
66. Արուեստին ծագումը	Էշիգե Ռշիշիւ	165
67. Երախտագէտ արծուիկը	Թարգմանութիւն	166
68. Արտոյթին երգը	Հարուս Զ. Ա.	171
69. Պարծենքատը	Մօնթիսիկօ	172
70. Աղեքսանդրիոյ փարոսը		174
71. Երկու ճննդուկները	Զ. Ա.	175
72. Ծաղիկներ եւ պտուղներ		179
73. Միացեալ Ընկերութիւնը Հայոց եւ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն	Զ. Ա.	182
74. Անձրեւի կաթիլը	Հեսեւոդոչիւն Սազիի	188
75. Մկրտիչ Սանասարեան		189
76. Ծնունդի ծառը	Ֆրիսրիս Տիւրք	192
77. Բնութեան ձայներ	Էսուառ Կոչնիկ	194
78. Հին հայ եկեղեցիներ		196
79. Կօշիկները (Ծնունդի պատմ.)	Զ. Ա.	197
80. Ոսկի ձկնիկը	Բուշկին, Գամառ Քադիպա եւ անկե Զ. Ա.	205





ԱՅՐՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Բ Ա Յ Ա Տ Ր ՈՒ Ա Մ Բ Ա Ռ Ե Ր ՈՒ



ագուստ	16	Անդոն վան Տիք	67	արիութիւն	171
աթութայ	37	անդոհ	103	արծափ	105
ալեփառ	202	անդորր	299	արծիւ	76
Ալպեանք	129	անդորրիւ	90	արհամարհել	100
ազազուն	110	անդուլ	99	արտահալած	164
ախոյեան	80	անդրադառնալ	173	արտաբերել	123
ածու	103	անդրդուելի	116	արտայայտել	37
ակատ	149	աներկեւան	116	արտոյտ	90
ակնահաճոյ	90	անզուսպ	116	արտորալ	74
ակնվանի (վանակն)	138	անխոնջ	39	արփաւէտ	110
ահարել	74	անծիր	189	արօտական	44
ահուելի	43	անձանձիր	178	արօտավայր	60
աղբիւս	8	անձաւ	165	արօտ	166
աղեկատ	118	անձկութիւն	12	արձանագրութիւն	175
աղետարեր	97	անմեկին	178	արձոյլ	209
աղիողորմ	164	անյագ	178	արուեստագէտ	97
աղու	16	անյագուրդ	110	արքունի փողերանոց	151
աղուէս	33	անյարիր	155	աւանդատուն	26
աղջամուղջ	60	անուրջ	105	աւարել	104
ամեհի	189	անպատասպար	32	աւելորդապաշտական	107
ամբոխ	42	անջրպետ	50		
ամպրոպ	163	անսու աղ	177	բալենի	178
ամրակուռ	164	անվեհեր	155	բախել	22
ամուրիւ	170	աչալուրջ	151	բաղձանք	97
այգ	155	ապաստանարան	80	բարդ բարդ	99
այգափթիթ	172	ապականութիւն	143	բարեկեցիկ	109
այլայլած	109	ապիրատ	55	բարդուիլ	33
այլայլիւ	189	ապշահար	90	բարկ	177
այլանդակ	2	առասպելական	147	բարեխառնութիւն	50
այլապէս	187	առիւծ	76	բացարձակապէս	187
այտու ք	19	առողանութիւն	94	բացատ	90
անակնկալ	72	արագիւ	4	բացխփիկ	55
անայլայլ	39	արբշիւ	141	բրուկ	140
անլու	110	արբեցած	110	բիկանիւ	113
անգայթ	149	արգաւանդ	50	բեկրեկ	163
անդղ	7	արեւակէլ	50	բժոժ	56
անդամալուծուիւ	96	Արեւելեան Մամուլ	127	բժոժը կարծել	56

բիտ	54	գրգոս	195	զեղուլ	194
բիրտ	4	գրգլեակ	38	զիստ	123
բիւրք բիւրոց	131	գոխ	43	զմբուխտ	141
բնածին	64	գարան	72	զսպանակ	80
բնանկար	59	գարաստան	158	զրկանք ընել	203
բոյր	110	գեգերիլ	187		
բուժուիլ	170	գեղձան	82	էլիզէ Ռլքիւ	166
Բուշկին	209	գեղձանիկ	64	Էյֆէլի աշտարակ	125
բուռն	171	Դիմոսթոնէս	94		
բուսաբերութիւն	50	դժխոյ	125	ըմբոշխնել	22
բուտ	177	դժնդակ	28	ըմբոստանալ	187
բուրաստան	104	դի	143	ընդհուպ	116
բուրումնաւէտ	103	դիք	175	ընձեռնել	121
բուք	74	դիպակ	203	ընձիւղել	181
		դիւրարեկ	175	ըստ քմաց	56
գալարիլ	80	դիւրակեցութիւն	187		
Գալ. կոստանդեան	143	դիւթագեղ	203	թախժոտ	163
գահալիժիլ	170	դիւային	74	թանգարան	26
գաղտագողի	97	դիւանդարութիւն	127	թառ	74
գած	82	դիւրազգած	80	թառիլ	103
Գամառ - ֆաթիպա	131	դղրդիլ	90	թաւ	90
գայլ	76	դսլրութիւն	44	թաւուտք	90
գանգուր	163	դրամատուն	101	թափոց	160
գաւարդ	166			թափուր	155
գեղարդ	26	Ելլօսթօնի դարաս.ը	158	թեթեւսօլիկ	125
գեղմ	44	եղնիկ	76	թեւատ	82
գեղոր	141	եղս'ւկ	10	թեքել	171
Գետադարձ Պետ. կթ.	26	եղելութիւն	90	թիզ	4
գերանդի	74	երանգ	97	թմբի	103
գերընտրել	97	երանգապնակ	97	թոթովել	94
գերմարդկային	94	երածիշտ	39	թոյր	134
Գէորգ Գ.	26	երաշտ	177	թովել	141
գիսակ	164	երդ	155	թոք	19
Գրիգոր պատ. Պէշտ.	151	երից	50	թռան	203
գոհարակուռ	26	երի լամած	118	թռիլ	110
Գողգոթայ	8	երիցուկ	118	թօն	163
գոմ	202	երկասիրութիւն	127	թօնուտ	116
գորշ	66	երկնաբերձ	171	թօշիլ	195
գորով	10	երկրորդ կան վրժրն.	191		
գորովասիրտ	90	երփնազան	158	ժայթքում	158
գոռ	131			ժանկք	80
գուժկան	164	զայրոյթ	170	ժանտատենդ	14
գուղձ	160	զարգագիր	107	ժառանգաւոր	44
գունաթափ	104	զաղփաղփուն	104	ժիժի	39
գունատ	59	զանակ	202	ժուժկալ	22
գուրգուրանք	80	զառիթափ	129	ժրաջան	151
գրաստ	59	զգայագիրկ	22		
գրաւիչ	16	զետեղուած	170	ի դերե ելլել	22


ԻԼ	66	խոպոպ	203	կարեկցիւ	90
իմաստնոց	131	խորդալ	118	կարեկցութիւն	203
իմացական	153	խորաիկ	10	կարթել	141
ի հացուն	203	խորտուփորտ	54	կարկամիւ	138
ի մի ձուլուիւ	187	խոցուած	170	կարկառուն	33
իսլանտա	158	խուժել	38	կափկափ	4
		խուղել	160	կերպարանափոխուիւ	129
լամարթին	160	խուսափիւ	80	կեր	178
լանջք	140	խուսափուկ	28	կշակ	80
լափել	10	խրոխտ	171	կիսափուլ	43
լեարդ	19	խօլ	195	կիտաղգի	166
լելակ	12			կիւթէնպէրկ	69
լեղակագոյն	113	ձողկահիւսակ	82	կլափ	80
լերի	82	ձամ	92	կծիկը դնել	72
լէկլ	101	ձայրայեղ	55	կծկել	59
լը Սաժ	2	ձառուղի	104	կնճիթ	138
լըքօնթ տը Լիւ	66	ձերպ	33	կնտակ	82
լի	39	ձթռած	27	կոծ	163
լիննէ	125	ձեփել	175	կոծել	116
լիւտովիք հալէփի	123	ձիբ	50	կոտոշ	60
լոր	141	ձիծ եռնակ	90	կորեկ	90
լուսավառ	16	ձիրանի	141	կորով	6
լուսափաղփ	59	ձլիւ	110	կուշտ ու կուռ	4
լուփրի թանգարան	97	ձժակ	80	կայրային	143
լուրթ	172	ձժմոր	149	կտկտալ	29
լքուած	84	ձղօտ	177	կրիայ	125
		ժնունդի ձառ	194	կքիւ	74
խաղախորդ	143	ձոպ	141		
խաղտկոց	118	ձովափայլ	105	հաղուադէպ է	82
խամաճիկ	202	ձուէն	33	հակիւ	23
խայտալ	76			համադամ	10
խատուտիկ	29	կաղդուրիչ	14	համախոնուիւ	19
խարակ	94	կաթողիկէ	26	համակ	105
խարչափել	90	կակազել	94	համակուիւ	90
խարոյկ	175	կահ	121	համաճարակ	14
խառաքարտ	82	կաղկանձել	163	համաշխարհիկ	173
խելչի փառ	23	կաղկանձիւն	80	համբուն	149
խլեակ	33	կամբակ	54	հանճար	131
խնջոյք	10	կայլակ	134	հանրային գործիչ	187
խոլան	202	կայծքար	116	հաշմ	44
խոնջէկք	84	կայտաւել	118	հասկ	177
խոռոշ	32	կախարդած	90	հաստատամիտ	6
խոժոռ	74	կանեփ	68	հացկերոյթ	4
խոժոռերես	105	կառաչ	164	հեծկլտուք	43
խոյանալ	209	կառչիւ	163	հեղինակութիւն	175
խոյ	76	կասքենի	160	հեկեկալ	163
խոչընդոտ	94	կատար	170	հեռանկար	55
խոպան	121	կարապ	141	հեւիհե	100

հիմնայառակ	90	մանրադէտ	14	յոռի	121
հիբ	118	մարմանդ	103	յորձունք	83
հլու	16	մարմնահար	45	յուլարար	209
հնակարկատ	72	մացառ	89	յուշիկ	23
հնամենի	163	մեզերայ	147	յօրինել	69
հոլ	50	Մեքքիսեդեկ Արքեպ.			
հոյակապ	138	Մուրատեան	45	նազիլ	110
հոյգ	149	մեծօփառ	125	նախախայրէք	107
հուժկու	109	մեծղի	50	նախաձեռնութիւն	166
հուն	160	Մեծն Կոստանդիանոս	8	նախամարդիկ	165
հուսկ	155	մեկին	208	նախասրահ	43
հուսկ ուրեմն	32	մեկոն	149	նախատինք	8
հուրի	163	մենարան	59	նահապետ	107
հպիլ	103	մենաւոր	80	նամէտ	163
Հոենոս	129	մինինիկ	203	նանիր	16
հռետոր	94	միջադէպ	80	նաւորդ	69
հսկայ	16	միրգ	178	նգոյր	203
հրաժեշտ	187	Մկրտիչ Պէշիկթաշլեան	29	նենգամիտ	16
հրաշակերտ	97	մղոն	32	ներշնչել	6
հրապարակագիր	127	մշուշ	33	ներսէս Աշարակեցի	
հրարգել	60	մ գ	155	Կաթողիկոս	191
		մուրու թիւն	153	ներքնակ	101
ձգտան	55	մողես	160	նիգ	72
		մոյկ	72	նինջ	155
		Մօնթէսքիէօ	173	նշմարել	46
ձախին	143	մորենի	76	նողկալի	147
ձահիճ	14	մուճակ	72	նորոյթ	27
ձարձատել	90	մուսլ	74	նոր Ձէլանտա	158
ձեմել	140	մուսլամամ	105	նուաստութիւն	92
ճըւճըւալ	29	մտացածին	197	նրբալար	164
ձկունութիւն	97	մտացիր	74		
ճնճղուկ	90	մրրիկ	33	շահատակութիւն	203
ճոխանալ	125	մօրուանի	149	շաղկրատութիւն	27
ճռուողել	64			շառաւիղ	116
		յածիլ	155	շաւիղ	90
մազիլ	163	յակինթ	141	շափիւղայ	195
մազլցիլ	94	Յակոր Յակորեան	92	շեղակի	50
մածնուլ	19	յասմիկ	29	շերամ	56
մակերես	129	յատակագիծ	175	շերտ	16
մահապարտ	8	յարակից	153	շէմբաղէ	72
մահիճ	12	յարկածածուկ	202	շէնշող	118
Մաղաքիա Արքեպ.		յաւերժական	66	շիթ	134
Օրմանեան	8	յաւիշտակութիւն	55	շիկնիլ	189
մամութ	166	յափրած	92	շլացում	54
մայրամուտ	104	յեղակարծ	59	շլարշ	90
մանոց	66	յենուլ	181	շնչատ	74
մանրախիճ	129	յոխորտ	140	շնչերակ	19
մանրէ	14	յոպնակ	22	շողափայլ	60

շուրջանակի	84	սլարուրել	203	սլացք	59
շուք	209	սլեղում	8	սլանալ	170
շրջաբերել	181	սլերճ	118	սխրալի	28
շրջիւն	203	սլերճախօսութիւն	94	Ս. Հեղինէ	8
շրջանակաձև	50	սլերճանք	125	սմանդուկ	10
շքեղ	10	Պրրմինկամ	101	սմքիլ	141
		Պիղատոս	8	Ս. Յակոբ Մծրնայ	
ոգորում	80	սլիղծ	44	հայրապետ	26
Ոգիսեւս	125	Պիւ Ֆօն	125	սնափառութիւն	173
Ոլոր Ոլոր	56	սլանասիրութիւն	153	սողոսկիլ	197
Ոլորտ	171	սլտեր	50	սոյլ	164
ողջամիտ	2	սլրկել	92	սովալլուկ	178
ողջոյն	39	Պտղոմէոս եղբայրասէր	174	սու	54
ողողել	116	սլրպտել	46	սուգիլ	209
ողորկ	129	սլօա	25	սպառնագին	4
ոսկեգէս	141			սպառիլ	39
ոսկեհուռ	202	Հախճախուած	170	սպառած	90
ոսկի եղեր	105	Հանադիր ըլլալ	36	սպաս	6
Օրայ	40	Ջերմուկ	158	սպասադարան	138
Օստրե	189	Ջինջ	118	սպրդիլ	97
Որատիոս	2			սռնակ	69
Օրոտալ	105	Ռեթէոս Պէրպէրեան	121	ստե	80
Օւղեկորոյս	90	Ռիւպէնս	97	սրահակ	203
Օւղեղատապ	6	Ռմբաձիւր	123	սրավար	16
Օւղղաձիգ	50	Ռնգեղջիւր	50	սրեղջերու	166
Օւնայն	153			սրտագին	16
Օւնկնդրել	39	Սադի	189	սքանչելիք	55
Օւշաբերել	141	սաղարթ	170	սքողուած	134
Օւրուկ	44	սաղարթ ախիտ	90		
		Սալամանքա	2	վազր	33
Հարագուշակ	80	սաղմոն	170	վազք	103
Հարաճճիկ	29	սատափ	141	վայիւն	164
Հարաշուք	164	սառնորակ	170	վաղանցուկ	28
Հարքաշ	92	սաստկամառունջ	171	վաղաշէջ	164
Հղիկ	59	սատար հանդիսանալ	187	վաղայաջորդ օրը	22
		սար	177	վայելք	110
սլանու ձանք	92	սարեակ	90	վայրահակ	155
սլաքար	80	սարսափ	105	վանակն	138
սլանծալի	131	սարսել	138	վանել	113
սլատիր	203	սարսու ռներ պտըտցներ	32	վարանք	12
Պատէն	6	սարփինայ	160	վարմ	209
սլատմուճան	202	սաւառնիլ	46	վարս	82
սլատսպարութիւն	44	սեւեռել	76	վարժապետանոց	191
սլատրանք	105	Սէն գետ	125	վեհաշուք	16
սլատրուակել	84	սին	155	վերատեսչութիւն	151
սլատուաստել	187	սթափիլ	171	վէս	16
սլարիկ	103	սինէմաթօկրաֆ	203	վէսութիւն	42
սլարուրաձև	80	սրտարեկ	163	վէտվտիլ	163


վիժակ	163	տոչորիլ	177	փրկանք	209
վիլակ	86	տոււայտիլ	100	փոխանցում	187
վհուկ	90	տրմուխ	160	փքացած	16
վճիտ	83	տքնիլ	99		
վուշ	118			քած	4
վտաւակ	203	ցայգ	172	քաղահան	160
վտիտ	43	ցայգազգեստ	203	քամի	163
		ցան	151	քայքայել	74
տագնապ	109	ցանկու թիւն	170	քանդակել	2
տաշտ	158	ցանց	189	քարանձաւ	32
տաշտաձև	158	ցասում	147	քարակոփ	116
տապալիլ	80	ցից	123	քերիչ	26
տապանագիր	2	ցնցուղ	64	քիւ	163
տարածամ	80	ցոլք	110	քլօրոգի	123
տարրաղաղրել	113	ցուպ	141	քումայթ	149
տարտամ	138	ցուցափեղկ	12	քուրձ	128
տարր	84	ցուկ	10	քսամնիլ	80
տարրական	36	ցողել	189	Քրիստափոր Գոլումպոս	69
տափան	92			քրոնիկ	127
տեղատարափ	116	փաղաքուշ	118		
տենդագին	103	փայփայանք	104	օղաշու	164
տենչանք	97	փարախ	202	օղապար	125
տիււական	32	փարթամ	46	օղապուց	110
տիպար	197	փարոս	176	օթոց	203
տիրացում	147	փիւնիկ	141	օժանդակել	187
տխեղծ	19	փորագրել	89	օրհաս	164
տոկուն	37	փոցխ	92		





Ա. ԵԱԶԸՃԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ



Միակ հրատարակիչն ու կեդրոնատեղին Հ. Ե. Զ. ԱՍԱՏՈՒՐԻ, ՕՐ. Ա. ԱՐԱՊԵԱՆԻ, Դ. ԽԱԶԿՈՆՏԻ, Գ. ԳԱՎԱՑԵԱՆԻ, Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆԻ (Մ. ՊՈՆՏԱՑԻ) անզուգական դասընթացքներուն եւ ամէն տեսակ դասական, գիտական եւ գրական գիրքերու:

Դիմել ուղղակի՝ առանց երրորդի միջնորդութեան Գրատանս հասցէին.

یازیدجیان کتبخانه سی — در سعادت سلطان حمام باقر جیلر ۱۱

Ա. ԵԱԶԸՃԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ, ՊԱԳԸՐՃԸԼԱՐ 11

Կ. ՊՈԼԻՍ

A. YAZIDJIAN

LIBRAIRE-EDITEUR

SULTAN HAMAM, BAKIRDJILAR, 11

CONSTANTINOPLE

ԳԻՆ 8 ՂՐՇ.

Գրատանս ցանկը փափաքողաց ձրի կը դրկուի: